

25

ՄԱՐԿՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՓԱՐԱՌՆ ՍԷՄ - ԱՆՏՈՆ
ԻՇԽԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ
ԱՐՁՈՒՆԻ ՍՐԲԱԶԱՆ
ՄԵՐՈՐԵԱՅ ԾԻԾԱԼՆԵՐ




Հրատարակում է

891.99
Չ-45




7-45

88

ՆՇԱՆ ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ



Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն



1933

Տպագրութիւն ՏԷՐ-ՅԱԿՈՒԲԵԱՆ, Փարիզ

Printed in France

19.07.2013



Ն ու է ր

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՖՐԷՆԿԵԱՆԻՆ

միասին ապրում լազուարթ օրերու
երազսահամ յիշատակներով



4093-2011



ՓԱՐԱԻՈՆ ՍԷՄ-ԱՆՏՈՆ

Ա. Մ Ա Ս

ՓԱՐԱԻՈՆ ԳԱԻԱՌԻ ՄԷՋ

Փարաւոնին կեանքին, աւելի ճիշդը արկածներուն պատմութիւնը ունի աւանդական շրջան մը: Կը հաւաստեն, թէ կարգ մը հնախոյզներ իր մահուան կը սպասեն, որպէս զի քերթողին գանկն ու կուրծքը պեղելով լոյս սփռեն դրականութեան պատմութեան վրայ: Պիտի չյաջողին: Նախ՝ Փարաւոն մեռնելիք չունի, քանի որ անմահ բանաստեղծ է: Երկրորդ՝ եթէ նոյն իսկ մեռնի, իր գանկին մէջէն ուղեղ ու իր կուրծքին տակէն սիրտ պիտի չգտնեն: Պատճառ:

Ահա՛ ողբերգութիւնը: Կամաւոր, կանոնաւոր ու ամէն գիշեր կրկնուող մարմնաշարժի մը հետեւանքով իր ուղեղը եղած է փոշտանկ:

Նոյն այդ մարմնաշարժը պուէտին սիրտն ալ նետած է ստամոքսին մէջ:

Այս երգիչը սակայն մարմնաշարժին ցնցումները դարմանել կը կարծէր հաւկիթ կլլելով ու հայելիին առջեւ ինքզինքը կշռելով: Կ'ըսէր.

— Ես հիւժախտ չեմ ըլլար մարմնաշարժով: Մարմնաշարժը թէեւ ինձմէ բան մը կը պակսեցնէ, սակայն, ես պակսելիքը նախապէս կը լեցնեմ հաւկիթով:

Աւա՛ղ, հազար ափսո՛ս ու բիւր եղո՛ւկ, քանզի քերթող Փարաւոն, Հայոց ազգին մեծ բանաստեղծը, չէր նշմարեր հիւժախտը, որ կը հարուածէր զինքը, իր ուղեղէն:

* * *

Ահաւասիկ Փարաւոնի կեանքին աւանդական շրջանի պատմութիւնը:

Ծննդավայրը անյայտ: Կ'ըսեն թէ 1885ին Պարսկաստան ծնած է, էջերով ու սոխակներով լեցուն Շիրազի մէջ, եւ ազգականութիւն ունի Օմար Խայեամի հետ... հանճարով: Կ'ըսեն նաեւ, թէ Արարեստանի

մէջ, ուղտի մը պոչին տակ ծնած է : Ըսողներ ալ կան, թէ ան ծնած է Կ. Պոլիս, Եէտի Գուլէ, Ս. Փրկչեան Աղղային Հիւանդանոցի մէկ կարեւոր յարկաբաժնին մէջ :

Աւանդութիւնը սակայն մեզի կուտայ երեք գիւղի անուն .

— Զարա, Զիմարա, Թամղարա :

Նոր Հոմերոս : Կ'ըսեն, թէ իր մայրը Թամղարայի մէջ յղի է մնացեր իրմով, Զարայի մէջ աշխարհ բերեր ու Զիմարայի մէջ տիեզերքին է նուիրեր :

Փոքրիկն Փարաւոն խունկ, կնդրուկ եւ դմուռս չէ որ ստացած է, այլ աւելի թանկագին բաներ — Թամղարայէն՝ հանճար, Զարայէն՝ հերոսութիւն ու Զիմարայէն սրբութիւն :

Շնորհքով հօր ու մօր դաւակ է եղած : Ունեցած է սակայն Աշուղ Մերձանիկ անուն խել կնքահայր մը : «Կա'մ հօրը կա'մ մօրը կա'մ ծուռ ու մուռ կնքահօրը» : Փարաւոն կնքահօրը քաշեց : Քաշե'ց . . . : Սակայն, հարկ է խոստովանիլ, թէ բոլորովին նման չեղաւ իր կնքահօրը :

* * *

Աշուղ Մերձանիկ շատ համակրելի, շատ տաքարիւն մարդ էր : Նիհար էր ու բարձրահասակ ու կ'ապրէր ուտելով, խմելով ու անխոստովանելի արարքներով ուրախանալով : Ծոյլ էր ու հեշտասէր : Իր ետին համար զգայուն ու աշխարհի բաներուն համար անզգայ : Սաղով կը ճարէր իր ապրուստը, գիւրութեամբ : Քառասուննոց կար : Իր երկտասարդութեանը Ս. Կարապետը տեսած ըլլալով իր երազին մէջ, ճամբորդած էր մինչեւ Մուշ :

Մշոյ Սուլթանը Մերձանիկին չնորհած էր ձայն ու տաղանդ : Աշուղը այսքանը քիչ գանելով՝ խորտակ աղջիկ մըն ալ փախցուցած ու բերած էր իր երկիրը :

Աշուղը ամէն օր կը ներշնչուէր իր կնոջմէն : Հէք կինը այդ զգայուն Աշուղին երգերն ու հեւքերը մտիկ ընելով հայեցաւ ու մեռաւ :

Քառասուն ժամ սուգ չպահեց Մերձանիկ աղբարը : Հարկ էր ներշնչուիլ ապրելու համար : Ու օր մը վերջ անիկա Գարա Եէմչէն գիւղէն յոյն աղջիկ մը փախցուցած էր : Չէր ախորժեր կարգ ու կանոն պարունակող հարսնիքէն : Ազատ սիրոյ առաքեալ մըն էր, ծնած ի Թամղարա : Բնիկները քննադատելով գինքը կոչած էին «խել» : Մերձանիկին փոյթը չէր : Անիկա իր գիշերները քաղցրացնելու մասին կը խորհէր միայն : Մէկ փարա չէր տար հասարակաց կարծիքին :

— Ես խելքս չեմ փախցուցած, հապա աղջիկ փախցուցած եմ, ըսելով կը պարծենար :

— Քու խելքդ միտքդ արդէն աղջիկ է : Աղջիկը փախցնելով խելքդ ալ փախցուցած կ'ըլլաս, կ'ըսէին իրեն :

— Եթէ աղջիկը խելքս ու միտքս է, ուրեմն ես ամէն գիշեր խելքիս ծոցն եմ, կ'ըսէր Մերձանիկ : Ես', դուք գիշեր ցերեկ առանց խելքի ապրողներ էք :

Ու յաղթանակը կը տանէր : Աշուղ Մերձանիկ ոչ մէկ բանի տակ չէր մնար : Քաջ հեծնող ըլլալով, միշտ վրան կ'ելլէր :

Երջանիկ չկարծուի սակայն այս տաքարիւն խելք : Անիկա դժբախտութիւնը ունեցաւ իր երկրորդ կնոջ մահն ալ տեսնելու :

Այս անգամ սակայն կին մըն էր, որ գինքը փախցուց ու տարաւ Պայրամ գիւղ : Մերձանիկ աղբար այնտեղ քառասուն օր ու քառասուն գիշեր իր սուգը բռնեց ու արցունք թափեց : Անկից վերջ ատեն մը հիւանդ պառկեցաւ : Երբ անկողնէն ելաւ իր կինը յաջորդեց իրեն, առանց անկողնէն ելլելու :

Այդ շրջանի բոլոր կիները ժամանակ մը սարսափահար մնացին իրմէ : Մերձանիկ սակայն անոյշ աչքեր ունէր : Մէկ նայուածք, սաղի թրթուս մը, ալիք մը ձայն ու կրկին իր ուսկանին մէջ կը ձգէր լայնանիստ կազմուածքով կնիկ մը :

Մերձանիկ աղբէրը բազմակին ժամանակներ ունեցաւ իր կեանքի ոսկեշրջանին մէջ : Երբեմն ամիսներով կը փակուէր զեղանի ու հարուստ այրիներու թաքստոցներուն մէջ, սիրելով, արբենալով, նուազելով : Փիլիսոփայ մարդ էր, կեանքի փիլիսոփան : Իր տաղերը Յիսուսով կամ սուրբերով կը սկսէին եւ կին ու գինիով կը վերջանային :

Մերձանիկ ստախօս ալ էր : Իր անյայտացումներէն վերջ, երբ մէջտեղ ելլէր, կ'ըսէր, թէ ուխտի դացած էր Ս. Աստուածամօր վանքը :

Քառասունէ աւելի գիւղերու մէջ հունձք ցանած ըլլալով, խելճ Մերձանիկի շտրուեցաւ դաւակ մը հնձել : Աշուղին այս վիշտը մասամբ մեղմացաւ փոքրիկն Փարաւոնով :

* * *

Փարաւոն տասնըութ տարեկան էր, երբ սաղ մը տուին ձեռքը ու զրկեցին իր կնքահօր՝ Աշուղ Մերձանիկին մօտ աշակերտելու :

Փարաւոն սակայն բոլորովին խակ մը չէր այդ արուեստին մէջ : Գիտէր կարդալ, գրել, սաղել ու քննադատել : Աստուած միայն գիտէ թէ ուրկէ լսած էր հետեւեալ ասութիւնները, որոնք իր նշանաբանները եղած էին .

— «Ինքնատիպ», «անկոխ գետին», «կոյս ուղի», «չծամուած նիւթ»:

Հազիւ շարաթ մը կրցաւ համերաշխ ապրիլ փարաւոն՝ արուեստի մէջ հինգլուիս Մերձանիկ կնքահօր մօտ: Վեցերորդ օրը արդէն շահեկան վիճարանութիւն մը սկսաւ երկու աշուղներուն մէջ: Փարաւոն թէ՛ կեանքի եւ թէ՛ արուեստի մէջ անկոխ գետիններէ կ'ընթանար: Փարաւոնիկ խիստ յախանձախնդիր՝ միշտ անկոխ գետին կ'որոնէր, մինչ Մերձանիկ կը փառարանէր այրիները եւ կոյսերու հետ դործ ունենալէ կը վախնար: Փարաւոն «չծամուած նիւթ» կը յեղյեղէր, մինչ Մերձանիկ տիւ եւ գիշեր այրիներու ծամուած ծիծերը կը հեղեղէր... համբոյրներով:

Ահա իրենց գրավէճը:

Փարաւոն յիմարի նման կատղեցաւ լսելով Մերձանիկ կնքահօր վերջին տողին հետեւեալ տողերը.

— Եար, եամա՛ն, եամա՛ն, մագերբդ հով եմ,

վա՛յ, եամա՛ն եամա՛ն, աչքերդ ծով եմ...

— Եարին աչքերը կա՛մ երկնքի կա՛մ ծովու կը նմանցնես: Ատոնք հազար անգամ ըսուած խօսքեր են: Նոր նմանութիւն մը գտիր: Ինքնատիպ եղիր քիչ մը:

Մերձանիկ թէեւ շատ կարեւորութիւն չէր տար Փարաւոնի քարոզութիւններուն, սակայն, խիստ զգածուեցաւ ու ճարահատ պատասխանեց բարկութեամբ.

— Ծօ՛, լակոտ, ինքնատիպդ, կոյսդ, չը ծամուածդ դուն գտիր, նայինք:

Փարաւոն սազը առաւ, հանճարը տնկեց, աչքերը ցցեց, բաւական ժամանակ լսեց ու յետոյ յաղթականօրէն երգեց

— վա՛յ, եաման, աչքերդ մահին եմ,

եաման, վա՛յ, նայուածքներդ չամիչ եմ...

Ու աւելցուց.

— Ահա ասիկա ինքնատիպ է, նոր է: Մեզմէ առջի ժամանակներուն մէջ չէ ըսուած լսուած, որով անկո՛խ է, անկո՛խ...

Մերձանիկին պայթիլը մօտ էր ու որոտաց.

— Ծօ՛, հարկաւ անկոխ է: Ծահիճին մէջ խենթը անգամ չէ կոխեր, խակ դուն գացիր այնտեղ չամիչ կը քաղես: Վա՛յ, ես քու «անկոխ»դ կոխեմ կոխկոտեմ:

* * *

Մերձանիկ սակայն չկրցաւ բաժնուիլ Փարաւոնէն, հակառակ այս

վերջինին ամենօրեայ անհամաձայնութիւններուն, վէճերուն ու ինքնատպութիւններուն: Մերձանիկ շատ ապրելէն ա՛լ ծերացած էր եւ ուղտի նման էջ մը կ'ուղէր իր առջեւ:

— Ես իմ էշս դտած եմ, կը բառախաղէր թուրքերէն:

Ու ամէն մէկը իր կարգին կը յօրինէր, կ'եղանակէր, միասին նըլազելով: Անոնք պատիւ ունէին բոլոր սրճարաններու, հարսնետուններու, երեկոյթներու մէջ: Իրենց գործունէութեան սահմաններուն մէջ կային երկու քաղաքներ՝ Սերաստիա ու Շասլին — Գարահիսար, երեք գիւղաքաղաքներ՝ Չարա, Չիմառա, Թամզարա, եօթը գիւղեր՝ Ղընըխ, Ղօղլուճան, Գարա Շէնչէն, Պայրամ, Աղճըման, Պալաթ, Քօրու: Իրենց ունկնդիրները կը բաղկանային Հայերէ, Թուրքերէ եւ Յոյներէ: Շատ լաւ կը շահէին:

Փարաւոն քառասուն փարա օրավարձով սկսած էր գործի ու երեք չորս ամսուան ընթացքին, ամէն օր յաւելում պահանջելով օրականը բարձրացուցած էր հարիւր փարայի: Քանի՛ յաւելում ստանար, ա՛յնքան կը սկսէր դլուխ բռնել եւ անխնայ քննադատել իր կնքահօրը: Իր շահած դրամով Պոլսէն բերել կուտար հայերէն ու թուրքերէն բանաստեղծութիւններ եւ գեղեցիկ տողերուն չըիմանալով կը բանագողէր, հրապարակ հանելով, օրը քանի մը հատ, ինքնատիպ երգեր:

Սեղճ Մերձանիկ, ծեր ուղտի մը նման կը համբերէր: Փարաւոն օրէ օր աւելի անհաշտ ու աւելի տիրական կը դառնար: Վեց ամիս վերջ ինքը կ'ըլլար վարպետ ու երկու դրուշ օրական կը նշանակէր իր կնքահօրը: Հանդէսներու մէջ այլեւս Մերձանիկ անտես կ'առնուէր: Գիւղէ գիւղ իրենց հետիոտն ճամբորդութիւններու ընթացքին, գիւղաղնական կոխներ կ'ընէին: Վերջ ի վերջոյ Փարաւոն սկսաւ Մերձանիկի հետ չքալել: Արդէն չէ՞ որ ճամբան կոխուած էր գիւղացիներէն ու անոնց կովերէն ու էջերէն: Փարաւոն մացառներու մէջէն կը յառաջանար, արիւնտտելով իր միսերը, յանուն կուսութեան:

«Ինքնատիպ» դառնալու մարմաջը իր մէջ այնքան սաստկացաւ որ ախտի մը կերպարաբար առաւ: Սկսաւ ամէն բանի մէջ իր կնքահօր հակառակ ընթացք ունենալ, յանուն ինքնատպութեան: Մերձանիկ, ամենուն նման, ապուրը դադարով կը խմէր: Փարաւոն պատառաքողով ուտել սկսաւ:

Օր մը Քէլքիտ Ըրմադ գետին եղերքէն Ղօղլուճան կ'երթային: Փարաւոն ինքնատիպ դադարաբար յղացաւ աչքերը դոց քալելու: Շատ չանցաւ ինկաւ գետին մէջ:

— Կնքահօյր, օգնութի՛ւն, ազատէ զիս կը պոռար...

— Ծօ՛, շան լակոտ, «անկոխ, անկոխ» կը տրտոսա ամէն օր: Ահա քեզի անկոխ տեղ...

— Կը խեղդուիմ, կնքահայր, ոտքդ պաղնեմ, ազատէ զիս...

— Տեղդ գտար, օղո՛ւլ օղո՛ւլ անկո՛խ է...

Փարաւոն ծառի մը ճիւղին կառչելով այդ սարսափելի անկոխ տեղէն դուրս ելաւ, հայհոյելով իր կնքահայր: Գետը իյնալը սակայն դաս չեղաւ մեր աշուղիկին: Ընդհակառակը: Փորձեց նոյն խակ առանց շնչելու ապրիլ իր կնքահայր չնմանելու համար:

Երբ Ղօղլուճան հասան, անմիջապէս առաջնորդուեցան թրքական հարսնետուն մը: Այնտեղ Մերձանիկ սիրեց ու սիրուեցաւ Այիշէն անուն աղուոր կնոջմէ մը, որ գիւղին համետագործ Տէլի Ղուտուղի կինն էր: Մերձանիկ երկու օր վերջ փախցուց Այիշէն: Կէս ճամբան խնդրեց Փարաւոնէն, որ կինը թամղարա տանի: Փարաւոն շատ սիրով ընդունեց այս քաղցր առաջարկը:

Մերձանիկ Ղօղլուճան վերադարձաւ, իր վրայ կասկած չհրաւիրելու համար: Տէլի Ղուտուղ յիմարացած էր: Մերձանիկ անոր յայտնեց թէ Այիշէն տեսած է ճամբան Չէրքէզի մը հետ ու ինք պատրաստ է հետապնդել դանոնք, եթէ ձի մը տրամադրուի իրեն: Ղուտուղ ձի մը նուիրեց Աշուղին: Մերձանիկ ձին հեծաւ ու մէկ շունչով թամղարա հասաւ՝ Այիշէն գտնելով... Փարաւոնի գիրկին մէջ: Ա՛լ չափը անցած, բաժակը յորդած, դանակը ոսկորին էր հասած: Փայտ մը առաւ ու ինկաւ Փարաւոնին վրայ, պոռալով.

— Ծօ՛, շան լակոտ, ա՛ս է եղեր քու «անկոխ»ի արհեստդ: Ա՛լ ես ալ «անկոխ»եան եմ: Ալ ես ալ անկոխ պիտի փնտռեմ: Կարծեմ դուն վերէն վար անկոխ ես, ըսելով փայտը սկսաւ անխնայ իջեցնել Փարաւոնի յետոյքին:

Փարաւոն ցաւին կրակէն շրջաններ կը բոլորէր, կապիկի նման, ու մէկ ձայն կը պոռար իր ետին բռնած.

— Մի՛ գարներ, այնտեղ անկոխ չէ:

Ու Մերձանիկ փառաւոր տփոց մը քաշեց:

— Ծօ՛, շան լակոտ, հապա «կոյս ուղի», «չճամուած» կ'ըսէիր...

— Ես կարծեցի, թէ Այիշէն կոյս ուղի էր, դրախտ տանելու համար զիս...

— Ծօ՛, հապա ամէն բանի մէջ ըրածիս հակառակը կ'ընէիր, ինչո՞ւ այս բանին մէջ ինձի հետեւեցար...

—
Մերձանիկ քանի մը բարեկամներ կանչեց: Այիշէն վռնակեցին ու

Փարաւոնը մինչեւ ժամուն բակը քաշքշեցին: Այնտեղ, թրքական Փալախանի դրոշմամբ, հանդիսաւորապէս ծեծեցին: Մերձանիկ, ծեծի ընթացքին կը սաղէր խաղաղութեան եւ ուրախութեան երգեր: Հէ՛ք Փարաւոնի մարմնոյն ու հագուստներուն վրայ «անկոխ» տեղ չէր մնացած: Փարաւոնի անապատի մը չափ ընդարձակ երեւակայութեան մէջէն այս աստիճան «կոխուած»ութեան պատկերի մը կրկնեցելով անգամ չէր անցած երբեք:

Կը պատմեն, թէ երբ Փարաւոն սլոճաւ ծեծին տակէն, գրեթէ կիսամեռ, նոյն գիւշերն խակ «կոխուած»ութեան պղծութենէն ազատելու համար՝ փոխեց իր հագուստները ու քերեց... իր մորթը: Հետեւեալ առտու, սաղ ի ձեռին, շրջեցաւ գիւղին փողոցներուն մէջ, տեղացիներուն հասցէին հայհոյութիւններ յորինելով ու պաշտօնապէս յայտարարելով.

— Ամէն տեղս տփեցին, բայց ուղեղս մնաց անկոխ...

Դառնացած էր, ու իր դառնութիւնը ծեծ ուտելէն չէր որ կուգար այլ անկէ որ ոչ ոք գտնուած էր զինքը պաշտպանող: Ապերախտները...: Ո՛ւր էին զինքը ունկնդրող, ծափահարող ու շփացնողները... Վատե՛րը... Լքած էին զինքը վտանգի բոստին:

Գիւղին այս մահացու մեղքը քաւելու համար՝ տղեկ մը, Պապուկչի Օհանիկ, հետեւեցաւ Փարաւոնի, աշակերտելով ու ապաշխարելով: Անոնք անիծելով «փախուկներու մէջիւսը»՝ թամղարան, փախան ի Զարա:

* * *

Թամղարացիները գրեթէ փախուկներ էին, առանց զգալու իրենց տխուր վիճակը: Այդ անզգայութեան մէջ բարերար դեր մը կը կատարէր Պապուկչի Օհանիկ: Այս վերջինը աւելի քան փախուկ ըլլալով զգացնել չէր տար գիւղացիին... պակասութիւնը:

Օհանիկ հազիւ տասնութը տարեկան էր: Գեղին էր յօնքերով, թարթիչներով ու հոգիով: Գլուխը գրեթէ հերատ: Իր աչքերուն բիրբիրը հազիւ երեւցող: Քիչ մըն ալ կաղ էր ու վրայ գլուխը աղքատախրնամ: Ընդհանուր երեւոյթով նման էր կրկէսի կապիկի: Գիւղին մէջ իր վրայ մերթ ատելութիւն ու մերթ կարեկցութիւն կը հրաւիրէր: Ատելութիւնը կը հասնէր իրեն՝ պոռուկները շատ սիրելուն ու գողնալուն:

Վերջ ի վերջոյ երբ տասնըջորսին հասաւ սկսաւ կիններն ալ շատ սիրել: Չէ՞ որ անոնք պոռուկներուն լաւագոյնն էին: Այս վերջին միւրեքէն սակայն հատ մը չկրցաւ գողնալ եւ ուտել, հէ՛ք Օհանիկ:

Ճար մը գտած էր, ճաշակել երազանքի մէջ: Ասկէ հասաւ իրեն յիմարութիւնը:

Ի՞նչ ընէր խեղճը. ամէն դէշ բան իր ետեւէն կը հասնէր, որովհետեւ... կաղ էր:

Այս հասարակ յիմարը սակայն՝ Փարաւոնի քով, քիչ ատենուան մէջ հասաւ կատարելագործութեան: Այնպիսի լոյս չտեսած ինքնատուութիւններ հնարեց, որ Փարաւոնի մէջ ծնաւ նախանձը:

Պապուկչիւ Օհան խիստ նախանձախնդիր «անկոխ»եան մը ըլլալով եւ յուսահատելով հարազատօրէն կոյս որեւէ տեղ գտնելէ այս պիղծ աշխարհին մէջ՝ բարձրացաւ իր վարպետին կոնակը: Ու այնտեղ փայլեցաւ իր ձայնով: Սազի անյարմար էր ու անշնորհք:

Փարաւոն ու Օհան երկար չկրցան ապրիլ խաղաղութեան մէջ: Երկուքն ալ ... շարժող էին: Ստեղծուեցաւ ալիք: Մէկը պիտի տակ երթար ճակատագրականօրէն:

Փարաւոն, բռնակալ, արգելած էր ամէն կարգի ինքնատուութիւն Օհանիկի համար: Օհանիկ հին ճամբուն դառնալով կ'երգէր ու կը վարուէր հասարակ մահականացուի նման: Այս ալ սակայն արգելուեցաւ Օհանիկի, որուն մնաց ճամբաներուն միայն ... միջինը: Իր բնաւորութիւնն ու մանաւանդ իր ուղեղին ... խառնուածքը, որ հետզհետէ եւս առաւել կը խառնուէր, ծայրայեղօրէն բեւեռային ըլլալով միջին ճամբան չի կրցաւ գտնել: Ասկէ իր տառապանքը:

Այս տագնապին մէջ էր Օհան, երբ իր վարպետը Ղընըխ գիւղէն՝ վայրի ձիւն նման կատաղի կոյս աղջիկ մը փախցուց, նոր տուայտանք մը ստեղծելով Օհանիկին: Փարաւոն, անգործ գիշերներուն, Սողոմոնի նման կ'ուտէր, կը խմէր եւ ուրախ կ'ըլլար, իսկ գործի գիշերներուն Դաւիթ մարգարէի նման կը նուագէր: Օհանիկ զրկուած մըն էր ու կ'որոնէր ... միջինը: Փարաւոն, երբ օր մը սենեակ մտաւ, իր վայրի մատակը եւ Օհանիկը գտաւ խիստ մեղաւոր գիրքի մը մէջ: Շշմեցաւ ու ոռնաց:

— Եան լակոտ, ատ ի՞նչ կ'ընես...

— Վարպետ, միջինը գտայ...

Աշուղները միշտ հեթանոս եղած են, նոյն իսկ ամենէն խստակըրօքները: Օհանիկի մէջ այս ջիղը կար, ի՞նչ փոյթ թէ անգիտակից:

Օհանիկ վստիկեցաւ ու դարձաւ Թամղարա: Մերձանիկ, երբ իրողութիւնը իմացաւ, գոհացաւ ու իր քով առաւ Պապուկչիւրը իրր որդի ու իրր աշակերտ:

* * *

Ամիսներ անցած էին, ու եկած էր Վարդավառը:

Շապին - Գարահիսարէն ահագին բազմութիւն եկած էր ձօյնա, որ ուխտաւայր մըն էր, նշանաւոր իր ջուրով: Այդ տարի մեծ խանդավառութիւն կար: Ձօյնայի նշանաւոր վարդենին զգեստաւորուած էր գնչուի մը նման, լաթի կտորներով՝ ուխտաւոր մանչերու եւ աղջիկներու: Այդ կտորները տեսաւ մը յուսութներ էին, մուրատի կատարման համար: Ձօյնայի շուրջը եռացող ու աղմկող բազմութիւն: Կանանչին վրայ խայտաբղէտ ամբոխ մը կ'ուտէր ու կ'արբենար: Տեղ տեղ մուխեր. շամփրախորով գառնուկներ: Համեմուած կերակուրներ ու թթօղի տեսարանին վեհութեան կը նպաստէին բարերարօրէն: Երիտասարդներու խումբ մը բոլորապար կը դառնար.

— «Լէ՛լէ՛լէ՛լէ՛լէ՛լ» Թամղարա...

Այս պատկերին շրջանակը կը կազմէին բո՛ւն իսկ տեղւոյն գիւղացիները, իրենց կիներով ու զաւակներով: Ասոնք քննադատ հանդիսականներ էին տեսարանին.

— Զարա, Զիմառա, իլլէ Թամղարա...

— Ո՛ւհ, կանանչ կարօտ քաղքցիներ...

— Երկու հակիթ, չորս գէյթիւնով՝ օխտն օր, օխտը գիշեր կը պոռպոռա...

Փարաւոն վերադարձած էր Թամղարա ու ձօյնայէն ներս մտած էր: Բարբարոս ժխորին մէջ լսած էր սաղի թրթռում մը: Քալեց այն կողմը: Մերձանիկն էր, իր հակառակորդը, որ խումբի մը մէջ նստած կը նուագէր, մինչ Պապուկչիւ ալ կ'երգէր:

Փարաւոն տեսնուած էր իր հակառակորդ արուեստակիցներէն ու մաս մը Թամղարացիներէ: Խումբ մը երիտասարդներ մօտեցան իրեն խնդրելով որ նուագէ: Փարաւոն կատաղօրէն բռնեց իր սաղը ու իր գիրքը, Մերձանիկէն քիչ հեռու, եւ բացաւ իր հանճարին առաջասուր՝ այնտեղ լեցնելով ահագին... հով: Իր համակիրները բոլորուեցան, պաշարով:

Փարաւոն կերաւ, խմեց ու... փչեց:

— վա՛յ եամա՛ն է իմ խաղըս, Այնֆան խորունկ է տաղըս, Որ աշուղին սա խըման՝ Կրնայ ըլլալ... գերեզման:

Քարը հասած ըլլալով Մերձանիկի գլխուն, այս վերջինն ալ իր կապարճը լեցուց, օրօրեց ու չպրտեց:

— Պայուլի տեղ վարդի փոք է,
Արծիւի տեղ սար ու ձոր է,
Ճօյնա եկեր է մէկ ջորի,
Երգը խոր է, տեղն... ախոռ է:

— Է՛հ, ապրիս, Մերձանիկ, հազար ապրիս, զնահատեցին իրեն-
ները...

— Եա՛, Փարաւոն, զօրքիդ մեռնինք, հուրիդ մատաղ, սաղիդ
զուրպան, հիւնէրդ ցուցուր, հանճարդ... քաշէ:

Փարաւոն, Քոլոմպոսի նման, իր հանճարը ցուցուց... հաւկիթով:

— Իմ երգերը ես շինած եմ հաւկիթէ.
Հաւկիթն իմն է, վա՛յ անոր որ գայն կ'ուտէ...

Կոկորդալիւր խնդուք մը արձակեց աշուղ Պապուկչիւ ու սաղ ի ձե-
ռին հրապարակ ելաւ զօջևով:

— Է՛յ, ջամախար, աշուղ Փարաւոնը երգեր ունի հաւկիթէ: Ես
ալ ունիմ երգեր հաւկիթէ: Զարնենք իրար, նայինք ո՛րը կը կտորի:

Օհանիկը իր տեղը նստեցուցին: Աշուղները բոլորով խումբերը
իրենց կարգին բոլորուեցան հետաքրքրներու լայնեզր շրջանակէ մը:
Հետաքրքիր էր աշուղական դրականութեան այս պատմական աքլորա-
մարտը:

Լուսթիւն յանձնարարուեցաւ քանի մը տեղէ: Մերձանիկ թթօղի
մը քաշեց: Երգը իրն էր.

— Ամա՛ն, ըսեմ, երգ կայ ոսկի ու սիրտ է,
Եամա՛ն, ըսեմ, երգ կայ սուր ու իկիտ է,
Երգ ալ կայ որ քթուած բերան ու քիթ է,
Ինքնատիպ երգ ըսուածն հոտած հաւկիթ է:

— Կեցցէ՛ Մերձանիկը, կեցցէ՛, աղաղակեց ժողովուրդը:

Փարաւոն փոխանակ հակահարուած մը տալու, նոր ինքնա-
գովութիւն մը սագերգեց.

— Իմ տաղերըս ես կերտած եմ մարմարեայ.
Քարը իմն է, վա՛յ անոր որ կը գողնայ...

— Կեցցէ՛ աշուղ Փարաւոնը, խաս աշուղ է, աղաղակեց ժողո-
վուրդը:

Մերձանիկ ժպիտը շրթունքին սաղեց.

— Հոգը գլխիդ, քարը գլխիդ մարմարեայ,
Քար չեմ գողնար, գայն կը դնեմ քո վրայ:

— Կեցցէ՛ աշուղ Մերձանիկը, — պոռպոռաց ժողովուրդը:
— Եա՛ Փարաւոն, Մըսրի սուլթան, նազը նետէ, սաղը քաշէ,
զա՛րկ, ձեռքիդ զուրպան...

— Իմ երգը ամբողջ մարմար,
Մարմարըս կամար կամար,
Կամարըս շահի յարմար,
Շահը մեռաւ երգիս համար:

— Կեցցէ՛, պոռաց ժողովուրդը:

Երգը Մերձանիկինն էր.

— Քո երգը կ'առնէ հոգի,
Իմ երգը կուտայ հոգի,
Երգըդ միւսը մէլլատ է,
Երգըս վարդի պալատ է:

— Կեցցէ՛ Աշուղ Մերձանիկը, աղաղակեց ժողովուրդը:

Պապուկչիւ Օհան անդամ մըն ալ մէջտեղ նետուեցաւ, սաղ ի ձե-
ռին: Ոմանք ետեւէն վաղեցին արգիլելու, ոմանք ալ հասնելով թոյլա-
տըրել ուղեցին: Վերջինները բազմաց ձայն ունենալով պարտադրեցին
իրենց կամքը: Ու ահա թէ ի՛նչ երգեց Պապուկչիւն Օհան աշուղ.

— Հաւկիթըդ սեւ ու արապ է,
Հաւկիթիդ մէջը պարապ է,
Ա՛լ սագ չառնես ձեռքերուդ մէջ,
Հալըդ պէրպատ ու խարապ է:

— Կեցցէ՛ Պապուկչիւն, աշուղներուն աշուղը, որոտաց քաջ ժո-
ղովուրդը, անկողմնակալութեամբ:

Ու յանկա՛րձ՝

ձիջ մը:

Հէք Օհանիկն ինկաւ գետին:

Փարաւոն իր անգոր կատաղութենէն սաղը նետած էր Պապուկչիւի
քթին բերնին: Խեղճին աչքը սկսած էր ուռիլ ու կապուտնալ: Տասը
քսան հոգի ալ գայն փախցուցին:

Մըցումը վերջ դտած էր յաղթութեամբ ու պարտութեամբ Պա-
պուկչիւն Օհանիկ աշուղի:

Մերձանիկի կողմնակիցները բոլորեցին վիրտուր Օհանիկը ու
պսակեցին զայն իր ճակտէն, տերեւներով: Երկու կտրիճներ ալ բարձ-
րացուցին զայն իրենց ուսերուն վրայ ու ամբողջ ձօյնային մէջ շրջե-

ցան թափօր կաղձած: Մերձանիկ առջեւէն կ'երթար ու կը նուազէր Յաղթութեան ու Կրկին Տեսութեան տաղեր:

Օրը Օհանիկինն էր: Ճօյնան ելաւ ելաւ ու նստաւ:

* * *

Աշուղամարտին յաջորդ կիրակին:

Եօթնաղբիւր:

Ամբողջ Թամզարան աշխտեղ էր: Եօթնաղբիւրը եօթը ալ ունէր, որոնց չորսին բերանները գոցուած էին դերաններով: Առասպելի մը համաձայն այդ աղերէն ջուր խմողին ուղեղը կը ջրոտէր: Ու բոլոր Թամզարացիները, չկարենալով դիմադրել այդ արծաթաջուրին փորձութեան՝ տէր էին մտքի հիւանդութիւններու: Եօթնաղբիւրին գլուխը դիրք էր բռնած Փարաւոնեան խումբը: Փարաւոն նման էր հանճարի եւ հերոսի: Իր սաղը իր հանճարով նուազելէ վերջ, կրնար դայն դէնքի վերածել ու դարնել...

Յանկարծ ահադէր աղմուկով Եօթնաղբիւրէն ներս մտաւ Մերձանեան խումբը, Օհանեաններուն հետ, ու դիրք բռնեց աջ թեւի վրայ: Գիւղին փախուկապետը՝ Տիւաիկ Աստուր, ջորիի մը վրայ հեծած, մրցման բացուածը կատարեց, քանի մը պատշաճ խօսքերով:

Այս բացման խօսքէն վերջ Փարաւոն ելաւ յայտարարեց, թէ՛ ինք բանաստեղծ ըլլալով, եւ ոչ աշուղ, չուղեր մրցման մասնակցիլ: Ժողովուրդը սակայն տարբերութիւն չդտնելով բանաստեղծին ու աշուղին մէջ բողոքեց Փարաւոնի դէմ: Փարաւոն ճարահատ ստիպուեցաւ սաղը ձեռք առնել:

Մեռելային լուծիւն մը տիրեց: Թեւերը անոյ՛ջ թրթռացին ու լսելի եղաւ հետեւեալ տունը.

— Ծափ ու ծուփ տամ, դարն անցեր է աշուղի,
Փարաւոնը հիմակ բացաւ կոյս ուղի,
Համբաւ շինեց մե՛ծ, ինքնատիպ քերթողի,
Ծափ ու ծուփ տամ, Մերձանիկը քոյ կատղի...

— Կեցցէ՛, պոռաց ժողովուրդը:

Մերձանիկ սկսաւ բռնո՞յ յարձակողականի.

— Քերթող չես դու, քերթուած ես,
Քերթուած չես, յաղթուած ես,
Յաղթուած չես, անկէ վարնոց,
Ար նամուսըդ վա՛ր տուած ես...

— Կեցցէ՛, պոռաց ժողովուրդը:

Փարաւոն սոսկալի գրոհ մը տուաւ.

— Աշուղները ցեխ ու քոյ եմ,

Անմամուս եմ, շուն ու խոյ եմ...

Սաղ մը թռաւ օդին մէջէն: Փարաւոնին երգը բերնին մէջ մնաց: Ճակտէն արիւն կը վազէր, հանճարն էր վիրաւորուեր: Օհանիկ լուծած էր իր վրէժը:

Փարաւոնի կողմնակիցները եկան ու ապտակեցին Օհանիկը: Մերձանիկի կտրիճներն ալ վաղեցին Փարաւոնի վրայ: Վայրկեան մը վերջ Եօթնաղբիւրի վրայ թեւ առած կը թռչէին դաւաթ, պնակ, դմելի, շիշ ու քար: Խոտնիճաղանձ կուլ էր:

Իրարանցումին մէջ Մերձանիկի քաջերը ձեռք անցուցած էին կարեւոր աւարը... Փարաւոնը: Գրկեցին դայն ու վերէն վար նետեցին Եօթնաղբիւրի գոռին մէջ: Փարաւոնին հանճարին ծանրութեանէն գոռին ջուրը մինչեւ երկինք ցատկեց: Բանաստեղծը այդ ջուրէն կուշտ ու կուռ խմեց:

Վերը կուլը կը շարունակուէր կատաղօրէն: Փարաւոն վախէն մըտաւ ջուրին մէջ ու ժամ մը առանց շնչելու մնաց այնտեղ: Հրաշալի բան մը կար վերջապէս իր մէջ:

Ուշ առեն պատերազմը վերջացած էր: Գետինները փռուած էին դիակները շիշերու, պնակներու, դաւաթներու, սաղերու:

Այդ գիշեր կռուի դաշտին վրայ, լուսնի լոյսով կը թափառէր հայ աշուղական բանահիւսութիւնը, սրտախոով ողբերով: Կորուստը մեծ էր: Հեռուն կ'երեւէին ոգիները Նահապետ Քուչակի, Սայաթ Նովայի ու Նաղաշ Յովնաթանի, որոնք յարտասուս փղձկած էին:

Բ. Մ Ա Ս

ՓԱՐԱՒՈՆ ՓՐԿԻԶԻ ՄԷՋ

Փարաւոն երկրորդ մրցումէն ողջ առողջ դուրս գալով մտածած էր.

— Թամզարան խեղճ աշուղներունն է, իսկ Պոլիսը տաղանդաւոր բանաստեղծներուն:

Ու մախաղին մէջ երկու հաւ, տասը հաւկիթ ու հաց լեցնելէ վերջ, ջորիի մը վրայ հեծաւ եւ ճամբայ ելաւ դէպի Տամտէրէ, անկէ Ասար-

4093-2011



ճըխ ու անկէ ալ ուղիղ Կիրասոն, ուրկէ ալ նաև աննելով ուղիղ Պոլիս : «Գաւառէն Պոլիս ճամբան ուղիղ է» : Սակայն, Պոլիսէն դէտլի Եէտի Գուլէի Ս. Փրկչեան Աղգ. Հիւանդանոցը ճամբան ոլոր մոլոր եւ խորտուրորտ է :

Փարաւոն մտաւ Ս. Փրկիչի դպրատունը :

Գիչ ատենուան մէջ սորվեցաւ աշխարհաբար, դրաբար, թուրքերէն, պարսկերէն, արաբերէն, հումերէն, Ֆրանսերէն ու փրկչերէն :

Այս վերջին լեզուն որ մեհնադրոշմի չափ խրթին էր տեղւոյն պաշտօնէութեան համար՝ փարաւոնի դրեթէ մայրենի լեզուն եղաւ : Անիկա այդ լեզուին շնորհիւ կրցաւ մտաւորական տեսակցութիւններ ունենալ յիմարանոցի բաժնի յայտնի դէմքերուն հետ : Իր դադափարները շինեց անոնց դադափարներուն եւ բաւական լոյս ստեղծեց այդ մթին յարկերուն մէջ :

Ֆրանսերէնի շնորհիւ կապ հաստատեց միջազգային դրագէտներու հետ : Այդ կապը հետզհետէ այնքան զօրացաւ որ քիչ մնաց... կապուած մնար :

Հումերէնին շնորհիւ յարաբերութիւն մշակեց յոյն աղջիկներու հետ :

Արաբերէնին շնորհիւ Գուրանը կարգաց ու մահմետականի նման սկսաւ փիլաւ ուտել :

Պարսկերենին շնորհիւ հազորդուեցաւ Օմար Պայեամի հետ ու գինի խմել սկսաւ :

Թուրքերէնին միջոցաւ պաշտօնի կոչուեցաւ իբր հայոց պատուէրակի թօփ թաշ :

Գրաբարին շնորհիւ ալ... անթի մնաց ու աշխարհաբարին շնորհիւ ալ... ծարաւ :

«Դժբայտ բան է պղտիկ աղբի մէջ մեծ մարդ ըլլալը», ըսաւ, քիչ մը իրաւացիօրէն :

Սորվեցաւ նաև ընդհանուր ազգաց պատմութիւն : Եգիպտացւոց պատմութիւնը կարգալէ վերջ հաւ մը դողցաւ ու փորոտիքը հանելով հաւկիթով զմուսեց ու ստամոքսին մէջ պահեց, երկուքն ալ յաւերժացնելու համար :

Յունաց պատմութիւնը կարգալէ յետոյ, իբրև նոր սպարտացի, պահպանին սննեակէն վառուած կրակարանը դողցաւ ու իր անկողնին մէջ պահեց :

Թրքաց պատմութիւնը աւարտած օրը խոհանոց մտաւ ու եղած չեղածը կերաւ, իսկ հայոց պատմութիւնը լրացուցած գիշերը Գազլը

Ձէշմէ գողերու հանդիպեցաւ ու մերկացած վերադարձաւ հիւանդանոց :

Աւա՛ղ, վրայ դացած էր նաև իր քերթուածներու տրցակը, կարծուելով թղթադրամներ :

Սորվեցաւ նաև քաղաքական աշխարհագրութիւն :

Գարտէսին վրայ ճշգրեց տեղերը, Ձարայի, Ձիմառայի ու Թամզառայի, որոնց վրայ խաչ քաշեց, գտաւ նաև Եէտի Գուլէն, որուն վրայ ալ աստղանիշ դրաւ :

Սորվեցաւ, թէ Եւրոպան հաւկիթ կ'արտածէ ու հաւ կը ներածէ, թէ Ասիան փիլաւի համար բրինձ կ'արտածէ ու հաւկիթ կը ներածէ : Ափրիկէն խաւար կ'արտածէ ու խաւեար կը ներածէ : Ամերիկան փեսացու եւ սոլար կ'արտածէ ու ծակ դրպան եւ աղջիկ կը ներածէ : Հարաւային Ամերիկան ճերմակ գերուհիներ կը ներածէ ու սուրճ կ'արտածէ :

Գիտութեան մէջ ալ շատ խորացաւ ու մէջէն չկրցաւ ելլել : Մրցանակաբաշխութեան հանդէսի մը նուէր ստացաւ Արմենակ Հայկունիի «Գերեզմանք Երիտասարդաց»ը, որուն դէմ ինքն ալ դրեց «Մարմնաչարժութիւն եւ Հաւկիթաբուժութիւն» գիրքը, դեռ անտիպ :

Թիւր, չափը եւ կշիւր չսիրուեցան իրմէ : Ինք մնաց միշտ անչափ ու անկշիւ : Իր հասակը չափելով ու մարմինը կշռելով գոհացաւ :

Փարաւոն այսքան պաշար հաւաքելէ վերջ իբրև ճշմարիտ հայ՝ սկսաւ դրել եւ լոյս ընծայել թերթ մը, որուն խմբագրապետ կարգեց ինքզինքը, հրատարակիչ՝ նոյնպէս ինքզինքը, գրաշարապետ՝ դարձեալ ինքզինքը եւ ընթերցող՝ միշտ ինքզինքը : Այս թերթը կը կոչուէր «Հաւկիթ», սակայն իւրաքանչիւր թիւ նոր բառ մը կ'ունենար բուն անունը յարաբերող, օրինակ «Գաւառի Հաւկիթ», «Կրթիչ Հաւկիթ», «Անաքլոր Հաւկիթ», «Հիւանդանոցի Հաւկիթ», «Տունի Հաւկիթ», «Իգական Հաւկիթ» : Եօթներորդ թիւը որ պիտի կոչուէր «Արակախ Հաւկիթ», աւա՛ղ, լոյս չտեսաւ : Այս վերջին հաւկիթը քրիս ելաւ :

Թերթէն վերջ «Կոյս Փրկիչ» անուն տարեցոյց մը հրատարակեց, միշտ խմորատիպ : Գրքին կէսը նուիրեց յիմարապահ ճանիկ աղբոր կեանքին ու գործին : Գեղարուեստական ու գրական բաժնին իրենց աշխատակցութիւնը բերած էին յիմարանոցի յայտնի դէմքերը : Փարաւոն անոնցմէ շատերուն մէջ ալ «անիծեալ» տաղանդ մը գտած էր : Կատաղի յիմար մը, Վարպետ Աբիկ, քսան ոտանաւորներ ստորագրած էր : Քերթող Աբիկ որոշ լեզու չունէր, իր բարբառը աւելի փրկչերէնի կը մօտենար : Անոր տաղերուն մէջ կային հայերէն, թուրքերէն, պարս-

կերէն, յունարէն ու իտալերէն բառեր: Լեզուներու եղբայրակցութիւն մը: Ներդաշնակութիւնը յիմարանոցի ձայները կը յիշեցնէր ու կը սոս-թը գինովի մը քալուածքը: Իր նիւթն էր սիրոյ նախանձը եւ ոճիրը:

Փարաւոն խիստ ինքնատիպ էր գտած դանոնք ու պղտիկ սրբա-գրութեամբ մը ընդունած: Քերթող Աբիկ ալ բարկանալով կատաղի սրբագրութիւն մը ըրաւ, Փարաւոնի ստամոքսին կից մը դարնելով:

Հատորին մէջ էր նաեւ շղթայակապ խենթ մը, Ծիրօղօֆ Սամուէլ, որ քառասուն էջերու մէջ իմաստասիրական տեսութիւն մը կը պարզէր ապացուցանելու համար, թէ ոչինչ կարելի է... ապացուցանել: Փա-րաւոն խիստ փաստացի գտած էր այս տեսակէտը ու չէր կրնար ապա-ցուցանել, թէ Ծիրօղօֆ Սամուէլ իսկապէս շղթայակապ է եւ կամ ինք չէ... շղթայցու:

Այս գրքին լոյս տեսնելէն քանի մը շաբաթ վերջ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցը բերուեցաւ մեծ գրող մը՝ Եղիա Տէմիրճիպաշեան: Փարաւոն վաղեց գրագէտին վրայ իր «հակիթ»ներով ու «կոյս Փըր-կիչ»ով:

Գրագէտը կարդալէ վերջ՝ տակը դրեց հետեւեալը.

«Անտիպ, ինքնատիպ, փրկչատիպ»:

Փարաւոն ուրախութենէն խենթեցաւ... ամբողջովին: Եղիային գլուխը խից ու համբուրեց: Օր մը վերջ անոր սակառ մը հակիթ նուիրեց: Անոնք որոշեցին շարժման մէջ դնել հայ ազգին միտքը, ոտ-քերը, ձեռքերը ու ամբողջ... մարմինը, բայց շաբաթ մը վերջ յուսա-հատած՝ իրենք մտան շարժման մէջ:

Փարաւոն Փրկիչի հողուն վրայ գործելէ վերջ, Փրկիչի ծովուն վրայ ալ բաւական գործունէութիւն ունեցաւ: Միշտ կը բռնէր... ձուկ: Լաւ ալ կը լողար:

— Ինչո՞ւ այսքան փափաք տուած ես լողալու, դուն որ դրակա-նութեան ու գիտութեան մարդ ես, հարցուցին օր մը իրեն:

— Լողալ կը սորվիմ, որպէս զի օր մը, երբ բժիշկ կամ դրագէտ ըլլամ, կարենամ պարտքին մէջ լողալ, պատասխանեց:

Փարաւոն պարտքի մէջ լողալէ առաջ՝ մեկենասի մը ոսկիներուն մէջ սուգեցաւ ու բժշկական վարժարան մտաւ:

Երկրիս վրայ գտնուող լաւագոյն արհեստներէն մէկը ընտրած էր: Արհեստ մը, որ գրիգ չունի եւ է յաւիտենական: Այդ արհեստաւորնե-րէն փա՛ռք Աստուծոյ, շատ ունի հայոց ազգը:

Այդ արհեստն է ուսանողութիւնը:

ՓԱՐԱՒՈՆ ԱՏԱՄՊՈՂԻ ԶՈՒՐԵՐՈՒՆ ՄԷՋ

Բժշկական վարժարանը հակառակ անկոխ տեղ մը չըլլալուն, փա-րաւոն դիջած էր այնտեղ մտնել, յանուն կոյս ուղիի մը: Քանի մը տա-րի կաղն ի կաղ ընթանալէ վերջ, օր մըն ալ, դեռ թերաւարտ, դուրս նետուեցաւ համալսարանէն:

Ա՛լ ի՞նչ հարկ բժշկական վարժարանի, երբ ամբողջ երկիրը մտած էր շոր ու անկոխ ուղիի մը մէջ: Ատիկա Օսմ. Սահմանադրութիւնն էր: Երկրին մէկ ծայրէն միւսը, լայնքով ու երկայնքով, կը հնչէր Ա-զատութեան, Եղբայրութեան, Հաւասարութեան ու Արդարութեան հոյակապ սաղերգութիւնը: Փարաւոն ո՞ր օրուան համար պիտի պահէր իր հանձարը: Սաղը լարեց ու փողոց ինկաւ: Դուրսը ամէն կողմ փող ու թմբուկ կը դարնուէր: Իր կոշտ ու պոշտ մարդու բարբառոսագեղ շարժումները ու իր վայրի սաղին հնչիւնները կը խափանուէին ժխտ-րին ու խանդավառութեան մէջ:

Փարաւոն չյուսահատեցաւ սակայն: Անիկա իր սաղով թառեցաւ գերեզմանաքարերու վրայ, երկնելով յիշատակի ու յաղթութեան տա-ղեր, անիկա թառեցաւ դազաղներու վրայ, վայելով դամբանականներ ու սրճարաններու մէջ՝ աւետելով Ազատութեան կտակարանը:

Ազատութեան ու Արդարութեան հոսանուտ թափօրին մէջ Փարա-ւոն Սէմ – Անտոն հակած էր դէպի գրականութիւն: Բժշկութեան ա-տե՞նն էր միթէ: Բոլոր մարդիկ զուարթ ու կայտառ կը կաքաւէին եւ կը ցնծային: Հիւանդներն իսկ առողջացած ու տակաւին մեռելներն անդամ անմահացած էին:

Փարաւոն ամէն օր հանդէսի մը, հաւաքոյթի մը, ժողովի մը մէջ էր, ի՞նչ փոյթ թէ շատ անգամ ժողովականներուն վերջին նստարանին վրայ:

Շատ խոնարհողը շատ պիտի բարձրանայ, կ'աւետէ Ս. Գիրքը: Այսպէս կը մխիթարէր ինքզինքը Փարաւոն:

Սակայն, երբ խենթութեան օրերը անցան, Փարաւոնի վիճակը հետզհետէ աւելի անկում ունեցաւ: Այս անգամ բոլորովին լքելով հոս-տորութիւնն ալ՝ նուիրուեցաւ գրականութեան, արտադրելով բոլորո-վին տարաշխարհիկ քերթուածներ, յոտից ցգլուխ ինքնատիպ:

Ահաւասիկ նմոյշ մը.

ՄԵՂԱԽՈՐԸ

«Քառասուն հոգի մէկ կառքի մէջ նստած կ'երթայինք .
կառքը կ'երթար հանգիստ ու քեթեւ,
Երբ, դու նստար, մեղաւոր կիմ,
կառքը մէկէն չոքեցաւ...»:

Երբ Փարաւոնի բարեկամները բացատրութիւն կը խնդրէին իր
այսօրինակ քերթուածներուն համար, բանաստեղծը կը պատասխանէր
ինքնավստահ .

— Եղբայր, անհասկնալի ի՞նչ կայ այս քերթուածին մէջ: Քառ-
սուն հոգին անմեղներ են ու հրեշտակի նման թեթեւ են: Իսկ երբ մեղ-
քերով ծանրաբեռնուած մեղաւոր կին մը կը նստի կառքին վրայ, կառ-
քը չկարենալով տոկալ կը կքի ու կը չոքի: Ասոնք հաճախ քմայքներ
են: Ինքնատիպ ու անկոխ են: Դուք այնքան վարժուէր էք հասարակ
կաղապարէ դուրս եկած զգայնութիւններու եւ պատկերներու, որ չէք
կրնար իմ կոյս ու վայրի տաղերս ըմբռնել: Ի՞նչ դժբախտ բան է պղզ-
տիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը:

Ու Փարաւոն բոլորովին դէն շարտելով Հիպոկրատի գիտութիւ-
նը՝ Հոմերոսի ճամբան բռնեց ըսելով .

— Աւելի լաւ է այս ազգը բժշկել բանաստեղծութեամբ քան թէ
բժշկութեամբ, որքան ալ դժբախտ բան ըլլայ պղտիկ ազգի մէջ մեծ
մարդ ըլլալը:

Եւ իր հարիւրաւոր «անտիպ, ինքնատիպ ու փրկչատիպ» քեր-
թուածները զարկած թեւին տակ անիկա թափառեցաւ խմբազրատունէ
խմբազրատուն: Վեց ամիս շարունակ իր անկոխներով կոխեց Պոլսոյ
դաղէթաներուն սիւնակները, մինչեւ որ իր ստամոքսը ազաղակեց
բարձրագոյն .

— Աղատութի՛ւն... Արդարութի՛ւն...

* * *

Անցնելէ առաջ իր վաւերական արկածներուն՝ հարկ է մի քիչ պե-
զել անոր փորը:

Փարաւոն խիստ ինքնատիպ էր: Իր ինքնատպութիւններէն ահա՛
մի քանին:

Հայոց ազգը միշտ հիւանդկախ մարդեր ճանչցած էր բանաստեղծ-
ները, մինչ Փարաւոն կազմով ըմբռնական էր: Դունչը եթէ կոկորդին
վրայ սեղմէր, կրնար իր խպլպէն եօթը տոսղակ ճարպ արտադրել:
Ունէր նաեւ առողջ մի գլուխ: Կարելի էր իր գլխուն վրայ շատ բաներ

կոտրել, մանաւանդ հաւկիթներ, եկած գաւառի հաւնոցներէ: Հաւերն
ալ շատ սիրուեցան իրմէ, նամանաւանդ երբ այդ հաւերը ազգային
էին, այսինքն՝ եկեղեցիի, դպրոցի, հիւանդանոցի, յիմարանոցի, որ-
բանոցի ու վանքի հաւեր: Մուսային հետ տեսնուած պահուն, եթէ դի-
մացի բլուրին վրայ հնդկահաւ մը նշմարէր, լքած Ողիմպոսը մինչեւ
Հընտրատան կը հալածէր կենդանին:

Իր հանճարը, Աստուծմէ խուրրուած դանձ, հարկ էր պահել ու-
ժեղ մարմնի մը գանձարկղին մէջ: Ուրիշ բացատրութիւններով՝ հան-
ճարը պտուղ էր ու մարմինը կեղեւ: Ու կեղեւը հետզհետէ այնքան
լայնցաւ, որ մէջի պտուղը տուժեց: Հասակն ալ անվնաս էր. եթէ նո-
ճի չէր, լաւագոյն կաղնեփայտն էր սակայն:

Օ՛ր, դէմքը, դէ՛մքը... Անիկա նման էր լուսնին, գիշերը վեր շատ
նայելուն: Երբ աղուորի մը սիրահարուեցաւ՝ զաղբեցաւ լուսնին նա-
յելէ, չբաւարանալով համար իր սիրուհիին: Այս անգամ առջեւը նա-
յեցաւ: Տեսածը եղաւ դրումներ ու դորտի աչք:

Ինքնատիպ էր նաեւ բանաստեղծին հազուատ կապուտը: Կը կրէր
եռանդոյն — սեւ, ճերմակ, ձիթագոյն — ռէտէնկոյնք մը, որ պատիւ կը
բերէր զայն ձեւած ու կտրած հանգուցեալ դերձակին: Այդ ուշտէնկո-
թով ամբողջ Բիւզանդական Կայսրութիւնը չափչփած էր Փարաւոն:
Չէր կրնար անցնիլ հրէական սահմաններէն միայն, քանզի մի ոմն Պո-
լսօր պուէտին ետեւէն կ'իյնար, ուշտէնկոթին փէշէն քաշելով ու ար-
ծաթ մէճիտ մը ցուցնելով: Անգամ մը նոյնիսկ ոսկի մը առաջարկած էր
հայ մեծանուն հնամասնաւ մը, զայն Մաքսուտ Ամերլայինը կարծե-
լով: Հայ դերասաններ ալ քանի մը անգամ վարձու ուղած էին զայն,
լորտի, դուքսի, իշխանի դերեր ներկայացնելու առթիւ:

Այդ ուշտէնկոթը շատ թշնամիներ ու շատ բարեկամներ ունեցաւ:
Այդ հազուատը Փարաւոն ձեռք ձգած էր ինքնատիպ քերթուած մը տա-
լով ազգային խմբազրապետ պապա Քասիմին:

Պապա Քասիմի հակառակորդ հրապարակագիր մը կը պնդէր փր-
փրելով որ այդ ձիթագոյն ուշտէնկոթը իրեն խոստացուած էր, եօթը
տարի առաջ: Կ'աւելցնէր, թէ վեց ամիս յօդուած դրած է անոր տիրա-
նալու համար:

Փարաւոն խիստ հպարտ էր իր յաղթանակին համար: Մէկ քեր-
թուած հաւասար էր մէկ ուշտէնկոթի: Ազգին բանաստեղծը, այս ուշ-
տէնկոթը հագած, շրջեցաւ ազգային խմբազրատուներու մէջ եւ քեր-
թուածներ առաջարկեց գլխարկի, Փէսի, շապիկի, տափաթի, դուլ-
պայի, թաշկինակի ու կօշիկի փոխարէն: Դժբախտաբար, շատ հունձք

չկրցաւ քաղել, քանզի ազգային խմբագիրները իրենք արդէն անգլխարկ, անվարտի եւ անքանքար էին: Մինակ զոյգ մը ճերմակ գուլպայ կրցած էր ստանալ Հմայեակ Արամեանցէ, գրաբարէ աշխարհաբարի վերածուած երկրագործական յօդուածի մը փոխարէն, զոր բանագողած էր յանուն գուլպայի: Իսկ յայտնի տարեցուցագիր մը թաշկինակ մ'իսկ զլացած ըլլալուն իրեն, բանաստեղծը հանձարեղ գաղափարը յղացած էր իր նուէր ստացած տարեցոյցը, կողքին վրայի ձօնը քերելով, ազգային նպարավաճառի մը ծախելու եւ տեղը ստանալու հինդ դրուշ, որով գնած էր ոչ միայն թաշկինակ մը, այլ եւ վարտիկ մը: Պուէտը լրագիրներէ յուսահատած՝ հարուստ անհատի մը քերթուած մը զրկած էր, տախտ մը խնդրելով: Շնորհուած էր:

Երեք տարի հազաւ այդ տախտը, աւանց օր մը զայն խոնարհեցնելու արդուկի տակ: Սեւ ու կլոր, անիկա նման էր շոգենաւի մը ծխնելոյցի խողովակին: Իր գլխանոցը կարմիր Փէս էր: Եթէ անիկա բնաւ չլեցուեցաւ ոսկիով, սակայն, յորդեցան անոր եղբերը իր հանձարին իւզերով:

Ընդհանուր երեւոյթով Փարաւոն նման էր «արգուհալ» գրողներուն, ի Եէնի ճամբի:

Աւելի քան ինքնատիպ էր նաեւ ազգային բանաստեղծին ձայնը: Երբ խօսէր՝ կարծես հրեհ էր ծանուցանէր: Ամէն ձայնաւոր դիր իր կոկորդին մէջ երկուորեակ գաւակներ կը ծնանէր: Այդ երկուորեակները անմիջապէս երգիչ կը դառնային՝ օձերն ու յովատակները դէթելու աստիճան: Հաւկիթը ձայն կը բանայ, կ'ըսեն: Փարաւոնի բերնին մէջ սակայն հաւկիթը անսլակաս ըլլալով ձայնը դոցուած էր: Սէմ-Անտոնի ձայնը ունենալու համար տաք հաւկիթ մը խոթելու է յիմարի մը բերնին մէջ:

Վերջապէս, բաղում են անոր նոյնիսկ արտաքին ինքնատուրթիւնները: Ի՞նչ օգուտ, քանի որ «գոթախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը»:

* * *

Փարաւոն ստիպուեցաւ գործնական քայլ մը նետել, բաւական կոխուած ճամբու մը վրայ: Քսանի դահեկան ամսավճարով վարձեց տան մը տանիքին ներքեւ գտնուող շեղառաստաղ կիսախուցը ու քանի մը պառաւներու բրօքապանտով սկսաւ կէս գիտական, կէս ժողովրդական բժշկութիւն մը, զոր անուանեց՝ «հաւկթարութիւն»:

Փարաւոն դեղագիր գրելու ոչ իրաւունք եւ ոչ ալ կարողութիւն ունէր, սակայն, կրնար այս գետնին վրայ իր ոտանաւորները ոչ միայն գրել այլ արժեցնել ու հնչեցնել: Գտած էր անդեղ դարմանումի հրաշալի մէթոտը ու սկսած էր կիրարկել իր հիւանդներուն վրայ:

Իր հիւանդներուն առաջինն ու գլխաւորը ինք ըլլալով, ան ինքզինքն սկսած էր: Իր մէթոտը, գիւտը, դեղը ամբողջովին մէկ բան է կը բաղկանար: Այդ բանը հաւկիթն էր: Ամէն մարդ պէտք էր կլլել զայն դեղահատի մը նման: Ամէն օր, ամէն տեղ, ամէնուն հաւկիթ: Հաւկիթը խաշելը բարբարոսութիւն ու եփելը սրբապղծութիւն էր: Հում հաւկիթ:

Սեր բժիշկը առաւօտեան ժամը տասնին կը բարեհաճէր ելլել անկողնէն: Կէս օր կ'ընէր շարժելով իր կզակը, գրիչը ու... մարմինը:

Հիւանդները կ'ընդունուէին ժամը երկուքէն — չորս:

Շատ անգամ հիւանդին հարցում չուղղած ու սլատասխան չստացած — այցելինը կանխիկ գրպանած — անոր երեսն ի վեր կը պոռար բարկութեամբ.

- Հաւկիթ կլլէ՛ ...
- Կը ներկայանային ստամոքսի ցաւէ տառապողներ ու Փարաւոն անոնց գլուխն ի վար կ'աղաղակէր.
- Հաւկիթ կլլեցէ՛ք ...
- Ջերմամիզութենէ տառապողներ.
- Հաւկիթի լոգա՛նք ...
- Սրտի հիւանդութիւն ունեցողներ.
- Հաւկիթի օշարակ ...
- Աղիքներէ անհանգիստներ.
- Հաւկիթանոյշ ...
- Թոքախտաւորներ.
- Հաւկիթարեւ ...:
- Անկարողներ.
- Հաւկիթով հաւկիթ ...

Այնքան հաւկիթ յանձնարարեց մեր Փարաւոնը, որ քիչ ատենուան մէջ, հրապարակին վրայ, հաւկիթին գինը հինգ փարա յաւելում ունեցաւ: Պոլսոյ բոլոր հաւկիթավաճառներն ու նպարավաճառները, խիստ դոհ ախորինակ հաւկիթապաշտ բժիշկի մը գոյութենէն, սկսան մեր Փարաւոնին գիտութիւնը փառաբանել ու ծանուցանել իննէ սագով ու հաւկիթէ աղադեբներով: Փարաւոն սակառներով ձրի հաւկիթ սկսաւ ստանալ, երբ լուեցաւ, թէ ինք հաւկիթէ զուրկ է:

Անիկա օրեր ունեցաւ որ չկրցաւ հասնիլ իր հիւանդներուն, որոնք ամբողջ տանը սանդուխները բռնած էին: Այն ժամանակ իբր այցադին մէջմէկ մէծիտ աններէն վերջ՝ սանդուխին գլուխէն պոռաց.

— Ամէնքնիդ ալ հաւկիթ կլլեցէք, ու ճամբեց ապշութեամբ ու հիացումով խառնուած իր հիւանդները:

Օր մը սահայն իր օդնական պառաններէն մին իրեն մայրաբար հասկցուց, թէ այսպէս ամէնուն կոկորդէն վար պարզօրէն հաւկիթ սահեցնելով՝ ատեն մը վերջ իր կոկորդէն վար ոչինչ պիտի կրնայ սահեցնել: Որովհետեւ շատեր լսած ըլլալով հաւկիթարութեան առաւելութիւնները, որոնք բազմակողմանի էին, պէտք չէին դգար Փարաւոնին այցելել ու այցադին վճարել: Հարկ էր հաւկիթը հաւկիթ պահելով հանդերձ մէթոտը խրթին ձեւի մը վերածել, պարտադրելով հիւանդներուն, որպէս զի հաւկիթարոյժին ներկայանան:

Փարաւոն հասկցաւ իր ընելիքը:

Հետեւեալ օր՝ ներկայացող առաջին հիւանդին խօսեցաւ ու ըսաւ.

— Ճաշէդ ճիշդ տասնրեօթը վայրկեան վերջ իրարու վրայ ճիշդ եօթը հաւկիթ պիտի կլլես: Իսկ երեկոյեան ճաշէդ ճիշդ վաթսունը՝ հինգ վայրկեան վերջ չորս հաւկիթ պիտի կլլես: Այս պատուէրս պիտի շարունակես երկու օր ու անմիջապէս վերջ կրկին ինծի պիտի ներկայանաս:

Երկրորդ հիւանդի մը ըսաւ.

— Նախաճաշէդ հինգ ժամ առաջ հինգ հաւկիթ, վեց ժամ առաջ վեց հաւկիթ ու երկու ժամ առաջ ալ երկու հաւկիթ պիտի կլլես: Այս պատուէրս դործադրելէդ անմիջապէս վերջ պէտք է ներկայանաս ինծի:

Երրորդ հիւանդի մը.

— Գիշերը քնանալէդ ժամ մը վերջ մէկ հաւկիթ, երկու ժամ վերջ՝ չորս հաւկիթ ու երեք ժամ վերջ վեց հաւկիթ պիտի կլլես: Եթէ շուտուէրս, մահ կը պատահի: Ըսածներս դործադրելէդ անմիջապէս յետոյ ինծի եկուր:

Մէթոտը այսպէսով դարձուց խրթին եւ հիւանդները կրկին ստիպուեցան գունդադունդ այցելել Փարաւոնին:

Օր մը, բացառիկ ժամադրութեամբ մը, իրեն ներկայացաւ մեծատուն կին մը, մէկ ոսկի այցադին վճարելով:

— Տոբթոր Փարաւոն, տղաս թոքախտ է, տարի մըն է որ կը տառապի: Բժիշկներ, դեղեր, օդափոխութիւններ ո՛չ մէկ օգուտ տուին... Ա՛հ, ճար մը, մէկ հատիկս է...

— Տիկին, Ձեր տղան շա՛տ քաշեր է...

— Ա՛հ, այո՛, Տօքթէոր, շատ քաշեց, ճիշդ տարի մըն է ես ալ իր հետ կը քաշեմ...

— Ձեր տղան ես կը կարծեմ որ տարիէն աւելի է որ կը քաշէ...

— Ո՛չ, տօքթէոր, ճիշդ տարի մըն է...

— Ես հիմակ Ձեզի դեղագիր մը կը դրեմ ու տեսէք:

Ու Փարաւոն իր քերթուածներու տրցակին մէջէն էջ մը թուղթ քաշելով թխեց հետեւեալը.

- Խըմէ՛ արփի,
- Կե՛ր լէպլէպի,
- Ու սիմիթ
- Կըլլէ՛ փիլաւ,
- Մէկ հնդկահաւ,
- Տասն հաւկիթ...

Տիկինը հաղար ու մէկ շնորհակալութիւններով ու հաւատքով հեռացաւ բանաստեղծ – բժիշկին քովէն ու դնաց ոտանաւորը իր ձեռքով դործադրելու:

Փարաւոնի համբաւը օրէ օր կ'աշխարհակալէր: Անոր համբաւը իր փողոցէն ելլելով ամբողջ թաղը գրաւած էր, քիչ վերջ մէկ թեւը երկնցուցած էր դէպի Պոլլիս ու միւս թեւը դէպի Բերա: Այդ թեւերը իրենց ասիւրուն մէջ կը բռնէին հիւանդները ու կը բերէին Փարաւոնին առջեւ: Այդ համբաւը ծովերէ ալ անցաւ ու մտաւ մինչեւ հաւնոցներու, ազարակներու եւ կուսանոցներու մէջ:

Ու տակաւին պատահեցաւ ալ, որ այդ ոսկեհաւկիթ շրջանին քանի մը հիւանդներ ալ հաւատքով կամ դիպուածով բժշկուին: Ա՛լ երկրին սահմանները նեղ կուգային Փարաւոնի համբաւին: Պահ մը մտադրեց մեկնիլ Փարիզ կամ Վիեննա ու միլիոններու տիրանալ: Սկսաւ ինք եւս հաւատալ իր հաւկիթարութեան հրաշքներուն ու մարդարէի մը յափշտակութեամբ բարձրադաղակել ու պատգամել:

— Տէրը հաւկիթ է ընծայեր, իսկ դուք չէք կլլեր, ամբարիշտներ: Այն կրակը, որուն վրայ հաւկիթը կ'եփէք կամ կը խաշէք, օր մը ձեզ պիտի այրէ:

Փարաւոն իր յաջողութիւններէն ա՛լ ինքնավստահ, ա՛լ յաւակնոտ ու շփացած՝ նախ փոխեց իր սենեակը: Իջաւ վարի յարկը, ամսական տասը դահեկան աւելի վճարելով: Տպել տուաւ այցաքարտ մը, որուն վրայ նշանակեց հետեւեալ տիտղոսները.

Փարաւոն Աէմ Անտոն
 Տօքթէոր ի մեղեդի ու հաւկիթի
 ի Կէտիկ Փաշա
 Չանաք Փողոց
 Թիւ 21

Ու ամէն տան մէջ իր անունին շուրջ պսակներ կը հիւսուէին : Ամէն բերնի մէջ գեղօն մը կը ծաղկէր իրեն համար :

Պառանները, բրօքականտիտները, կիցը կերած էին ու կը բամբասէին Տօքթէոր Փարաւոնը : Գովասանքներու ուժեղ համերգին մէջ սակայն այդ շատուկներուն աննպաստ մեներգները անլսելի կը մնային : Փարաւոն վճռականօրէն կը յայտարարէր իր գիւտն ու կը բարձրացնէր իր հեղինակութիւնը ... հաւկիթի :

— Հաւկիթ կլլեցէք ու նոյն խոկ մահէն կ'ազատիք : Ա՛լ վերջ մահերուն : Եթէ մէկը տասը տարի ինծի ներկայանայ ամէն օր՝ մեռնելէ ընդ միշտ կ'ազատի : Հաւկիթ կլլեցէք, սակայն, ինծի ներկայացէք գիտնալու համար թէ հաւկիթ մը ե՞րբ կլլելու ու ի՞նչպէս կլլելու է :

Այլ, աւա՛ղ, չուշացան ձախորդ օրերն ալ :

Թոքախտաւոր մը, չորս ամսուան մէջ ինը հարիւր վաթսուն հաւկիթ կլլելէ վերջ մեռաւ : Լուրը բերին Փարաւոնին : Բժիշկը անայլմէն պատասխանեց .

— Ի՞նչ ընեմ, հաւկիթը զինքը կլլեր է : Հաւկիթին հետ խաղալ չըլար ... Հաւկիթը լաւ չկլլեցի՞ր մի, ան քեզի կը կլլէ ... Եւ փառք յաւիտեանս ամէն :

Քաղցկեղ ունեցող մըն ալ մեռաւ, ութը ամիս հազարաւոր հաւկիթները կլլելէ վերջ : Լուրը բերին Փարաւոնի .

— Ի՞նչ ընեմ, թող դաւառի հաւկիթ կլլեր : Պոլսոյ հաւկիթները դաւաճան են պոլսեցիներուն նման : Պինդ ալ չեն : Գաւառի հաւկիթը հրաշագործ է :

Ուրիշ հիւանդ մըն ալ խենթեցաւ տասնըչորս ամիս հաւկիթ կլլելէ վերջ :

Այդ անգամ լուրը տարին կառավարութեան առջեւ : Քիչ մնաց, որ Փարաւոն սատանայի կրակէ հաւկիթ մը պիտի կլլէր : Ատեն մը բանտարկուելէ վերջ ազատ արձակուեցաւ, իբրեւ անպատասխանատու ... հաւկիթ : Բժշկութիւնը արդիւրեցաւ ու վերջ դտաւ հաւկիթի, հաւի, փիլաւի, հնդկահաւի հրաշալի ոսկեջրջանը եւ յաջորդեց պանիրի, պղպեղի, աղի ու լեղի եւ ցամաք հացի խաչաշրջանը :

Աստուած, երբ դուռ մը գոցէ՝ ուրիշ մըն ալ կը բանայ, կ'ըսեն մեր մամիկները :
 Ընդդէմ այդպէս ալ եղաւ մեր Փարաւոնին համար :

* * *

Փարաւոնի Պոլսոյ դիւղերէն մէկուն մէջ քիչ շատ արծաթատէր հօրեղբայր մը ունէր : Իրարու հետ անհաշտ էին : Այս հօրեղբայրը հիւանդացած էր ու փափաքած իր քով ունենալ իր եղբօր խելացի սղան՝ Փարաւոնը, իր վերջին օրերուն :

Բանաստեղծը իբրեւ աղբական ու բժշկապետ փութացած էր հիւանդին մահճին մօտ : Պահապան հրեշտակի մը նման կը հսկէր իր հօրեղբօր վրայ, չմոռնալով օրական տասներկու հաւկիթ կլլեցնել անոր :

Այսպէս անցան քանի մը շաբաթներ : Վերջ ի վերջոյ հիւանդը դժկամակեցաւ ու չփափաքեցաւ ա՛լ հաւկիթ կլլել : Զէ՞ որ մէկ արիւն ու մէկ ոսկոր էին : Փարաւոն ինք կլլեց հաւկիթները, յանուն իր հօրեղբօր արեւշատութեան :

Սեւ օր մըն ալ հիւանդը հաւկիթ մը կլլեց ու ոտքերը տնկեց : Փարաւոն ուրիշ օրուան չէր սպասեր արդէն : Իր հօրեղբօր վրայ դամբանական մը խօսելէ վերջ առաւ իրեն ժառանգ մնացած յիսուն ոսկին ու հեռացաւ :

Առաջին դործը եղաւ երթալ թրքական ճաշարան մը : Ճաշէն վերջ ուղղուեցաւ դէպի Պապը Ալի ու Սիրքէճի, ուրկէ վարձեց բեռնակառք մը ու տմպեց թուրք դրամաճառանոցի մը առջեւ : Փոշեպատ դարակներէն հարիւրաւոր գրքեր վար առնել տալէ վերջ գնեց Ոսթանի, Յիրտուսի, Հաֆըղի, Սաատիի, Ճալալիի, Էպիւլ Էլայի բոլոր գործերը ու լեցուց կառքին մէջ : Կառապանը քչեց կառքը քանի մը վայրկեան երբ Փարաւոն հրամայեց .

— Կեցի՛ր, կառապան :
 Երկրորդ գրատունէ մը ներս մտաւ Փարաւոն ու գնեց Շինասիի, Զիա Փաշայի, Նամըզ Բէմալի, Էպու Զիայի, Նաճիի, Մէհմէտ Էքրէմի, Էշրէֆի, Թէվֆիք Յիքրէթի երկերը : Կառքին մէջ լեցնելէ վերջ, հրամայեց յառաջանալ :

Երրորդ գրածախի մը առջեւ կանգ առնելով, անկէ ալ գնեց Ասլի Ֆերէմի, Քէօք Օղլուի, Յարիսա Շիրիմի, Լէյլա իլէ Մէհմետի, Պիմ պիբ կէճի, Աշըզ Կարիպի, Եանըֆ Քերէմի, Շահ Իսմայիլի գրոյցները : Լեցուց կառքին մէջ : Ինք ալ կառապանին քով նստելով հրամայեց .

— Յառա՛ջ, դէպի Կէտիկ Փաշա :

Կէս ճամբան կառքը չորրորդ անգամ կեցնելով խպարավաճառի մը խանութին առջեւ, դնեց երկու սակառ հաւկիթ, պաստրմա, սուճուխ, պանիր: Բանի մը վայրկեան վերջ դարձեալ կեցուց կառքը ստղալաճառի մը առջեւ ու դնեց ընկոյզ, կաղին, չամիչ, նուշ ու պաստեղ: Կառապանը սպուռչած էր:

Փարաւոն քչել տուաւ կառքը ու կառապանին հետ սկսաւ խօսիլ Արուեստի, Գիտութեան ու Գրականութեան շուրջ: Վեհանձնօրէն ալ հաւկիթ կոտրելով մէկ հատը կառապանին կլլել տուաւ, միւսը ինք քաշելով: Սորհուրդ տուաւ ձիերուն մերթ հաւկիթ կլլեցնել, կառքը հաւկիթով լուալ եւ մանաւանդ հաւկիթները աժան փոխադրել: Ըսաւ, թէ Գիտութիւնը հաւկիթով կը դործէ, Արուեստը հաւկիթով կը գեղեցկանայ ու Գրականութիւնը հաւկիթով կը ստեղծէ: Յետոյ խօսեցաւ իր դնած միրգերուն մասնայատկութիւններուն մասին:

Այն օրը կառապանը անկոխ բաներ իմացաւ: Լսեց, թէ պաստրման սրամտութիւն կը պարզեւէ ու մտածումը կը խնկաւետէ, սուճուխը անմահ յղացում կ'ընծայէ ու լուրիան պատգամներ արձակելու կ'օգնէ: Պանիրը հոգին կ'իւղոտէ ու չամիչը խոյունածքը կը քաղցրացնէ: Իսկ ընկոյզով թուղը մարդս միշտ քսան տարեկան կը պահէ:

Կառապանը խիստ հետաքրքիր ու աղչահար պատասխանեց.

— Հապա, էֆէնտի, օղին ի՞նչ կ'ընէ... Ես գիշեր ցերեկ օղի կը նետեմ... Հաւկիթէ, թուղէ բնաւ համ չեմ առներ:

— Լաւ ըսիր, օղին ալ լաւ է, եթէ մէջը հաւկիթ մը կոտրես ու ապա խմես: Լաւադոյն է, եթէ իբր աղանդեր ունենաս փորը բրինձով լեցուած հնդկահաւ մը:

Փարաւոն քանի մը շիշ ալ օղի դնեց: Քիչ վերջ հասած էին արդէն կէտիկ փաշա: Փարաւոն իր գնածները փոխադրել տուաւ իր վերնայարկի խցիկին մէջ, ու կղպելէ վերջ դռնակը, քաշուեցաւ աշխարհէն ու մարդոցմէ:

Իր խոնարհ էր սնանիլ գրքերով եւ ուտելիքներով ու ստեղծել արեւելեան կոյս մարմին մը եւ արեւելեան ինքնատիպ գրականութիւն մը:

Քառասուն օր ու քառասուն գիշեր բանաստեղծը իր խուցին մէջ կարդաց գրեց, կերաւ խմեց:

Բանաստեղծին սենեակին առաստաղին ճիշդ կեդրոնը հսկայ ծակ մը բացուած էր, ունենալով թովնտի խորութիւն: Փարաւոն իր չհաւնած գրքերը նետած էր այդ ծակին մէջ: Քառասուն օր վերջ ոչ կար-

դալիք գիրք մնացած էր եւ ոչ ալ կլլելիք հաւկիթ: Այս վերջինները արդէն շատոնց աւարտած էին: Իր գրպանն ալ սրարպուած էր:

Գաղափար մը թառեցաւ իր ուղեղին ճիւղերուն վրայ: Մակի գրքերը ծախել ու գրպանի ծակը փակել: Մի փոքրիկ գիւտ: Անմիջապէս դրացի անեցիներէն վերելակ մը ուղեց ու գրքերը վար առաւ: Չարկաւ դանոնը իր կռնակը ու տասպանակ ուխտի առաջացաւ մինչեւ Պապը Ալի: Քառորդ գինով ծախելէ վերջ ուղղուեցաւ դէպի Գում - Գարաւ:

Ճամբու ժխորին մէջ կը լսուէր իր սրկորին կանչը.

— Արդարութիւն եւ Աշխատանք:

* * *

Փարաւոն իր ձեռք անցուցած դրամով ուղղուեցաւ Գում - Գարաւ, վարպետ Թորոսին համբաւեալ ճաշարանը, լսած ըլլալով, որ այնտեղ քաջ խոհարար մը համեղ բաներ կ'եփէ:

Փարաւոն մտաւ խանութէն ու գիրք բռնեց խոհանոցին մօտ դանդաղ սեղանի մը առջեւ ու ստուաց.

— Հաւ մը, ամբողջ:

Ներկաները չճեցան:

Փարաւոն կրկնեց.

— Հաւ մը, ոտքէն մինչեւ գլուխը:

Սանութպանը անձամբ հաւը դրաւ Փարաւոնի առջին, հարցակալի վերածուած:

Տասը վայրկեան վերջը՝

— Փիլաւ մը:

Նոյնպէս:

Չորս դալլի հարուածով մաքրեց:

— Փիլաւ մը եւս:

— Մէկ պնակ քառայիֆ:

Ու Փարաւոն ձգուտաց, զգայուեց, շիճիտակեց ու մրդալուեց:

Եւ իւրաքանչիւր երկու բոպէն անգամ մը լսելի եղաւ Փարաւոնի ձայնը, որ կը հրամայէր.

— Մէկ պնակ ոսպ:

— Մէկ պնակ լուբիա:

— Մէկ պնակ սիսեռ:

Փարաւոն բերանը բացաւ սպանապին:

Վարպետ Թորոսին ոտըր գետնէն կտրեցաւ: Հարսնիք կար ճաշա-

րանին մէջ: Յաճախորդները ակմբուեցան բանաստեղծին շուրջը ու իրենց հիացումը յայտնեցին:

Փարաւոն շիճիտակեց եւ ուռեցաւ:

— Կշտանալը ի՞նչ է դեռ չեմ գիտեր: Ծնած օրէս մինչեւ այսօր կը տատապիմ քաղցէ: Ձեզի իմ կեանքէս մանրավէպ մը պատմեմ: Անցեալ տարի էր, Բամազանի երեկոյ մը, թուրք բարեկամի մը կողմէ հրաւիրուած էի ճաշի: Մարդը արժանի ընդունելութիւն մը ըրաւ ինծի, քան զի ես իր կէնը փրկած էի ամենաստոյգ մահէ: Եօթը բժիշկ, եօթը դեղարան, եօթը ամիս աշխատելու եւ մէջէն չեն ելեր: Ես եօթը հաւկեթով դայն բժշկեցի: Ետի ըսեմ, որ ես հանրածանօթ հաւկեթաբոյժ — բանաստեղծ Փարաւոն Սէմ — Անտոնն եմ:

— Օ՛օ՛օ՛... ի՞նչ կ'ըսէք, պատիւ է, ուրախ եմք, երգեց խումբը միաձայն:

— Ի՞նչ կ'ըսէի... Այո՛, Փարաւոն Սէմ — Անտոնն եմ: Կը գրեմ աղբային թերթերու եւ հանդէսներու մէջ: Ուրիշ գրողներու նման չեմ: Իմ ճիւղս անկողն է: Ես միակ ինքնատիպն եմ, թէեւ դժբախտ բան է պղտիկ աղբի մը մէջ մեծ մարդ ըլլալը: Անշուշտ կարգացած ու հիացած էք:

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, հիանալի եք, երգեց խումբը:

— Ձերկարեմ: Թուրք բարեկամիս եւ իր կնոջը հետ սեղան նստայ: Պնակ մը կերակուր եկաւ ու դեղահատի նման կլլեցի: Երկրորդ պնակ մը բերին: Կաթիլ մը ջուրի նման վար թափեցի: Երրորդ պնակ մը հրամցուցին: Հովի նման լպպեցի: Չորրորդը տուին: Բերնի ապտակ մը տուի ու կերակուրը պարպեցի: Հինգերորդ մը բերին, սրբեցի: Վեցերորդ մը սկոթեցի: Եօթներորդ մը հազիւ երեւցաւ, դեռ սեղանին վրայ չդրուած մէջինը անյայտացուցի: Անկեց վերջ ա՛լ չկրցայ հառուել: Բերին հօշաֆ, պաֆլալա, քատայիֆ, աշուրէ, խնձոր, տանձ ու լեպլէպի: Հազիւ թէ կշտանալու պէս բան մը կ'ըլլայի, վա՛յ շուն շանորդի, մէյ մըն ալ պնակներուն դալուստը դադրեցաւ: Ես ալ ելայ տուն դացի ու Հայկազեան Առձեռն Բառարանին մէջէն «կշտանամ» բառը գրչի հարուածով մը ջնջեցի: Այդ շաղբալու բառը, ամէն բառարանը բանալուս, կը տմպէր առջիս ու կը ծաղրէր զիս: Բառ մը, որ իր իմաստով գոյութիւն չունի, պէտք չէ տեղ ունենայ բառգրքի մէջ: Այս մասին «Ժամանակ» աղբային օրաթերթին մէջ խիստ յարձակողական յօդուածներ պիտի գրեմ:

Յաճախորդները աւելի մօտեցան, մտերմացան ու հիացումէ հիացում տատանեցան:

Փարաւոն գիշեր ցերեկ սկսած էր յաճախել վարպետ Թորոսին ճաշարանը, խորհելով:

— Վերջ ի վերջոյ ես բաւական հաւ ու փիլաւ պիտի ուտեմ այս ճաշարանէն... աղբայնօրէն:

Թաղին մէջ լսուելով որ աղբին բանաստեղծը տասնէն տասնըհինգ պնակ կերակուր կը լափէ, ամէն ոք բուռն հետաքրքրութենէ մղուած լեցաւ ճաշարանին մէջ ու առջեւ: Ճաշարանը կատարեալ կրկէսի երեւոյթ ստացաւ: Եկողները կը ճաշէին կամ առնուազն անուշեղէն մը կամ սուրճ մը կ'առնէին:

Վարպետ Թորոս օրական փայլուն շահ մը կ'սպասուէր: Այս ընթացքով կրնար քիչ ատենուան մէջ հարուստ ըլլալ: Ա՛լ չէր գիտեր, թէ ի՞նչպէս պատուէ, մեծարէ ու սպասարկէ աղբին բանաստեղծին:

Փարաւոն երկու շաբաթ վերջ յայտնեց Վարպետ Թորոսին, թէ՛ յետ այսու ապագիկ պիտի ճաշէ ու միայն ամսագլխուն պիտի վճարէ: Իր առաջարկը ընդունուեցաւ սիրով: Ամիս մը ճաշեց: Հարկ կա՞յ ըսելու, որ ամսագլխուն ոչինչ վճարեց:

Թորոս մտածել սկսաւ: Միւս կողմէ արդէն ամէն մարդ յագեցուցած էր իր հետաքրքրութիւնը, չէր զբաղեր Փարաւոնով: Խանութր յամրաբար նախափարաւոնեան շրջանի վիճակը կը վերստանար: Թորոս իր շահածը վրայ տալէ զատ իր դրամագլուխը կը խորէր: Փարաւոն, մանաւանդ վերջերս, մինչեւ խոհանոց կը խոյանար ու քէնքէրէներուն պարունակութիւնը իր «պիտերով կ'աւելէր»:

Սահմանը անցած էր: Վարպետը օր մը խիստ քաղաքավարութեամբ դրամ պահանջեց: Փարաւոն հէքեաթ մը պատմեց: Թորոս աղբար երկրորդ անգամ կրկնեց իր խնդրանքը: Փարաւոն խորհուրդ տրուաւ թարմ հաւկիթ մը կլլել ու պող ջուր մը խմել: Թորոս աղա յուսակտուր եւ սրտմտած՝ շունչը առաւ շիտակ ձըղալ Օղլու, «Ժամանակ» աղբային լրագրի խմբագրատունը, պապա Գասիմի մօտ:

Մուտքի դրանք քովնտի պղտիկ սենեակին մէջ դտաւ Գասիմը, ըզբաղեալ կլկլակ քաշելով, ու նաեւ Փարաւոնը, զբաղած փէշերը իրար քաշելով եւ յոտնկայս:

Թորոս աղա շատ յուզիչ շեշտերով պատմեց իր ցաւը խմբագրապետ Գասիմին, որ իրողութիւնը աղբային դէպք մը չնկատելով ու մանաւանդ վախնալով, որ աղբային խմբագրատան մէջ անպատեհութիւն կատարուի, աչք ըրաւ Փարաւոնի, որ մարդը առնէ ու կորմը տեղի կ'ունենայ՝ աչք ըրաւ Փարաւոնի, որ մարդը առնէ ու կորսուի երթայ: Փարաւոն, որ ստրուկի նման էր ներսը, խմբագրատան

րանին մէջ : Յաճախորդները ակմբուեցան բանաստեղծին շուրջը ու իրենց հիացումը յայտնեցին :

Փարաւոն շիճիտակեց եւ ուռեցաւ :

— Կշտանալը ի՛նչ է դեռ չեմ գիտեր : Ծնած օրէս մինչեւ այսօր կը տատապիմ քաղցէ : Ձեզի իմ կեանքէս մանրալէպ մը պատմեմ : Անցեալ տարի էր, Բամազանի երեկոյ մը, թուրք բարեկամի մը կողմէ հրաւիրուած էի ճաշի : Մարդը արժանի ընդունելութիւն մը ըրաւ ինծի, քան զի ես իր կիներ փրկած էի ամենաստոյգ մահէ : Եօթը բժիշկ, եօթը դեղարան, եօթը ամիս աշխատեալ եմ ու մէջէն չեն ելեր : Ես եօթը հաւկիթով դայն բժշկեցի : Նախ ըսեմ, որ ես հանրաձայնօթ հաւկիթաբոյժ — բանաստեղծ Փարաւոն Մէմ — Անտոնն եմ :

— Օ՛հ օ՛հ... Ի՞նչ կ'ըսէք, պատիւ է, ուրախ ենք, երգեց խումբը միաձայն :

— Ի՞նչ կ'ըսէի... Այո՛, Փարաւոն Մէմ — Անտոնն եմ : Կը գրեմ ազգային թերթերու եւ հանդէսներու մէջ : Ուրիշ գրողներու նման չեմ : Իմ ճիւղս անկոխ է : Ես միակ լինքնատիպն եմ, թէեւ դժբախտ բան է պղտիկ աղբի մը մէջ մեծ մարդ ըլլալը : Անշուշտ կարգացած ու հիացած էք :

— Անշուշտ, անշուշտ, հիանալի եք, երգեց խումբը :

— Ձերկարեմ : Թուրք բարեկամիս եւ իր կնոջը հետ սեղան նստայ : Պնակ մը կերակուր եկաւ ու դեղահատի նման կլլեցի : Երկրորդ պնակ մը բերին : Կաթիլ մը ջուրի նման վար թափեցի : Երրորդ պնակ մը հրամացուցին : Հովի նման լպպեցի : Չորրորդը տուին : Բերնի ապտակ մը տուի ու կերակուրը պարպեցի : Հինգերորդ մը բերին, սրբեցի : Վեցերորդ մը սկսեցի : Եօթներորդ մը հազիւ երեւցաւ, դեռ սեղանին վրայ չդրուած մէջինը անյայտացուցի : Անկից վերջ ա՛լ չկրցայ հաշուել : Բերին հօշափ, պաֆլավա, քատայիփ, աշուրէ, խնձոր, տանձ ու լեպլէպի : Հազիւ թէ կշտանալու պէս բան մը կ'ըլլայի, վա՛յ շուն շանորդի, մէյ մըն ալ պնակներուն գալուստը դադրեցաւ : Ես ալ ելայ տուն գացի ու Հայկազեան Առձեռն Բառարանին մէջէն «կշտանամ» բառը գրչի հարուածով մը ջնջեցի : Այդ շաղբալու բառը, ամէն բառարանը բանալուս, կը տմպէր առջիս ու կը ծաղրէր զիս : Բառ մը, որ իր իմաստով գոյութիւն չունի, պէտք չէ տեղ ունենայ բառգրքի մէջ : Այս մասին «ժամանակ» ազգային օրաթերթին մէջ խիստ յարձակողական յօդուածներ պիտի գրեմ :

Յաճախորդները աւելի մօտեցան, մտերմացան ու հիացումէ հիացում տատանեցան :

Փարաւոն գիշեր ցերեկ սկսած էր յաճախել վարպետ Թորոսին ճաշարանը, խորհելով :

— Վերջ ի վերջոյ ես բաւական հաւ ու փիլաւ պիտի ուտեմ այս ճաշարանէն... ազգայնօրէն :

Թաղին մէջ լսուելով որ ազգին բանաստեղծը տասնէն տասնըհինգ պնակ կերակուր կը լափէ, ամէն ոք բուռն հետաքրքրութենէ մղուած լեցաւ ճաշարանին մէջ ու առջեւ : Ծաշարանը կատարեալ կրկէսի երեւոյթ ստացաւ : Եկողները կը ճաշէին կամ առնուազն անուշեղէն մը կամ սուրճ մը կ'առնէին :

Վարպետ Թորոս օրական փայլուն շահ մը կ'ապահովէր : Այս ընթացքով կրնար քիչ ատենուան մէջ հարուստ ըլլալ : Ա՛լ չէր գիտեր, թէ ի՛նչպէս պատուէ, մեծարէ ու սպասարկէ ազգին բանաստեղծին :

Փարաւոն երկու շաբաթ վերջ յայտնեց Վարպետ Թորոսին, թէ՛ յետ այսու ապառիկ պիտի ճաշէ ու միայն ամսագլխուն պիտի վճարէ : Իր առաջարկը ընդունուեցաւ սիրով : Ամիս մը ճաշեց : Հարկ կա՞յ ըսելու, որ ամսագլխուն ոչինչ վճարեց :

Թորոս մտածել սկսաւ : Միւս կողմէ արդէն ամէն մարդ յագեցուցած էր իր հետաքրքրութիւնը, չէր զբաղեր Փարաւոնով : Խանութր յամբարար նախափարաւոնեան շրջանի վիճակը կը վերստանար : Թորոս իր շահածը վրայ տալէ զատ իր դրամագլուխը կը խորէր : Փարաւոն, մանաւանդ վերջերս, մինչեւ խոհանոց կը խոյանար ու քէնքէրներուն պարունակութիւնը իր «պեխերով կ'աւլէր» :

Սահմանը անցած էր : Վարպետը օր մը խիստ քաղաքավարութեամբ դրամ պահանջեց : Փարաւոն հէքեաթ մը պատմեց : Թորոս աղբար երկրորդ անգամ կրկնեց իր խնդրանքը : Փարաւոն խորհուրդ տուաւ թարմ հաւկիթ մը կլլել ու պաղ ջուր մը խմել : Թորոս աղա յուսակտուր եւ սրտմտած՝ շունչը առաւ շիտակ ձըղալ Օղլու, «ժամանակ» ազգային լրագրի խմբագրատունը, պապա Գասիմի մօտ :

Մուտքի դրանք քովնտի պղտիկ սենեակին մէջ գտաւ Գասիմը, ըզբաղեալ կլկլակ քաշելով, ու նաեւ Փարաւոնը, զբաղած փէշերը իրար քաշելով եւ յոտնկայս :

Թորոս աղա շատ յուզիչ շեշտերով պատմեց իր ցաւը խմբագրապետ Գասիմին, որ իրողութիւնը ազգային դէպք մը չնկատելով ու մանաւանդ վախնալով, որ ազգային խմբագրատան մէջ անպատեհութիւն կտուր եւ սրտմտած՝ շունչը առաւ շիտակ ձըղալ Օղլու, «ժամանակ» ազգային լրագրի խմբագրատունը, պապա Գասիմի մօտ :

մէջ, յանկարծ առիւծացաւ դուրսը, ճամբուն մէջ, թնդանօթային ճայնով մը յարձակելով Թորոսին վրայ:

— Խայտառա՛կ, անամօ՛թ քեզի: Ազգին բանաստեղծը ազգային խմբագրատան մէջ կը համարձակիս խայտառակել, այո՞ ... Ես քեզի կը հասկցնեմ: Քալէ՛, ուղղակի ճաշարան քալէ՛: Այո՛, վճռեցի, քեզի դէմ դատ պիտի բանամ: Փաստաբաններու եւ դատաւորներու ջոկատ մը ունիմ հիացողներու բանակիս մէջ: Ես ինքս ալ բժիշկ ըլլալով կերակուրներէ լաւ կը հասկնամ: Խանութիւղ մէջ ճաշելէս ի վեր ստամոքսի, աղիքի, կոկորդի եւ այլ հիւանդութիւններ եմ ստացած: Իմ կեանքս անգին է ազգիս համար: Վաղը կրնայ ամբողջ հայ ազգը, մէկ մարմին ու մէկ հոգի, օձիքէդ բռնել ու աղաղակել:— Դուն ի՞նչ ըրիր մեր բանաստեղծը... Ըսէ՛, խօսէ՛, ի՞նչ պատասխան պիտի տաս... Քեզի պիտի բռնեն, դատարան քաշեն, բանտերու, դնտաններու մէջ նետեն ու կախաղան հանեն... Դուն այն մարդը չե՞ս, որ ազգին բանաստեղծը հիւանդացուցիր խարդախ իւղերով, հոտած միսերով, փտած նպարեղէններով: Կարծես այսքան սճիր քիչ ըլլար ու դուն ելար ազգն ալ թունաւորեցիր: Դեռ քանի մը շաբաթ առաջ Գարիկ էֆէնտին մեռաւ: Մանրակրկիտ ջննութեամբ մը ստուգեցի ու հասկցայ, որ քու խանութիւղ մէջ միտիա է կերեր ու առատան դէմ հողին է փչեր: Կո՛վու նման առողջ մարդ էր ու դուն դայն մեղուցիր: Երկու շաբաթ առաջ ալ միւսիւ Տիգրանը հիւանդացաւ: Ո՞վ է պատճառը: Դո՛ւն ես, դո՛ւն, ոճրագործ: Քու հոտած ձուկերէդ ստամոքսը խանդարուեր ու մեռեր է: Հապա Ամբակում ազա Տէր Թովմասեա՞նը, մարդը հինգ ամիսէ ի վեր իր աղիքները բռնած է... կազ լեցուեր է իր մէջ: Դուն դայն լամբա՞ր կարծեցիր, խայտառակ: Առաջ Գում-Գարուցիները մինչեւ 120-150 տարի կ'ապրէին: Դուն եկար, ճաշարանդ բացիր ու մարդոց կեանքը քառասունի իջեցուցիր: Ի՞նչ կ'ուզես իմ անմեղ ժողովրդէս, սրիկա՛յ: Այս ազգին ի՞նչ տուիր ու չես կրնար առնել, դա՛ւաճա՛ն: Ազգս դերեղմանատուն փոխադրել է քու միտքդ, Մերուժան: Յանուն նահատակ ազգիս, մահէ՞ն կաշառուած ես, Վասա՛կ: Բանդ բուրդ է: Դատաւարտուած ես: Օրերդ համրուած են: Ազգասպան ես դուն: Քալէ՛, ի՞նչ կը տնտնաս, ի՞նչ կը տուտուս: Աղգային խմբագրապետ Քասիմը խնդրին էութիւնը չկրցաւ մէկէն ըմբռնել: Ես վաղը կը պարզեմ հարցը ու խսկոյն կը տարհամոզեմ զինքը: Ասիկա ազգային մեծագոյն խնդիրն է: Մահու եւ կենաց հարցն է: Վաղը առաւօտ յօղո՛ւաճճներ պիտի գրեմ այս խնդրին շուրջ:— առաջին գործ: Պատրիարքարան պիտի երթամ այս խնդրին համար:— երկրորդ գործ: Ազգային

Ժողովոյ յառաջիկայ նիստին օրակարգին առաջին խնդիրը պիտի ընել տամ:— երրորդ գործ: Պապը Ալիի տեղեկագիրը մը պիտի ներկայացնեմ:— չորրորդ գործ: Անգլ. դեսպանատուն պիտի դիմեմ:— հինգերորդ գործ: Մեծ պետութեանց հեռագիր պիտի քաշեմ ու յետոյ ալ հակիթ պիտի քաշեմ:— վեցերորդ եւ վերջին գործ: Իսկ քու գործդ լինցած է: Աղօթէ, դաւաթ մը ջուր խմէ ու պատրաստուէ՛ կաղախանի օղակին: Իսկ այսօր, բոլոր յաճախորդներուդ դեկուցում մը պիտի ընեմ: Պէտք է զգուշացնեմ զիրենք, որպէսզի անգամ մըն ալ չճաշեն խոհանոցէդ: Յետոյ բողոքի ձայն պիտի բարձրացնեմ, միթիւնկ պիտի գումարեմ ու թափօր կազմած պիտի շրջիմ... խոհանոցիդ մէջ: Քըն՝ նութիւ՛ն... Դուն դիւրին բա՞ն կարծեցիր ազգ մը ու իր բանաստեղծը սպաննելը:

Փարաւոնի շունչը սպառած էր:

Խօսք առաւ Վարպետ Թորոս:

— Ոտքիդ տապանը պագնեմ, միւսիւ փարաւոն, ես քեզի դէշ խօսք մը չըսի: Ենդն էի ու դրամս ուզեցի... Ինչո՞ւ կը զրպարտես... Եթէ ինձի չես խղճար, զաւակներուս ողորմէ, եօթը հատի տէր եմ...

— Սա խայտառակի՛ն նայեցէք, կը ժպտահ ըսել, թէ դէշ խօսք մը չէ ըսած... Հապա ո՞վ էր ան, որ ազգային խմբագրատան մէջ փորձեց նուաստացնել պատիւը ազգային բանաստեղծին... Բարեկամ, իմ պատիւս անկոխ ու կոյս ուղի է, վրան կոխողը կը խրի: Մեռած ես: Քալէ՛, կ'ըսեմ: Ճառս պիտի պատրաստեմ: Այս երեկոյ խանութի տակնուվրայ պիտի ընեմ:

— Միւսիւ փարաւոն, զաւակս, կ'աղաչեմ, մոխիրի վրայ պիտի նստեցնես զիս... Աղբա՛ր, ամէն օր հազար գովասանք կ'ընէիր կերակուրներուս համար:

— Կերակուրներուդ մէջ ափերով համեմ կը լեցնէիր ու շունի մեծ սը մեզի կը կերցնէիր... Մեզի համով հոտով կը խաբէիր: Ինձի նայէ, մա՛րդ, Ազգս ձեռքէս առիր, Ա՛զգս...

Եւ Փարաւոն իր սուտին ինքն ալ հաւատացած ու իրապէս յուզուած յարձակեցաւ Թորոս աղային վրայ գոռալով:

— Ազգազա՛ւ, ազգասպա՛ն...

— Միւսիւ փարաւոն, կը բաւէ, հօրդ տեղը մարդ եմ, Ե՛ս ալ հայ քրիստոնէայ եմ: Ամօթ է:

— Քալէ՛, մարդասպան:

Ու Փարաւոն, ստիկանապետի մը նման բռնելով Թորոս աղայի թեւէն, զայն մինչեւ խանութ տարաւ:

մէջ, յանկարծ առիւծացաւ դուրսը, ճամբուն մէջ, թնդանօթային ճայնով մը յարձակելով Թորոսին վրայ .

— Խայտառակ, անամօթ քեզի : Աղբին բանաստեղծը աղբային խմբադրատան մէջ կը համարձակիս խայտառակել, այո՞ . . . Ես քեզի կը հասկցնեմ : Քալէ՛, ուղղակի ճաշարան քալէ՛ : Այո՛, վճռեցի, քեզի դէմ դատ պիտի բանամ : Փաստարաններու եւ դատաւորներու ջոկատ մը ունիմ հիացողներու բանակիս մէջ : Ես ինքս ալ բժիշկ ըլլալով կերակուրներէ լաւ կը հասկնամ : Խանութիւն մէջ ճաշելէս ի վեր ստամոքսի, աղիքի, կոկորդի եւ այլ հիւանդութիւններ եմ ստացած : Իմ կեանքս անգին է աղբիս համար : Վաղը կընայ ամբողջ հայ աղբը, մէկ մարմին ու մէկ հոգի, օձիքէդ բռնել ու աղաղակել .— Դուն ի՞նչ ըրիր մեր բանաստեղծը . . . Ըսէ՛, խօսէ՛, ի՞նչ պատասխան պիտի տաս . . . Քեզի պիտի բռնեն, դատարան քաշեն, բանտերու, դնտաններու մէջ նետեն ու կախաղան հանեն . . . Դուն այն մարդը չե՞ս, որ աղբին բանաստեղծը հիւանդացուցիր խարդախ իւզերով, հոտած միսերով, փտած նպարեղէններով : Կարծես այսքան սճիր քիչ ըլլար ու դուն ելար աղբն ալ թունաւորեցիր : Դեռ քանի մը շարաթ առաջ Գարիկ էֆէնտին մեռաւ : Մանրակրկիտ քննութեամբ մը ստուգեցի ու հասկցայ, որ քու խանութիւնդ մէջ վիտիա է կերեր ու առտուան դէմ հողին է փշեր : Կոփու նման առողջ մարդ էր ու դուն դայն մեռցուցիր : Երկու շարաթ առաջ ալ միւսիւ Տիգրանը հիւանդացաւ : Ո՞վ է պատճառը : Դո՛ւն ես, դո՛ւն, ոճրագործ : Քու հոտած ձուկերէդ ստամոքսը խանդարուեր ու մեռեր է : Հասցա Ամբակում աղա Տէր Թովմասեանը, մարդը հիւսկ ա՛միսէ ի վեր իր աղիքները բռնած է . . . կազ լեցուեր է իր մէջ : Դուն դայն լամբա՞ր կարծեցիր, խայտառակ : Առաջ Գու՛մ-Գարուցիները մինչեւ 120-150 տարի կ'ապրէին : Դուն եկար, ճաշարանդ բացիր ու մարդոց կեանքը քառասունի իջեցուցիր : Ի՞նչ կ'ուզես իմ անմեղ ժողովրդէս, սրիկայ : Այս աղբին ի՞նչ տուիր ու չես կընար առնել, դաւաճան : Ազգս գերեզմանատուն փոխադրել է քու միտքդ, Մերուժան : Յանուն նահատակ աղբիս, մահէ՞ն կաշառուած ես, Վասա՛կ : Բանդ բուրդ է : Դատապարտուած ես : Օրերդ համրուած են : Աղբասպան ես դուն : Քալէ՛, ի՞նչ կը տնտնաս, ի՞նչ կը տուտաս : Աղբային խմբադրապետ Քասիմը խնդրին էութիւնը չկրցաւ մէկէն ըմբռնել : Ես վաղը կը պարզեմ հարցը ու իսկոյն կը տարհամոզեմ զինքը : Ասիկա աղբային մեծագոյն խնդիրն է : Մահու եւ կենաց հարցն է : Վաղը առաւօտ յօդո՛ւ աւազներ պիտի գրեմ այս խնդրին շուրջ .— առաջին գործ : Պատրիարքարան պիտի երթամ այս խնդրին համար .— երկրորդ գործ : Աղբային

Ժողովոյ յառաջիկայ նիստին օրակարգին առաջին խնդիրը պիտի ընել տամ .— երրորդ գործ : Պատր Այլի տեղեկագիրը մը պիտի ներկայացնեմ .— չորրորդ գործ : Անդլ . դեսպանատուն պիտի դիմեմ .— հինգերորդ գործ : Մեծ պետութեանց հեռագիրը պիտի քաշեմ ու յետոյ ալ հաւկիթ պիտի քաշեմ .— վեցերորդ եւ վերջին գործ : Իսկ քու գործդ ըմբոստ է : Աղօթէ, դաւաթ մը ջուր խմէ ու պատրաստուէ՛ կաղախանի օղակին : Իսկ այսօր, բոլոր յաճախորդներուդ ղեկուցում մը պիտի ընեմ : Պէտք է դրուչացնեմ զիրենք, որպէսզի անգամ մըն ալ չճաշեն խոհանոցէդ : Յետոյ բողոքի ճայն պիտի բարձրացնեմ, միթիւնկ պիտի դուժարեմ ու թափօր կազմած պիտի շրջիմ . . . խոհանոցիդ մէջ : Քըննութի՛ւն . . . Դուն դիւրին բա՛ն կարծեցիր աղբ մը ու իր բանաստեղծը սպաննելը :

Փարաւոնի շունչը սպառած էր :

Խօսք առաւ Վարպետ Թորոս :

— Ոտքիդ տապանը պահեմ, միւսիւ Փարաւոն, ես քեզի դէ՛լ խօսք մը չըսի : Նեղին էի ու դրամս ուզեցի . . . Ինչո՞ւ կը դրպարտես . . . Եթէ ինձի չես խղճար, դաւակնեցուս ողորմէ, Եօթը հատի տէր եմ . . .

— Սա խայտառակի՛ն նայեցէք, կը ժպտնի ըսել, թէ դէ՛լ խօսք մը չէ ըսած . . . Հասցա ո՞վ էր ան, որ աղբային խմբադրատան մէջ փորձեց նուաստացնել պատիւը աղբային բանաստեղծին . . . Բարեկամ, իմ պատիւս անկոխ ու կոյս ուղի է, վրան կոխողը կը խրի : Մեռած ես : Քալէ՛, կ'ըսեմ : Ճառս պիտի պատրաստեմ : Այս երեկոյ խանութի տակնուվրայ պիտի ընեմ :

— Միւսիւ Փարաւոն, դաւակն, կ'աղաչեմ, մոխիրի վրայ պիտի նստեցնես զիս . . . Աղբա՛ր, ամէն օր հազար դովասանք կ'ընէիր կերակուրներուս համար :

— Կերակուրներուդ մէջ ամբողջ համեմ կը լեցնէիր ու շունի միսը մեկի կը կերցնէիր . . . Մեզի համով հոտով կը խաբէիր : Ինձի նայէ, մա՛րդ, Ազգս ձեռքէս առիր, Ա՛զգս . . .

Եւ Փարաւոն իր սուտին ինքն ալ հաւատացած ու իրապէս յուզուած յարձակեցաւ Թորոս աղբային վրայ դոտալով .

— Աղբաղա՛ւ, աղբասպա՛ն . . .

— Միւսիւ Փարաւոն, կը բաւէ, հօրդ տեղը մարդ եմ, ե՛ս ալ հայ քրիստոնեայ եմ : Ամօթ է :

— Քալէ՛, մարդասպան :

Ու Փարաւոն, ոտտիկանապետի մը նման բռնելով Թորոս աղբայի թեւէն, դայն մինչեւ խանութ տարաւ :

* * *

Երեկոյեան ճաշի ժամը մօտ էր : Փարաւոն , կերակուրներուն բոյ-
րը առնելով , կակուղցաւ թէեւ , սակայն իր խստութիւնը շարունակեց
կեղծել , քէնոտած դիրքով մը նստելով սեղանի մը առջեւ : Փարաւոն
նման էր վերաքննիչ պաշտօնատարի : Հրամայեց , բոլոր կերակուրնե-
րէն , անխտիր , մէյմէկ պնակ բերել : Գննութիւն էր :

Նախ ապուր մը բերին : Ի մի ումպ խմեց :

Թաս քէպպա մը , ի մի պատառ թխեց :

Միսով լուբիա մը , ի մի շունչ մրդապլեց :

Իմամ պայլուր մը եւ ի մի կլափ լափեց :

Տօլմա մը ու բաթլայեց . . .

Գետնախնձոր , ոսպ , սիսեռ , պտուղ , անուշեղէն ու բոլորը մէկ
աւլեց :

Թորոս ալ քիչ հեռուն կանգնած էր սրտախոռով : Ծաշի արարողու-
թենէն վերջ՝ ժպիտով մը մօտեցաւ բանաստեղծին կարծիքը հայցելու .

— Վա՛յ , խայտառակ , դեռ չմարսած ի՞նչպէս կարծիք յայտնեմ . . .

Յաճախորդները կամաց կամաց սկսան դալ : Քիչ վերջ խանութիւ
լեցուած էր :

Փարաւոն աթոռ մը դրաւ խոհանոցին դրան առջեւ , վրան բարձ-
րացաւ ու աղաղակեց .

— Ա՛ղբ , կը թունաւորուիս կոր դաւաճան թորոսին կերակուրնե-
րով : Փաստերով հաստատեցի , որ ճաշարանիս միսերը շունի են : Բո-
լոր սատկած ու ջարդուած կենդանիներու միսեր են : Իւղերը խարդախ
ու անարդար են : Նպարեղէնները փտած են : Բանջարեղէնները վարնոց
են : Անուշեղէնները արհեստական են : Ի մի բան՝ թո՛յն են , թո՛յն . . .
Ա՛ղբ , քեզի դարերու աղէտը չկարեց մեռցնել , հազար ցեղերու ներքան
չկարեց մեռցնել , սակայն թորոսին կերակուրը քեզի պիտի մեռցնէ :
Եթէ ինքզինքդ չես գթար , Ա՛ղբ , գթա ինձի : Եթէ դուն մեռնիս , ես
որո՞ւ սաղ պիտի դարնեմ ու հաւկիթ կլլեցնեմ . . . Վաղը ա՛լ այս ճա-
շարանը պիտի չգաս , Ա՛ղբ : Եթէ յաճախես , այն ժամանակ , կրօնքին
ու օրէնքին առջեւ դատապարտուած ես , իբրեւ անձնասպանութիւն
գործող :

Թորոս լալաքին ընդմիջեց .

— Սո՛ւտ է , ինք դեռ այս իրիկուն բաթլայեց կերակուրներէս . . .

— Ես կ'ուտեմ քանզի անմահ բանաստեղծ եմ . . . Բայց ես Աղբս կը
մտածեմ , որ մահկանացու է . . . Աղբս իմ սիրելիս է , իմ բաժակս է , ես
Աղբինս եմ , իր բանաստեղծն եմ : Կեցցէ՛ , իմ Աղբս :

— Կեցցէ՛ մեր բանաստեղծը , պոռացին ազգային ներկայացուցիչ
յաճախորդները :

Թորոսի մահաւճիւրը ստորագրուեցաւ : Փարաւոն աթոռէն ցատկեց
ու սկսաւ մի առ մի համբուրել իր ունկնդիրները : Յուզումը սարսուռ
պարգեւեց ամէնքին : Արիւնները տաքցան ու գլուխները բռնկեցան :
Քանի մը հոգի խոյացան խոհանոցէն ներս : Քանի մը շիշ-գինի ու քանի
մը պնակ չոր միս խլելով սեղանի մը վրայ դրին : Գինին լեցուեցաւ
գաւաթներու մէջ : Եւ այդ ճաշարանին մէջ , ճաշարանին դիւնները
խմելով ու միսերը ուտելով , յաճախորդները , գլխաւորութեամբ Փա-
րաւոնի հանդիսաւոր երդում կերան , անգամ մըն ալ ոտք չկոխելու
Թորոսի խանութը , ուր ըմպելիները եւ ուտելիքները մահացու էին :

Սեղանը դատարկուելէ վերջ խումբը առաւ քալեց : Ոչ ոք հաշիւ
վճարած էր : Կային նոյնիսկ յաճախորդներ , որոնք երկար ու կտր
գումարներ կը պարտէին : Առիթը եղական էր դիժ քաշելու համար :

Թորոս նստաւ կրակի մը վրայ , որ քանի մը օրէն մոխրացաւ :
Պարտաւորուեցաւ հահգին վնասով խանութը ծախել խոհարարապետ
Մարկոսի : Այս վերջինին խորհուրդ տուին , որ ճաշարանին վերաբաց-
ման օրը հրաւիրուի Փարաւոն : Փարաւոն քանի մը համախոհներով ե-
կաւ կերաւ , խմեց ու դիւցազներգութիւն մը կարդաց : Իր գրութեան
մէջ հերոս մը , որ խոհարարապետ Մարկոսը կը մարմնաւորէր , երկար
պայքարէ վերջ կը յաղթէր թունաւորող հրէշի մը , որ վարպետ Թորո-
սը կ'անձնաւորէր : Քերթուածը կ'աւարտէր բարեմաղթութեամբը
հրեշտակի մը , որ Փարաւոնը կը ներկայացնէր :

Այս կուսաշունչ տաղերգութեան համար Փարաւոն ստացաւ մէկ
ոսկի , պայմանաւ որ ա՛լ ոտք չկոխէր ճաշարանին մէջ :

* * *

Փարաւոն որքան անբախտ նոյնքան ալ բախտաւոր ծնունդ էր : Օ՛ր
մը հետեւեալ դիրը ստացաւ .—

«Ազնուաշուք եւ տաղանդաւիայլ բանաստեղծ
Տիար Փարաւոն Սէմ — Անտոն
Մեծապատիւ Տիար ,
Յոյժ կենսական խնդրոյ մը առթիւ կը խնդրեմ Ձերդ Ազնուութե-
նէն , որպէսզի բարեհաճիք տեսնել զիս , այսօր , ժամը 1—2 , բնակա-
րանիս մէջ :

Կանխայայտ շնորհակալութեամբ
եւ խորին յարգանքներով
ՏՕՔԹ . Ղ . Խ . ՍԻՐԱՄԱՐԳԵԱՆ

Փարաւոն մտածեց :

— Ժամը 1—2, մէկէն երկո՞ւր :

Մի կարեւոր գիւտ :

1—ին ու 2—ին մէջէն գիծը վերցուց ու ժամադրութիւնը վերածեց ժամը 12—ին : Այսինքն՝ կէսօրին : Այսինքն՝ ճաշի պահուն :

— Սրիկայ Սիրամարդ, գիտ ճաշին վերջ կը հրաւիրես, հա՞...

Եւ իբրեւ ճշգրտահաս մարդ՝ Փարաւոն, ժամը 12—ին քառորդ մնացած, հնչեցուց բժիշկին տանը դրան դանդակը : Սպասուհի մը դինքը առաջնորդեց տըքթորին աշխատութեան սենեակը : Բարեւի ու որպիսութեան կոխուած արարողութիւններէն վերջ ժամը եղած էր 12 : Տան մէջ կը ծաւալանային ազնիւ կերակուրներու ազնիւ բոյրեր, գրգռելով Մէմ—Անտոնի սիրտը, այսինքն սաամոքսը : Բժիշկը ստիպուած՝ մեր հերոսը ճաշարահ առաջնորդեց : Այնտեղ էին բժիշկին երկու քոյրերը, սիրուն ու գեղեցիկ :

Փարաւոն արքայութեան մէկ օթեակին մէջ դրաց ինքզինքը : Տաղանդաւոր կերպով կերաւ : Երբ իր ստամոքսը բեռնաւորեց ամբարի մը իման՝ սկսաւ ճառել գրականութենէն, ախ ի բերան թողլով համայն Սիրամարդեան գերդաստանը :

— Աւա՛ղ, հայ գրականութիւնը հոգեվարքի օրեր կ'ապրի... Վառեակները հրապարակը կ'աղմկեն... Ո՛չ մին կը հաւանայ եւ ոչ միւսը հաւկիթ կ'ածէ... Մտադիր եմ, ի մօտոյ, ամէնքը կլլել... Աւա՛ղ, հայ իսկական անկոխ գրադէտը հոգեվարքի օրեր կ'ապրի... Մէջտեղը ոչ հաւ կայ, ո՛չ ալ հաւկիթ : Եօթը հարիւր եօթանասուն քերթուած եմ գրած եւ իւրաքանչիւր քերթուածիս համար զոնէ տասնական հաւկիթ չեմ կլլած : Կը շարժեմ դրիչ ու սիրտ, առանց հաւկիթ կլլելու : Վախճանն է տխուր, եղերական : Այսպէս մեռան Գուրեան ու Եղիան : Ու դեռ մեր շատ մը գրողներուն վաղահաս մահերը արդիւնք են անհաւկիթ կենցաղի : Զօրաւոր ներշնչումներ ունիմ ու զօրաւոր հաւկիթներու պէտք ունիմ... Ու դեռ թողունք հնդկահաւը, հաւն ու փիլաւը, մինչեւ անգամ լէպլէպին հանճարին թուրքը կը պնդացնէ : Տխուր է հոգիս այս անարդ կացութեան համար : Ազգին բանաստեղծը սեւ օրերու հասաւ : Ազգն ալ իր դեղին օրերը կ'ապրի : Բառերուս մէջ մարդարէական աղաղակներ կան : Հարաւէն կուգամ, անկոխ ոահերէ կ'անցնի ուղտերուս կարաւանը, կոյս հորիզոններու կ'երթամ... Զանգակներս ու սագերս կը հնչեն, լեցնելով համայնապատկերները : Ուղտերուս ժանտարներուն վրայ բեցուցած եմ ուսումնասիրութիւններ, կենսադրականներ, քերթուածներ, յօդուածներ : Աւա՛ղ, դժբախտ բան

է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը : Քաղաքներուն եւ մարդերուն արեւիս բարեւը կուտամ ու բարեւիս արեւը կ'առնեմ : Ովասիսներ կը տնկեմ ու կեանքի անապատները կը ծաղկեցնեմ : Այլ աւա՛ղ, բիւր աւա՛ղ, դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը :

Յը. Իսկուհի Սիրամարդ, բժշկին մեծ քոյրը, յափշտակուած քերթողին ճառէն, հարցումներու փունջ մը քակեց յանկարծ, իր գրասէր մը ըլլալն ալ հասկցնել ճգնելով :

— Պարոն Փարաւոն, այս պատեհութենէն օգտուելով կը փափաքէի ձեր հեղինակաւոր կարծիքները իմանալ մեր կարգ մը գրողներու մասին :

— Հաճոյքով կը յայտնեմ կարծիքներս, օրիորդ : Մէկ պայման : Անոնք պիտի ըլլան կարծ ու կտրուկ, ինքնատիպ ու լակոնական :

— Ա՛հ, որքան շնորհակալ եմ : Ուրեմն կը հաճէի՞ք Ձեր կարծիքը յայտնել նախ մեր վաղամեռիկ քերթող Մեծարեց Մխաթի մասին :

— Ատիկ դիւրին ի՞նչ : Մեծարեցի քերթուածները նման են ի Ղալաթիա գտնուող Թիրինկ, Շթայն, Մայէր հանդերձեղինաց վաճառատուներուն ցուցափեղկերուն մէջ տնկուած ֆիֆիլի պիֆիլի հագուած փայտամարդերուն : Ճաշակ կայ, հոգի չկայ :

— Յ, այս որքա՛ն օրիժնալ էք ձեր կարծիքներուն մէջ, պարոն Փարաւոն :

— Միանգամ ընդմիջտ պէտք է զիտնալ, թէ ես Ազգին բանաստեղծն եմ : Ազգային դպրութեանց գրադատն եմ, իբրեւ բանաստեղծ ինքնատիպ եմ : Ինքնատիպութիւնս՝ աբեւեւեան է : Արեւելապաշտութիւնս կոյս է ու կուտութիւնս ալ հայկական է : Զրտուածը կ'ըսեմ, անկոխ տեղերէ կ'անցնիմ, ինչ փողոց կը բանամ, սագս անմահ է :

— Իսկ ի՞նչ է արդեօք Ձեր կարծիքը Վահան Թէքէեանի մասին :

— Թոխչք ունի պալօնի,

Բանաստեղծ է սալօնի :

— Բայց իսկապէս անկոխ էք...

— Անկոխ եմ, բայց իւրաքանչիւր գրողի վրայ յաղթականի պէս կը կոխեմ ու կը մահացնեմ...

— Իսկ Սիամանթօն...

— Զմեռ, սառոյց, ձիւն ու բուր,

Պուր տէրիապք բէք սուրֆ...

Ու «քա՛հ, քա՛հ...» մը պայթեցաւ :

— Իսկ Վահրամ Թաթուօւլը...

— Գրքովի՛ է, քրքովի՛,
 Չունի մարմին ու հոգի...
 — ՉիՖթէ Սարաֆի՞ մասին ինչ է Ձեր կարծիքը...
 — Իր հասակը նոճեղ է բայց իր արձակը ոճեղ չէ:
 — Մրմրեանի՞ մասին ինչ կը մտածէք:
 — Իմ կարաւանիս առաջին ուղտին սանձէն կը քաշէ: Ե՛ք որ ուղտապան է: Իր ներշնչումներուն կը խպաստեմ հանճարովս:
 — Դանիէլ Վարուժա՞նը...
 — Թեթեւ յոյս մը կարծել կուտայ, թէ յաջորդս պիտի կրնայ բլալ այս տղան:
 — Պարոն Փարաւոն, կը հաճի՞ք Եղուարդ Գօլանճեանի մասին ալ խօսք մը ընել:
 — Իմ ետեւէս բանազողներու կարաւան մը կը քալէ. Գօլանճեան բանազողաց կարաւանապետն է:
 — Հրանտ Նազարեանցը...
 — Իմ քերթուածներովս կը սնանի: Եթէ օր մը դադրիմ գրելէ, Նազարեանց կը մեռնի սովամահ:
 Օր. Իսկուհիի յաջորդեց իր փոքր քոյրը, Օր. Արաքսի Սիրամարգ.
 — Պարոն Փարաւոն, իմ հարցումներուս ալ կը հաճի՞ք պատասխանել...
 — Ինչո՞ւ չէ, օրիորդ: Ես եթէ անկոխ եմ, դուք ալ կոյս էք: Մենք իրարու ոչինչ պէտք է մերժենք:
 — Պարոն Փարաւոն, կ'ուզէի գիտնալ, թէ հայ գրողներէն որո՞նց կը հաւնիք...
 — Ինքնատիպ, կոյս արեւելեան ու օրդան կարմիրի գոլարիով նկարուն ցեղային ճամբրիտ դրահանութիւնը Եղիայով կը սկսի ու կարծեմ ինձմով ալ պիտի վերջանայ...: Տխո՞ւր է, տխո՞ւր հոգիս այս անարգ կացութեան համար... Այլ, աւա՞ղ, իրականութիւնն է... Երբեք մարդ չեմ տեսներ... Կը ճամբորդեմ ու կ'երգեմ միայնակ... Գոնէ սաղանդաւոր դրագիտուհի մը ըլլար քովս ի վեր կամ քովս ի վար: Առջիս Եղիային ուրուականն է, իսկ ետիս ալ բանազողներու, օրըստօրէ ստուարացող լէզէոնը:
 — Լա՛ւ: Իսկ ի՞նչ է Ձեր կարծիքը դեռ նոր, վերջերս հրատարակելած Յակոբ Բիւֆէճեանի մասին... «Ազատամարտ» շաբաթաթերթին մէջ ալ կարծեմ քննադատական մը գրած էր Ձեր մասին, չափազանց աննպաստ: Մահացու ծիծաղ մը ունէր Ձեր մասին:
 «Պատուզա»:

Փարաւոնի փորձերը կայծակ կերած ու դուրս թափուած էր:
 Վիրաւորի մը ճիգով ամփոփուեցաւ ու լալապին սրտմտութեամբ աղաղակեց.
 — Օրիորդ, օրիորդ, վստահ եղէք, թէ իր ծիծաղը ծիծաղ կ'առթէ: Իր նետերը դինքն է որ կը սպաննեն: Ես անմահ եմ, անխոցելի: Չոյի՛լը, կը կարծէ, թէ կրնայ տապալել զիս: Ե՛էյքսրիւն ալ գետնէ գետին դարնել կարծեցին: Արեւին հրացան չի պարպուիր: Գաճաճնե՛ր... Ես չեմ դիջանիր չափուել այդ վառեակին հետ: Ես աքլոր եմ: Եթէ գրիչս կաղամարին մէջ թաթխեմ ու մելանը Գիւֆէճեանի վրայ սրսկեմ, անմիջապէս խեղդամահ կ'ըլլայ: Մե՛ղք է, թող ապրի ու իր այդ մեղքով տառապի: Մեծերը միշտ պէտք է վեհանձն ու ներողամիտ ըլլան փոքրերուն հանդէպ: Սա ալ ճշդեմ, որ տարիքով մեծ չեմ, այլ հանճարով: Իսկ իբրեւ եզրակացութիւն՝ կը կրկնեմ որ դժբախտ բան է պղտիկ աղբի մէջ մեծ մարդ ըլլալը:
 Փարաւոն քրտինքներով պողած էր: Իր ճաշակած անմահական կերակուրները քացխած էին իր ստամոքսին մէջ, վերջին հարցումին պատճառով: Տօքթէօր Սիրամարգ վերջ տուաւ այս դրական ասուլիսին ու բանաստեղծը հրաւիրեց իր առանձնասենեակը:
 Տօքթ. Սիրամարգ նրբավար ձայնով ու շեշտերով յայտնեց Փարաւոնի, որ պաշտօնակից մը՝ Տօքթ. Միքայէլեանց մեռած է եւ թէ կարդ մը հին ու նոր բժիշկներ հանգուցեալին վրայ դամբանականներ պիտի խօսին: Իրեն ալ առաջարկուած է: Ինք բուն կերպով կը փափաքի ճառ մը կարդալ: Ռէֆլաւի համար կարեւոր է ճառը: Կը փափաքի փայլիլ: Գրելու ընդունակութիւն չունի, դժբախտաբար: Կը խնդրէ Փարաւոնէն, մէկ ոսկիի փոխարէն, ճառ մը գրել ու յանձնել իրեն:
 Այստեղ ըսենք, որ նախապէս Տօքթէօրը մտադրած էր մէկ ու կէս ոսկի տալ բանաստեղծին: Այս վերջնոյն ժամը 12-ին դալուն եւ ճաշելուն համար կէս ոսկին զեղչեց:
 Հարկ կա՞յ ըսելու, որ բանաստեղծը համաձայնեցաւ եւ տեղւոյն վրայ, անմիջապէս տասնըմէկ էջնոց ճառ մը գրեց ու ոսկին գրպանելով ելաւ դուրս:
 * * *
 Կիրակի օր: Կէսօրէ վերջ: Թաղին եկեղեցիին շրջափակը: Մեռելական արարողութիւնը աւարտած: Սգակիր հանդիսականները դուրս կը թափին եկեղեցիին դռնէն: Բակը կը լեցուի: Դամբանականներու կատակերգութիւնը պիտի սկսի: Յուզում, յուզում, յուզում: Ու հաս

դազաղը, պսակներու մէջ անտես, դուրս կը բերուի ու կը զետեղուի շքեղ մահաբեմի մը վրայ: Աթոռ մը:

Պոլսական սրտերը, աղաւնիի պէս միամիտ ու օձի նման խորամանկ, կը գործեն զերագոյն զարկերով: Ու ահա, անխուսափելին, բոլոր միութիւններուն, հանդէսներուն եւ սպասօններուն, այսինքն՝ Տօքթօր Գոմեանը, որ փառքի փշրանք ուտողներու օգնութեամբ կը բարձրանայ աթոռին վրայ: Կը հագայ ու արցունք մը կը սրբէ իր աչքերէն: Արիւն, արցունք ու հողի հանելու մէջ տաղանդ ունի այս Տօքթօր Գոմեանը: Անհամար միութիւններու նախադասն ու մահուան գահն է ինքը: Կուլայ ոչ թէ յանուն հանգուցեալ բժիշկին, այլ յանուն իր փառքին: Խօսած ատեն ըսել կ'ուզէ.

«Յարգեցէ՛ք, պաշտեցէ՛ք զիս, պանծացուցէ՛ք ու անմահացուցէ՛ք: Հայ բժիշկներուն նահապետն եմ ու հայ բժշկական պատմութեան կենսազերը»:

Տեղն է ըսել, թէ «իրաւ դժբախտ բան է պղտիկ աղղի մէջ մեծ մարդ ըլլալը», ու իրաւ երջանիկ բան է պղտիկ մարդ ըլլալը:

Տօքթօր Գոմեան երջանիկ ու ծեր ճանճ մըն է: Այս պղտիկ աշխարհին մէջ իրաւ պղտիկ մարդ է ու ինքզնիքն իրեն իրեն զանազան թեմերէն երջանկութիւն կ'արտադրէ: Այս հին խամածիկէն վերջ խօսք կ'առնէ երիտասարդ բժիշկ՝ Տօքթօր Շահնազար, որ փախսանակ հանդուցեալին վրայ խօսելու իր բժշկական մէքստները կը պարզէ, ցաւ յայտնելով, որ իրեն չեն դիմած հիւանդը բուժելու համար:

Երրորդ խօսողը կ'ըլլայ Տօքթօր Տիրանեան, որ ժամանակը մօտ կը յայտարարէ մարդկային կեանքի երկրային անմահութեան ու, Փրանկախտի վրայ տեսութիւն մը պարզելէ վերջ, իր հասցէն կը հաղորդէ հասարակութեան, իր քարք-ատրէսները ցրուելով:

Չորրորդը՝ Տօքթ. Ղ. Խ. Սիրամարդեան:
Մի բոպէ լուծիւն:
Հանդիսականները յուզուած են: Այնտեղ է Փարաւոն:
Տօքթօրը կը կարգայ իր ճառը: Յուզումը ալիք կը բանայ հողիններուն մէջ: Ճառին կէսին ալիքը կը պայթի ու լսելի կ'ըլլայ ծափահարութեան որոտ մը: Փարաւոն ճառը այնքան ուռեցուցած էր հռետորական ամբոխավարութեամբ, որ ժողովուրդը ինքնակորոյս պահանջ դրացած էր ծափի:

Փարաւոնին սրտէն կ'երթար:
Ճառը իրն էր ու ծափերը կ'ըլլային Տօքթ. Սիրամարդի:
«Ի՞նչ դժբախտ բան է պղտիկ աղղի մէջ մեծ մարդ ըլլալը»:

Փարաւոն իրաւացի էր:
Կը ցաւէր ու կը սոնքար:
Այդ ծափերը ի՞նչ էին: Ժողովուրդը անդիտակցօրէն կը ծափահարէր զինքը: Ինչո՞ւ այդ ժողովուրդը որ Աղղն էր գիտակցութեան չգերել: Ինչո՞ւ չպատուել ողբերգութեան վարագոյրը ու ճշմարտութիւնը չպարզել ներկայներուն:

Ի՞նչ բան կ'արգիւլէր զինքը ազադակելէ, քանի որ ոսկին ստացած էր ու կանխիկ ալ ճաշած:

Ու Փարաւոն զայրագին ու լալագին ազադակեց.
— Այս ծափին փոխարէն մէկ ոսկին քիչ է, Տօքթօր:
Տօքթօր Սիրամարդ հոգուով, մարմնով ու հազուստներով կարմրեցաւ: Պաղատագին նայուածք մը ուղղելէ վերջ անկոխ ու կոխող բանաստեղծին՝ շարունակեց իր ճառը, դողդղագին: Շարունակեց ընթերցումը, անտանելի դրութեան մը մատնուած: Ժողովուրդը բժիշկին այս անսովոր վիճակը իր դրացած յուզումին վերադրելով, անզամ մըն ալ ծափահարեց:

Փարաւոն պայթեցաւ.
— Է՛յ, Տօքթօր Սիրամարդ, քեզի կ'ըսեմ, որ այս ճառս մէկ ոսկիով չեմ ծախեր: Դեռ երկու ոսկի կը պահանջեմ:

Այս պայմաններուն մէջ անկարող ըլլալով ճառը աւարտել, բժիշկը վար իջաւ, խայտառակուած, մինչդեռ ծափահարութիւն մը եւս փրթաւ, ժողովուրդին կողմէ: Սիրամարդ բռնեց բանաստեղծին թեւէն ու խեղդուկ բարկութեամբ մը ըսաւ.

— Ի՞նչ ըրիր, յիմար, խայտառակեցիր զիս...
Փարաւոնի բարկութիւնը իր բերանը հասած էր: Տօքթօրը պարկը կոխելու ժամը հնչած էր:

— Ա՛ղղ, ի՛մ հայ Աղղ, սա ապերախտին նայէ՛, զիս խայտառակեցիր կ'ըսէ: Ծօ՛, դուն, Տօքթօր, կեանքիդ մէջ ծափը ո՞ւր կէ կընայիր լսել, եթէ ես չգրէի ճառը: Ա՛ղղ, ես խաբուած ու շահագործուած եմ: Մէկ ոսկիով ճառ դրել տուաւ ինձի ու փառաւորուեցաւ:

Ժողովուրդը մեռելը լքեց ու բոլորուեցաւ բժիշկին ու բանաստեղծին շուրջ:
Ժողովուրդին խաղալիկ պէտք էր, մեռած կամ կենդանի: Ողջը անշուշտ նախընտրելի էր:
Փարաւոն պատմեց իրողութիւնը խոսովելով հասարակութիւնը:
Գայթակղութիւն:
Արարը փակուեցաւ Փարաւոնի հետեւեալ յայտարարութեամբ:

— Տոբորը Սիրամարգ, ճառս երեք ոսկի կ'արժէ : Հասցէս գիտես : Քեզի երկու օր պայմանաժամ : Եթէ երկու ոսկի եւս չղրկես քեզի համայն հայութեան առջեւ քերական կ'ընեմ : Էօ՞Փ, ի՛նչ դժբախտ բան է պզտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը :

* * *

Փարաւոն գանձեց երկու ոսկին : Իր ստամոքսին սակայն ոսկի չէր գիմանար : Մնաց անհաւկիթ : Դառնացաւ արեւմտահայերէն ու գոչեց .

— Այլեւս ոռուսահայերէն պիտի գրեմ :

Շարունակեց սակայն գրել թրքահայերէն :

Գիշեր մը, գիւտ մը ըրաւ :

Առաւ թուղթ ու մատիտ :

Նշանակեց իր վրայ հիացողներու անունները : Անոնց մէջէն երեսուն կուտաւոր զատեց : Ամսուն իւրաքանչիւր օրը մէկին նուիրեց : Պատուոյ օր : Օրինակ, առաջին օրը՝ այցելութեան փարաւոնի ի Սուլթան Համամ, «գրասէր-քնարասէր» ու փաստաբան Տ. Չաքարիա Կոստանեանի : Ժամը տասնմէկին կը տմբէր յիշեալին գրասենեակը մնալով մինչեւ իրիկուն : Կը յայտնէր, թէ իրեն շնորհուած է բոլոր ամիսներուն առաջին օրերը, այսինքն՝ փաստաբանին պատուոյ օրերը : Կէսօր, երեկոյ կը ճաշէր ու քանի մը ղրուշ ալ առնելով կը հեռանար : Երկրորդ օրեր ամիսներու . Տիար Մատթէոս Խիտունջեանի, վաճառական ի Քալաֆաթ-Եէրի : Նոյն տեսարանը : Ամսոյն երեքը «գրասէր-քնարասէր» ու փաստաբանի վաճառական Պ. Կարապետ Վասիլեանի : Ու այսպէս մինչեւ երեսուներորդ օր : Յայտագիր-ծրագիրը կը գործադրէր ամենանուրբ խղճատութեամբ :

Ու եթէ պատահէր, որ իր «քնարասէր» վաճառական հիացողներէն մէկն ու մէկը երես դարձնէր կամ առնուազն երեկոյեան տուրքը չի վճարէր՝ Փարաւոն, հպարտ ու արժանապատուութեամբ հարուստ, կը պատգամէր .

— Զնջուած ու մեռած ես : Ահա ցանկիս մէջէն կը սրբեմ քեզ : Գիծը քաշուած է անունիդ վրայէն : Կորած ես ու մեռած եւ ներողութիւն չկայ քեզի համար :

Ու երբ նոր հիացողի մը ծանօթանար՝ անմիջապէս կը ծանուցանէր ուրախ աւետիսը .

— Դուն տաղանդաւոր «գրասէր-քնարասէր» մը կ'երեւիս . կ'արժէ քեզ պատուել : Երեսուն անմահակիցներու ցանկին մէջ պարապ տեղ

մը ունիմ : Քեզի կը շնորհեմ : Արժանի ես ամբողջովին : Բոլոր ամիսներուն տասնընորրորդ օրերը պիտի պատուուիս ինձմէ :

Մարդը կ'ուրախանար առանց կռահելու գլխուն գալիքը :

Ու այսպէս անցաւ մէկ տարի :

Ատեն մըն ալ եկաւ, որ Փարաւոնի ցանկին մէջ ոչինչ մնաց բացի գիծերէ : Երեսուն տաղանդաւորներու տակ հիացողները կը հանգչէին : Մեռած էին : Սակայն, իրականին մէջ մեռած էր Փարաւոն ու իր վրայ ունէր եղիպտական Փարաւոնի մը պէս բաղմամբիւ տաղանդաւորներ :

* * *

Օր մը Փարաւոն գովեստը լսեց պատանի դերասանի մը, որ քերթուածներ կ'արտասանէր Մեծարենցէ, Իսահակեանէ, Վարուժանէ, Թէքէեանէ ու Սիւսանյանի :

Փարաւոն պզտիկ զգաց ինքզինքը : Ինչո՞ւ այդ տղան, իր ընկերներուն նման, իրմէ կտոր մը չէ ընտրեր, արտասանելու համար : Առաւ այդ տղեկին անունն ու մականունը եւ իմացաւ անոր «Ազատամարտ»ի ակումբին մէջ գտնուելը : Քանի մը օր վերջ Փարաւոն, ծոցը քերթուած մը, տմպեց «Ազատամարտ»ի ակումբը ու գտաւ դերասանիկը . Բիւզանդ Երկայնեան :

— Փարաւոն Սէմ-Անտոն, հայոց ազգին բանաստեղծը :

— Բիւզանդ Երկայնեան, հայ բանաստեղծներուն դերասանը :

Բիւզանդ դեռ հազիւ պատանի՝ միամիտ ու դաշուճամիտ տղեկ մըն էր : Երեսուն աւելի եթերով ու ամպով քան միտով ու ոսկորով :

Փարաւոն տիրական զգաց ինքզինքը ամբողջովին՝ մինչ Բիւզանդ ալ երջանիկ : Սօսեցան սարէն ու ձորէն, այլ մանաւանդ հայ դրակահանութեանէն : Փարաւոն ճառեց հին հայկական, յունական, լատինական, երբայական, սլաւոնական հին գրականութիւններէն հասնելով մինչեւ իր դրականութեան անկոխ . . . անապատը : Յետոյ հանեց ու կարգաց իր ծոցի քերթուածը : Բիւզանդ առաւ ու աչաքննեց, խոստանալով արտասանել առաջին առթիւ : Փարաւոն ալ խոստացաւ «Փամանակ» ազգային, զրական ու քաղաքական ամիսօրեայ անկախ հայաթերթին մէջ գովասանական յօդուած մը գրել Բիւզանդի վրայ :

Բանաստեղծ ու դերասան դաշնակցած էին «Ազատամարտ»ի ակումբին մէջ :

Պատշտի ելան մտերմացած : Ուղղուեցան դէպի թթաստանները, խախտվառուած : Զամբան Փարաւոն գնեց չամիչ, ընկոյզ ու լէպլէպի եւ լեցուց Բիւզանդի գրպաններուն մէջ ըսելով .

— Բիւզանդ, այսօրուրնէ սկսեալ դուն իմ հոգեղաւակս ես: Զին-
ուորադրուած ես իմ հիացողներու լէզէննիս մէջ, առայժմ իրիս-տե-
ղակալի պաշտօնով: Շուտով աստիճանի բարձրացում ու հակիթ կը
չնորհուի քեզի: Տա՛յ Աստուած որ չդաւաճանես ու հասնիս մինչեւ
սպարապետութեան: Միայն ինքզինքդ լաւ նայէ: Դուն պէտք ես հայ
ինքնատիպ գրականութեան պրօպականտին համար: Շատ նիհար ես
ու աչքերուդ հուրը մարեր է: Զամիչով փաստաբան կե՛ր, որ նայ-
ուածքդ քաղցր հուր մը ունենայ, փիլա կեր որ միտք տաղանդաւորուի
ու հակիթ կլլէ որ էնէրթիդ վերանորոգուի: Դաւաճան ես եթէ
ասկից վերջ արտասանես Թէքէեան, Իսահակեան, Վարուժան, Սիւ-
մանթօ կամ Մեծարենց:

Բիւզանդ ափ մը միրգով ինկած էր անկոխ թակարդի մը մէջ:
Օրերը աւելի մտերմութիւն պարգեւեցին մեր գաշնակիցներուն: Ու
չարաթններ վերջ Բիւզանդ արդէն սկսած էր Փարաւոնի քերթուածը
արտասանել, իր ճաշակին մասին նոր ու աննպաստ կարծիք մը քարա-
կերտելով:

* * *

«Ազատամարտ»ի ակումբը:
Ուսանողներ, այցելուներ, ընթերցողներ կը խօսին, կը կարդան,
կը սպասեն: Այնտեղ են նաև Փարաւոն ու Բիւզանդ:

Հանդարտութիւն:
Ու յանկարծ դռնէն ներս կը մտնէ ամերիկեան հագուստով մէկը
ու կ'երթայ կը նստի սրահին խորը՝ պատշգամին մէջ: Սրճեփը կը վա-
զէ ու կը տմբէ նորեկին առջեւ: Մեծադղորդ հրաման մը: Սրճեփը վար
կը վազէ, դուրսը խոնարհեցնելէ վերջ: Ներկաներուն մէջ շարժում:
Նորեկը կ'ըլլայ նայուածքներու թիրախ:

Փարաւոն իր աչքերուն լուսարձակներն ու թնդանօթները կ'ուղղէ
նորեկին: Հինգ վայրկեան ելեկարական հոսանքի սոսկալի ցնցում:
Ղաղար աղբար, սրճեփը, յանկարծ կ'երեւի: Երկու ձեռքերուն մէջ
հսկայ ափսէ: Ափսէին վրայ տասներեք դաւաթ թէյ, անոնց վրայ վեց
դաւաթ թէյ ու վեց դաւաթին վրայ երեք դաւաթ թէյ: Թէյի աշտա-
րակ մը կը բերէ Ղաղար: Ու դուռնէն սկսելով, կը սկսի իւրաքանչիւր
ներկայի դաւաթ մը բաշխել, բաներ մը փսփոսալով: Կարգը՝ կուգայ
Փարաւոն — Բիւզանդի:

— Այնտեղ նստող պարոնը պատուում ա, Ամերիկայից եկել ա,
թէյ բաշխում ա:
Փարաւոն երկնցաւ Բիւզանդին:

— Բիւզանդ, ասիկա իւրօտ պատառ կ'երեւի: Մօտենանք: Ներ-
կայացուր զիս: Ամերիկեան հագուստով է, անշուշտ այդ գրպաննե-
րուն մէջ ալ կանանչ տողարը լի է: Մօտենանք ու ներկայացուր զիս:

Լուռթիւն:
— Տէ՛, շարժէ: Ներկայացուր զիս: Ըսէ թէ Աղգին բանաստեղծն
եմ: Ըսէ՛, թէ ինքնատիպ ու անկոխ եմ: Շո՛ւտ ներկայացուր զիս, կը
տառապե՛մ:

Անդին, վանեցի ուսանողներ, ազոականերու նման, կը թառին ամե-
րիկահայուն շուրջը:

— Ծօ՛, Բիւզանդ, վանեցիները բերդը պաշարեցին, գրաւումը
մօտ է: Աս ի՞նչ տեղակալ ես դուն: Դաւաճա՛ն, ներկայացուր զիս:
Փարաւոն ու Բիւզանդ մօտեցան հիւրին:

Նորեկը կը խօսէր:

— Կարնեցի եմ: Երկար ժամանակ ապրել եմ Կովկասում: Էնտե-
ղից գնացել եմ Բոստոն: Մի քանի ամսից կրկին վերադառնալու եմ:
Վանեցիները հարցումի պօմպաներ կը նեւէին:

— Ո՞նց է գնում հասարակական կեանքը Ամերիկայում...

— Սոցիալիստական շարքերը տարին քանի՞ տոկոս խտանում են...

— Կուրտուրական ի՞նչ յայտնի է վոլիւցիա է կատարուել վերջին
տարիներում...

— Ամերիկական Ֆինանսը ո՞նց է նայում դէպի արեւմուտք...

— Բանուորական քանի՞ կուէ՛վ է պատահել վերջին օրերում...

— Կապիտալիստական վոհմակը ի՞նչ է մտածում որպէս ճար,
ճառացող ու վոլիւցիայի դէմ...

Փարաւոնի ջիդերուն ամենէն աւելի դպող բառերը կը յեղյեղ-
ուէին: «Կուրտուրական, հասարակական, սոցիալիստական, Ֆինան-
սական, բանուորական, կական, կական»: Յած ձայնով ըսաւ Բիւզան-
դի:

— Ներկայացուր զիս... Ըսէ թէ Աղգին բանաստեղծն եմ, թէ ան-
թիւ քերթուածներ ունիմ տպուած ազգային լրագիրներու մէջ, թէ ի
մօտոյ կը փափաքիմ մեծ հատոր մը հրատարակել:

Փարաւոնով զբաղող չկար: Կարնեցին, ընկեր՝ Կարօ Կարնունի,
խանդավառ խօսակցութեան էր բռնուած: Այսպէս անցան աւելի քան
քսան վայրկեաններ: Փարաւոնին ճաթիլը մօտ էր: Յանկարծ պայթե-
ցաւ ու Կարոյի թեւը քաշելով պոռաց:

— Ընկեր բարեկամ, դուն պօղաշա կերած ես...

Բիւզանդ քրքիջ մը կլլեց:

Վանեցիները զինաթափուեցան քանզի Կարո յարգալից, դարձաւ դէպի Փարաւոն: Բերդը ու կայտառ պատառը դարուեա՞ծ էր:

— Ներողութիւն, ընկեր, ի՞նչ ասացիք:

— Քեզի կ'ըսեմ որ դուն պօղաչա կերա՞ծ ես...

— Բողաչա՞... չգիտեմ, դա ի՞նչպիսի բան է:

— Ծօ՛, քալէ անանկ է նէ, մարդ Աստուծոյ: Պոլիս է եկեր ու պօղաչա չկերած նստեր «կուլտուրական» կը հորովէ: Ինծի հետ քալէ: Բիւզանդ ետեւէս եկուր,

Ըսաւ ու առաւ քալեց ինքնավստահ: Բերդը դիւթուած էր: Ընկեր Կարո հասչտապ ոտքի: Վճարեց ու վազնիվազ հետեւեցաւ Փարաւոնի: Բիւզանդ կը հետեւէր: Փարաւոն ակումբին դռնէն դուրս ելած էր առանց ետեւը նայելու ու արագութեամբ կը բարձրանար փողոցն իվեր: Կարծես չուանով կապած ըլլար ընկեր Կարօն: Շնչասպառ ըլլալու աստիճան Կարօ կը վազէր: Բիւզանդ կը հետեւէր:

Փարաւոն փողոցը դարձաւ: Կարօ իրեն հասած էր: Բիւզանդ ալ հասած էր Կարօյին: Երեքը մէկ մտան պօղաչա ծախողի մը խանութէն ներս:

Փարաւոն անձայն բազմեցաւ թաւշապատ նստարանի մը վրայ: Իր աջը տուաւ Կարօյի ու ձախը՝ Բիւզանդի:

Հանդէսը պիտի սկսէր:

Ներկայացաւ ծառայողը:

Փարաւոն ավիովը իր դէմքը սրբեց ու ցուցամատովն ալ շրթունքը եւ Կարօն ցոյց տալով ապսպրեց խիստ բարձրաձայն.

— Պարոնին յիսուն տրամ, պա՛րզ:

Բիւզանդը ցոյց տալով ու բարձրագոչ.

— Պարոնին ալ յիսուն տրամ, պա՛րզ:

Ինքզինքը ցոյց տալով ու յամրաձայն, համեստաչեշտ.

— Ինծի ալ կէս օխա, պանիրով:

Հրամանները գործադրուեցան կայծակնարագ: Փարաւոն գործի վրայ էր: Իր կզակին, կոկորդին ու ոսկորին հսկայական աշխատանոցը կը բանէր ներդաշնակ ժխորով: Ու մինչ Կարօ եւ Բիւզանդ իրենց թռչունի բաժինը չէին աւարտած, Փարաւոն վերջացուցած էր իր առիւծի բաժինը ու տկարաձայն նոր հրաման մը արձակեց, իրեն համար.

— Կէս օխա լօկմա:

Կէս օխա լօկման եկաւ:

Փարաւոն զուարթացաւ: Զատեց ամենէն փոքրը ու կիսեց: Մէկ կտորը հրամցուց Կարօյի ու միւսը Բիւզանդի, ըսելով.

— Կերէ՛ք, լա՛ւ է, չունեցողին հանձար, ունեցողին աստուածութիւն կը պարգեւէ:

Երբ լօկման աւարտեց, բարեհաճեցաւ խօսիլ Կարօյի հետ, հարցնելով.

— Դուն սիկարա չե՞ս խմեր...

— Ո՛չ, ես պոօ եմ ծխում, այն էլ ոչ միշտ:

— Դուն հաւկիթ ալ չե՞ս խմեր...

— Ո՛չ. դա վնասում է ինձ...

— Հէ՞, հայհոյութիւն... հաւկիթը ի՞նչպէս թէ կը վնասէ... դուն դիտութիւնս ջրերը՞ համար եկար...: Մէյ մըն ալ չըսեմ: Իբրեւ պատիժ վաղը առտու քսան հաւկիթ պիտի կլլես, իսկ հիմա ալ սիկարա: «պոօ»... Այստեղ Ամերիկա չէ: Ռէժի օքօման կայ: Կառսօ՛ն, պարոնին տուի մը պաճիրա:

Սպասարկողը խոնարհութիւն մը ընելէ վերջ վարպետին քով վաղեց: Վարպետը գլորցէն 100 փարա տուաւ: Քիչ վերջ գլանիկներու տիիկը ձեռքը ներս վազեց սպասեակը: Փարաւոն իր թեւը երկու մէթը երկարելով խլեց տուփը ու բանալով հատ մը Կարօյի, հատ մը Բիւզանդի հրամցուց: Հատ մըն ալ իր շրթունքներուն ծայրը փակցնելէ վերջ, առօք փառօք տուփը դրպանեց: Հաղիւ քանի մը շունչ քաշած Փարաւոն բարեհաճեցաւ խօսիլ ու ըսել.

— Մնաք բարով: Այսքանը բա՛ւ է: Ուրիշ առիթով կրկին կը տեսնուինք: Ես բազմադրազ մարդ եմ:

Կարօ շքմած, ապշած, բարկացած ու արժանապատուութենէն վիրաւորուած էր:

Բիւզանդ ուրախ պիտի ըլլար, եթէ սեւ հրաշքով մը դետինը պատուէր ու մէջը ընկղուղուէր կամ ձերմակ հրաշքով մը դրպանին մէջէն հաշիւը մաքրելիք դրամ գտնէր:

Ընկեր Կարօ, ճէնթլմէն, առանց խօսքի մաքրեց հաշիւը, առատ ձեռածիրով ու դարձաւ Բիւզանդի.

— Ընկեր, ասա ինձ խնդրեմ, սա ի՞նչպէս մարդ է... Ես բան չհասկացայ... Կեանքումս չեմ պատահել էսպիսի մի մարդու... Սա ի՞նչ տիպ է...

— Ընկեր Կարօ, սա մեր բանաստեղծն է, չէ՞ք լսած երբեք անունը, Սէմ-Անտոնն է...

— Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչպէս, ո՞նց ասացիք... Սիամանթօն... Ու-

ընմի ես բախտ եմ ունեցել նրա հետ զրոյց անել, նրա հետ բողաչա ուտել... Սա մի մեծ պատիւ է ինձ համար...

Բիւզանդ տեսնելով որ ընկեր Կարո, Փարաւոն Սէմ-Անտօնը Սիւմանթօն կարծելով, իր տրամադրութիւնը փոխեց, իրողութիւնը ծածկեց ու ըսաւ.

— Այո՛, նոյն ինքն, մեր բանաստեղծն է: Այդ ըրած թողածները պարզապէս հանճարի քմայքներ են: Հարկ է ներողամտութեամբ դիտել մեծ մարդոց տարօրինակութիւնները:

— Ի՞նչ էք ասում, ընկեր: Ի՞նչ ներողամտութիւն: Ես պէտք է նրանից ներողութիւն խնդրեմ, որ չպատուեցի նրան, ինչպէս որ հարկն էր: Ես որ պաշտում եմ նրան: Ես որ «Իրօշակ»ում կարդացել եմ նրա դիւցազնական սօհմները ու վերացել. ես, որ ամերիկեան աղբայրին հանդէսներում, արտասանել եմ նրա բանաստեղծութիւնները... Բայց ես ուզում եմ մի անգամ էլ խօսել նրա հետ...

— Այսօր անկարելի է: Կարծեմ, զբաղած է հայկական պատամարտը պանծացնող նոր դիւցազներգութեամբ: Ուրիշ առթիւ կրկին կը տեսնուիք:

— Բայց սա ի՞նչ անակնկալ, ի՞նչ բախտ է ինձ համար: Մտքումս երբեք չէր անց կենայ, որ ես մի օր Պոլսում մեր մեծ բանաստեղծի հետ բողաչա կ'ուտեմ...

— Է՛հ, ընկեր Կարո, կեանքի մէջ ինչե՛ր ըսէք չեմ պատահիր: Դեռ կրնաք շատ պողաչա ուտել անոր հետ: Այս ուղղութեամբ ան շատ բարեացակամ է:

Կարո եւ Բիւզանդ սիրալիր բաժնուեցան իրարմէ: Գայթակղութիւնը ոչ միայն մեղմացած, այլ սրբագործուած էր:

Հետեւեալ օր, երբ Փարաւոն ու Բիւզանդ ակումբէն ներս մտան, սրճեփ աղբարը իրենց յայտնեց հետեւեալը.

— Էն ամերիկացին ասում ա, թէ բանաստեղծ ընկերը ո՞րտեղ ա, ասում ա: Ուզում ա՝ խօսա: Ասում ա, կարելոր ա, ասում ա:

— Ի՞նչ ապուր կը խառնէ: Արդեօք պողաչաներուն դրա՞մը պիտի ուզէ:

— Չեմ կարծեր, եղբայր, անիկա ճէնթրմէն տղայ էր:

— Ի՞նչ ճէնթրմէն: Կատարեալ խաչագող էր: Միշտ «հասարակական, սոցիալիստական» ըսելը՝ փաստ:

Քանի մը օր վերջ սրճեփը խիստ պերճախօսօրէն կրկին իմացուց, թէ ընկեր Կարո զիրենք կը փնտռէ:

— Աս ի՞նչ փորձանքի հանդիպեցանք, Բիւզանդ: Աս ի՞նչ մուրաց-

կան մարդ է եղեր:

— Չարաչար կը սխալիս: Ես վստահ եմ, որ կրկին պողաչա ուտելու հարց կայ:

— Երանի լաւատեսութիւնդ իրատեսութիւն ըլլայ:

* * *

Վերջապէս, օր մը, մինչ Փարաւոն ու Բիւզանդ ակումբը նստած էին, կը տմայէ... Ընկեր Կարո:

— Բարեւ ընկերներ, ընկեր բանաստեղծ, բարեւ: Քանի օր է փրձուտում եմ ձեզ: Մի խնդիրք ունեմ, յուսով եմ որ չէք մերժի: Դա կը լինի ինձ համար մի մեծ պատիւ:

— Ըսէ՛, նայինք, խնդիրդ:

— Մի աղջիկ եմ վերցրել Պոլսից: Հարսանիք եմ սարքում: Աղջկայ կողմից գալիս են հաղար ու հաղար մարդիկ, իսկ իմ կողմից ոչ ոք կայ: Խնդրում եմ ձեզանից, ընկեր բանաստեղծ, որ ընկերոջ հետ ու ձեր ամբողջ ընկերական շրջանով պատուէք ինձ, որ ես էլ ցոյց տամ ինձ, որ մի մարդ եմ...

— Ատ ըսածդ դիւրին խնդիր չէ, պէտք է քիչ մը մտածեմ...:

— Իմանում եմ, ընկեր ջան, որ շատ էք զբաղուած, որ ես արժանի չեմ ձեզ ունենալու մեր շրջանում, բայց աղաչում եմ արէ՛ք այս դոհողութիւնը ինձ համար: Ի՞նչ փառք կը լինի ինձ համար, երբ մեծ բանաստեղծը ներկայ կը լինի իմ հարսանիքին, մի ճառ կ'ասէ ու հանդէսը կ'ոգեւորի: Դա կը լինի ինձ համար ամենամեծ պատիւ:

— Հիացողներէս կ'երեւիս: Կը մտածեմ պատուել քեզ:

— Ի՞նչ էք ասում, ընկեր, ես շատ եմ պարտական ձեզ: Երբ էն օրը դուք գնացիք, ընկերը ինձ ասաց ձեր ինքնութիւնը: Ես ուղղակի մոլորուեցի: Ներողութիւն եմ խնդրում, որ էն օրը չկարողացայ ասել ձեզ, որ ես անգիր եմ սովորել ձեր բանաստեղծութիւնները եւ արտասանել Ամերիկեան հանդէսներում:

— Կեցցե՛ս ուրեմն: Արժանի ես: Դուն Բիւզանդը կանխեր ես: Հիացողներուս աջ թեւին տասնապետը կ'ընեմ քեզ: Հարսիդ ալ սորվեցուր քերթուածներս արտասանել: Անիկա ալ ամաղօն կ'ընեմ, հիացողուհիներուս ի մօտոյ կազմուելիք ջոկատին: Գալով հրաւէրիդ, քանի մը պայմաններ ունեմ:

— Հաղար պայման, ընկեր բանաստեղծ, ես պատրաստ եմ ընդունելու ձեր բոլոր պայմանները:

— Եթէ հնդկահաւ մը եփես, այն ժամանակ կուզամ:

— Օ՛ր, էդ ոչինչ... իսկոյն շուկայից կը վերցնեմ տասը հնդկահաւ...

— Կեցի՛ր, մի՛ աճապարեր... հնդկահաւը ատանկ չուտուիր... փորը բրինձով կը լեցնես, փուռը կուտաս, քովն ալ գետնախնձոր կը շարես...

— Գլխիս վայ...

— Հին գինիներ կ'ապսպրես...

— Աչքիս վրայ...

— Քանի մը տեսակ մտեղէն...

— Ճակտիս վրայ...

— Բանջարեղէն...

— Ձեռքիս վրայ...

— Նպարեղէն...

— Խաչ վկայ...

— Պտուղներ...

— Աստուած վկայ...

— Անուշեղէններ...

— Էս բոպէիս...

— Խմորեղէններ...

— Իսկոյն...

— Կեցի՛ր, մեծ էջը արտուր մոռցանք... Ձերտէ փիլաւը աւուր պատշաճի է:

— Կ'ասեմ նրանց:

— Մ'աճապարեր: Մեր Բիւզանդիկն ալ անուշապուրը շատ կը սիրէ: Խեղճը այս Կաղանդին չէ կերեր: Իրեն ալ շատ օգտակար է: Կուկորդը կ'ոսկեղծէ: Ուրեմն անուշապուր ալ կ'եփէք:

— Կ'ասեմ նրանց:

— Մեր Բիւզանդը տօլմա ալ շատ կը սիրէ: Կեցի՛ր, այսպէս պիտի չըլլայ: Նստէ՛: Գրիչ ու թուղթ առ: Ես ըսեմ՝ դուն գրէ:

Կէս ժամ վերջ կերակուրներու ցանկը աւարտած էր:

— Մի բան, ընկեր... Չմոռնաք ձեզ հետ բերել եւ ձեր ընկերներին...

— Դուն գնա այս բոլորը պատրաստէ, ես բան մը կը կարգադրեմ...

— Ձեր ձեռքը, ընկեր բանաստեղծ, օ՛ր, ո՞նց երջանիկ, ո՞նց երջանիկ... Սա կը լինի ինձ համար մի մեծ պատիւ:

Ընկեր Կարօ հրաւիրագիր մը յանձնելով ու հազար անգամ շնոր-

հակալ ըլլալով մեկնեցաւ՝ «շուկայից հնդկահաւերը վերցնելու» եւն... Փարաւոն սուղուեցաւ տխրօրէն, մտածումի մը մէջ, քիչ վերջ յանկարծ աղաղակելով.

— Էվրէքա՛: Մնաս բարով:

— Ի՞նչ կայ... Ի՞նչ եղաւ...

— Կ'երթամ ի Ղալաթիա, տոմսակ տպելու: Ձէ՞ որ ըսաւ թէ ընկերներ ալ տանինք մեզի հետ: Լա՛ւ: Տոմսակ կը տպեմ ու հատը տասը դրուշ կը ծախեմ:

Գիւտը դիւտ էր, ի՞նչ փոյթ թէ ճուղուպրիստական:

Փարաւոն կը հեռանար խանդավառ:

* * *

Օր մը վերջը տոմսերը, ոսկեզօծ, տպուած էին:

Գրական Գեղարուեստական

Ինֆնատիպ Երեկոյթ

Ի Պատիւ

Փարաւոն Սէմ-Անտոնի

Պր. Կարօ Կարնունիի հարսանիքին առթիւ

Թիւ.....

Գին՝ 10 Ղրուշ

Փարաւոն, տոմսերու տրցակը թեւին տակ, շրջեցաւ Կէտիկ Փաշա, Գոնմ Գարու, Եէնի Գարու, Սամաթիա, Եէտի Գուլէ, Գազը Ձէշմէ, Մաքրի Գէօյ ու Այ Սթէֆանօզ, ի գին տոմսերու վաճառման:

— Աւա՛ղ, հատ մըն ալ չկրցաւ տեղաւորել: Տոմսակներու տըպագրութեան համար վճարած էի երեսուն դրուշ, իսկ ձամբու ծախսի համը տասը դրուշ: Վնաս՝ քառասուն դրուշ:

Կատողեցնող դժբախտութիւն:

— Բիւզանդ, իմ Բիւզանդ, այդ սրիկայ Կարօն զիս կործանելու համար Ամերիկայէն եկեր է: Ինձի փճացնելու համար հարսանիք սարքեր է:

— Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ...

— Ի՞նչ պիտի ըլլայ... Ինք ըսաւ, որ ընկերներս ալ տանիմ հետս... Ես ալ տոմսակ տպեցի, երեսուն դրուշ. ծախելու համար աշխարհը ոտքիս տակ առի՛ եղաւ քառասուն դրուշ: Մինչեւ որ վնասս չհատուցանէ, հարսանիքի չեմ երթար:

— Ես չեմ խառնուիր...

— Ինչո՞ւ չես խառնուիր... Բողաչան կ'ուտես, վերջն ալ խնդիրը երբոր կնճռուտի կը իսահանջես: Ապերա՛խտ...

— Եղբայր, մարդը քեզի տոմսակ տպէ՛, ըսա՞ւ... Գուն քու շահուէ՛ համար ատ կոխուած ճամբուն մէջ քայլ նետեցիր...

— Մի՛ ըսեր, կը մարիմ կ'իյնամ: Ատիկա դաւաճան մտածում է: Թո՛ղ դրամս տայ... Իրեն համար քառասուն դրուշը մեծ բան մը չէ... տուլար ունի, տո՛ւլար...

— Հիմա՛կ դուն ան ըսէ. մեզի հետ ո՞վ պիտի տանինք հարսնիքի...

— Հարկաւ տոմսակ գնողը:

— Ես դերասան Շարայ Շիրակունին հետս պիտի աննեմ:

— Չըլլար, ան սոսկալի շատակեր է: Թո՛ղ վճարէ:

— Շատակեր ըլլալուն վճարելու կարողութիւն չունի:

— Չըլլար կ'ըսեմ: Ազատ մուտքի տոմս չունիմ:

— Եղբայր, ան ալ քեզի պէս շատ ուտել կը սիրէ: Ինչո՞ւ կը հակակրիս քեզի նմանողի մը:

— Ես կ'ուտեմ, սակայն կ'արտադրեմ ալ: Անիկա ուտող ուրացող ըլլալուն պէտք է վճարէ:

— Փարաւոն, ա՛լ համբերութիւնս հատնելու վրայ է: Մարդը զիս ալ հրաւիրեց. ես ալ հետս մարդ տանելու իրաւունք ունիմ:

— Գոնէ թող կէս գին վճարէ: Ասոր ալ ըսելիք ունի՞ս:

— Բաւական է:

Այս տեսակցութիւնը կը խոստանար գէշ վերջանալ, երբ տմպեց Պրն. Կեսարեան, Կեսարացի, բժշկական ուսանող, Փարաւոնի հիացողներու լէգէոնին նախկին մարտիկներէն, արժանացած պատուոյ... հակիթի:

— Բարեւ ձեզ:

— Ո՞ւր ես, եղբայր, ո՞ւր ես: Բանի օր է քեզ կը փնտռեմ: Սքանչելի երեկոյթ-պարահանդէս մը ունինք: Կիրակի գիշեր է, մինչեւ լոյս: Հոյակապ ճաշասեղան: Հնդկահաւ եւն.: Ըմպելիներ, նուազներ ու կոյսեր: Գինը ոչինչ, տասը դրուշ: Տոմսերը վաղուց սպառեցան: Գնող գնողի: Հատ մը մնաց: Կրկին գինով ուղող ուղողի: Քեզի պահեցի: Բարկացող բարկացողի: Առ սա ու ազատէ զիս:

Կեսարեան խորին չնորհակալութեամբ գնեց տոմսակը, տասը դրուշ վճարելով:

Ժամադրութիւն:

Կիրակի, ժամը չորս, Կէտիկ Փաշա, Համբարձումի սրճարանը:

Ժամը երեքին արդէն այնտեղ զիրար գտած էին Փարաւոն, Բիւզանդ, Կեսարեան ու Շարայ Շիրակունի:

Շարայ յայտնի դերասանապետ մըն էր, հակառակ իր երիտասարդութեան: Դերասանապետ, որ զուրկ էր դերասաններէ: Ահա ամբողջ դժբախտութիւնը: Ինք աւելի հետամուտ էր «երիտասարդ եւ առողջ» դերասանուհի մը գտնելու կամ այդպիսի աղջիկ մը դերասանուհի չինելու: Վերջը դերասանները ինքնին կուգային: Կը փափաքէր, որ այդ դալոց աղջիկը առողջ ըլլայ... գիմանալու համար թատերական ծոմապահութեան: Թատրոնն ալ եկեղեցի չէ՞ միթէ: Այնտեղ ծոմին ծայրագոյնը կայ: Կը փափաքէր նաեւ «երիտասարդ» աղջիկ, որպէսզի իր փէշին կարենար կապել դերասաններն ու թատերասէրները: Ինք, Շարայ, երեք տարին անգամ մը բեմ կ'ելլէր, որպէսզի հասարակութիւնը շատ չյուզէ: Երեք տարին անգամ մը բեմէն ներս մտնելով, երեք տարին մէկ անգամ միայն կը ճաշէր կանոնաւորապէս: Ատկէ՛ իր շատակերութիւնը:

Փարաւոն իր շքախումբը երբ պատրաստ տեսաւ մեկնելու, ըսաւ.

— Կէս գիշերէն ժամ մը առաջ միայն կ'երթանք հարսնիքի: Ծաշը աւանդականորէն ու առհաւօրէն կէս գիշերին տեղի կ'ունենայ: Անկէ առաջ երթալը հմայաթափութիւն կը պատճառէ ու պարասլ ժամավաճառութիւն:

Կեսարեան համամիտ գտնուեցաւ: Բիւզանդ ու Շարայ արդէն խօսքի իրաւունք չունէին, տոմսակ գնած չըլլալով:

Ժամը տասնըմէկ:

Խումբը ինկաւ ճամբայ:

Հանդարտութիւն ու մթութիւն:

Ու յանկա՛րծ՝

Երկնքէն, սուր մը ինկաւ մթութեան մէջ: Կայծա՛կ:

Ու անձրեւ մը յորդ կաթիլներով սկսաւ իր համերգը՝ գիշերին խաղաղութեան մէջ:

Քիչ վերջ հեղեղ ու խաւար: Վերը՝ թնդանօթներ, օդին մէջ սուրբեր: Բարբարոս հով մը կը վարէր այս խառնակութիւնը անձրեւի ալիքներ նետելով մեր ճամբորդներուն վրայ:

Չորրորդութիւնը դետի մէջէ կը սահէր, սատկած ու ջուրը նետուած աքրորներու նման: Փարաւոնի հանճարակերպ արտաքինը քիչ մը ջուրով եղած էր միմոսակերպ: Բիւզանդ առաջարկեց տեղ մը ապաստանիլ ու անձրեւին դադարման սպասել: Երեքն ալ ընդգիմացան. մահաւանդ Փարաւոն:

— Լաւ է որ մեր վրայ գլուխը թրջի քան թէ հնդկահաւը հարսնե-
տունէն թռչի՛ :

Անճրեւը հետզհետէ աւելի սաստկացաւ : Խուճբը հեղեղի տակէ ու
գետի մէջէ կ'անցնէր :

Շարայ անճրեւանոց ունէր բացած եւ կը յառաջանար
բաւական ապահով : Փարաւոն մախանքով դայն կը դիտէր : Ինք էր
բո՛ւն հրաւիրեալը ու կը թրջէր, իսկ անդին Շարայ, որ կէս գին իսկ
չէր վճարած, ներկայանալի վիճակով պիտի ընէր իր մուտքը հարսնե-
տունէն ներս : Ասիկա անտանելի բան էր, որով Փարաւոն աղաղակեց .

- Ծօ՛, փի՛ճ, գոցէ՛ հովանոցը...
- Համմէ՞... Ինձի՞ ես...
- Քեզի եմ, գոցէ՛ հովանոցը՝ կ'ըսեմ...
- Արդեօք սխա՞լ կը լսեմ... Դուն չե՞ս ամէնար... Հայ գրող
պիտի ըլլաս... Ամօ՞թ, ամօ՞թ... Քիչ մը քաղաքավար եղիր : Դիմա-
ցինդ արուեստագէտ է...
- Գոցէ՛, կ'ըսեմ... գոցէ՛, գոցէ՛...
- Եղբայր, Բիւզանդ, միջամտէ, այս մարդը խենթեցած է...
- Ծօ՛, գոցէ՛, կ'ըսեմ... Ես աղբին բանաստեղծը ըլլալովս Աս-
տուծոյ տուած անճրեւին կը համակերպւիմ ու կը թրջիմ, իսկ դուն,
վառեակ, ի՞նչպէս կը յանդգնիս ըմբոստանալ եւ հովանոց բանալ Աս-
տուծոյ դէմ...
- Եղբայր, այս մարդը վկայուած յիմար է...
- Ես հանճար եմ, հանճար, շիտիտի, պոռալով՝ Փարաւոն յար-
ձակեցաւ Շարայի վրայ :

Հովանոցը թռաւ Շարայի ձեռքէն :
 Շարայ ու Փարաւոն դիւրար գրկած տապալեցան ցեխերուն մէջ :
 Բիւզանդ խլեց հովանոցը եւ արագ արագ յառաջացաւ : Կեսարեան
 վազեց ու մտաւ Բիւզանդի թեւը :
 Փարաւոն տեսած էր այս դաւաճանական արարքը ու կը պոռար,
 ցեխերու մէջէն .

- Հիմակ ալ դո՞ւք, հա՞... հիմակ ալ դո՞ւք ըմբոստացաք երկնքի
դէմ, անաստուածներ... Կեցէ՛ք, գոցեցէ՛ք, թրջեցէ՛ք...

Գրական ու գեղարուեստական ըմբիշները կռիւը դադարեցուցին ու
սկսա՛ն վազել հեռացողներուն ետեւէն, հայհոյելով եւ իրարու եւ թէ
Բիւզանդի ու Կեսարեանի :

Իրար միացան հարսնետան առջեւ :
Կեսարեան դուռը զարկաւ, ուժգին, — Տա՛նկ :

Ու ներսը .— կը՛ ո՛ ո՛...
Անթիւ ոտքերու վազք մը սանդուխներէն վար... — Թափը՛ր, քա-
փը՛ր, քափը՛ր, քափը՛ր...

Ու .— թոա՛ք, թոխ՛ք... (դուռը բացուեցաւ կռնակի վրայ) :
Սանդուխներուն վրայ փոխասացութիւն .
— Բանաստեղծն է...
— Դերասանը...
— Մեծ խուճբը...
— Մտաւորականներն են...
— Հիւրերը...

Շո՛ւտ, շիտա՛կ, շտկուէ՛, շարժէ՛, շարժէ՛, շարքի, շաքար, շուա-
րինք, շալկենք...
— Հրամմեցէ՛ք, հրաչք, հոյակապ, հիւրե՛ր, հուրե՛ր...
Փարաւոն կուրծքն ու հանճարը տնկած առօք փառօք ներս մտաւ,
ըսելով .

— Արեւիս բարեւը տալով, բարեւիս արեւը առի...
Փարաւոնին ետեւէն Կեսարեան, յետոյ Շարայ ու վերջը Բիւզանդ :
Ծափահարութիւն : Ճամբա՛յ : Խաղաղապարտութիւն ու ժխոր : Յան-
կարծ քանի մը գինովներ գրկեցին աղբին բանաստեղծը ու սանդուխ-
ներէ վեր բարձրացուցին .
— Պի՛ս, պի՛ս, պռալօ՞...
Այրեր, կիներ ու աղջկունք ուղղակի իրարու կռնակ կը ցատկէին
աղբին բանաստեղծին դէմքը տեսնելու համար : Կը ջանային քերթողին
քսուիլ... երջանկանալու եւ կամ... թրջելու համար : Կը ձգնէին հետը
քանի մը խօսք փոխանակել... փառաւորուելու համար : Շարժում,
ժխոր, ուրախութիւն :

— Կեցցէ՛ ազգը եւ իր բանաստեղծը, պոռաց Բիւզանդ, որ միշտ
վախ ունէր, թէ կրնայ Սէմ-Անտոնի Սիամանթօ չըլլալը պարզուիլ ու
ծագիլ գայթակղութիւն մը :

- Կեցցէ՛, կրկնեցին ամէն կողմէ :
- Կեցցէ՛ հայ մտաւորականութիւնը, — աղաղակեց Կեսարեան...
- Կեցցէ՛...
- Ընկեր Շարայէն խնդրեցին, որ հրթիռ մըն ալ ինք արձակէ :
- Կեցցէ՛ հայ թատրոնը, մլաւեց Շիրակունի :
- Կեցցէ՛...
- Խօսքը Փարաւոնինն էր .
- Հայ ժողովուրդ, արեւիս բարեւը տալով, բարեւիս արեւը ա-

ու... Հաւկիթ կլեցէ՛ք, գինի խմեցէ՛ք, աճեցէ՛ք ու բազմացէ՛ք: Ծափ տամ, ծուխ տամ, ափ մը հանճար տամ...

— Կեցցէ՛ք...՝՝՝...

Հարս ու փեսին ու քահանային ճիշդ մօտիկը բազմեցուցին մեր մտաւորականները ու կեցցէ՛ք...

— Բարեւ, ընկերներ, բարեւ, ընկեր բանաստեղծ, սրբան շնորհասպարտ լինի՞մ ձեզ քիչ է, սա ինձ համար համարում եմ մի մեծ պատիւ: Խնդրեմ, պապիրոս համեցէ՛ք:

Աթոռ մը առնողը Փարաւոնի վրայ վազեց, տեսակցելու համար: Հազար տեղէ հարցումներ, նայուածքներ, ժպիտներ, յարգանքներ, գոմբեր: Ապողոն, հայր աստուած բանաստեղծութեան, այսքան փառքի հազիւ թէ արժանացած ըլլար Ողիմպոսի կատարը: Ու Մէմ-Անտոնի թուեցաւ, թէ արդէն բարձունքի մը կատարն է, դահու վրայ, թաղակիր զերթող անմահ, Հայաստանեայց աշխարհի ու Հայկազեան տոհմի: Ու վճիռներ, պատգամներ, հրամաններ: Ծարժեց, կրակեց, մխաց ու վառեցաւ: Իր շուրջը, բլուրին կողերուն վրայ, բազմութիւններ բաց բերան ու գոց ուղեղ: Կէս ժամ վերջ ամէն ինչ բաւական հանդարտած էր: Ընկեր Կարօ կատարեալ հնդկահաւ, հարսը դրախտահաւ, ի տես մեր սիրամարդ բանաստեղծին:

Ու բոլոր ցոյցերէն վերջ մտաւորականութիւնը կը սպասէր ճաշի ժամուն, ստամոքսատրոփ: Այսպէս անցան քսան վայրկեաններ ալ: Կասկածը ինկաւ մտաւորականներու... ստամոքսին մէջ:

Փարաւոն ծոցեցաւ դէպի Կեսարեան.

— Կեսա՛ր, այս մարդիկը ճաշի խօսք չեն ըներ, միայն դուր խօսքերով կը պատուեն... Ի՞նչ է այս եղածը...

— Այդ հարցումը ես է որ քեզի պիտի ուղղեմ, բարեկամ... Ինձմէ տասը դրուշ գանձած ես, ճաշ տալու խոստումով: Կա՛մ ճաշ կամ դրամս...

— Մի՛ խենթեցներ զիս... արդէն քրտինք թափել սկսայ...

— Ես տասը դրուշս կ'ուղեմ... Հակառակ պարագային այս բազմութեան ներկայութեան գործ կ'ունենաս ինձի հետ...

Այդ միջոցին աւերակ դիմադծութեամբ վրայ հասաւ Շարայ ու ողբերգական շեշտով մը հաղորդեց բոթը...

— Սարսափելի լուր մը... ճաշը կերեր եմ...

Խաւարում ու կործանում:

Տանիքը ինկաւ մտաւորականներու ստամոքսին վրայ:

Վերջին դատաստանն էր ու երկինքը կը շարժէր ու կ'որոտար,

վրելու աստիճան: Երկնքէն ինկաւ եօթը կայծակ: Մէկ հատը Բիւզանդի դիւրուն, երկրորդը Կեսարեանի գրպանին, երրորդը Շարայի կոկորդին ու մնացեալ չորս կայծակը՝ Փարաւոնի ստամոքսին, որ կարմրեցաւ, դեղնեցաւ եւ հուսկ ապա սեւցաւ: Բանաստեղծը մրմնջեց.

— Ես մեռա՛յ...

— Տասը դրուշս, փսիսաց կատաղութեամբ Կեսարեան, բռնած Փարաւոնի թեւը...

— Ստամո՛քսս, բողոքեց Շարայ, աղաւանդուն մէջէն:

— Այո՛, տասը դրուշս...

— Ճար մը ստամոքսիս, եղբա՛յր...

— Բիւզանդ, մի՛ բարոյալքեր զիս, միջամտէ, Կեսարացիին ու Սամաթիացիին մէջ մնացի: Կը խեղդեն կոր զիս... Եամա՛ն են սա Կեսարացիներն ու Սամաթիացիները...

— Տասը դրուշս կ'ուղեմ...

— Ճա՛շ կ'ուղեմ, ո՛հ, անօթի եմ, անօթի՛...

— Եղբայր, դիմացէ՛ք, իմ ցաւս ինձի կը բաւէ արդէն: Գրպանիս մէջ չորս մէքալիք ունիմ: Ա՛խ, ա՛խ, սա Ամերիկացին, կործանեց զիս, մաֆ ըրաւ:

— Ես տասը դրուշս կ'ուղեմ...

— Ճաշս կ'ուղեմ...

— Եղբայր, դացէ՛ք փեսայէն ճաշ պահանջեցէ՛ք: Ես ինչո՞վ մեղաւոր եմ: Ինք պաշտօնապէս խոստացաւ: Բիւզանդը վկայ է:

Կեսարեան ու Շարայ, տեսնելով որ ճաշը կերուած է ու մինչեւ լոյս անօթի պիտի մնան, մօտեցան Կարոյի: Երկու զոյգ խօսք ու Կարօ վազեց սենեակէն դուրս, ճէնթմէնօրէն: Մտաւորականներու անկիւնը բաւական խաղաղեցաւ: Արեւելանուագը, անդին, կը մարմրէր, աւելի խուզում պատճառելով պարապ որկորներու: Կարօ ժպտերես վերադարձաւ: Օդը պայծառացած էր ու եթերին մէջ փոքր լեցուն հնդկահաւ մը կը պարէր: Փարաւոն շունչ առաւ:

Տասը վայրկեան վերջ մտաւորականներու առջեւ տնկուեցաւ հրեշտակ մը, աւետելով.

— Ճաշը պատրաստ է...

Փարաւոն իր շքախումբով խոյացաւ ճաշասենեակ: Մտաւորականներու համար մասնաւոր սեղան մը պատրաստուած էր:

Պատկեր մը, աստուածային, իր պորտը կը բանար մտաւորականներու աչքին:

Սպիտակ սեղանին վրայ Շիրակայ ամբարներուն ցուցահանդէսն էր սարքուած: Սեղանին մէջտեղ, մեծ հաւկթաձեւ պնակի մը մէջ կը քնանար ասագին հնդկահաւ մը: Փորին մէջ հաղարումէկ խորհուրդ: Շուրջը փիլաւ ու գետնախնձոր: Ախրտէ, պտուղներ, անուշեղէններ, գինիներ: Տեսարանը ստամոքսախոռով էր:

Փարաւոն հասած էր իր իտէյալալայրը: Երկու սպիտակազգեստ հրեշտակներ պատրաստ սպասարկութեան: Աս էր տեսարանին միակ անհաճոյ կողմը: Հարկ էր սրբագրել նկարը: Մտաւորականները ոտքի էին դեռ երբ Փարաւոն խօսեցաւ ու ըսաւ.

— Սիրասուլի օրիորդներ, դուք մեզի մինակ թողէք: Դուք գացէք եւ զուարճացէք: Մենք մեզի հանդարտօրէն կը ճաշենք...

— Բայց, անկեղծօրէն, պարոն, ինչո՞ւ կ'ուզէք զրկել մեզ ձեզի ծառայելու հաճոյքէն:

— Դացէ՛ք, պոռաց Փարաւոն, ա՛լ բարկացած:

Աղջիկները ափ ի բերան մնացին:

— Դացէ՛ք...'

Քարացան...

— Դացէ՛ք...

Ու Փարաւոն դանոնք դուրս հանց: Դուրը կըպեց ու իրեններուն հրամայեց.

— «Հապօ՛ն, արի արանց մանկունք...»

Ու անոնց դէմքերուն վրայ բարբարոս փայլ մը շողաց: Փարաւոն ու Շարայ թաթերով յարձակեցան հնդկահաւուն վրայ: Բրինձի հատիկները թոան Կեսարեանի ու Բիւզանդի երեսներուն: Փարաւոն վերէն, Շարայ վարէն հնդկահաւը բռնած կը քաշէին: Կեսարեան աջ կողմը անցնելով ինք ալ բռնեց հնդկահաւին գլուխէն: Բիւզանդ ալ ձախէն ձեռք ախցուց ոտքերը հնդկահաւուն: Ու քաշեցին... Հնդկահաւը յօշոտուեցաւ չորս կտորի... Սեղանին, աթոռներուն ու գետնին վրայ ցատկեցին իւղեր, բրինձներ ու գետնախնձորներ: Փարաւոն ու Շարայ երկու խոշոր կտորներ խլած էին: Սկսաւ խաճատումը, փիլաւի աւարը: Կերան ու կերախ: Մրցում էր:

Երկար տեւեց այս արարողութիւնը: Դափնիներ խլեցին Փարաւոն ու Շարայ, առանց մրցումը լքելու:

Յանկարծ Փարաւոն կանգ առաւ: Դժբախտութի՛ւն: Ա՛լ չէր կըրնար ճաշել: Դարձաւ իր ստամոքսին ու անաւոր բռունցք մը զարնելով անոր երգեց հետեւեալը.

— Սրիկայ ստամոքս, ամէն օր մեծ էիր երբ ուտելիք չկար, իսկ

այսօր, երբ կայ՝ փոքրացար... Դաւաճա՛ն, երբ ուտելիք չկար «Արդարութի՛ւն» կը պոռայիր, իսկ հիմակ երբ Արդարութենէն դատ Արքայութիւն ալ կայ, կը նահանջես, հա՞... Ա՛ն քեզի, ա՛ն քեզի...

Ու Փարաւոն երկու բռունցք եւս իջեցուց իր ստամոքսին, անոր պարունակութիւնը զրկելով իր աղիքներուն մէջ: Տեղ բացուած էր: Նոր եռանդով կրկին կերաւ ու կերաւ: Շարայ իր ստամոքսն ու աղիքները լեցնելէ վերջ, դրսմաններն ալ լեցուցած էր: Ու քսան վայրկեան չանցած՝ այդ դրախտային սեղանը վերածուած էր աւերակոյտի: Ոսկորներ, թափուած գինի, կուտեր, կեղեւներ, հացի պատտաներ:

Փարաւոն ոտքի ելաւ ու աղօթեց.

— Էյ համտ իւլլահ...

Խումբը մտաւ սրահ:

Բիւզանդ միշտ վախի մէջ էր: Սիամանթօ...

Բանաստեղծին փորը կշտացած էր: Հիմակ հարկ էր յագեցնել իր փառասիրութիւնը: Իր քով կանչեց Բիւզանդը, Շարան ու Կեսարը: Խորհրդակցութիւն մը, ի պատիւ իրեն: Առաջարկեց հանդէսը սզելու համար յայտագիր մը կազմել:

Սիրալիր ու կարծ վիճարանութենէ մը վերջ որոշուեցան նիւթերն ու բաժանումները: Որոշումը հաղորդուեցաւ հանդիսականներուն: Ծափեր:

Բիւզանդը խաւարարտի մը վրայ գրեց յայտագիրը ու փակցնել սուլաւ պատին վրայ: Ներկաները յարձակեցան կարդալու հետեւելը.

«Ինքնատիպ երեկոյթ»

(գրական, լեզուական, թատերական, պարային)

ի պատիւ

Արեւելեան ինքնատիպ ու մեծ ֆերքուլ

ՓԱՐԱՒՈՆ ՍԷՄ – ԱՆՏՈՆԻ

Գրասէր – քնարասէր Պրն. Կարօ Կարնունիի ամուսնական

հանդէսին առթիւ

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

1. Մեր Հայրենիք. — Արեւելանուագի կողմէ
2. Բացման խօսք. — Արժ. Տ. Փիլիպպոս քահանայի կողմէ
3. Փարաւոն Սէմ-Անտոն եւ իր ինքնատիպ գրականութիւնը. — Բանախօսութիւն Պրն. Կեսարեանէ

4. Փարաւոն Սէմ անտանի «քաղաքական սագերգութիւնը».—
Կ'արտասանէ՝ Բիւզանդ Երկանեան

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

- 1. «Քօնեալը».— Ինճէ սաղ
- 2. Շիրիւրի «Աւագակներ»էն Ֆրանց Ֆօն Մօօրի վերջին պառլ կը ներկայացուի, ի պատիւ Սէմ-Անտանի.— Պ. Շարայ Շիրակունի
- 3. «Ձէֆ Տէվէնի».— Ինճէ սաղ
- 4. Ստուգարանական մը.— Նոյն ինքն Փարաւոն Սէմ-Անտոնէ

Այս անգամ տաղնապը սաստկացաւ Բիւզանդ Երկանեանին մէջ: Կարօ Փարաւոն Սէմ-Անտոնը կը ճանչնար իբրեւ Սիամանթօ: Յայտադրին մէջ որոշապէս մեր հերոսին անուն մականունը գրուած ըլլալով զայն թաղողները անխուսափելի էր: Բիւզանդ խայտառակութեան մը առաջըը աննելու համար ճիշդ մը ըրաւ ու մօտեցաւ Կարոյի, սրտատրոփ: Փեսան բոլոր քաղաքները ծախած էր, Պոսթընէն Պոլիս ու Պոլիսէն Կարին:

— Ընկեր Կարօ, հարկ կը զգամ փոքր թիւրիմացութիւն մը լուսարանելու...

— Ի՞նչ է պատահել, ընկեր ջան... Գէյֆը մի բա՞ն է ուզում... Ասա էլի՛, թշնամու տիրոջ տարտը... Էս օրը մերն է, հոգուդ մատաղ, աղբէր ջան...

— Գէյֆս ոչինչ, լաւ եմ: Միայն թիւրիմացութիւն մը կայ... Դուք կարծեմ մեր բանաստեղծը կը կարծէք որ Սիամանթօն է, մինչդեռ մեր բանաստեղծը կը կոչուի Սէմ-Անտոն... Այս պղտիկ թիւրիմացութիւնը...

— Ախր, դա՞ է բոլորը... Ձէ՞ որ սա էլ բանաստեղծ է...

— Այո՛, անշուշտ եւ աւելի ինքնատիպ, անկոխ, հայկական բանաստեղծ է...

— Ես էլ կարծեցի մի բան է պատահել... Ախր, սա չլինի նա լինի, նա չլինի սա լինի... Բանաստեղծ է էլի, էլ ի՞նչ... Բանաստեղծ է ու պրծա՛ւ...

— Եւ սա ալ աւելցնեմ, որ բանաստեղծներուն ամէնէն հաւելթաւորն է, ըսաւ Բիւզանդ լայն շունչով մը:

— Լոռութի՛ւն, — պոռաց Կեսարեան:

Յայտագիրը կը սկսէր: Հանդէսը բացուած էր:

Ինճէ սաղը լաւ մը «թշուառ»ացուց «Մեր Հայրենիք թշուառ անտէր»ը:

Բացման իօսը՝ Տէր Փիլիպպոսէ: Ոտքի ելաւ Տ. Փիլիպպոս, տնկեց հասակը, հազաց, երկինք նայեցաւ, յետոյ երկիր ու քառսին դառնալով խօսեցաւ.

— Օրհնեալ ժողովուրդ, «ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի բազում արդիւնս առնէ» կ'ըսէ Ս. Աւետարանը: Ս. Աւետարանը կ'ըսէ նաեւ թէ՛ «Հարսանիքս պատրաստ էր իսկ հրաւիրեալքն չէին արժանի» ու «եթէ յարութիւն մեռելոց չիք ապա եւ Գրիստոս չիցէ յարուցեալ եւ եթէ Գրիստոս չիցէ յարուցեալ ապա ուրեմն ընդունայն են եւ հաւատքն մեր եւ մեք ի նմին մեղս կայցեմք»: Եւ Եղնիկ կ'ըսէ. «Ճողոր է կալ ումեմն ի կալս եւ ասել կա՛լ կա՛լ եւ ոչ ա՛ռ, ա՛ռ», և կամ «չէրն չէին վասն չէին յաշտ առնէր»: Այո՛, օրհնեալ ժողովուրդ իմ, այս է ճշմարտութիւն երկնից եւ փառք յաւիտեանս յաւիտենից ամէն»:

Հանգիստականները բոլորն ծափահարութեամբ մը պատուեցին ե՛ւ Տէր Փիլիպպոսը, ե՛ւ մեր գրաբարը, ե՛ւ Սուրբ Աւետարանը:

Խօսքը պարոն Կեսարեանինն էր.—

«Տիկիներ եւ պարոններ, հաղիւ տասը տարի առաջ Հայ Գրականութիւնը նման էր թոքախտաւորի, Փրանկախտաւորի, բորոտի, մահամերձի: Անիկա կապկային էր, հետեւողական, բանագողական եւ զուրկ ցեղային ու ստեղծագործական մի բնորոշ օրկանիղմէ:

«Այո՛, տիկիներ եւ պարոններ, Հայ Գրականութիւնը այսպէս էր, ափսո՛ս: Ներկայիս, օ՛, ներկայիս պատկերը փոխուած է: Հայ Գրականութիւնը այլափոխուած, պայծառակերպուած, հսկայացուած ու հրաշացած է եւ զինուած: Պատրաստ է ան գօտեմարտելու որ եւ է դրականութեան հետ, քանի իրեն արքայ ու սպարապետ ունի ինքնագրականութեան հետ, քանի իրեն արքայ ու սպարապետ ունի ինքնատիպ, լոյս, անկոխ, չժամուած ու մե՛ծ բանաստեղծը Սէմ-Անտոն Փարաւոն: Այո՛, Փարաւոն Սէմ-Անտոն, անուն մը, յայտնութիւն մը, հանճար մը, որ եկաւ Հայ Գրականութեան կմախքին ընծայել ծուծ, ծունկ, ծիծ, ծամ, ծլիկ ու ծոց ու տակաւին ահուայ, աչք, արմուկ, աղբը, ափ ու աղի՛ք... Ես, իբրեւ գիտութեան մարդ, կ'ողջունեմ այս մեծ գլուխը եւ ի պատիւ իր փառքին կը պարեմ սա նագենի օրիորդին հետ» (Ծափեր):

Կեսարեան բոլքա մը դարձաւ Բերացի միւսնափայլ օրիորդի մը հետ:

Կարգը Բիւզանդինն էր:

Սրահ մտաւ Երկանեան, զգեցած ճերմակ գիշերանոց մը, կոնակը սեղանի կարմիր ծածկոց մը ու գլուխը դեղին սրբիչ մը: Արեւելեան

արքայ էր... Իբրեւ մական ունէր աւելի կոթ մը: Ու արտասանեց «Թագաւորական սաղերգութիւն» քերթուածը, ուրկէ ներկաները բառ մը չհասկնալնուն համար, խենթերու նման ծափահարեցին, գտնելով կտորն ու արտասանութիւնը շատ բարձր:

Փարաւոն ոտքի ելաւ եւ իւրաքանչիւր հանդիսականի քով երթալով երկարեց իր ձեռքը, որպէսզի շնորհաւորեն... Ասիկա ինքնատիպ ձեւ մըն էր, անուրանալիօրէն:

Հինգ վայրկեանի դադարէ մը վերջ արեւելանուազը խիստ վսեմօրէն նուագեց «Բօնեայը» անուն սիրերգը:

Նուագը շաւարտած՝ Շարայ Եիրակունի, կարճ հասակը կուացուցած ներս վազեց ծեծուած կատուի մը նման ճգալով ու ճշալով: Հրէշայինն Փրանց Փօն Մօօրի ոչ միայն մորթին, այլ մինչեւ խելագատակին մէջ մտած էր: Ու քսան վայրկեան ստոստեց, ոռնաց, օղբ ճանկեց ու կաղկանձեց, ծոցեցաւ, ցցուեցաւ, քիթ ու բերանը վեր ու վար դարձուց, աչքին բիբերը խաղցուց ու ինկաւ մեռաւ:

Այս տեսարանը խոր սարսափ թողուց ներկաներուն վրայ: Բոլոր աղանջները դողուած էին: Շարայ խաղացած էր կոյրերու եւ խուլերու մէջ: Ասիկա իկատեց իր բեմական ուժգին մէկ յաղթանակը ու իր փառքի տետրակին մէջ կարեւոր արձանագրութիւն մը ըրաւ:

Ինձէ սագը մեծ խանդավառութեամբ «ՁԷՖ ՏԷՎԷՆՆ» նուագելէ վերջ խօսք առաւ օրուան ու բոլոր օրերուն հերոսը՝ Փարաւոն Սէմ-Անտոն: Սա դեռ իր բերանը չբացած մէկը պոռաց.

— Պի՛ս, պի՛ս...

Բոլոր ժողովուրդը միաձայն արձագանդեց.

— Պի՛ս, պի՛ս...

Փարաւոն խոնարհութիւն մը ըրաւ ու սկսաւ.

«Ազնիւ հիացողներս, այսօր ձեզի աւուր պատշաճի ստուգարանական ճառ մը պիտի խօսիմ, գրական ու ինքնատիպ դարձուածքներով համեմուած:

«Նախ սկսինք «հարսանիք»էն: «Հարսանիք» բառը «հարս»էն կ'ելլէ եւ ոչ փեսայէն, քանզի մեր նախնիքը «հարսանիք» են ըսեր եւ ոչ թէ փեսանիք: Ուրեմն, կը տեսնուի որ մեր նախնիքը ինքնատիպ քաղաքակրթութեան մը անկոխ գէնիթը կանգնած կո՛յս Փէմինիստներ են եղեր: Հիմակ տեսնենք, թէ «հարսը» ո՛ւրկէ կ'ելլէ: Արաբերէն ըրգ բառը կայ որ «պատիւ» կը նշանակէ: «Հարս»ը ճիշդ այդ ըրգն է: «Փե-

սան» ըսես, «այր»ն է, այսինքն՝ «էրիկ» մարդը: «էրիկ» թոյլատերէն «քաջ» ըսել է, որով «էրիկ մարդ» կը նշանակէ «քաջ մարդ», այսինքն՝ կոտորող, թափող, դարնող, պատուող մարդ: «Այր»ը արէն ալ կ'ելլէ. արն ալ «պատիւ» ըսել է: Ժխտականը կ'ըլլայ արարգ: Կը տեսնուի, որ «հարս»ը «պատիւ» կը նշանակէ «փեսայ»ն ալ «պատիւ»: այս երկու «պատիւ»ները քով քովի դալով կ'ըլլան մեծապատիւ: Ուրեմն, պատի՛ւ, մեծապատիւ հարս ու փեսայն: (Ծափահարութիւններ ու պոռավօ՛ներ):

«Սիրելի հիացողներս, թոյլ տուէք որ շարունակեմ: «Նարօտ»ը պարսկերէն նարուէն կուգայ որ կը նշանակէ «թեւ գոյնղղոյն»:

«Հիմա գանք մանաճուռն ֆիլին՝ այսինքն՝ բո՛ւն նիւթին, ինչպէս կ'ըսէր վաստակաբեկ դաստիարակը՝ Հերթիկ Հօճա: «Խնջոյք» պարսկերէն դօնջէն կ'ելլէ եւ «սեղան»ը կը նշանակէ: «Հաց» բառը, ըստ Հիւպլամանի, սանսկրիտ սասիաէն կ'ելլէ մինչդեռ մեր դիտցած հացը փոռէն կ'ելլէ եւ քառասուն փարա կը ծախուի: «Եղինձ» բառը կազմուած է «եղ» եւ «բրինձ» բառերէն:

«Ապուր»ին ապը արաբերէնէ կուգայ եւ կը նշանակէ «ջուր», իսկ «ուր»ն ալ «հուր»ն է, որով «տաք ջուր», ինչպէս Մէքքէի Ապու ՁԷՎ-գԷՎը: «Խորոված»ին «ածը» յետագաս մասնիկ, կը մնայ «խորով»ը: Եղին ու կրակին վրայ բնական է որ միսը կը յուզուի, կը խոովի: Նոյնքան բնականաբար մեր սրտերն ալ իբրեւ միսեր, երբոր անոյշ կրակի վրայ ըլլան, կը գորովին: Ուրեմն «խորով», «խոով» ու «գորով» մէկ հօր ու մօր գաւակներն են: «Կորով»ն ալ անոնց վրայ իշխողն է:

«Գանք «խորտիկ»ին: Այս բառը պարսկերէն խորտէն կ'ելլէ, որ կը նշանակէ միտի կտորուանք: «Խորտիկ» ու «խատուտիկ»ն ալ «խորտիկ»ին խնամի են: «Խորտիկ»ները կովու, ոչխարի, կամ այծի միսէ կը պատրաստուին: «Այծ»ըսի ու միտքս ինկաւ: «Այծ»ը նախկին «էծի»ն կամ «էչի»ն է, որուն թուրքերէն Բէչի կ'ըսեն, հոռմերէն ալ Բաչիքա: Արեւմտական դէնտերէնը ազի բառը ունի, որ ըստ Տը Հարլէզի, կը նշանակէ երեք տարեկան կո՛յս կով:

«Հայր Տէրվիչեան վարդապետ իր «Հնդեւրոպական լեզուներ» երկասիրութեան մէջ այս կոյս կովուն քով շատ կը խարխափի, չեմ գիտեր ի՛նչ անկոյս նպատակով: Ես կ'ատեմ այս կարգի բոլոր խաբող ու խարխափող Տէրվիչեանը: Կը նախընտրեմ յոյն Փիլոզօֆ Եպիկուրը, որովհետեւ իր անուն ու իմաստը շատ մօտ է կերակուրի:

«Այսպէս ուրեմն, սիրելի հիացողներս, պէտք է գիտնաք իւրաքանչիւր ուսելիքի անունին ստուգարանութիւնը, փոխանակ կոյր-ղկուրայն ճաշակելու ձեր գնածը կամ դրածը: Եւ եթէ պատահի որ կերակուրի մը ստուգարանութիւնը ուզէք լսել, դեռ կերակուրը չկերուած ինծի թոշունին փետուրովը լուր դրկեցէք, ես խկոյն կը տմայեմ:

«Մեր քաջ նախահայրերն ու նախարարները թէեւ Հայաստանը մերթ պարսիկին ու մերթ յոյնին յանձնած, սակայն այդ թշնամիներէն ահապէն բառազանձեր իւրացուցած են: Օրինակ՝ քաղաքներ, գիւղեր, ամբողջ աւաններ տուած են պարսից բայց ատոնց փոխարէն գրաւած են անոնց կիսի բառը որ պարսից «գահ»ն է, կիւիկը որ «գոհար»ն է, գիւմպէքը որ «գմբէթ»ն է, դէիլիզը որ «դահլիճ»ն է, հերիշտէն որ «հրէշտակ»ն է, տուխքէրը որ «դուստր»ն է: Կը տեսնէ՞ք, սիրելի հիացողներս, որ աժան չէ ծախուած Հայաստանը: Յոյներուն ալ քանի մը թիզ խոպան հողեր տալով ստացած ենք անոնց բոլոր կրօնական, պրահան, գիտական, պատմական, աշխարհագրական ու խոհանոցային թանգարանները... բառի: Կը տեսնէ՞ք կրկին, քաղցր հիացողներս, որ հայերը ճարպիկ առեւտրականներ են ի հնուց:

(Պահ մը բանախօսը սարսափեցնելու աստիճան որտալնդոստ ծափահարութիւն):

«Ո՞վ ամենասիրելի ծափահարողներս, հիմակ ալ տեսնենք, թէ ուրիշները ի՞նչ բառ կողոպտած են մենէ: Մեր անուն, տիկզերական ընտրեալ աւարներուն փոխարէն մենք ալ թուրքերէն կողոպտուած ենք իբր թէ: Խեղճ ու կրակ աւազակներ սա թուրքերը: Թուրքերը մենէ յափշտակած են միայն ու միայն «աւանակ» մը: Ան ալ կը կարծեն որ կողոպտած են, մինչդեռ «աւանակ»ին բո՛ւն տէրը պարսիկն է: Բացատրենք:

«Շէմսէտտին Սամի պէյ իր «Մութավվէլ Լուզէթը Օսմանի»ին մէջ կը գրէ, թէ «աւանակ բառը հայերէն առնուած է»: Խեղճը չի գիտեր, թէ ատիկա ալ արգէն մենք գողցած ենք պարսիկ իշապանէն: Գողը գողէն գողացաւ Աստուած տեսաւ դարմացաւ: Կրկին բացատրենք: «Աւանակ»ը «յոսփանակ»ն է. սկիզբի «յ» գիրը համազօր է լատինական «յ»-ին, վերջին «ակ»ն ալ մասնիկ է, որով բառն է փովան, ըստ իրանեան բարբառի, ու կը նշանակէ երիտասարդ էջ կամ իշապուրի գեռատի մարդ: Այս բառը լատիններէնի մէջ ալ եղած է փովիմա, իսկ ուսմակերէնի մէջ փովիմա, Փրանսերէնի մէջ, իսկ անգլիերէն փիւմիլը:

«Ամենուն ծանօթ տարեցուցազիրը, տարի մը լուսանկարիս տակը

«դեռատի բանաստեղծ» գրած էր զիս աւանակ ներկայացնելով: Չէ խորհեր որ ազգային բանաստեղծը եթէ աւանակ ըլլայ ազգային տարեցոյցն ալ կ'ըլլայ՝ ախոռ: Ես կը ներեմ սակայն իրեն: Մեծերը փոր-բերուն ներելու են: Սա ալ ըսեմ որ տարիքով մեծ չեմ, պապայիս տեղը մարդ է, այլ հանճարով մեծ: Վերջապէս դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը:

«Ուրեմն, սիրելի ծափահարողներս, դառնանք մեր նիւթին: Չողբանք թէ չարչարուած, խաչուած ու նահատակուած ազգ մըն ենք: Չլանք թէ կողոպտուած, թալանուած ենք: Եթէ ուրիշներ մեր էջը գողցան, մեր հաւերն ու հաւկիթները կողոպտեցին, մեր կերակուրները կերան, մեր ցանածը հնձեցին, մեր տնկածը քաղեցին, մեր քաղածը թոցուցին, մեր թոցուցածը դարկին, մեր դարկածը եփեցին, մեր եփածը լափեցին, մեր լափածը թափեցին ու մեր թափածը խմեցին եւ վերջապէս մեզ հաւկիթի կեղեւ միայն թողուցին, մենք ալ, միւս կողմէ, յափշտակեցինք բառե՛ր, բառե՛ր, բառե՛ր...»

«Հայ մտաւորականութիւնը Ե. դարէն սկսեալ բոլոր ազգերուն իմացական հարստութիւնները հափափած է անխնայ: Հիմակ սակայն զոլուելի ու ստորին դողութեան մը ձեռնարկած է Հայ մտաւորականութիւնը: Այլեւս օտարին քով մտքի դանձ չգտնելով յարձակած է ի՛մ վրաս, յանուն բանազողութեան: Ամէն օր ազգային թերթերուն մէջ կը կարգամ ջերթուածներ, յօդուածներ, բանասիրութիւններ, վէպեր ու քրօնիկներ, բոլորը բանազողուած ինձմէ: Չեն ամ չնար, չեն խըստնիր, չեն կարմրիր ու ամէն օր տողեր, գիւտեր, չափեր ու յանգեր եւ նոյնիսկ կէտազրուութիւնս կը բանազողեն: Աւաղակները...»

«Ես կը ներեմ սակայն իրենց: Մեծերը միշտ ներողամիտ ըլլալու են: Տաղանդով մեծ եմ, ո՛չ տարիքով: Ի՞նչ ըսես, խիստ դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մարդ ըլլալը: Արդէն վճռած եմ, ասկից վերջը ա՛լ Փրանսերէն պիտի գրեմ: Իմ բո՛ւն տեղս տիկզերական գրականութեան մէջ է: Որքան աղաչեն ու պաղատին պիտի չզիջիմ: Ո՛չ, ա՛լ հայերէն պիտի չգրեմ: Փրանսերէ՛ն... Հիւկոյի, Լամարթինի, Լըքօնթ Տը Լիլի լեզուն իմ պիտի ընեմ: Տեսէք թէ ինչպէս պիտի փառաւորեն զիս Փրանսացիներն ու միջազգային գրասէր-քնարասէրները: Թող այն աստե՛ն ալ բանազողեն ինձմէ: Այն ժամանակ դորձ կ'ունենան ընդհ. ազգաց գրական ատեանին առջեւ, այնտեղ օրէնք կայ ու դատաւորներ կան: Իսկ եթէ անոնք ալ օրինակիս հետեւելով Փրանսերէն գրեն՝ թող լաւ գիտնան որ խիստ դժբախտ բան է մեծ ազգի մէջ պղտիկ

մարդ ըլլալը : Ուրեմն , սիրելի ծափահարողներս , ահա կ'աղաղակեմ .
«Կեցցե՛ն մեծ ազգերն ու մեծ մարդերը . . . » (Կեցցե՛ . . .) :

«Կեցցէ՛ն» ներէն շատ հաճոյք զգալով կրկին ստքի ելաւ խօսելու :

«Տաղանդաւոր ծափահարողներս , հիմակ կրնաք ձեր փափաքած
հարցումները ուղղել ինծի : Ըսէք բառեր ու ես դանոնք ստուգարանեմ :
Յրինակ , սա դիմացի շնորհագեղ օրիորդին անունը տուէք ինծի . . .

— Ծագիկ է , Ծաղիկ , պոռացին քանի մը հոգի :

«Ուրախ եմ , որ օրիորդին անունը Ծաղիկ է : Խիստ քնարական ա-
նուն մըն է այս : Կը շնորհաւորեմ զինքը իր անունին համար : «Ծաղիկ»ը
թէ եւ Ծագէն , այսինքն «բերկրաքն»էն կուզայ , սակայն պէտք չէ մոռ-
նալ որ Ծագն ալ սագէն կ'ելլէ : «Շ» զիրը «ս» տառին լծորդ է : Յրինակ՝
Սիմէոնը եղած է Ծմաւոն , Սիրունը շիրին , Սաստուրին ալ Ծաշտուրի
եւայլն :

Ծափահարութեան հրթիռներ : Փարաւոն ա՛լ չուզելով հարցում
ընդունիլ , հետեւեալ յայտարարութիւնը ըրաւ .

«Կաթսայ մը փելաւ ու տակառ մը դինի՛ այս կեանքի անապատին
ովասիսը կը կազմեն :»

— Իսկ եթէ շամփրախորով դառնուկնե՞ր ալ մտնեն դործին մէջ ,
հարցուց Կեսարեան :

«Այն ատեն ովասիսը եղեմական աւանի մը կը յեղափոխուի :

— Հապա եթէ դառնուկներուն հովուուհինե՞ր ալ ընկերանան ,
հարցուց Բիւզանդ :

«Ա՛հ այն ատեն ես ալ իբրեւ քաջ հովիւ , ցուպ ի ձեռին , կը դնեմ
անձս ի վերայ ոչխարաց եւ հովուուհեաց :

— Կեցցե՛ս Փարաւոն , verse՛ եղեր ես դուն :

«Ի՞նչ verse՛ , ես կատարեալ e՛rudit եմ , e՛rudit : (Ծափահարութիւն) :
Փարաւոն նստաւ իր աթոռին վրայ ու իրեններուն դառնալով հար-
ցուց .

— Ձեռնէ ո՞վ սղադրեց ճառս . . .

—

— Յիմարներ , եթէ փառքիս համար չէ , գոնէ ձեր նիւթական
շահուն համար սղադրէիք : Ո՛ր թերթին որ տանէիք ահագին գումար
կրնայիք գանձել :

Կեսարեան խիստ ցաւ զգաց :

Փարաւոն շատ կը նայէր Ծաղիկի :

Առաւօտուն վերջ գտաւ հարսանիքը : Ամէն ոք իր տունը կ'երթար .
Փարաւոն երբ փողոց ելաւ , հանդիպած առաջին նալարավաճառէն եր-
կու հաւկիթ գնեց , գրպանը դրաւ եւ ուղղուեցաւ ի Կէտիկ Փաշա , քնա-
նալու :

* * *

Բերայի Ծիտակին վրայ սրճարան մը կար ուր կ'ակմբուէին դերա-
տանները :

Փարաւոն Բիւզանդի միջոցաւ մտերմացած էր այդ տեղին ու դէմ-
քերուն : Հարսանիքէն քանի մը օր վերջ էր , Բիւզանդ սրճարանէն ներս
մտաւ՝ այնտեղ գտաւ Փարաւոնը , մահուան չափ տխուր : Դերասաններ
Բիւզանդին մօտենալով տեղեկացուցին , թէ մեծ վիշտ մը ազգին բա-
նաստեղծին հոգին կը վառէ ու թելադրեցին Բիւզանդին՝ մօտենալ
Փարաւոնին ու դադտնիքը հասկնալ :

— Բարեւ , Փարաւոն , ըսելով Բիւզանդ մօտեցաւ ու նստաւ քեր-
թողին կողքին :

— Ա՛խ , պատասխանեց ազգին բանաստեղծը :

— Ի՞նչ կայ , ի՞նչ ունիս . . .

— Ա՛խ . . .

— Եղբայր , չխօսի՞ս , ի՞նչ է պատահեր որ . . .

— Ա՛խ . . .

— Յաւր ի՞նչ է , ըսէ՛ , ճար մը գտնենք . . .

— Դուն ո՞վ , ցաւիս ճար գտնողը ո՞վ , վերջապէս բերանը բացաւ
Փարաւոն :

— Բայց վերջապէս , ըսէ՛ ի՞նչ կայ , եղբայր :

— Սիրահարեալ եմ :

— Սիրահարուած . . .

— Ա՛խ , այո՛ , սիրահարեալ եմ . . . կրակն ինկեր չաքրը չաքրը
կ'երիմ կոր . . .

— Որո՞ւ սիրահարուած ես , անունը ի՞նչ է . . .

— Արեւելեան դեղուհի մը . . .

— Բայց անունը . . .

— Չեմ ըսեր , կը պղծուի . . .

— Եղբայր , գոնէ սկզբնատառը ըսէ՛ . . .

— «Շ»-ով կը սկսի . . .

— Ծուշա՞ն է , Ծամիրա՞մ է , Ծաքէ՞ է . . .

— Ատանկ հասարակ անուն չէ . . .

— Հապա ի՞նչ է...

— Շաղի՛կ է, Շաղի՛կ, անունին մեռնիմ...

— Մա մեր գացած հարսնիքին մէջ գտնուող Շաղիկը, որուն անունը ստուգաբանեցիր...

— Ա՛խ, ա՛ն է, ա՛ն... վառեց զիս, Բիւզանդ, վառե՛ց... Կը մեռնիմ կոր, ա՛լ աղբին բանաստեղծը պիտի չգտնէք... Այդ աղջիկը դարկաւ զիս: Երկու օրէ ի վեր ո՛չ կ'ուտեմ եւ ոչ ալ կը խմեմ, միայն օրական տասնական հաւկիթ կը կլլեմ...

— Եղբայր, ատ աղջիկը իմ դպրոցական ընկերս է... Եսայեան կը յաճախէ դեռ... խենթ կ'ելլէ քու քերթուածներուդ համար, մօտէն կը ճանչնամ. նամակ մը գրէ, իրեն տանիմ ու հարիւրին հարիւր վստահեմ որ խենթի նման պիտի փոխադարձէ. կ'արժէ՞ որ աղջկան մը համար ասանկ հարաչես...

— Մ'ըսեր, կը խենթենա՛մ, ատ ինչե՛ր կ'ըսես: Ապրիս, Բիւզանդ, դուն հաւատարիմ լէգէոնական մըն ես: Անմիջապէս նամակ մը գրեմ ու վաղը ձեռքը հասցուր: Կ'երիմ կոր, Գեղի լէպլէպլի կը գնեմ...

Ու Փարաւոն գրիչ ու թուղթ բերել տալով հետեւեալ սիրային նամակը գրեց.

«Արեւելեան հուրիս,

«Կին մը ծնաւ զիս, աղջիկ մը պիտի անմահացնէ: Հանճարիս վրայ կ'երչնում, որ այդ աղջիկն ալ ես պիտի անմահացնեմ: Այդ աղջիկը դուն ես, ո՛վ արեւելեան հուրիս: Ես կոյս մըն եմ: Կուսութեամբդ կուսական եմ: Կէտիկ Փաշայի հասցէիս ամէն երեկոյ սիրային նամակներ կը դրկեն կարգ մը պոլսուհիներ: Ես միշտ մերժած եմ անոնց սէրերը: Եթէ ասկից վերջ անոնց նամակներն իսկ կարդամ «գուաճան մը» համարէ զիս: Ա՛լ ասկից վերջ ո՛չ աստղերուն պիտի նայիմ եւ ո՛չ լուսնին, ո՛չ ծաղիկներուն եւ ո՛չ պտուղներուն, ո՛չ բանջարեղէններուն եւ ոչ միսերուն: Աչքերուս միակ պատկերը դուն ես: Ներքէ, որ միայն հաւկիթի նայիմ: Այս օրերս աւելի քան հաւկիթին պէտք ունիմ: Տո՛ւր սիրտդ ինձի, եւ ես քեզի տամ հանճարս: Դուն ես կենդանի հաւկիթը, կարագը ու մածոնը, ո՛վ սեղան արեւելեան:

Քոյդ
Փարաւոն Սէմ-Անտոն

Ու Բիւզանդ նամակը առնելով դուրս ելաւ: Ուրիչ սրճարան մը երթալով նամակ մը շարադրեց ու ժամ մը վերջ ներկայացաւ Փարաւոնի, ժպտերես:

— Ո՞ւր է լէպլէպլիս, Շաղիկէն պատասխան բերի:

— Մ'ըսեր, կը մարիմ... Իրա՞ւ ես... Եկուր, համբուրեմ քեզ, Բիւզանդ: Ա՛լ աստիճանդ բարձրացած է, զօրակա՛ն ես:

— Ես լէպլէպլի կ'ուզեմ...

Փարաւոն հինգ դրուչ տուաւ Բիւզանդի ու նամակը խլեց: Ահա պարունակութիւնը.

«Սիրելի բանաստեղծս,

«Ներքէ՛, հապճեպով գրուած սա քանի մը տողերուս: Կը չիկնիմ խոստովանելով, որ անհուն ուրախութիւն պատճառեց ինձ ձեր դիրքը: Իմ խառնուածքս ունեցող աղջկան մը համար իտէալ միութիւն մըն է այս: Եթէ դուք իմ սիրոյս համար լուսնին պիտի չնայիք, ես ալ կը խոստանամ այլեւս արեւուն չնայիլ: Եթէ դուք աստղերուն պիտի չընայիք, ես ալ մոմերուն պիտի չնայիմ: Եթէ դուք ծաղիկներուն պիտի չնայիք, ես ալ փուշերուն պիտի չնայիմ: Եթէ դուք պտուղներուն պիտի չնայիք, ես ալ ծառերուն պիտի չնայիմ: Եթէ դուք միսերուն պիտի չնայիք, ես ալ ոսկորներուն պիտի չնայիմ: Ձեր հաւկիթի նայելուն փոխարէն, ներեցէք որ ես ալ աքլորներու նայիմ, քանզի շատ կը սիրեմ աքաղաղներուն ձայնը.— կուկուլիկո՛ւ...»

Ձերդ
Շաղիկ Շահնազար»

Փարաւոն իր ընթերցումէն վերջ խանդավառ բացազանչեց.

— Աւետարանական ոճով գրուած նամակ է այս: Արեւելեան հուրիս գրական խմոր ունի: Շատ ինքնատիպ, կոյս ու անկոխ է:

Ու Փարաւոն նամակ մը եւս գրեց ու Բիւզանդ պատասխան մը եւս շարադրելով բերաւ բանաստեղծին: Դերասանները խաղին տեղեակ էին: Այս խաղը աւելի քան ամիս մը շարունակուեցաւ, առանց կասկած առթելու քերթողին: Փարաւոն հաւկիթի նման կը կլլէր լուրաքանչիւր նամակի ստութիւնը: Այս սէրով երջանիկ էր ու հպարտ:

Գիշեր մը, Կէտիկ Փաշա, սրճարանի մը մէջ, կարգ մը երիտասարդներ կը քաշքշեն ազգին բանաստեղծը՝ ըսելով.

— Փարաւոն, եկուր քեզի ամուսնացնենք սա Աղաւնիին հետ. տուն մը ունի: Հայրն ալ մեռաւ: Պատուաւոր ու ազուոր աղջիկ է:

— Գացէ՛ք բաներնիդ: Ես Կէտիկ Փաշայէն աղջիկ չեմ առներ...

— Ատ ի՞նչ խօսք է, Փարաւոն: Հապա ո՞ւրկէ կ'առնես...

— Ես Բերայի մէջ արեւելեան հուրի մը ունիմ:

— Ատ անհաւատալի է : Բերացի աղջիկները բանաստեղծի չեն նա-
յիր...

— Ձէ՞ք հաւատար , ապացո՞յց կ'ուզէ՞ք , ահա փաստերս , ու փա-
րաւոն գրպանէն հանելով սեղանին վրայ նետեց , հպարտօրէն , իր ըս-
տացած սիրային նամակները :

Ինկան նամակներուն վրայ : Ընթերցում , քննութիւն ու քրքիջ :

— Մե՛ղք , փարաւոն , խաղի ես եկեր , ասիկա աղջկան գիր չէ :
Բերացի հանած վարած մը քթէդ է բռներ : Դուն կէտիկ Փաշացիներուն
պատիւը մէկ փարայի ես ըրեր :

— Մ'ըսէ՞ք , կը նուազիմ... Աղէկ նայեցէ՞ք : Կը խենթենա՞մ հտըը :

— Տղայ մըն ալ կընայ հասկնալ , թէ ասիկա մանչու գիր է եւ ոչ
աղջկան : Ո՞վ կայ այս գործին մէջ...

— Բիւզանդ Յրկայնեանը...

— Տեսա՞ր , դերասան է . քեզի խաղ է խաղացեր...

— Ինչե՛ր կ'ըսէ՞ք : Կեանքիս հետ կը խաղաք...

— Կեանքիդ հետ խաղացողը քու Բիւզանդդ է...

— Ա՛խ , ա՛խ , այդ շիտիտին...

Փարաւոն խելագարած էր : Խենթի նման էր ամբողջ գիշերը : Ձկը-
ցաւ քնանալ ու չկրցաւ արշալոյսին սպասել : Ճամբայ ելաւ դէպի Բե-
րա , Բիւզանդի տունը : Աղամամութիւն հասած էր : Ամէն ոք դեռ խոր
քունի մէջ էր : Փարաւոն խլեց Բիւզանդի տան ուռնակը ու տա՛նկ վար-
կաւ բարբարոս կատաղութեամբ :

* * *

Հարուածը այնքա՛ն ուժգին , այնքան անժամանակ էր , որ Բիւ-
զանդ իր մահճակալին մէջէն ընդոտ վեր ցատքեց , ականջը տնկելով :

Տա՛նկ :

Երկրորդ հարուած մը :

Բիւզանդի ննջասենեակը բացուեցաւ ու երեւցաւ իր մայրը լեզա-
պատառ :

Տա՛նկ :

Երրորդ հարուած մը :

Բիւզանդ ինդրեց մօրմէն , որ պատուհանը բանայ ու հասկնայ
անցողարձը : Հէք կինը համակերպեցաւ , բացաւ պատուհանը ու մու-
թըն ի վար հարցուց .

— Ո՞վ է ան...

— Ես եմ , ե՛ս , ո՞ւր է փիճդ , վար կանչէ , շո՛ւտ , տեսնենք ինչպէս
կ'ըլլայ եղեր ազգային բանաստեղծին կեանքին հետ խաղալը :

Խեղճ կինը պատուհանը փակեց : Բիւզանդ իմացած էր ամէն-բան
ու կըզին խնդրեց իր մօրմէն , որ վար իջնէ ու դուռը բանայ , խոստա-
նալով ինքն ալ հագուել ու տեսնուել Փարաւոնի հետ : Բիւզանդի մայրը
վար իջաւ , դուռը բացաւ ու Փարաւոն մտաւ բակը :

— Ի՞նչ կայ , միւսիւ փարաւոն , խեբ ըլլայ...

— Տղադ կեանքիս հետ կը խաղայ կոր : Այսօր անձնասպան պիտի
ըլլամ : Բոլոր գրողները պիտի դան ու տղուդ օձիքէն բռնեն իբրեւ իմ
ինքնասպանութեանս պատճառ եղող : Ի՞նչ պատասխան պիտի տայ
տղադ : Կեանքէս ի՞նչ կ'ուզէ , իմ կեանքս ազգիս պէտք է : Սուտ նա-
մակներով գերեզմանս կը փորէ...

Բիւզանդ կիսովին հագուած ու սանդուղին գլուխը կանգնած էր :
Փարաւոն միշտ կը պոռպուար .

— Ո՞ւր է սա սրիկան , ո՞ւր... խերը պիտի անիծեմ... դիս ո՞վ
կարծեց... Ազգին բանաստեղծը բեմ չէ որ վրան ելլէ ու խաղայ...

Բիւզանդ մէկէն ի մէկ սանդուղներէն վար վազեց ու ցցուեցաւ
Փարաւոնի դէմ .

— Ինծի նայէ , սրիկայ , ատ խաղերը ինծի չես կընար հաւատա-
ցնել... Գիտեմ քու նպատակդ . անպայման աղջիկէն զրուեցար , ուրիշ
մը սիրեցիր ու այս կերպով լքել կ'ուզես զայն... Ասիկա անխղճու-
թիւն , անպատուութիւն , վատութիւն է... Աղջիկը թոքա՞խտ ընել է
միտքդ : Ինծի ալ մէջ ձգեցիր... Ես հիմա կ'ի՞նչ պիտի պատասխանեմ
խեղճ աղջկան : Արդէն կ'ըսեն քեզի համար , թէ հեթանոս ես :

— Ատուած վկայ , Բիւզանդ , ես կը վառիմ կոր ատ աղջկան հա-
մար , ես ուխտիս տէրն եմ... Ձրուեցար , կ'ըսես... Ի՞նչպէս զղուիմ ,
երբ դեռ աղջկան երեսը չեմ տեսած...

— Ո՛չ , ո՛չ , խաղի ես ելեր , ու Բիւզանդ յարձակեցաւ Փարաւոնի
վրայ :

Քերթողը վախցաւ ու քայլ մը ետ փախաւ : Խե՛ղճ մայրը մնաց
երկուքին մէջ : Բիւզանդ կը պոռար ու Փարաւոն կ'երգուր : Քիչ
վերջ հանդարտած էր ամէն ինչ : Փարաւոնը վեր հանեցին ու սուրճ
հրամցուցին :

Ժամ մը վերջ միասին դուրս ելան :

Փարաւոն խնդրեց Շաղիկի շարադրութեան տետրակը , գիրերը
բաղդատելու եւ վերջին կասկած մը փարատելու համար : Բիւզանդի
համար դժուարին գործ մըն էր թէեւ ոչ անկարելի : Գնեց տեա-

րակ մը ու դրեց քանի մը դպրոցական շարագրութիւններ. — «Գարունը», «Փիսիկը», «Աշխատասիրութիւն», «Մտորական սէր», «Վարդան Մամիկոնեան» եւ «Ուսուցչուհի» : Տետրակը յանձնեց Փարաւոնի :

Ակադեմական քննութիւն : Նամակները դրուեցան մէկ սեղանի վրայ, շարագրութեան տետրակը ուրիշ սեղանի մը վրայ : Դերասանները բոլորուեցան : Փարաւոն հրամայեց նամակներուն մէջ «ա» մը գտնել ու գտան : Գտնել շարագրութեան տետրին մէջէն ալ «ա» մը ու գտան : Նայուածք մը խորազննին ու նմանութիւնը կատարեալ : «բ» նոյնպէս, «գ» ճիշդ ու ճիշդ, «դ» յար եւնման, «ե» երկուորեակներու պէս : Շարունակեցին : «Ե» գիրին վրայ կեցան : Նմանութիւն չկար : Փարաւոն խոսիւեցաւ : «Ե»ին մէկուն պոչը ներս էր դարձած միւսը դուրս : Ոճի՛ր... Համոզեցին ու անցան մինչեւ «օ», «ֆ» :

Փարաւոնի հանձարը չկրցաւ խորհիլ թէ նամակները կեղծողը կրնար շարագրութեան տետրակն ալ կեղծել : Անոր ուղեղը բարձր խոհերու ատակ ըլլալով՝ հասարակ բան մը չէր կրնար մտածել :

«Արծիւը ճանճ չորսար», կ'ըսեն :

Փարաւոն հանդարտած ու Կէտիկ Փաշայի երիտասարդութեան հանդէպ լարուած վերադարձաւ : Երբ դէմ առ դէմ եկաւ, նամակներուն կեղծ ըլլալը առարկողներուն հետ, նախատեց զանոնք զինքը տառապեցուցած ըլլալնուն համար ու իբր գերագոյն փաստ մէջտեղ նետեց Շաղիկի շարագրութեան տետրակը, իբրեւ իրական վաւերաթուղթեր :

«Աւետարանական» ոճով գրուած այդ «հաստատագիր»ը քրքիջ միւսյն առթեց Կէտիկ Փաշայիններուն :

— Փարաւոն, այսքան լէլէշ կրնա՞ս ըլլալ եղեր... Անշուշտ նամակագրին գի՛րն է աս : Բայց ս՞ի է նամակագիրը : Շաղի՞կը թէ Բիւզանդը... :

Փարաւոն նոր արթնցաւ... իր արքայադամբարանէն :

Տառապանքի նոր գիշեր մը լուսցուց : Հետեւեալ առաւօտ կրկին Բիւզանդի տունն էր, նոր պահանջով : Վերջապէս, տեսնել կ'ուզէր Շաղիկը, անձնապէս խօսիլ ու լուսարանուիլ : Առանց այդ կասկածին ալ ատեն էր արդէն վերջ տալու հալեցնող սրգատոնականութեան : Աչք աչքի ու շունչ շունչի եւ ստամոքս ստամոքսի տեսութիւն մը կը փափաքէր քերթողը :

— Անկցի՛ Պղատոն, անկցի՛ հաւկիթը... Կեցցէ՛, Սողոմոն եւ... մահալլէպի :

Բիւզանդ խոստացաւ Շաղիկը տեսնել ու կէսօրէն վերջի համար ժամագրութիւն մը ստանալ : Փարաւոն Շաղիկի պիտի սպասէր Շիտակ ճամբուն վրայ, խանութը... Մահալլէպիի մը : Բիւզանդ վերագարձաւ, աւետելով որ Շաղիկ պիտի դայ որոշեալ վայրը, ժամը երկուքին :

Փարաւոն ժամը մէկուկէսին արդէն գիրք բռնեց յիշեալ խանութին մէջ, ապսպրելով բարձրաձայն .

— Մահալլէպի մը բեր... :

Կերաւ ու սպասեց, աչքերը ժամացոյցին : Ժամը եղաւ երկուք : Փարաւոնի ստամոքսը (այսինքն սիրտը) ուժգին, ուժգին կը տրոփէր : Անճրկած էր ու լեզուն բռնուած : Ո՛չ ոք երեւցաւ : Ժամը եղաւ երկու ու քառորդ : Կասկածի սուրին ճիշդ ծայրը մտած էր քերթողին ստամոքսին մէջ : Դեռ զօրաւոր կը յուսար սակայն : Ո՛չ ոք երեւցաւ : Փարաւոն միջակ ձայնով ապսպրեց .

— Մահալլէպի մը եւս բեր... :

Յուսահատութիւնը սկսած էր : Ժամը երկուք ու կէսն էր : Խորհեցաւ, որ թերեւս գործ մը, անակնկալ մը, արգելք մը պատահեցաւ ու պիտի քիչ մը ուշանայ : Վայրկեանները կ'անցնէին ու ոչ ոք, ո՛չ ոք, բացի յոյն սիրակցորդ գոյգերէ :

— Ի՞նչ դժբախտ բան է պղտիկ աղբի մէջ մեծ մարդ ըլլալը... :

Ժամը եղած էր երեք : Փարաւոն տկար ձայնով մը ապսպրեց .

— Դուն մահալլէպի մը եւս բեր... :

Երրորդ պնակը մաքրելէ վերջ, քիչ մըն ալ սպասեց ու մաքրելով հաշիւը ելաւ դուրս, ուղղակի դերասաններուն սրճարանը վազելով, Բիւզանդը խեղդելու համար : Դերասանները երբ պատուհանէն տեսան Փարաւոնի վաղը լուր տուին Բիւզանդին, որ փախաւ ետեւի դռնէն : Փարաւոն ողորմելի Օթելլոյի մը նման կը դռնգոռար .

— Ո՞ւր է սրիկան, ո՞ւր... Աղբը զինքը լինչի պիտի ենթարկէ... Բանաստեղծին կեանքին հետ չեն խաղար... Պիտի խեղդեմ զինքը... Ինչո՞ւ այս խաղը խաղաց գլխուս... Իմ վրա՞ս պիտի սորվի դերասանութիւնը... Ի՞նչ կ'ուզէ ինձմէ... Ինչո՞ւ խաբեց զիս... :

Դերասանները Փարաւոնը իրենց մէջ առին, նստեցուցին, սուրճ ու զլանիկ մեծարեցին ու մխիթարեցին : Իրենցմէ ամենէն տարէցը ըսաւ .

— Պարոն Փարաւոն, այս տղան, Բիւզանդը, մեծ հիացում ունի ձեր գրականութեան հանդէպ...

— Ա՞ս է հիացումը, ընդմիջեց Փարաւոն:

— Վայրկեան մը: Բիւզանդ տեսնելով որ Գուր ալ մեծ մարդոց նման ծոյլ էք ու շատ չէք արտադրեր, այս խաղը խաղաց որպէսզի նամակի գրականութիւն մը մշակէք: Ու հիմա Բիւզանդը կ'ըսէ, թէ Ձեր սիրային նամակները գլուխ-գործոցներ են, անկոխ, կոյս, ինքնատիպ...

Փարաւոն ժպտիլ սկսաւ ու գոհունակութիւն մը ողողեց իր հոգին: Տարէց դերասանը հաւկիթ կը կտարէր Փարաւոնի... ստամոքսին մէջ:

Քիչ մը վերջ Փարաւոն, երեք հաւկիթ գնելով, կը վերադառնար իր սենեակը:

Ամէն մարդ ու ամէն բանաստեղծ իր սիրոյ պատմութիւնը ունի: Մանաւանդ ամէն վէպ: Փարաւոնին իրական սիրոյ պատմութիւնն ալ այս է: Եթէ ամենէն երջանիկը չէ, ամենէն «անկոխ»ն է, սակայն:

Դ. Մ Ա Ս

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Փարաւոնի այս արկածներէն վերջ վրայ հասաւ մեծ արկածը, — ընդհանուր պատերազմը:

Մի պո'ւմ... Մէրայէվոյում ու Աւստրիա պատերազմ յայտարարեց Սերպիոյ դէմ, Ռուսիա Աւստրիոյ դէմ, Գերմանիա Ռուսիոյ դէմ, Ֆրանսա Գերմանիոյ դէմ, Թուրքիա Ֆրանսայի դէմ, Անգլիա Թուրքիոյ դէմ, մարդկութիւնը Աստուծոյ դէմ ու Աստուած... Հայերուն դէմ:

Հացը պատերազմ յայտարարեց Ստամբուլին դէմ, Ստամբուր թնդանօթ արձակեց... Փարաւոնի դէմ ու Փարաւոն արշաւեց Գարամանեանց... նպարավաճառներուն դէմ:

* * *

Փարաւոն ծակ գրութեան մէջ էր: Իր հիացողներու լէզոնը, որուն ամենէն աւելի պէտք ունէր այդ պատերազմաշունչ շրջանին, ցան ու ցրիւ էր եղած, աւա'ղ: Կը մնար միայն հաւատարիմ գինակիր-համահարց մը, Կեսարեանը:

Փարաւոն ինքզինքը բաւական համարեց ու գործի սկսաւ, օգնական աննելով մերթ Կեսարեանը: Սեւ Քէս մը դառնելով՝ ծուռ մը դըլ-խուն վրայ կոխեց, ձեռքն ալ առաւ խարաղախ մը, սրունքնեքն ալ ծածկեց ճիւղէի մէջ ու սկսաւ շրջիլ խտտահայեաց: Թուրք զաղտնի սատրիկանի դերին մէջ էր: Կը մտնէր Գարամանցի յոյն նպարավաճառի մը խանութը, ապրանքներուն մաքրութիւնը քննելու համար: Ու կը սկսէր գիտողութիւնները.

— Հաւկիթներդ թարմ չեն...

— Լուրիադ դալ տարուանը չէ...

Ու կը գրկէր Կեսարեանը իւղերը քննելու: Ու ամէն ինչ աղտոտ ու անշահ գտնելով պաշտօնապէս յիսուն սոկի տուղանք կը նշանակէր: Մարդը կ'իյնար իր ոտքերուն: Փարաւոն, վեհանձն ու շերտղամիտ, կը գլջէր, ստանալով միայն տասը-տասներկու հաւկիթ, մէկ օխա իւղ, երկու օխա շաքար, երկու օխա լուրիա եւ երկու օխա բրինձ: Հաւկիթները իրեն վերապահելով մնացեալը կը ծախէր, վար դնով մը, հայ նպարավաճառներու: Պոլսոյ մէկ ծայրէն միւսը յոյն նպարավաճառ չթուղց, մտած խնդրելով անգամ մըն ալ չհանդիպելով:

Երբ խանութները լմնցան՝ ընդարձակեց իր ծրագիրը ու Կեսարեանի հետ մտաւ շուկաներէ ներս, քննելու պտուղ, բանջարեղէն, միս ու կերպաս: Ծանօթ ու սոսկալի դէմք մը եղած էր: Երբ շուկայէն ներս մտնէր վաճառորդները փախչելու փորձ կ'ընէին: Անիկա շուկային մէջ կանգնած մէկ ձայնի կը պոռար.

— Ո՞ւր կը փախչիս, Նիքոլի... Ո՞ւր կը փոխադրես ապրանքդ, Վասիլ... Ո՞ւր բարով, Անասթաս...

Թուրք սատրիկաններն անգամ խիստ յարգալից կը տեսնուէին իրեն հետ, դաշն կարծելով վերին քնիչ-պաշտօնեայ մը:

Փարաւոնի գործունէութիւնը այսքանով չէր վերջանար: Անիկա ամէն երեկոյ յունական, հրէական կամ աւստրիական թատրոնի ու պատկերախաղի ներկայացումներուն կ'երթար: Գոնէն ներս մտած ժամանակ, երբ տոմսակ հարցուէր իրեն, անիկա հաղիւ կը գլջանէր խիստ, խոժոռ ու կտրուկ՝ բառ մը կայծակել.

— Թահարրի:

Սոսկո'ւմ կ'առթէր այդ բառը. — «Թահարրի մէմուրը», զաղտնի սատրիկան:

Ու անմիջապէս կը տանէին զինքը տեղաւորել «մասնաւոր կարգի», ամենասուղ աթոռներէն մէկուն վրայ: Քիչ վերջ տնօրէնը կուգար, ժպտերես, գլանիկ հրամցնելով իր յարգանքը մաքուցանելու:

Երկինքէն հաւկիթ կը տեղար :

Ու վրայ հասաւ Ապրիլ տասներմէկը :

Ազգին գրական, գեղարուեստական, դիտական, կրթական, յեղափոխական ու ազգային բոլոր մեծ ու պղտիկ դէմքերը ձերբակալուած էին : Մէջտեղը, ամայութեան մէջ, քարէ կոթողի մը նման, մընացած էր մէկ հոգի : Ատիկա փարաւոն Մէմ-Անտոնն էր : Ըստ հասարակութեան կարծիքին, մտաւորականութիւնը սլատանդ կը տարուէր Անասուրուի խորերը : Փարաւոն խիստ զբաժուած էր ու ինքն իր մէջ կը խօսէր .

— Անարդ կառավարութիւն, զիս մտաւորական չի համարեր, զիս գրական դէմք չի ճանչնար, զիս մարդու տեղ չի դներ . . .

Փարաւոն նախանձով կը լսէր մտաւորականներուն երթը :

— Ես բախտ չունիմ, վիսէլա՛մ : Անոնք օղափոխութիւն պիտի ընեն, ճիշդ փիլիսոսութիւն ու հոշափ պիտի ուտեն, իսկ ես այստեղ հացս ու հաւկիթս ճարելու համար ստիպուած եմ կեղծ դադանի ոստիկանի դեր խաղալ . խիստ դժբախտ բան է տգէտ կառավարութեան մը հպատակը ըլլալ . . .

Քանի մը ամիս վերջ, սակայն, երբ կարմիր զրոյց մը դահանգանք պատճառեց բոլոր պոլսահայերուն՝ փարաւոն առաջին անգամ ըլլալով աղօթեց ու փառք տուաւ Աստուծոյ : Վախէն, Չանաք-Գալէի թրքական ծովամարտը պանծացնող պոռոտ գեղօն մը շարադրեց, Թրքերէն լեզուով, ու ծօցը պահեց : Ձերբակալութեան ժամանակ, կը մտածէր, երբ վրաս խուզարկին այս ներբողանքը կը դոնեն ու օձիքս կը թողուն :

Այսպէս անցան քանի մը ամիսներ : Օր մը, վերջապէս ի Քաղը Չէլմէ, ձերբակալուեցաւ ո՛չ թէ իբր մտաւորական, այլ պարզապէս իբր հասարակ զինուորական փախտական մը : Դժբախտաբար, առանց վրան-գլուխը խուզարկելու զինքը Պոլսոյ մօտերը, աշխատաւորական վաշտի մը մէջ զրկեցին, իբր քարտուղար-զինուոր :

* * *

Փարաւոն շատ նեղուեցաւ զինուորութեան մէջ . . . ուտելիքի կողմէ :

Տասը զինուոր պարունակող ջոկատի մը կը տրուէր լական մը տաք ջուր, որուն մէջ գտնուող նպարեղէնի հատիկները ազապէ մը աւելի խղճալի էին : Փարաւոնի ստամոքսին համար ասիկա զարմամ էր : Եթէ ամբողջ բանակին կերակուրի կաթսան յանձնուէր իրեն, կրկին պիտի

դժգոհէր : Իր ստամոքսին մէջ հեղձեալէ ձայներ կը լսուէին : Այդ ձայները օրըստօրէ ուժեղցան մինչ իր ստամոքսը տկարացաւ : Քաո՛ս . . . Ու իր մէջ, որկորը խուլ բողոքներ, սրտաներ, կրկնոցներ ու գրգռոցներ կ'արձակէր : Յեղափոխութիւն մը կը սաղմնաւորուէր : Մի պոլշեւի՛զմ . . . Ու չվիժեցաւ այդ ըմբոստական շարժումը, այլ պայթեցաւ :

— Միլլէ՛ք, պոռաց, օր մը փարաւոն իր շուրջը համախմբելով բոլոր թուրք զինուորները :

— Միլլէ՛թ, օրհեալ ըլլայ Աստուծոյ ճշմարիտ մարդարէն, որ Մուհամմէտն է : Օրհնեա՛լ է Գուրամը . . . Ալլաքը պահէ բոլոր ճշմարիտ հաւատացեալները . . . Մուհամմէտ, մեծ մարդարէն, իր Գուրամնով կը պատուիրէ լաւ ուտել, փիլիսոսաւորել, հաւկիթ կլլել, հօշափ խմել : Մինչդեռ այստեղ մեզի մեղքի մէջ կը խոթեն : Մեզի իբրեւ ուտելիք երկու հատիկ լուբիա կուտան ու մեզի Մուհամմէտի դէմ կը հանեն : Միլլէ՛թ, Մուհամմէտի արքայութիւնը վկայ, քու իրաւունքդ է լաւ ուտել, լաւ խմել, լաւ կլլել : Անկցին մեզի խարաւանա կերցնողները, կեցցէ՛ Ալլահը եւ իր մարդարէն, կեցցէ՛ փիլաք եւ . . . հաւկիթը :

Փաթթոցաւորներ, զինուորներ կատաղօրէն ձայնակցեցան փարաւոնի : Իրաւունք տուին, շնորհաւորեցին, ծափահարելով : Սկսան սլոռալ, գոռալ, կարծիքներ յայտնել .

- Վալլահի իրաւունք ունի :
- Պիլլաքի, թուրքէ մը աւելի մահմետական է, այս կեալուրը :
- Էֆէնտիմ, խելքի տէր անձ մըն է Ֆարաւոն էֆէնտին :

Աղմուկը շատցած էր : Վրայ հասաւ յիսնապետը : Բոլորը լուեցին : Փարաւոն դեռ կը պոռար : Քանի մը զինուորներ յիսնապետին հրամաններուն կը պատասխանէին : Վրայ հասաւ հարիւրապետն ալ : Փարաւոն, անտեղեակ, դեռ կը պոռար : Լուեց՝ երբ ապտակ մը ճաշակեց : Երեկոյեան ճաշն էր : Ո՛չ ոք խօսեցաւ փարաւոնի հետ : «Ապերախտ» կ'անուանէին զինքը, կառավարութեան շնորհած կերակուրին չհաւնելուն համար : Օղբ փոխուած էր : Նինջի չեփօրը հնչեց :

Հետեւեալ առաւօտ փարաւոն քուրէն արթնցաւ : Չգիտաներ չկային : Տասնապետ մը իրեն իմացուց, թէ հարիւրապետին պիտի ներկայանայ : Փարաւոն զգեստները փնտռեց : Ժամանակ անցաւ : Երկրորդ աղբարարութիւն մը՝ հարիւրապետին ներկայանալու : Փարաւոն ըզգեստները չէր գտած : Այս անգամ բռնեցին զինքը, ու առանց ականջ կախելու իր բողոքներուն, հարիւրապետին առջեւ հանեցին վարտիկ

չապիկով: Հարիւրապետը չկրցաւ ժպտալ մը զսպել: Ոստիկան-գլխու-
րի մը յանձնուեցաւ Փարաւոն, տարուելու համար Քըսմը Սիասի...
վարտիկ շապիկով:

Ու այս պատկերը աւելի բան մըն է քան իրականութիւնը: Եւ հա-
յոց մեծ բանաստեղծը, կողոպտուած իր մահամետական ընկերներէն,
որոնց դատը սլաշտպանելուն համար ձերբակալուած էր, այո՛, հայոց
աղբիւն մեծ բանաստեղծը ճամբորդեց դէպի Քըսմը Սիասի, հետիոտն
ու... վարտիկ շապիկով: Սակայն, ո՛վ միտք հնարամիտ, ճամբան
չապիկը հանեց ու երեսը փակեց, աչքերուն համար միայն բաց տեղ մը
թողլով: Թէեւ կուրծքը մերկացած՝ սակայն դէմքը ծածկուած էր:
Զէ՞ որ հայոց բանաստեղծը իր գլուխէն կը ճանչցուէր եւ ոչ մարմնոյն
ուրիշ մէկ մասէն:

Ու երբ փողոցի մը եզերքէն կ'անցնէին, ամենուն ուշադրութիւնը
էրենց վրայ, յանկարծ Փարաւոն տեսաւ ներկարար մը որ նշանատախ-
տակ մը կը ներկէր կարմիրով, ո՛վ միտք կրկնակի հնարիմաց Փարաւոն
կամաց մը ծուխով, մաս մը կարմիր ներկ խլեց ու քսեց կուրծքին,
ձեւանալով կուրծքէն ու դէմքէն վերաւոր զինուոր մը: Հայրենեաց
համար արիւն թափած դիւցազն մը:

Յաջորդ փողոցներուն մէջ բանը փոխուեցաւ: Գլխալից խօսքեր,
աղօթքներ իր կանանչ արեւ հասցէին ու նղովք, անէծք, հայհուէ թըշ-
նամիին հասցէին: Խաղը յաջողած էր: Թուրք կին մը, արցունքը աչ-
քերուն, վիզկած՝ մօտեցաւ Փարաւոնի ու թղթադրամ ոսկի մը զետե-
ղեց անոր աիլին մէջ: Փարաւոն գուրպակին մէջ սահեցուց ոսկին իր
ոստիկան-գլխուորին ըսելով.

— Ճամբան ինչ որ շահիմ կէսը քեզի կուտամ: Միայն գործը մի՛
աւրեր:

Համաձայնեցան: Ու Փարաւոն, այս համաձայնութենէն քաջալեր-
ուած, սկսաւ կուրծքն ու գլուխը բռնելով ցաւի աղիոզորմ աղաղակներ
արձակել ու կռթնիլ իր ընկերակցին: Բոլոր սրտերը ի գութ շարժեցան
ի տես այս ողբերգական տեսարանին: Տեղէ մը կէս ոսկի, տեղէ մը
քսան զրուշ, տասը զրուշ, հինգ, հինգ եւն.: Մինչեւ Քըսմը Սիասի
1250 զրուշ հաւաքած էր Փարաւոն: Իրեն մնաց 625 զրուշ:

* * *

Փարաւոն սենեակ մը մտցուցին հարցաքննութեան համար: Գրա-
սեղաններու առջեւ դաժան դէմքեր կային: Մէջտեղը նստող էֆէնտի
մը սկսաւ իր հարցարանը.

- Անունդ ի՞նչ է:
- Փարաւոն Սէմ-Անտոն:
- Այս ի՞նչ խուռնեւրամ անուն է:
- Բուն անունս Փարաւոն է:
- Միւս աւելցուքները ի՞նչ են:
- Գրական ծածկանունս է:
- Վա՛յ, դուն գրո՞ղ ես:
- Եւ ինքնատիպ:
- Լա՛ւ: Ուրեմն՝ անունդ ի՞նչ է:
- Փարաւոն ճանլէչէկեան:
- Հօրդ անունը ի՞նչ է:
- Բարունակ:
- Ծննդեանդ թուակա՞նը:
- 1885:
- Ո՞ւր տեղացի ես:
- Եէտի Գուլէցի:
- Ի՞նչ գործով կը դբաղէիր:
- Նախ սաղ, յետոյ ալ քնար կը դարնէի:
- Ուրեմն նուազածո՞ւ ես:
- Քաւ լիցի, բանաստեղծ եմ:
- Ի՞նչ նիւթերու վրայ կը գրէիր:
- Հաւկիթի, հաւի, հնդկահաւի, լէպլէպլի, սագի ու նագի վրայ:
- Ատ ի՞նչ տեսակ նիւթեր են:
- Անկոխ են, էֆէնտի:
- Բ՞նաւ հիւանդ եղա՞ծ ես:
- Փառք Աստուծոյ, երբե՛ք:
- Հայրդ ո՞ղջ է:
- Ո՛չ, մեռած է:
- Ի՞նչ հիւանդութեամբ մեռաւ:
- Գլխուն վրայ ուռ մը հախեց:
- Երտակը ըսէ, գլխուն վրա՞յ թէ գլխուն մէջ:
- Չեմ պնդեր. որոջ չեմ գիտեր:
- Քու գլխուդ մէջ ալ ուռ կա՞յ:
- Ո՛չ, հանճար կայ՝ կ'ըսեն:
- Ո՞վ է ըսողը:
- Գրական քննադատները: Մինակ Եակոբ Քիւֆէճեան անուն
խային մը ուրացաւ հանճարս:

— Լա՛ւ: Հիմակ ա՛ն ըսէ. դուն ո՞ր կուսակցութեան կը պատկա-
նիս:

— Ես չեմ զիջանիր կուսակցութեան մը պատկանիլ, քանի ես Հիմ-
նած եմ ի՛մ կուսակցութիւնս:

— Վա՛յ, ի՞նչպէս կը կոչուի ան:

— Եռմուրքա եռուանլար ֆէմիլիէթի: (Հակիթ կլլոզներու
միութիւն):

— Բացատրէ տեսնենք այդ միութեան նպատակը:

— Նպատակը դուտ առողջապահական է:

— Զարմանալի: Ի՞նչ կ'ընէիք...

— Հակիթ կը կլլէինք...

— Ատոր համար միութիւն պէտք է կազմել...

— Հարկաւ: Ասիկա բժշկական լուրջ տեսակէտ մըն է... Դուք ալ
կլլեցէք, շատ լաւ կ'ըլլայ...

— Ես հիւանդ չեմ:

— Ասիկա ապագա՛յ հիւանդութեանց համար է: Կանխամիջոց:

— Ծեծ ուտողներու համար ի՞նչպէս է հակիթը:

— Միշտ լաւ:

— Ուրեմն ասկից վերջ շատ հակիթ կլլէ:

— Ինչո՞ւ էֆէնտին, ես ի՞նչ եմ ըրած:

— Քեաֆի՛ր, դուն չէի՞ր զինուորները ապստամբութեան մղողը...

— Քաւլիցի: Ես բժշկական տեսակէտ մը պարզեցի, ես յանձնա-
րարեցի հակիթ կլլել:

— Ուլա՛ն, ճիշդը ըսէ: Քեզի ծեծի տակ կը սատկեցնեմ, ի՞նչ ը-
սիր զինուորներուն:

— Հակիթ կլլեցէք, ըսի: Ահա բոլորը: Հայրենեաց ծառայելու
համար զինուորը զօրաւոր հակիթներ կլլելու է:

— Լա՛ւ: Քեզի հակիթով առատ տեղ մը պիտի զրկեմ:

— Ծատ շնորհակալ եմ, միայն հակիթէն առաջ տափատ մը եւ
բաճկոն մը շնորհեցէք:

* * *

Փարաւոնը նետեցին Գըմը Սիասիի դէմ գտնուող բանտը՝ Միւ-
տիւրիէք, իրեն շնորհելով տափատ ու բաճկոն:

Այնտեղ անգամ մը ծեծեցին, հէք ազգին հէք բանաստեղծը: Ծե-
ծեցին սօփայով: Փարաւոն զրպանէն հանելով քերթուածներու հաւա-
քածոն զինքը ծեծողին երկարեց ու ըսաւ.

— Աստուծոյ սիրուն, դիս այս գրքովս ծեծէ...

— Ինչո՞ւ համար...

— Որովհետեւ այն գործիքը, որ մեռցուց Յիսուսը, հիմակ կը
պաշտուի: Անիկա խաչն է: Ես ալ այս գրքով ծեծուիլ ու մեռնիլ կ'ու-
ղեմ, որպէսզի մահէս վերջը պաշտեն քերթուածներս:

Քանի մը ամիս վերջ Փարաւոն խուճի մը հետ ճամբայ կը հան-
ուէր դէպի քարափ, զրկուելու համար Անատոլու:

Ե. Մ Ա Ս

Փ Ա Ր Ա Ի Ո Ն Ա Ք Ս Ո Ր Ի Մ Է Ջ

Շոգենաւը սուլեց տխրօրէն ու ճամբայ ելաւ դէպի Մարմարա:

Փարաւոն յուզուած էր: Տարիներ առաջ եկած էր այդ քաղաքը,
երբ դեռ պատանի էր: Տառապած ու հրճուած էր այնտեղ ու հիմա ա-
կամայ կը թողուր այդ ստանը, գուցէ անգամ մըն ալ չտեսնելու հա-
մար: Փարաւոնի հոգին կը լայննար, կը բացուէր ու կը գրկէր քաղա-
քին հետզհետէ փոքրացող համայնապատկերը:

Տխուր էր Փարաւոն: Կը յիշէր իր խանդավառութեան ու դժբախ-
տութեան օրերը: Ի՞նչ արբեցութիւն երկու վիճակներուն ալ մէջ: Բո-
պէ առ բոպէ կ'աւելնար իր մէջ այդ քաղաքին հանդէպ ունեցած սէրը:
Ինք շատ անգամ դառնացած էր պոլսեցիներուն ու ատոր համար յեղ-
յեղած թէ «դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը»:
Հիմակ սակայն կը վերազնահատէր այդ քաղաքացիները: Իր սիրտը
կը բացուէր: Անկէ ներս կը մտնէին ներողամտութիւնն ու անյիշաչա-
րութիւնը եւ անկէ դուրս կ'ելլէին յիշատակներուն դառնութիւնները,
սահելով քաղցր լոյսի մը մէջ:

Քիչ վերջ համայնապատկերը մշուշ զգեցած էր եւ հազիւ կ'ուր-
ուագծուէին մինարէներն ու աշտարակները: Բանաստեղծը իր հոգիին
խորունկէն կ'երգէր իր բուռն ու բարի «մնաք բարով»ը:

— Մնաք բարով, տպուածներ ու անտիպներ, կոխուած ճամբաներ
ու անկոխ ջուրեր, մնաք բարով հակիթներ ու հաւեր, մնաք բարով
հիւանդանոցներ, դպրոցներ, խմբազրատուններ, ճաշարաններ:

Պահ մը լուռ մնալէ վերջ իր մտածումը երազացաւ: Երեւակայեց
տուներու մէջ տեղի ունենալիք ասուլիսը, իր աքսորման առթիւ:

Ահա դէմքեր մայրերու, հայրերու, մամիկներու, կոյսերու եւ ե-

բխտասարգներու, որոնք վշտաբեկ կը հաղորդեն ու կը լսեն բոթը : «Փարաւոնն ալ», «մե՛ղք, շատ երիտասարդ էր», «ի՛նչքան տաղանդաւոր», «եւ ի՛նչ տաղանդ, անկոխ էր ու կոյս» :

Գէշ նախազգացում մը սակայն պատկերը չարախոխեց : Ահա նոյն անձերը, որոնք կ'ըսեն . «Փարաւոնին մնալով ինչե՛ր դացին», «Փարաւոն անոնց քով ի՛նչ էր որ» . . .

Սաստիկ աղղուեցաւ բանաստեղծը այս վերջին պատկերէն : Այնքա՛ն սաստիկ, որ աւելի քան իրականութիւն կարծելով դայի աղաղակեց .

— Պոլի՛ս, ահա կ'երթայ բանաստեղծդ : Գու՛մտաւորականներդ եթէ քու գլուխդ էին, ես ալ քու ուղեղդ եմ ու կ'երթամ : Ողբա՛, քաղաք, ողբա՛ :

Ոստիկան դինուոր մը, մօտենալով Փարաւոնի, կոպտօրէն դայն քաշեց կամբջակին եղբրքէն ու տարաւ խումբին մէջ :

Աքսորականներու այդ խումբը տասնըվեց հոգիէ կը բաղկանար : Ամէնքն ալ Հայեր էին : Կար տասնըեօթերորդ մը . կիսաշխարհիկ թըրքուհի մը Ֆաթիմէ անունով : Ասը-Նօզլատոցի : Ան ալ դէպի ծննդավայր կը վտարուէր, Պոլսոյ բարոյակախութեան! անդորրութիւնը խանդարած ըլլալուն :

Խումբին ամենէն զարգացածը ու ներկայանալին Փարաւոնն էր : Ֆաթիմէ դայն Պոլսեցի պէյ մը կարծեց ու սիկառ հրամայեց : Գիչ վերջ կինը բանաստեղծին քով տեղաւորուեցաւ ու սկսաւ մտերմանալ, գնահատելով Փարաւոնի թուրքերէնը ու կոյս ընթացքը :

Փարաւոն իր կեանքին մէջ առաջին անգամ կ'արժանանար կնոջ մը յանկարծական համակրանքին ու մտածեց .

— Պոլսէն բաժնուելով բախտս կը գոցուի՞ թէ ընդհակառակը կը բացուի . . .

Փարաւոնի մէջ յամբար վերածնաւ տրամադրութիւնը ու նոյն-իսկ քանի մը ժամ վերջ խանդավառութեան մօտեցաւ : Անիկա քանի մը գիծերով իր պոլսական կեանքը մեծախկարեց ու ոսկեգօծելով ներկայացուց Ֆաթիմէի : Այս վերջինը կլլեց դայն առ ի չգոյէ օղիի : Եթէ այդ բմպելին ըլլար, կամբջակին վրայ, կինը յօժար էր Փարաւոնին փոխանորդելու եւ ինք աւելի բանալու իր բերանը . . . կազէլ մը ձգելու համար :

Ֆաթիմէ նրբօրէն առաջարկեց Փարաւոնի կարել իր բաճկոնին մէկ պզտիկ բացուածքը : Փարաւոն արեքցաւ այդ հոգածութիւնէն : Կինը

հանեց իր ասեղ դերձանը, մինչ Փարաւոն քաղցրօրէն ընկղմեցաւ իր երազանքներուն մէջ :

Ահա այն պատկերը, որ նկարագրուեցաւ իր մէջ .—

Փարաւոն Սէմ-Սնտոն, հռչակաւոր քնարերգու մը, գնահատուած միջազգային գրական քննադատներէն ու հրատարակիչներէն : Պայատական հարուստ, երիտասարդ ու գեղանի թըքուհի մը — Ֆաթիմէն — սիրահարուած իրեն : Կը փախչին Պոլսէն երկու տատրակներու նման : Կիները երանի կուտան պալատականուհիին, իսկ այրերը՝ Փարաւոնին : Բանաստեղծը կ'երթայ Եւրոպա : Երկրագունդը կը դբաղի այս ճամբորդութեամբ : Յունաստանի, Իտալիոյ եւ Ֆրանսայի մէջ բոլոր գրական ընկերակցութիւններն ու թերթերու տնօրէնութիւնները ընդունելութիւններ, յանձնարումներ կը կազմեն պատուելու համար մեծահռչակ բանաստեղծը եւ իր նոր Մուսան : Ու ճամբան՝ իրենց սիրոյ վայելքները : Ծովը ամբողջ մեղրացած, նաւը ոսկի, կայմերը արծաթ, ու թռչուններու երամներ նաւուն շուրջը կը պարեն : Հուսկ ապա պատկերին մէջէն ու խորուհիէն իր հրաշագեղ Մուսան կ'երեւի ու քնքշաքայլ կը մօտենայ իրեն : Կը նստի իր խորանին ներքեւ ու . . . բաճկոնակը կը կարկտէ :

Հով մը եկաւ ու պատկերը տարաւ ծովուն բացերը :

Ֆաթիմէ գեռ կը կարէր :

Փարաւոն ծովուն վրայ ու մտածումի ալիքներուն մէջ որսաց նոր պատկեր մը, նոյնքան խանդավառող ու աւելի իրականալի .—

Իր սեփական Աղզը Փոքր Ասիոյ, Հայաստանի, Սիւրիոյ ու Արարիոյ անասպտներուն մէջ նահատակուած էր, աննախընթաց բարբարոսութեամբ : Իր ցեղին մանուկներն ու մամիկներն անգամ անմասն չէին մնացած այդ կրակէ Զուլումէն : Գոփքը պայթած էր : Բոլոր ամբարտակները զարհուրելի պայթիւնով քլուած էին կրակէ դետերու վրայէն : Ու տարտարոսին ամբողջ հուրը, լաւան, բոցն ու ծուխը վազած էին Հայերուն վրայ : Ու կմախքներ, զոհեր, դախկեր : Ու ազգին դլխուն եկած այդ Զուլումէն զատ Աղզին բո՛ւն դլխուն՝ մտաւորականութեան կորուստն ալ կար : Զախջախուեցան քնարները, գրիչները, փետուրներն ու վրձինները : Ո՞վ պիտի երգէր, գրէր, արձանագրէր կամ նկարէր ցեղին մեծ խաչելութիւնը : Մնացած էր միայն Փարաւոն : Ու հիմակ Փարաւոն ալ կ'երթար Գողգոթա :

— Հաւանաբար Նախախնամութեան մատը կայ այս գործին մէջ : Թերեւս զիս կ'աքսորեն վերին կարգադրութեամբ մը, որպէսզի երգեմ

ցեղիս ճգնաժամը: Ուրեմն Աստուած զի՛ս արժանի դասեց այս վսեմ գործին:

Փարաւոն շատ խանդավառուեցաւ այս մտածումով եւ զուարթօրէն հազաւ իր բաճկոնակը, որ աւարտած էր:

Բիշ վերջ քթին տակէն հին աշուղական եղանակ մը սկսաւ մոռլտալ: Փաթիմէի եռանդը շարժած ըլլալով սկսաւ պատգահիկ ձայնով մը երգել թրքական դոնսիկ սիրերգ մը:

Բանի մը վայրկեան վերջ խումբը բոլորուեցաւ բանաստեղծին ու երգչուհիին շուրջ:

Ոստիկան զինուորը վրայ հասնելով աքսորականներուն տրամադրութիւնը ծովը թափեց:

Փարաւոն, Փաթիմէի թեւը մշտելէ վերջ, իրաւունք տուաւ ոստիկան զինուորին ու յետոյ իր աքսորակիցներուն դառնալով չախեց դանոնք համախմբուած ըլլալուն ու ցրուեց:

Ոստիկան զինուորը ափ ի բերան մնաց՝ Փարաւոնի թրքագիտութիւնը տեսնելով ու անոր պարսկական առողջութիւնը լսելով: Սկըսան խօսիլ իրարու հետ: Փարաւոն անոր բացատրեց թէ «խիստ դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը»: Ոստիկան զինուորը նստաւ Փաթիմէի քով, խնդրելով Փարաւոնէն, որ հսկէ ձերբակալուածներուն վրայ:

Փարաւոն պաշտօնի կոչուած էր ու իր օրավարձն էր զոյգ մը... եղջերու: Մարդ ծովու վրայ դտածը կ'ուտէ եւ ոչ ուզածը: Հաւկիթները Պոլիս մնացած էին: Բանաստեղծը մօտեցաւ «Ազգ»ին: Աքսորականները կասկածանքով ընդունեցին Փարաւոնը:

Մութը կոխած էր, երբ հասան Իզմիթ: Անմիջապէս ոստիկան զինուորներ հասան ու աքսորականները, իրենց թուղթերով առին:

Խումբը ճամբայ ելաւ դէպի քաղաքին բանտը: Առաջին յարկին խուցերէն միոյն մէջ նետեցին նորահասները, Փաթիմէն պահելով իրենց: Այդ գիշեր Իզմիթի անբարոյակահութեան փոթորիկը գտաւ իր անդորրութիւնը, շնորհիւ Փաթիմէի:

Փարաւոն, ինքզինքը դեռ պաշտօնի վրայ նկատելով, իւրաքանչիւրին պառկելիք տեղը որոշեց ու գանձեց թղթագրամ քսանական զրուշ, իբր թէ ըստ կանոնի:

Բանտարկեալներէն ծերունի մը, Մարգար աղա, մօտեցաւ բանաստեղծին:

— Պարոն Փարաւոն, գրող կարգացող մարդ պիտի ըլլաս, կը վայ-

լէ՞ որ այս տեսակ պղտիկութիւններ ընես ու այս խեղճերը խաբես:

— Մարդ Աստուծոյ, ես երբեմն պղտիկութիւններ կ'ընեմ, սակայն, ոչ գէշ մտքով, այլ յանուն ներդաշնակութեան:

— Ատ ի՞նչ ներդաշնակութիւն է, բարեկամ:

— Բացատրենք: Ես մեծ եմ ու ազգը պղտիկ, որով երբեմն վեհանձնօրէն կը խոնարհիմ, կը պղտիկնամ, որպէսզի իմ մեծութիւնս ու ազգիս պղտիկութիւնը զգալի չըլլայ: Ձե՞ս գիտեր, թէ ի՞նչ դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը: Երանի՛ր պղտիկներու: Ձեր վնասը քսան-երեսուն է, իմս անկէ աւելի է:

— Պարոն Փարաւոն, խելքդ գլուխդ հաւաքէ: Նայէ, ինչ օրերու մէջ ենք: Հիմակ ոչ մեծ մնաց, ո՛չ ալ պղտիկ: Ամէնքս մէկ ցաւի մէջ ենք: Ո՛վ գիտէ՝ ի՞նչ տառապանքներ կը սպասեն մեզի:

— Տառապանքն ի՞նչ է: Խելք ունեցողը չի տառապիր: Տառապանքը միայն ստամոքսէն կուգայ:

Փարաւոն՝ քնացողի մը վերարկուն խելով՝ իր վրայ առաւ, իբր վերմակ, ու քնացաւ:

Հետեւեալ առաւօտ խումբը երկու ոստիկան զինուորներու հսկողութեամբ ճամբայ ելաւ, հետիոտն, դէպի Սապանճա: Փաթիմէն կըրկին խումբին մէջն էր ու կը քալէր երկու ոստիկաններու մէջէն ոստոստելով, ծխելով, երգելով:

Ձուարթարար արեւ կար:

Բանի մը ժամ Փարաւոն լաւ տրամադրութեամբ էր, իսկ երբ ըզգաց, որ ոտքերը դաւաճանել կը սկսին տխրեցաւ:

— Ա՛հ, եթէ ոտքերս ունենային մտքիս ոյժն ու թռիչքը, հառաչեց:

Ոստիկան-զինուորներէն մին աքսորականներէն միոյն Փէսը առաւ, ուրիշի մը կօշիկը, երրորդի մը թաշկինակը, չորրորդի մը վերարկուն, իսկ Փաթիմէի ալ սիրտը: Աւագակարարոյ զինուորը անկըուեցաւ Փարաւոնի առջեւ:

Փարաւոն խօսեցաւ.

— Եղբայր, ես հանճարէ դատ ուրիշ բան չունիմ:

Փաթիմէ վրայ հասած էր ու կը քաշէր ոստիկանին թեւէն, ըսելով.

— Անոր մի՛ դպիր, ան շաիրը շուէրակն է, պոլսեցի Ֆէրէուն է-Ֆէնտի կը կոչուի:

— Դուն իրա՞ւ բանաստեղծ ես, — հարցուց ոստիկանը:

— Բանաստեղծներուն ալ ամենէն անուանին եմ: Դուն այս վիճա-

կիս ի՞նչ կը նայիս : Քանի մը շարաթ վերջ ես կրկին անիւրն վրայ կ'ելլեմ :

* * *

Իրիկունը հասան Սապանճա : Պտուղներու հայրենիքն էր : Փարաւոն ինքզինքը առանձնաշնորհեալ կարծելով պողպատաձուր մը մօտեցաւ : Ոստիկանը ետեւէն հասնելով հրացանի կոթով սոսկալի հարուած մը իջեցուց Փարաւոնի կոնակին :

Սապանճայի մէջ նոր ոստիկան-զինուորներու յանձնուեցան , առաջնորդուելով ախոս մը , գիշերելու համար : Ֆաթիմէ ահամայ կամ կամայ անձնատուր եղած էր իր նոր տէրերուն :

Աքսորականները երբ ախոս նետուեցան , արդէն կիսամեռ վիճակ մը ունէին : Հետեւեալ օր ճամբան հետիոտն քալել անհնարին էր : Հարկ էր շոգեկառք առնել : Ոմանք դրամ ունէին , ոմանք ալ չունէին : Վէճ մը սկսաւ ու կռիւի փոխուեցաւ : Ամէն ոք կատղած էր :

Երեք պարագլուխներ իրենց ընկերակիցներուն վրայ կը խուզարկէին : Մէկուն հագուստին ծայրերուն մէջ դեղին ոսկիներ էին շարուած , երկորդ մը իր տախտին տոտերուն մէջ մէճիտներ ունէր , երրորդ մը իր օձիկին գաղտամեստ մասերուն մէջ դոհար ու արծաթ ունէր , ուրիշներ հաղիւ քանի մը դահեկան , եւ տակաւին խեղճեր ալ որոնք անկուտի էին : Հաւասարութեան ժամը հնչած էր : Ֆէսի մը մէջ լեցուցին բոլոր գտնուածները :

Կարգը եկաւ Փարաւոնի : Բանաստեղծը ընդդիմացաւ ու թոյլ չըտուաւ , որ խուզարկեն զինքը : Քննիչները կասկածելով անոր վրայ յարձակեցան : Փարաւոն կ'աղաղակէր : Ներքին դրսայններուն մէջ ահագին տրցակ մը դտան ու բացին : Ինքնատիպ քերթուածներ էին... Փարաւոն ազատեցաւ ետ ստանալով իր տաղերը ու առաջարկեց բոլորին ճամբու ծախսը , մինչեւ էսկի Շէհիր մէկ կողմ դնել ու աւելցած գումարը հաւասարապէս բաժնել :

Փարաւոն նախակոյս բոլջեւիկ մը եղած էր : Իր առաջարկը սիրով ընդունուեցաւ... անկուտիներէ : Փարաւոնի բաժին ինկաւ կէս ոսկի : Վէճը , հայհուէք մինչեւ լոյս շարունակուեցաւ :

Առաւօտուն կարգադրելով իրենց շոգեկառքով ճամբորդելու խընդիրը ուղղուեցան կայարան , միշտ ոստիկան-զինուորներու հսկողութեան տակ : Շոգեկառքին մէջ դտան ուրիշ քանի մը հայ քսորականներ ալ : Վերջապէս , խումբը հանգստացած էր :

Շոգեկառքը սուլեց ու Փշաց : Աքսորականներուն կը թուէր թէ հի-

մակ թէեւ աւելի հանդիստ , սակայն , աւելի շուտով կ'երթան մահուան : Ամէն ոք յուզուած էր :

Խումբին մէջէն ձայն մը բարձրացաւ , հրաժեշտի երգ մը , որ շուտով ձայնակիցներ ունեցաւ : Այդ երգը , տխուր , քաղցր ու մահաբոյր բոլոր սրտերը վեր հանեց : Շատեր կու լային լուիկ մնջիկ : Յուզումը սրտին մէջէն ալիք ու փրփուր կը նետէր մինչեւ կոկորդ ու մինչեւ աչք : Ու շոգեկառքին վաղըին մէջ , հովերուն մէջ , թռչող տեսարաններուն մէջ այդ երգը թռչուններու երամ մըն էր , որ քսորականներու վահոնին մէջ խօլաթեւ կը թռչէր , մէկ պատուհանէն կ'ելլէր ու միւսէն ներս կը մտնէր , կ'իջնէր հողիներու խորանին մէջ ու պատկերներ , յիշատակներ կը գունաւորէր :

Քալ սէլամէք , նազըլ եարիմ ,
Պիր եանա սէն , պիրտէ պէն...

Երգը լուց : Յուզումով համակուած էին բոլոր սրտերը : Շոգեկառքը կը սուրար : Աքսորականները ցաւոտ՝ կը ծխէին : Փարաւոն անկիւն մը քաշուած կուլար :

* * *

Երեկոյեան հասան էսկի-Շէհիր :

Խումբը առաջնորդուեցաւ դէպի քաղաքին վատահամբաւ բանտը : Այդ բանտը լեցուն էր թուրք դող աւաղակներով : Ժամ մը վերջ թուրք բանտարկեալները յարձակեցան հայ քսորականներուն վրայ : Նոր բոլջեւիկ մը աս ալ :

Փարաւոն կէս ոսկի ունէր , անեղծ : Պիտի կողոպտէին , ճար չկար : Փարաւոն կլլելու ատակ էր , հաւկիթ շատ կլլած ըլլալով : Կամաց մը կէս ոսկինոցը կլլեց : Երբ թուրքերը իր վրայ եկան Փարաւոն ըսաւ .

— Ես աէրվիշ մարդ եմ : Իմ հարստութիւնս գլխիս մէջ է ու անկողոպտելի է :

Թուրքերը հասկցան իր արժէքը ու հայհոյանքով ձգեցին օձիքը : Յանկարծ պաշտօնեայ մը բանտին դռնէն պուտաց .

— Բարունակի որդի Փարաւոն :

Փարաւոն դող ի դող ներկայացաւ : Պաշտօնեան զինքը սենեակ մը առաջնորդեց : Ծեր ու ծաղկաւեր թուրք մը դրասեղանի մը մէջտեղ նստած էր , երկու քարտուղարներով :

— Բանաստեղծը դո՞ւն ես , — հարցուց քննիչը :

— Ես եմ : Աշխատակցած են «Սապահ» , «Իգտամ» եւ «Բէսիմիլի Կազէթ» թերթերուն :

- Ի՞նչ անունով գրած էս :
- Իմ անունովս : Մենք յայտնի գերդաստան մը եղած ենք : Մեծ հօրս հայրը Սուլթան Մահմուտի սաղերգուներուն պետը եղած է :
- Դուն ինչո՞ւ խող եղար ու մեծ հօրդ հօրը չի նմանեցար :
- Ի՞նչ կ'ըսէք, էֆէնտի, ընդհակառակը էս մեծ հօրս հօրը գործը շարունակեցի, զարգացուցի ու բանաստեղծ եղայ :
- Մեծ հօրդ հօրը անունը ի՞նչ էր...
- Եսայի :
- Հօրդ անունը ի՞նչ է...
- Բարունակ :
- Քո՞ւ անունդ...
- Փարաւոն :
- Քանի՞ տարեկան էս :
- Ատիկա մօրս հարցնելու է : Անճարակին ծնած ըլլալս գիտեմ :
- Անճարակը ի՞նչ է...
- Բարեկենդանին վերջաւորութիւնն է...
- Ուրեմն դուն խարակէօզներու շարքը ծնած էս...
- Սակայն, բացառութիւն եմ :
- Քու մասիդ գէշ տեղեկութիւններ ստացած ենք :
- Ատիկա անկարելի է : Ես շատ յարգուած գրագէտ մը ու բժիշկ մըն եմ :
- Վա՛յ, բժի՞շկ ալ էս : Տասը տարիէ ի վեր յօդացաւ ունիմ, կրնա՞ս դարմանել :
- Հարկաւ : Ատկէ դիւրին բան կա՞յ, աշխարհիս վրայ :
- Ամա՛ն տօքթօր էֆէնտի, այստեղ դիւտուս վրայ տեղ ունիս, եթէ զիս դարմանես :
- Ուղածնիդ ատ թող ըլլայ : Ես մէկ շարքէն ձեր յօդացաւին խերը կ'անիծեմ :
- Դուն հանճարեղ բժիշկ մը կ'երեւիս :
- Հանճարեղ ալ գրող եմ :
- Աստուած երկար կեանք պարգեւէ...
- Չոր կեանքէն ի՞նչ կ'ըլլայ, երբ... փորս անօթի է...
- Ամա՛ն, տօքթօր էֆէնտիին կերակուր բերել տուէք, հրամայեց քննիչը :
- Կեցէ՛ք, պոռաց Փարաւոն քարտուղարներուն : Ես հաւու միս, բիլաւ, հօշաֆ ու հաւկիթ շատ կը սիրեմ :
- Հաւու միս, բիլաւ, հօշաւ ու հաւկիթ, հրամայեց քննիչը :

Տասը վայրկեան վերջ Փարաւոն գրասենեակին մէջ կը ճաշէր, քննիչին հետ մտերմիկ խօսակցութեան մը բռնուած : Անոր կը պատմէր իր հրաշագործութիւնները, իբր բժիշկ ու իր յաղթանակները, իբր գրագէտ, Պոլսոյ ջուրերուն...

Քննիչ էֆէնտին վերացած էր :

Բաղնիք երթալէ վերջ Փարաւոն այդ իրիկուն կը քնանար էֆէնտիին...

* * *

Փարաւոն հետեւեալ օր կէսօրին արթնցաւ ու Քննիչ էֆէնտիին հետ ճաշեց : Տասը ոսկի պահանջեց անհրաժեշտ մահուը պատրաստելու համար : Յօդացաւը պիտի դարմանէր :

Փարաւոն ծառայի մը ընկերակցութեամբ շուկայ ելաւ ու գնեց անհրաժեշտ նիւթերը իր դեղը շինելու համար : Գնեցին տասնըծօթը հաւկիթ, սեւ պղպեղ, մկան իւղ, լէպլէպի, վարդաջուր, նաւթաճարպ ու «մինարէի ստուերով» «թմբուկի փոշի» :

Հասան տուն : Փարաւոն Քննիչէն պահանջեց մուրթ սենեակ մը, Գուրան մը ու երկու մոմ : Քննիչը շատ գոհ մնաց, երբ լսեց Գուրանի պահանջը : Փարաւոն մտաւ վարագոյրներով ծածկուած խաւարակուս սենեակ մը ու սեղանին վրայ դետեղեց Գուրանը, երկու կողմերն ալ մոմերը վառեց : Աթուր մը վրայ ալ դրաւ իր շուկայէն գնածները : Փարաւոն սանտ մըն ալ ուղեց : Աս ալ բերին ու տէր ու ծառայ հեռացան, իր գործին թողլով Փարաւոնը :

Մեր բժիշկը հաւկիթները կոտրեց ու կէսը կոկորդին, կէսն ալ սանտին մէջ լեցուց : Սեւ պղպեղը առաւ ու կէսը սանտին մէջ, կէսն ալ դրոպանը լեցուց : Լէպլէպին առաւ ու կէսը սանտին կէսն ալ ստամոքսին մէջ լեցուց : Վարդաջուրը առաւ ու կէսը սանտին մէջ, կէսն ալ իր հագուստներուն վրայ սրսկեց, նաւթաճարպը առաւ ու կէսը սանտին մէջ, կէսն ալ մարմնոյն քսեց : Իսկ մկան իւղը, մինարէի ստուերն ու թմբուկի փոշին ամբողջովին սանտին մէջ լեցուց ու խառնեց, փրշրեց, խմոր մը պատրաստեց : Ամէն ինչ կարգադրելէ վերջ, սենեակին մէջ պառկեցաւ, քնացաւ :

Երեկոյեան ճաշի ատեն միայն սենեակէն դուրս ելլելով՝ էֆէնտիին հաղորդեց, թէ դեղը պատրաստ է : Ծառայ մը գնաց սանտը բերելու : Փարաւոն հրամայեց էֆէնտիին, որպէսզի մերկանայ : Մարդը հնազանդեցաւ : Փարաւոն իր մատով մաճոյցէն առաւ ու քսեց մարդուն սրտին, կոնակին, կուրծքին, փորին, կողերուն, աղդերուն, սը-

րունքներուն... Վրայէն ալ բարակ լաթ մը փաթթելով վստահացուց, որ եօթը օրէն պիտի բժշկուի: Ու քննիչ էֆէնտին հաղար շնորհակալութիւնով Փարաւոնը ճաշասենեակ հրամցուց:

Եօթը օր, եօթը գիշեր Փարաւոն կերաւ ու խմեց: Շաբաթ մը վերջը մարդը իսկապէս լաւացած էր ու կը համբուրէր Փարաւոնի հանձարով լեցուն ճակատը: Փարաւոն ալ համբուրեց քննիչին գրամով լեցուն... ձեռքը:

Քննիչ էֆէնտին Փարաւոնին յիսուն ոսկի վարձատրութիւն տուաւ ու անոր թուղթերուն մէջէն աննպաստ մասերը անյայտացնելով դրկեց Ձաֆրանպօլու, իր եղբոր մօտ, որ նոյն հիւանդութեամբ կը տառապէր:

Փարաւոն աւանակի մը վրայ, ճամբայ ելաւ, զինուորի մը ընկերակցութեամբ:

Երբ Ձաֆրանպօլու հասաւ, յանձնարարկան նամակով, Քննիչին եղբայրը՝ Մուստաֆա էֆէնտին մեր բժշկին փառանոր ընդունելութիւն մը ըրաւ... հնդկահաւով:

Փարաւոն նոյն մածոյցը այնտեղ ալ պատրաստեց ու այս անգամ ոչ թէ եօթը օրէն, այլ երեք օրէն բժշկեց Մուստաֆա էֆէնտին ու քառասուն ոսկի ալ անկէ ստացաւ:

Մուստաֆա էֆէնտի ալ Փարաւոնը դրկեց Գասթէմունի, իր քեռայր՝ Համտի աղային, որ նոյն հիւանդութեամբ կը տառապէր: Գասթէմունի մէջ նոյն մածոյցը ու երեսուն ոսկի:

Գասթէմունիցի Համտի աղան ալ մեր Փարաւոնը դրկեց Գաշ Քէօփըիւ իր տղուն, Նաշիտ պէյի, որ նոյն հիւանդութեամբ կը տառապէր: Փարաւոն այս Յօդացաւեան գերդաստանին անձնական բժիշկը եղած էր ու կը կոչուէր՝ «Մաճունճի պաշի Փարաւոն էֆէնտի»: Նաշիտ պէյ ոչ միայն բժշկուեցաւ, այլ եւ գաղտնիքը գողնալով Փարաւոնէն ինք ալ սկսաւ ուրիշները բժշկել, յիսուն ոսկիի փոխարէն:

Փարաւոն Սինոպ գնաց Նաշիտ պէյի դէմ դատ բանալու եւ այնտեղ դատուեցաւ ու արգելափակուեցաւ քաղաքին բերդին մէջ:

Զ. Մ Ա Ս

Փ Ա Ր Ա Ի Ո Ն Վ Ե Ր Ա Պ Ի Ո Ղ

Զինադադար:
Պոլիս կը լեցուէր...

Քաղաքը դինովութեան ալիքի մը մէջ կը կայտոէր, կը պարէր, կը պառկէր:

Փարաւոն Պոլիս վերադարձած էր:
— Ես վերապրող եմ, կը պոռար ամէն տեղ:

Ոմանք իր անունը դրին Ղաղարոս, աւելի չարածճիւները կոչեցին ղայն... Աղքատ Ղաղարոս:

Փարաւոն քնարը լարած էր, այն հաստատ համոզումով, որ հեղինակաւոր ձայն մը պիտի կրնայ հնչեցնել ա'լ Պոլսոյ մտաւորական ամայութեան մէջ: Երբ գրողներ սակայն երամ երամ մէջտեղ էին ելած ու կը խափանէին ազգին բանաստեղծին ձայնը, — վառեակնե՛րը...

Փարաւոն տեսնելով որ բանաստեղծութիւնը ընթացիկ ապրանք չէ եւ օրուան լրագրական ու գրական հրատարակիչն վրայ միայն աքսորի նկարագրութիւններն ու յիշատակները կը քշուին, սկսաւ իր չը տեսածները գրի առնել: Կոյսերու առեւաճում, դիւղերու կողոպո՛ւտ, կարաւաններու տաժա՛նք, քա՛ղց, ծարա՛ւ, մերկութի՛ւն, մահե՛ր, կմախքնե՛ր, ջա՛րդ, հրդե՛հ, ինքնասպանութի՛ւն, արի՛ւն, մոխի՛ր, փրօլո՞ւմ, դուլո՞ւմ, կատարա՛ծ աշխարհի... Փրկուած կը համարէր ինքզինքը:

Ամէն մարդ չէր կրնար այս նիւթերուն վրայ գրել: Ինքը՝ «վերապրող» էր, մենաշնորհուած մը: Կը մտնէր խմբագրատուններէ ներս, կկոցի նման:

Օր մը «Վերջին Լուր»ի խմբագրատան մէջ հանդիպեցաւ Յ. Մըրմըրեանի: Կէսօր էր: Երկուքը միասին դացին ճաշելու: Մըմրեան միս չէր ուտեր, իսկ Փարաւոն ալ կատաղի մսակեր մըն էր: Դէմ դիմաց նստան ու պնակ մը միսով լուբիա ապսպրեցին:

Փարաւոն միսը կերաւ, իսկ Մըմրեան՝ լուբիան: Յետոյ ապսպրեցին սիսեռով միս: Մըմրեան սիսեռը կերաւ ու Փարաւոն՝ միսը: Երրորդ անգամ ապսպրեցին գետնախնձորով միս: Փարաւոն միսը կերաւ ու Մըմրեան՝ գետնախնձորը: Վերջապէս պնակ մը փիլաւ ապսպրեցին: Երկուքն ալ դգալները երկարեցին: Մըմրեան ըսաւ.

— Այստեղ կեցի՛ր: Բրինճը բոյս է եւ ոչ կենդանի: Դուն իրաւունք չունիս ուտելու:

— Ո՞վ ըսաւ, թէ բրինճը բոյս է: Բրինճը չինական միջատ մըն է ու միջատը կենդանի է:

— Հապա ցորե՞նը:

— Յորենն ալ Աստուած կը դրկէ: Աստուծոյ զրկածը չի կրնար մեռեալ ըլլալ, որով ցորենը կենդանի է:

Փարաւոն անխնայ կը հարուածէր փիլաւը: Մըմբեան յուսահատած խմորեղէն անուշ մը ապսպրեց: Փարաւոն յարձակեցաւ խմորեղէնին վրայ:

— Հեթանոս, ա՞ն ալ կենդանի է:

— Եթէ կենդանի չէ, պէտք է կենդանացնեմ զայն՝ անմահ ու վերապրող էութեանս խառնելով:

Ճաշէն վերջ սկսան գրական, իմաստասիրական հարցերու շուրջ վիճել: Փարաւոն ըսաւ.

— Եղիա, ես ու դուն հայ գրականութեան երրորդութիւնը կը կազմենք: Տարբերութիւննիս հետեւեալն է. Եղիան կնիւն միս չէր ուտեր, այլ իր միսը կ'ուտէր, դուն կենդանիի միս չես ուտեր, այլ մեռածի միս կ'ուտես, իսկ ես մարդու միս չեմ ուտեր, այլ հաւու միս կ'ուտեմ: Ուրիշ տարբերութիւն մըն ալ, որ սա է: Եղիան կոր գծին գեղեցկութիւնը կը հետապնդէր, դուն կոր գծին բարոյականը կը հետապնդես, իսկ ես կոր գծին կուսութիւնը կը հետապնդեմ, որու մէջ գեղեցկութիւն ու բարոյական կը զուգուին:

— Ինչո՞ւ այս մասին յօդուած մը չես գրեր, ըսաւ Մըմբեան, նորերուն ալ դաս մը եղած կ'ըլլայ: Վառեակները պէտք է ուղղել:

— Անոնք վառեակ ալ չեն, այլ աղբիւս ու փոշի: Զանոնք մաքրելը աւելի քեզի կ'իյնայ: Ահադին մօրուք ունիս, կրնաս զիրենք աւելի: Ֆարաշն ալ ինչ է:

— Ես մարդոց հետ գործ ունենալ չեմ ուզեր, կը հեռանամ մարդոցմէ, որպէսզի Աստուծոյ մօտենամ:

— Իսկ ես ալ Աստուծմէ ալ կը հեռանամ, որպէսզի անկոխին մօտենամ, ըսաւ Փարաւոն:

— Աստուծմէ հեռանալով սատանային կը մօտենայ մարդ: Իսկ դուն Աստուծմէ հեռանալով մօտեցեր ես... կենդանիներուն ու բրինձը կենդանի կը կարծես:

— Գուն ալ միս չեմ ուտեր՝ կ'ըսես, ու ազգին բանաստեղծին միսը կ'ուտես:

Փարաւոն վեհանձնօրէն իր ու «միստիքական» Մըմբեանին հաշիւը մաքրեց, խոստում առնելէ վերջ, որ «կոր գծին բարոյախօսը» նոր գրողները իր մօրուքով պիտի... աւելէ:

* * *

Փարաւոն պահ մը քնարը լքեց ու քննադատի սուր գրիչը ձեռք առաւ: Բոլոր «վառեակ»ները... ջարդեց: Իր յօդուածները գոց ընելով:

արտասանեց զանոնք խմբագրատուններու, ակումբներու, ճաշարաններու, սրճարաններու, դիմետունիներու մէջ, արժանանալով աներեւոյթ ընդունելութեան:

Անգամ մը սակայն իր ճառը «Երեւոյթ» ընդունելութեամբ առնուեցաւ:

Գինետան մը մէջ Փարաւոն կը յայտարարէր.

— Սպաննեցի՛ կառվարենցը:

Սեղան մը անդին կառվարենցի մէկ հայրենակիցը այս յայտարարութիւնը լսելով դանակը քաշեց ու նետուեցաւ Փարաւոնի վրայ.

— Արիւնդ պիտի թափե՛մ, ոճրագործ:

Փարաւոնի գոյնը թուաւ... ստամոքսին մէջ:

Սոսկալի էր այդ մարդուն կերպարանքը: Քանի մը հոգի մէջ մտած ու գրկած էին դանակ քաշողը:

— Զգեցէ՛ք, հայրենակիցիս վրէժը պիտի լուծեմ, — կը պոռար մարդը:

Գինետունը շարժի մէջ էր:

— Թիւրիմացութիւն կայ, բարեկամ, — պատասխանեց Փարաւոն, պաղատազին:

— Թիւրիմացութիւնը ո՞րն է, դուն չե՞ս կառվարենցը սպաննողը...:

— Ես զայն իբրեւ բանաստեղծ սպաննեցի, իսկ իբրեւ մարդ ան դեռ կ'ապրի...:

— Սո՛ւտ ես...:

— Կ'երդնում, ահա թերթը...:

Ու Փարաւոն քննադատականը պարունակող թերթը երկարեց: Մարդը թերթը պատռեց ու նետեց Փարաւոնի գլխին: Ազգին բանաստեղծը կծիկը դրաւ:

Օր մը «Նոր Երկիր»ի խմբագրատան մէջ իրեն հարցուցին, թէ նորերէն որո՞նք կը հաւնի:

— Բոլոր նորերը եթէ քով քովի դա՛ն, հազիւ թէ կարենան քերթուած մը հիւսել: Զօհրապ-Կարօն պէտք է իր մուսան բերէ, Զարեհ Պլպուլ իր յղացումը, Մնձուրի իր գոյները, Սիտալ իր շեշտերը, ԶարիՖեան իր թրթռացումները եւ կառվարենց իր յանգերը:

— Հապա կէտադրութի՞ւնը, — առարկեց խմբագիրներէն մին:

— «Ստոր»ը թող առնեն Զարեանէն, «բուլ»ը Օշականէն, իսկ «վերջակէտ»ն ալ Վ. Թէքէեանէն:

— Հապա «կախման կէտե՞րը», ... Ան ալ դուն տուր ու լմնայ:

— Ես ալ կը սրբագրեմ, ըսաւ Փարաւոն:

Այդ օրերուն գրաւոր ու բերանացի ուժը կոծուած ըլլալն մը սկսաւ Փարաւոնի դէմ:

Հէք ազգի՛ն հէք բանաստեղծը, կրակներու մէջ, կը ճառէր դարձեալ:

— Գրիչս եթէ կանգամարիս մէջ թաթխեմ ու թշնամիներուս վրայ սրսկեմ, դիրենք խեղդամահ կ'ընեմ: Մէկ հոգի ամբողջ բանակի մը դէմ եմ կեցած: Ահա ձեռնոց ու հաւկիթ կը նետեմ: Ես իրենցմէ չեմ: Ես նախակոյս, անդրանկոս, գերինքնատիպ ու որոնող եմ: Դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը: Ա'լ բեռներս կապած եմ ու հայ գրականութեան կալուածէն ընդմիշտ կը հեռանամ: Ա'լ Փրանսերէն պիտի գրեմ:

Եւ սակայն Փարաւոն փոխանակ հայ գրականութենէն հեռանալու՝ Պոլսէն հեռացաւ ահամայ գրեթէ:

Է. Մ Ա Ս

ՀՈՄԵՐՈՍԻ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՁ

Իզմիրի անկման վաղորդայնն էր:

Պոլսոյ մէջ փախուստի խուճապ: Անցագիր, վիզէ, տոմսակ, արտասահման: Որբերն ալ կը փոխադրուէին, ուսուցիչներու ու մտաւորականներու ընկերակցութեամբ, դէպի Յունաստան:

Փարաւոն ալ, իբր ուսուցիչ, խառնուած էր թափօրին ու դացած Յունաստանի մէկ կողին:

Ահա թէ ի՛նչ կը գրէր անկէ, իր գրչեղբայրներէն մէկուն, որ յունական տարբեր կղզի մը կը գտնուէր.—

«Կղզեբնակ հելլենակից,

«Արեւիս բարեւը տալով բարեւիդ արեւը առի: Երկտողդ, իրեկուն մը, ճաշասեղանին վրայ աղանդերի դերը կատարեց: Որբանոցիս ուսուցիչներուն ամսականներուն թլփատութիւնը աւարտած էր, երբ մեզի արեւելեան եղինձ կերցուցին, թլփատութեան փիլալը: Մէջըս կոր՝ կը շրջիմ գոնջերու եւ բորոտներու մէջ: Անդին կան խորտաները, աղջկանց խնամեալ աստեղահոյժը, ուրկէ պատուելիներու ազդակրութիւնը կուգայ:

«Աւա՛ղ, հայ մտաւորականութեան, բիւր աւա՛ղ:— Դժբախտ բան

է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը:— Մտաւորականութի՛ւն, շահագործուած փանաքի ոչխարահօտ, որուն ուղեղը յարգի է, բայց ոչ իր դոյութիւնը: Պոլսոյ մէջ շոյել ու յետոյ օտար ափերու վրայ, առիթէն օգտուելով թլփատել: Արմատէն թլփատել (էֆօֆտէն սիւնէթ): Տխուր է ստամոքսս ու բարոյալքուած:

«Սաչը, խաչկալն ու խաչագողը մէկ գծի վրայ կ'ընթանան: Շահագործուած հայ որբութեան կողքին նաեւ հայ մտաւորականութիւնը:— Խիստ դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ որբ ըլլալը:

«Ձեր որբանոցը կը կոչուի Աքիլէս, մերինն ալ Հերակլէս: Աքիլէսի ոյժը չեմ գիտեր, սակայն Հերակլէսի ոյժը միայն ուսուցիչներու ամսականները թլփատելու ծառայեց:

«Պէտք է որ դուք բողոքէք մեզի համար: Մենք չենք կրնար բողոքել քանի որ բողոքականներու թիւը գերակշիռ է այստեղ: Վարժուհիներն անդամ այդ հրաշալի սնունդով սնած են ու ամէն առաւօտ Դաւթի Սաղմոսէն կտորներ կ'երգեն: Ելլադայի ձիթենեաց լերան տակ նոր Յիսուսներ կը քրտնին»:

1923 Ապրիլ

Փարաւոն Սէմ-Անտոն

«Յունական Նաւականի

Բ. Նաւակ

«Կղզեբնակ հելլենակից,

«Արեւիս բարեւը տալով բարեւիդ արեւը առի:

«Անցեալ օր, հաստատեցի որ մեր որբանոցը լաւ մթերուած է: Երկու հազար հոգիի համար հինգ ամսուան ուտելիք ունինք: Ուրախ էի: Յանկարծ սակայն ներքին գաւառներէն երեք հազար որբեր տեղս հասան, առանց հետերնին ուտելիք բերելու: Զուլու՛մ: Խիստ տխուր ըլլալով չեմ կրնար շարունակել: Ի՛նչ դժբախտ բան է պղտիկ ազգի մէջ մեծ մարդ ըլլալը»:

1923 Մայիս

Փարաւոն Սէմ-Անտոն

«Յունական Նաւականի

Գ. Նաւակ

«Կղզեբնակ հելլենակից,

«Արեւիս բարեւը տալով բարեւիդ արեւը առի:

«Թուրքերը երբ տղան թլփատեն, տղուն բերանը շաքար դնելով կ'անուանակոչեն, մեզ ալ մեր ամսականներէն թլփատեցին, բայց բե-

րաննիս շաքար դնող մը չեղաւ : Արդէն անիրաւութեան լեղին այնքան զօրաւոր է որ մեղրալի շաքարն անգամ չի կրնար անուշցնել : Պաշտօնակիցներուս խորհուրդ տուի, դաւաթի մը մէջ քանի մը հաւկիթ կտորել ու վրան շաքար ցանելով կլլել : Ելանք շուկայ դացինք հաւկիթ դնելու համար : Ծուկան ուտելիք չկար, կարծես մէկը պետերովը աւելի է : Սոսկալի կացութիւն է . սակայն համբերելու է : Համբերութիւնը հոգիին ծոմապահութիւնն է : Ստամոքսին ծոմապահութիւնը միակ անկարելին :

«Արեւներ ու բարեւներ քեզ ու բոլոր մտաւորական ընկերներուդ» :
1923 Յունիս Փարաւոն Սէմ-Անտոն

«Յունական Նամականի Ե. Նամակ

«Կղզեբնակ հելլէնակից՝
«Արեւիս բարեւը տալով բարեւիդ արեւը առի :
«Ուրազի եւ սղոցի ձայն կ'առնեմ : Սիրա կղզիին մէջ շինութիւնները աւարտելու վրայ են : Ձեր որբերէն մաս մը հոն պիտի փոխադրուին : «Ճակատամարտ»ի Յուլիսի թիւերէն միոյն մէջ հրատարակուած նամակէ մը կը տեղեկանամ թէ, տեղւոյդ մէջ, ուսուցչական երկպառակութիւն մը ծայր տուած է : Միապետականներ ու համագործակցականներ դուրս են ցցեր, խղճամիտները կը պատկանին եղեր վերջնոյն : Անկցին միապետակա՛նք :

«Պատրաստուած եմ Ելլադայի ձիթենիներուն ձօնուած ձիթանուադ մը :

«Կը հաղորդեմ սակայն նոր որոշումս ալ .— ասկից վերջ յունարէն պիտի սորվիմ ու յունարէն գրեմ : Խիստ դժբախտ բան է պզտիկ ազգին մէջ մեծ մարդ ըլլալը :

«Կ'ըսեն թէ Արշիպեղագոսի կղզիներէն Քեֆալոնիա պիտի փոխադրուինք» :

1923 Օգոստոս Փարաւոն Սէմ-Անտոն

«Յունական Նամականի Զ. Նամակ

«Կղզեբնակ հելլէնակից,
«Արեւիս բարեւը տալով բարեւիդ արեւը առի :
«Ինձ կը գրես, թէ «Քեֆալոնիա կղզին Յոնիականի մէջ է եւ ոչ

Արշիպեղագոսի» : Պէտք է գիտնաս որ ես այդ կղզիին Արշիպեղագոսի մէջ գտնուելը գրքի մը մէջ կարդացած էի : Ուստի սլաքդ սխալ ուղղեցիր : Վրէպդ վրիպեցաւ :

«Կը լսեմ, կը լսեմ նաեւ հաղարաւոր դգալներ : Կը լսեմ նաեւ քարահանքերու խորտակումը եւ փլուզումը, ահիւ եւ երկիւղիւ :

«Կը լսեմ, կը լսեմ նաեւ հաղարաւոր դգալներու ձայնը լափայի պտուկներուն մէջ :

«Փիլաւ եփել չեն գիտեր, աւա՛ղ :

«Տեղւոյդ մտաւորականութեան թղթակցութիւնները կը կարդամ պոլսական թերթերու մէջ : Հասարակ տեղիք գրութիւններ բոլորն ալ : Ամէնուն տրուած չէ անկոխ ու նախակոյս (primitif) ըլլալ :

«Կ'ուզե՛ն մեր որբերը ձուլել : Ձեն գիտեր թէ ես այստեղ եմ, ազգին բանաստեղծը : Եւ որքան ես այստեղ եմ մեր որբերը կը մնան անկոխ ու կոյս հայեր : Ձուլումը կը կատարուի այն ատեն միայն երբ արեւմուտքէն ծաղելով դէպի արեւելք մարը մտնէ : Տեղեկագիրներ ղրկեցի Պատրիարքարան ու . . . Ազգերու Ընկերակցութեան, ի ժընէվ :

«Վահան Թէքէեան պաշտօնով մեր կողմերը եկաւ : Իր պաշտօնը մեղի կը պարտի : Կ'ըսեն թէ իր պաշտօնավարութեան ընթացքին միշտ ոտանաւոր կը գրէ : Մէկ հասը կարդացի : Մօտ օրէն դասը պիտի տամ մամուլին մէջ» :

1923 Օգոստոս Փարաւոն Սէմ-Անտոն

«Յունական Նամականի Է. Նամակ

«Կղզեբնակ հելլէնակից,

«Արեւիս բարեւը տալով բարեւիդ արեւը . . . չառի : Ձեմ գիտեր թէ ինչո՞վ վշտացուցած եմ քեզ :

«Եթէ ինձի հարցնես հա՛նի եմ եղած : Ձէ՞ որ Յունաստանը Պաղեստինէն ու Արաբիայէն վար չի մնար ամբան :

«Եթէ կ'ուզես պաշտօննիս փոխենք : Ես հող գամ, դուն ալ հոս : Հոս հաւ կայ, որուն սիրահարն ես, հող հաւկիթ որուն կլլողն եմ յաւէտ» :

1923 Սեպտեմբեր Փարաւոն Սէմ-Անտոն

Փարաւոն պաշտօնէ դադարած՝ անցած էր Աթէնք :

Փարաւոնն կը հեծկլտայ ժպիտի մը շողերուն ներքեւ :

Յանկարծ կ'անձրեւէ : Ամպե՛ր , ամպե՛ր : Կայծակ մը կ'ընայ ու տեսիլը կրակի կուտայ , կը չքացնէ : Որոտում : Թացութիւն , խոնաւութիւն :

Տղաքը կը վերցնեն խորանը ու տնօրէնը դպրոց կը տանին : Ահա բանաստեղծին շոր օրերու պատկերը :

Եթէ ան ձախողեցաւ տարիքովներուն քով , պէտք է խոստովանիլ սակայն , թէ անիկա յաջողեցաւ փոքրերուն քով :

Եթէ անիկա վրիպեցաւ Օմար Խայեամ մը ըլլալու մէջ , եղաւ սահայն հաւկիթ կլլող ու միանգամայն հաւկիթ կլլեցնող Նասրէտտին Հօճա մը — սրամիտ ու միամիտ , — արդիական , հայկական :

Ու շոր սերունդը , որ հասակ ու... շղթայ կը նետէ ամէն բանի ու ամէն համբաւի վրայ , ահա ըմբռնած ու բռնած է դայն եւ կը հանէ բարձունքէ մը վեր : Այդ բարձունքը դեռ մշուշոտ ըլլալուն՝ յայտնի չէ , թէ Ողիմպոս է թէ Գողգոթա : Մին կամ միւսը , մահ կամ անմահութիւն , վախճանը սակայն փա՛ռք է :

Ու առիկա բաւական է մէկու մը համար որ շա՛տ քաշեց՝ պղտիկ ազգի մէջ ծնած մեծ մարդ ըլլալուն :

Փարաւոնն հիմակ հարուստ հողաբարձու մը կամ տնտես աղբար մը չէ , այլ տնօրէն մը : Միջինը գտած է ու երջանիկ է : Եւ արդէն երջանիկութիւնը , փափուկ հոգեակ , կը թաքնուի բաներուն միջինին գո՛ղը :

Փարաւոնն շատ կանուխէն կրնար երջանկանալ , եթէ չխարխափէր անկոխ ու կոյս ճամբաներուն վրայ ու իր ճակատագրական ու նախասահմանեալ միջին ոահերէն քշէր իր բեգասը :

Ինչ որ է : Լաւ է անագան քան երբեք :

Ու Փարաւոնն իր հաւկիթներէն , հաւերէն , կոյսերէն ու անկոխներէն , իր դժբախտութենէն , մեծ մարդ ըլլալէն ու բոլոր մեծ ու պղտիկ արկածներէն վերջ այսպէս ահա աստ կը հանգչի :

Կը հանգչի՛ եւ սակայն կը շարժի՛... մարմնով :



Ի Շ Խ Ա Ն Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ի

Իշխան Արշակունի ,
Գահաժառանգ Արշակունեաց Հարստութեան ,
Արքայիկ ու կնքեալ սան՝ Քաղկեդոնի Ս . Թագաւոր եկեղեցոյ եւ հարց Մխիթարեանց ,

Ի ծննդենէ ասպետ իշխան՝ Գարթալի Ս . Նշանի ,
Հովանաւոր Արեգ բէկ իշխանաց Զէյթունի ,
Համարիւն մարդպետ արքունեաց վրաց , պահլաւաց , աղուանից եւ կորդուաց ,

Պատրիկ քերթող՝ կաթողիկէ վանականաց Վենետիոյ Ս . Ղազարու ,

Ազնուատոհմ դասակից Դանիէլի Վարուժան , ի Մուրատ — Ռափայէլ ,

Բարեշնորհ վարդապետ ծայրագոյն՝ ի տաղաչափութիւն եւ կէտադրութիւն ,

Թատրերգու սոլայ Փրանկաց Սէն-Սիր դիւցազնական համալսարանի ,

Եւ Նախկին դերասան «Գօմէտի Ճրանսէղի» :

Ստորագրութիւն մըն է աս : Ոմանք կենսագրութիւն է կ'ըսեն : Ուրիշներ՝ յողուած է , քանզի թուական չունի , կը պնդեն : Երրորդ դասակարգ մըն ալ դայն կը կոչէ «չարական-քարոզ» : Սակաւաթիւ չարեր ալ դայն կնքած են «չան քարոզ» : Այնուամենայնիւ անիկա ստորագրութիւն մըն է , եթէ պարզ ստորագրութիւն մը չէ , գոնէ ա՛լ հասարակ է , երեւցած ըլլալով այնպիսի թուղթերու վրայ , ուր մլուկներն անգամ զգուշացած են ստորագրելէ :

Ո՞վ է սակայն տէրն ու տիրականը այս արքայական , դրական , դեղարուեստական , զինուորական , աշխարհագրական , պատմական ու դերասանական ստորագրութեան :

(*) Այս կենսագրականը անվաւեր ըլլալով՝ կը խնդրենք ապագայ պատմագիրէն որ իբր ատաղձ չգործածէ մեր գրութիւնը :

Ո՞վ է տիրողոսներու, անուններու սիրամարդեան փետուրներուն ներքեւ բարեկենդանուած այս խորհրդածիծաղ անձնաւորութիւնը :

Աւա՛ղ, քանզի անիկա Յիսուսի նման խոնարհ ծագումէ կուգայ : Յիսուս ծնաւ Բեթլեհեմի մսուրին մէջ, իսկ մեր հերոսն ալ ծնաւ Գարթալի համբաւաւոր գինետան մէջ : Անուն՝ Մարտիրոս, հօրանուն՝ Նիկողայոս, մօրանուն՝ Բիստոս, կնքահօրանուն՝ Թաթոս, գինետան անունն ալ Բագոս :

Մարտիրոս երբ բացաւ աչքերը, տեսաւ մէկ բան. — Նետե՛լ... Ոմանք ոտքի, ոմանք ծունկի, ոմանք ալ ի վերայ աթոռի օղի կը նետէին : Իր պատուական հայրիկն ալ օղի կը նետէր, խելօքիկ դարթալցիներն ալ օղի կը նետէին : Հոգիներու այս ջրտուքէն կը բուսնէին մաղթանքներ, Մարտիրոսին համար .

— Մեծ մարդ ըլլայ՝ ինքն ալ նետէ ...

— Թէ նետէ եւ թէ բռնէ ...

— Զուր բռնէ՝ օղի կտրի ...

— Օղի բռնէ՝ կրակ կտրի ...

— Կրակ բռնէ թող ձուկ տապկէ ...

— Թող ձուկի պէս լողալ գիտնայ ...

— Թող ծովի պէս ալիք նետէ ...

— Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ ...

— Վարունգի պէս հասակ նետէ մինչեւ առտու ...

— Հասակին չափ վարունգ նետէ մինչեւ առտու ...

— Նետէ, բռնէ, տաքէն թող տայ ...

— Սուլթան ըլլայ մեղի հող տայ ...

Յանկարծ գինով մը կը ցցէ իր օղիով օծուած գլուխը .

— Ի՞նչ ըսիր, Ի՞նչ ըսիր ... Սուլթա՞ն ըսիր ... լեզուդ քաշէ, խօսքդ ետ առ ... Անիկա հայ քրիստոնէի զաւակ է ... իշխա՛ն ըսէ, իշխա՛ն ...

— Կեցցէ՛ իշխանը, կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւնը եւ հայոց իշխանը, — կը պոռան միաբերան, ճնկելով միակիափ :

Ու Մարտիրոսի պատուական հայրիկն ու խաթունիկ մայրիկը այդ օրուան երեկոյին կ'առնեն, կը ծալեն «Մարտիրոս» անունը եւ կը նետեն աղբանոց : Փոքրիկին անունն էր՝ իշխան :

Եւ իյնալով, ելլելով ու նետելով բռնելով՝ մեծցաւ իշխանը : Տուներն, դպրոցին ու փողոցին մէջ սորվածները բան մը չէին արժեր՝ ծովուն մէջ սորվածին քով : Անիկա առաջնակարգ լուզորդ մը եղաւ : Ծնողքը, տեսնելով որ իրենց «իշխան» զաւակը Գարթալի մէջ միայն

լողացող պիտի մնայ, որոշեցին դայն զրկել Գատըզիւղի Մխիթարեանց վարժարանը : Նիւթական միջոցներու հայթայթման համար խարդախեցին օղին : Խելօքիկ դարթալցիները կուլ տուին ամէն բան, յանուն իրենց իշխանին մտքին արեւշատութեան :

Իշխանը մտաւ դպրոց : Տեղ մը հանգիստ չկրցաւ ընել : Կ'ախորժէր միայն դպրոցին փոքրիկ բեմէն, պարտէզէն ու ծովէն : Բեմին վրայ իրեն սեփականացուցած էր իշխանի գերերը : Կը խաղար, կը լորայ ու կը զբօսնուր : Կէս օրուան դադարին կը զգուրտէր իրմէ պղտիկներուն հետ ու անոնցմէ գերիներ կը վերցնէր : Տղաքը ընդհանրապէս ու դաղտնօրէն «թօս» կոչուող խաղէն կ'ախորժէին : «Թօս»ը այժմ խաղ մըն էր : Գլուխ մը կը զարնուէր ուրիշ գլուխի մը : Ո՛ր գլուխը որ ցաւ գգար՝ ան կ'ըլլար պարտուած : Դպրոցականներուն բոլոր գլուխներուն յաղթած էր Վարազդատ անուն տղայ մը : Անոր անունը դրած էին «Թօսնի-Վարազ» :

Օր մը, քանի մը տղաք, մօտեցան իշխանին .

— Դուն մեր մէջ ամենէն ամուր, ամենէն հաստատուն ու ամենէն պինդ գլուխը ունիս . ինչո՞ւ արդամ մը չես չափուիր սա «Թօսնի-Վարազ»ին հետ :

— Գլխուս ներքին ոյժին վրայ հաւատք ունիմ, բայց արտաքին ոյժը չեմ փորձած, — պատասխանեց իշխանը :

— Եղբայր, դուն չդտնուած դիմացկուն գլուխ մը ունիս : Զարնուէ : Անվախ եղիր : Իշխան ես ու գլուխդ ալ անդգայ է :

— Հո՛ս բերէք «Թօսնի»ն, — հրամայեց իշխանը :

Տղաքը դացին Վարազին մօտ : Այս վերջինը որ «չէմփիտն» յայտարարուած էր, շատ ուրախացաւ լսելով որ մրցակից մը մէջտեղ ելած է : Իրեն դէմ մարդ չդտնելով ա՛լ սկսած էր կեանքէն ձանձրանալ : Ուրախութեամբ ընդունեց առաջարկը ու անկուեցաւ իշխանին առջեւ : Լուսութեամբ ընդունեց առաջարկը ու անկուեցաւ իշխանին առջեւ : Երկու մէկ, երկու, երե՛ք : Վարազ սոսկալի գլխահարուած մը իջեցուց իշխանին . խեղճ իշխանը ինկաւ գետին : Վազեցին : Սակայն, անտարբերունքով իրենք ելաւ ու շուրջը սկսաւ նայել, մինչ անդին Վարազի աչքերէն արցունքներ կը վազէին : Հինգ վայրկեան գլուխը ձեռքերուն մէջ ինք իր վրայ դարձաւ ցաւէն : Ինքզինքը գտնելէ վերջ վեհանձնօրէն մօտեցաւ ասպետին ու ըսաւ .

— Ընկեր, կը խոստովանիմ պարտութիւնս : Քու գլուխդ իմինէ :

Ո՞վ է տիրողոսներու, անուններու սիրամարդեան փետուրներուն ներքեւ բարեկենդանուած այս խորհրդածիծաղ անձնաւորութիւնը :

Աւա՛ղ, քանզի անիկա Յիսուսի իման խոնարհ ծագումէ կուգայ : Յիսուս ծնաւ Բեթլեհեմի մսուրին մէջ, իսկ մեր հերոսն ալ ծնաւ Գարթալի համբաւաւոր գինետան մէջ : Անուն՝ Մարտիրոս, հօրանուն՝ Նիկողայոս, մօրանուն՝ Բիստոս, կնքահօրանուն՝ Թաթոս, գինետան անունն ալ Բագոս :

Մարտիրոս երբ բացաւ աչքերը, տեսաւ մէկ բան .— Նեռե՛լ... Ոմանք ոտքի, ոմանք ծունկի, ոմանք ալ ի վերայ աթոռի օղի կը նետէին : Իր պատուական հայրիկն ալ օղի կը նետէր, խելօքիկ դարթալցիներն ալ օղի կը նետէին : Հոգիներու այս ջրտուքէն կը բուսնէին մաղթանքներ, Մարտիրոսին համար .

- Մեծ մարդ ըլլայ՝ ինքն ալ նետէ...
- Թէ նետէ եւ թէ բռնէ...
- Զուր բռնէ՝ օղի կտրի...
- Օղի բռնէ՝ կրակ կտրի...
- Կրակ բռնէ թող ձուկ տապկէ...
- Թող ձուկի պէս լողալ գիտնայ...
- Թող ծովի պէս ալիք նետէ...
- Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ...
- Վարունգի պէս հասակ նետէ մինչեւ առտու...
- Հասակին չափ վարունգ նետէ մինչեւ առտու...
- Նետէ, բռնէ, տաքէն թող տայ...
- Սուլթան ըլլայ մեզի հող տայ...

Յանկարծ գինով մը կը ցցէ իր օղիով օծուած գլուխը .

— Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր... Սուլթա՞ն ըսիր... լեզուդ քաշէ, խօսքդ ետ առ... Անիկա հայ քրիստոնէի գաւակ է... իշխա՛ն ըսէ, իշխա՛ն...

— Կեցցէ՛ իշխանը, կեցցէ՛ Ազգային Սահմանադրութիւնը եւ հայոց իշխանը, — կը պոռան միաբերան, ճնկելով միակլափ :

Ու Մարտիրոսի պատուական հայրիկն ու խաթունիկ մայրիկը այդ օրուան երեկոյին կ'առնեն, կը ծալեն «Մարտիրոս» անունը եւ կը նետեն աղբանոց : Փոքրիկին անունն էր՝ իշխան :

Եւ ինչալով, ելլելով ու նետելով բռնելով՝ մեծցաւ իշխանը : Տուներն, դպրոցին ու փողոցին մէջ սորվածները բան մը չէին արժեր՝ ծովուն մէջ սորվածին քով : Անիկա առաջնակարգ լուզորդ մը եղաւ : Ծնողքը, տեսնելով որ իրենց «իշխան» գաւակը Գարթալի մէջ միայն

լողացող պիտի մնայ, որոշեցին զայն դրկել Գատըգիւղի Մխիթարեանց վարժարանը : Նիւթական միջոցներու հայթայթման համար խարդախեցին օղին : Խելօքիկ դարթալցիները կուլ տուին ամէն բան, յանուն իրենց իշխանին մտքին արեւշատութեան :

Իշխանը մտաւ դպրոց : Տեղ մը հանգիստ չկրցաւ ընել : Կ'ախորժէր միայն դպրոցին փոքրիկ բեմէն, պարտէզէն ու ծովէն : Բեմին վրայ իրեն սեփականացուցած էր իշխանի դերերը : Կը խաղար, կը լուրար ու կը զբօսնուր : Կէս օրուան դադարին կը զզուրտէր իրմէ պղտիկներուն հետ ու անոնցմէ գերիններ կը վերցնէր : Տղաքը ընդհանրապէս ու դադանօրէն «թօս» կոչուող խաղէն կ'ախորժէին : «Թօս»ը այժախաղ մըն էր : Գլուխ մը կը դարնուէր ուրիշ գլուխի մը : Ո՛ր գլուխը որ ցաւ զգար՝ ան կ'ըլլար պարտուած : Դպրոցականներուն բոլոր գլուխներուն յաղթած էր Վարազդատ անուն տղայ մը : Անոր անունը դրած էին «Թօսմի-Վարազ» :

Օր մը, քանի մը տղաք, մօտեցան իշխանին .

— Դուն մեր մէջ ամենէն ամուր, ամենէն հաստատուն ու ամենէն պինդ գլուխը ունիս . ինչո՞ւ աքաղամ մը չես չափուելր սա «Թօսմի-Վարազ»ին հետ :

— Գլխուս ներքին ոյժին վրայ հաւատք ունիմ, բայց արտաքին ոյժը չեմ փորձած, — պատասխանեց իշխանը :

— Եղբայր, դուն չդտնուած դիմացկուն գլուխ մը ունիս : Զարնուէ : Անվախ եղիր : Իշխան ես ու գլուխդ ալ անդրայ է :

— Հո՛ս բերէք «Թօսմի»ն, — հրամայեց իշխանը :

Տղաքը դացին վարազին մօտ : Այս վերջինը որ «չէմփիտն» յայտարարուած էր, շատ ուրախացաւ լսելով որ մրցակից մը մէջտեղ ելած է : Իրեն դէմ մարդ չգտնելով ա՛լ սկսած էր կեանքէն ձանձրանալ : Ուրախութեամբ ընդունեց առաջարկը ու անկուեցաւ իշխանին առջեւ : Լուրը տարածուած էր աշակերտներուն մէջ : Բոլորուեցան : Երջանակին մէջ կանգնեցան Ասպետն ու Վարազը : Պետ մը՝ տուաւ աղղանչանը .— մէջ կանգնեցան Ասպետն ու Վարազը : Վարազ սոսկալի գլխահարուած մը իջեցուց իշխանի, երկու, երե՛ք : Վարազ սոսկալի գլխահարուած մը իջեցուց իշխանին . խեղճ իշխանը ինկաւ գետին : Վազեցին : Սակայն, անտարբերունիս . խեղճ իշխանը ինկաւ գետին : Ինչ անդին Վարազի աչթեամբ ոտքի ելաւ ու շուրջը սկսաւ նայել, մինչ անդին Վարազի աչքերէն արցունքներ կը վազէին : Հինգ վայրկեան գլուխը ձեռքերուն մէջ ինք իր վրայ դարձաւ ցաւէն : Ինքզինքը գտնելէ վերջ վեհանձնօրէն մօտեցաւ ասպետին ու ըսաւ .

— Ընկեր, կը խոստովանիմ պարտութիւնս : Քու գլուխդ իմինէ .

հաստ, իմինէս պինդ ու ցից է եղեր: Կատարեալ կունտ գլուխ ես, եթէ սակայն երկրորդ մէկ փորձիս կարենաս դիմանալ:

Իշխանը ուռեցաւ եւ ընդունեց առաջարկը, որուն ինչ ըլլալը ոչ ոք գիտէր: Վարազ առաւ իշխանը ու տարաւ պատին տակ: Տղաքը հետեւեցան հետաքրքիր: Վարազ շուրջուեցաւ ու պատին վրայ ելաւ, խօսելով.

— Ընկեր, պատին տակը եկուր ու գլուխդ ծռէ:

Իշխանը հնազանդեցաւ: Վարազ պատին վրայէն ահագին կղմինար մը վերցուց ու ճիշդ իշխանին գլխուն վրայ ձգեց: Բոլորը սարսափահար ճիշդ մը արձակեցին: Իշխանը սակայն ողջ առողջ էր: Կղմինարը կտոր կտոր եղած էր զարնուելով իշխանին գլխուն: Վարազ վար ցատկեց ու խոստովանեցաւ իր կատարեալ պարտութիւնը: Այդ օրէն իշխանը պետ հռչակուեցաւ բոլոր կունտ գլուխներուն:

— Յամաքի մէջ առաջին եմ, կը սոնքար իշխանը:

Լողալէ վերջ ալ կ'ըսէր.

— Ծովու մէջ ալ առաջին եմ:

Իշխանը մէկ նպատակ ունէր ա'լ — Օղի մէջ ալ առաջին ըլլալ: Օղ ըսելով գեղարուեստը կը հասկնար:

Օր մըն ալ «Քաջն Վարդան» կը ներկայացուէր: Իրեն տրուած էր Վասակի դերը, մինչ ինք կը պահանջէր Յաղկերտը, պարզ այն պատճառով որ Վասակ իշխան մըն է, մինչ Յաղկերտ արքայից արքայ: Գրեթէ բոնի հազցուցին Վասակի հազուեսները: Իշխանը սակայն սաստիկ բարկացաւ: Կը պատմեն թէ երբ իր դերով բեմ ելաւ, փոխանակ դերին մէջ մտնելու, ցատկեց բեմէն ու մտաւ ծովուն մէջ եւ լողա՛ց, լողա՛ց...

Իր զպրօցակից ընկերները, որ զինքը «իշխանաձուկ» կը կոչէին, սկսան պրօալ իր ետեւէն: Իշխանը արագօրէն կը յառաջանար դէպի ծովուն բացերը: Կը պատմեն դարձեալ թէ անիկա լողա՛ց, լողա՛ց ու Մարմարան ճեղքելով զնաց մինչեւ Չանաք-Քալէի նեղուցը: Իր լողորդութիւնը գաղտագողի շարունակելով մտաւ Եգէական ծով ու անկէ Միջերկրական: Դէպի արեւելք դարձ մը ընելէ վերջ, բարձրացաւ հիււրս, կտրեց Յոնիականը, սնցաւ Օթրանթոյի ջրանցքէն եւ սուզուեցաւ Ագերիականի մէջ: Լողա՛ց, լողա՛ց մինչեւ որ հասաւ ծովուն խորը, վենետիկի խորը: Գտաւ պարապ կօնտոլա մը, մէջը մտաւ ու կանգ առաւ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին քարափին առջեւ: Մխիթարեան հայրերը քննեցին այս «իշխանաձուկ»ը եւ ըսին իրարու.

— Այս ձուկը ուրիշ ձուկ է...

Հայր Ալիշանի ներկայացուցին որ ըսաւ.

— Ջուր, կեր եւ ուտում ջամբեցէք այս ձուկին: Օր մը Վանայ լիճ կը փոխադրէք:

* * *

Գարթալի ու Գատըգիւղի մէջ խաղացող ու լողացող իշխանը վենետիկի մէջ եղաւ մարդ: Անիկա այս անգամ սկսաւ լողալ մուսաներու մէջ եւ դարձաւ քերթող, սկսաւ լողալ նուագներու մէջ ու եղաւ մախսթրօ-երաժշտապետ, լողաց բաւերու մէջ, ըլլալով հռետոր, ու լողաց թատերախաղերու, նկարներու եւ տօթերու պալատին մէջ: Ի մի բան երգեց, նուագեց, պարեց, նկարեց, նետեց-բռնեց: Երբ զպրօցական շրջանը աւարտեց՝ այս անգամ սկսաւ լողալ Ս. Մարկոսի աղանձներուն մէջ: Եւ սակայն վենետիկի ընտանի աղանձները թո՛ւն այս ասիացի իշխանին քովէն:

Մխիթարեանները ժամանակը եկած համարեցին զինքը Վանայ լիճ փոխադրելու: «Իշխանաձուկ»ը սակայն նախընտրեց Լէմանի լիճը ու անցաւ Ջուրիցերիա:

Այնտեղ շատ չմնաց սակայն:

— Ես գետի ձուկ եմ եւ ոչ լիճի — խորհրդածեց:

Իմացաւ, որ Սէն գետը աշխարհի բոլոր լուզորդներուն ջրարեմն է: Անցաւ Փարիզ ու ինքզինքը հռչակեց «իշխան Արչակունի» եւն., եւն.:

Լրտես ձուկ մը սակայն կը հետապնդէր մեր «իշխանաձուկ»ը: Օր մըն ալ տեղեկագիր մը զրկուեցաւ Պոլսոյ ոստիկանապետութեան: Ու գիշեր մը, թուրք ոստիկաններ, իր անուշիկ քունէն հանեցին Գարթալցի Նիկողայոս աղան ու ծակահարեցին: Հարցաքննութիւն, զրպարտութիւն, ծեծ, բանտ, սպառնալիք, խաչելութիւն:

— Տղադ թագաւոր է եղեր Հայաստանի, դուն ալ պօմպա կը նետես եղեր...

— Ես օղիէ զատ ուրիշ բան չեմ նետած, — կը մըմնջէր հէք Նիկողայոս աղա:

Յիսուսի պատմութիւնը կը կրկնուէր, տարբերութեամբ մը սակայն: Մինչ Յիսուս իբրեւ «հրէից թագաւոր» կը խաչէին, այս անգամ ալ նոր հայր Յովսէփ մը կը խաչուէր իր զաւկին «թագաւոր հայոց» ըլլալուն համար:

Կրկին հարցաքննութիւն, ծեծ ու վերջապէս խուզարկութիւն: Ա-

ւորներով: Դրամը չէ համարձակած համակ յուզում ու սարսուռ պարունակող այդ գրպաններուն մէջ մտնել: Ի՞նչ փոյթ սակայն փողը՝ երբ փառքը գալոց է: Իբր բանաստեղծ ոչ քնարերգակ է, ոչ հովուերգակ, եւ ոչ դիւցազներգակ: Որպէս դերասան կէտերգու, իսկ որպէս բանաստեղծ ալ կէտերգակ կ'անուանենք զինքը: Երբ Արշակունի ոտանաւոր մը գրէ լմնցնէ, կը սարքէ տեսակ մը շրջուն հանդէս: Կը հաւաքէ չորս հինգ գրասէրներ ու զանոնք թաղէ թաղ, պուլլառէ պուլլառ ու սըրճարանէ սըճարան կը պտտցնէ ամբողջ գիշերը, անդադար արտասահմանով իր ոտանաւորը, հանդերձ կէտադրութեամբ:

Ճաշակ մը կուտանք ստորեւ.

Ապտիւլ Համիտ կարմիր սուլթանն է, ստոր
Որ հայերուն արիւնն ազնիւ ծրծե՛ց երկար
Յետոյ լսեց տէնորին սուրբ ձա՛յնը շեշտ
Ու սարսափով լեցաւ գլուխն իր՝ բուք
Ու դետեղեց կախաղաններ... կախման կէտ
Ըսթամպուլէն մինչեւ Պաղտատ. միջակէտ
Ու չուաններն ելան 'ւիջան ապաղարձ
Դընելով վերջ վեհ կեանքերու: Վերջակէտ
Չկախուեցաւ վեհ անձս ինչո՞ւ հարցական

Կ'արտասանէ հոմերաշունչ այս քերթուածը ձեռքերու ազուաւթով վերացումով, պոռալով, վստահ որ բանաստեղծութիւնը այսպէսով աւելի կը շեշտուի կամ կը ստորիանայ:

Սարսափելիորէն կը բարկանայ, կը փրփրի, ինքզինքէն դուրս ոտումներ կ'ընէ երբ դերասան մը գէշ հայերէնով, գէշ առողանութեամբ ու սխալ կէտադրութեամբ խօսի կամ արտասանէ, բեմին վերայ:

Հայկական շատ մը ներկայացումներու եւ հանդէսներու պահուն Արշակունի ներկայ կ'ըլլայ, կը նստի անկիւն մը ու կը տնկէ ականջները: Երբեմն կը պատահի որ դերասաններու խաղարկութեան ընթացքին յանկարծ ոտքի ելնէ ու իր բռունցքով օդին մէջ շեղ գիծ մը քաշելով պոռայ.

— ԲՈՒԹ: Եւ կամ պոռայ ՍՏՈՐ:

Կը պատմեն, թէ իր «բուլթ» կամ «ստոր» աղաղակները անհասկնալի մնալով հասարակութեան, շատ անգամ տեղի ունեցած են վէճեր ու կռիւներ: Արշակունի իր կէտամոլութիւնը կեանքի մէջ ալ ի գործ կը դնէ: Բարեկամ մը կը հարցնէ իրեն.

— Բարեւ, իշխան, ի՞նչպէս ես...

— ԲՈՒԹ...

— ԲՈՒԹ... բայց, սիրելի իշխան, լաւ կը տեսնեմ քեզ:

— ՍՏՈՐ...

— Ստո՞ր... Ե՞ս... բարեկամ, քաղաքավար եղէ՞ք:

— Կախման կէտ... երեք կէտ...

— Այո՛, երեք կէտ ինծի, իսկ վեց գիր ալ քեզի:

Ու մինչ բարեկամը կը հեռանայ, Արշակունի կը պոռայ ետեւէն.

— Վերջակէտ:

* * *

Արշակունի առանց հայ բեմէն ներս մտնելու, կը քաշուի, կը հեռանայ ու կը մտնէ Փրանսական շարժապատկերի ընկերութիւններուն մէջ: Չի կրնար հանդուրժել հայ դերասաններու տգիտութեան:

— Եղբայր, արուեստագէտ չըլլալէ դատ, հայերէն մըն ալ չեն գիտեր, կէտադրութենէ իսկ լուր չունին, — կը բացականչէ հէ՛ք Արշակունի, այնքան արդար սրտմտութեամբ:

Արշակունի՛ շարժապատկերի դերասան ըլլալով հանգերձ՝ չի խըղեր իր յարաբերութիւնները հայ տգէտ դերասաններուն հետ: Միշտ փափաք, յոյս ունի զանոնք ուղիղ ճամբու վրայ տեսնելու: Կը խրատէ, կը քարոզէ, կը դասախօսէ, իսկ յուսահատութեան նոպաներու ալ փառաւորապէս կը հուրհրայ եւ կը հայհոյէ...

Այստեղ կը մէջբերենք փոքրիկ դէպք մը.—

Քանի մը սկսնակ դերասաններ թատերախումբ մը կը կազմեն «Կայծակ» անունով: Յեղափոխական կուսակցութեան մը Ֆրանսայի Քոնպարալ գիւղի «Շանթարգել» մասնաճիւղն ալ յիշեալ դերասանախումբը կը հրաւիրէ իր մէկ ցերեկոյթին, որպէսզի ներկայացուի «Աշխարհի Դատաստանը» կոչուող ժողովրդական ողբերգութիւնը: «Կայծակ» թատերախումբի անշահախնդիր անդամները սիրով յանձն կ'առնեն խաղալ, առաջ վարձատրութեան: Դերասանիկները որոշեալ կիրակին դէպի Քոնպարալ գիւղի թատրոնը կը փութան, անօթի փորով: Իրենցմէ միոյն ստամոքսը խիստ յեղափոխուած ըլլալով՝ կը պահանջեն յեղափոխականներէն «մի քիչ փող»: Այս պահանջը եղած ըլլալով քիչ մը բուռն բառերով, Շանթարգելեանք կ'աղղուին ու կը խոստանան փողի հարցը կարգադրել ներկայացումէն վերջ միայն: Ու Կայծակեանները պարապ ստամոքսով կը ներկայացնեն «Աշխարհի

Պատաստան»ը: Ժողովուրդը կը մեկնի «դատաստանական» տպաւորութեան տակ: Շանթարդեւեանք անմիջապէս կը փակեն թատրոնին դռները ու այս անգամ իրենք կը սկսին բեմադրել աշխարհի դատաստանը, ի ներկայութեան դերասաններուն: Բառեր, բռունցքներ, սլուռներ ու հազուստներու պատառումներ:

«Կայծակ» թատերախումբի հէ՛ք անդամները լաւ մը կայծակնահարուած, կէս դիշերին մօտ, հետիոտն, կը հասնին Փարիզ, Սէն Միշէլ, տարտիմաններու դերասանական սրճարանը: Այնտեղ են դերասաններ ու դերասան Արշակունի: Կայծակեանք կը պատմեն իրենց ուղիսականը, խիստ լալաղին լեզուով մը, իրենց երէց ընկերներէն թելադրութիւն մը, մխիթարութիւն մը յուսալով: Արշակունի յանկարծ կը պոռայ.

— Սրբապիղծներ, դուք ի՞նչ իրաւունքով դերասանութիւն կ'ընէք...

— Եղբայր, խնդիրը մեր դերասանութեան վրայ չէ, մեր ծեծ ուտելուն վրայ է, ի՞նչ խորհուրդ կուտաս...

— Բայց, լիբեր, դուք ի՞նչ իրաւունքով թատերախումբ կը կազմէք եւ անոր անունը կը համարձակիք տպել՝ յեղափոխական հին կուսակցութեան մը ֆիրմային ներքեւ...

— Եղբայր, խնդիրը մեր ծեծ ուտելուն եւ մեր հազուստները պատուելուն մէջ է... Սանկվրանիս նայէ ու խորհուրդ մը տուր...

— Բայց, սղէտներ, դուք ի՞նչ ճաշակով այդ հոտած, այդ ողբալի ողբերգութիւնը կը բեմադրէք ու ժողովուրդին ճաշակը կը խաթարէք: Հայերէն չէք գիտեր, կէտադրութիւն չէք գիտեր, դացէ՛ք բեռնակիր եղէք...

— Եղբայր, ըսինք թէ իրաւունք ունիս, բայց հիմակ, սա պահուս, մէկ խնդիր միայն կայ. ան ալ մեր ծեծ ուտելն է: Ասիկա իրաւունք է...

— Բայց դուք, սրիկաներ, ի՞նչ, ի՞նչ իրաւունքով իբրեւ դերասան... ծեծ կ'ուտէք:

Ու կայծակեանք երկրորդ անգամ կը կայծակահարուին ու կը լռեն համոզուելով որ իրենք ծեծ ուտելու մէջ իսկ անիրաւ են քանի որ իբրեւ դերասան կերած են այդ ծեծը:

Արշակունի Փրանսակէն շարժապատկերի ընկերութեանց մէջ, ե-

թէ ոչ առաջնակարգ, սակայն բաւական ինքնատիպ դէմք մըն է: Փարիզեան թերթերը տարին քանի մը անգամ հրատարակելով իր պատկերը, կը խօսին իր մասին: Այսպէսով թերթերը կ'ապահովեն բացառիկ շահ, իսկ Արշակունի ալ կ'ունենայ բարոյական վաստակ: Բացատրենք:

Արշակունի, երբ լուր առնէ թէ հանդէս մը իր լուսանկարը գետեղած է եւ իր մասին շարած քանի մը գովասանական, իսկոյն իր ամբողջ քսակին պարունակութիւնը կ'երթայ յանձնել լրագրավաճառներուն, գնելով այդ թերթէն մինչեւ երկու հարիւր օրինակ: Փառքի օրերու համար իր գրպանին մէկ անկիւնը պահած կարմիր մատիտը կը տաչէ ու կ'երթայ սրճարանի մը անկիւնը աշխատելու: Կարմիրով կը շրջանակէ թերթերուն իւրաքանչիւրին այն մասը, ուր կայ իր լուսանկարն ու իր մասին գրուած տողերը: Այս կարեւոր գործը աւարտելէն վերջ կը սկսի այցելել խմբագրատուններ, տպարաններ, գրասենեակներ, աշխատանոցներ, դանազան խանութներ ու խնամքով կը ցրուէ այդ թերթերը: Ծրարը ուսին տակ կը շրջի կարեւոր փողոցներու, պողոտաներու, անտառներու, պարտէզներու մէջ ու դէմը ելնող հայուն դոտաներու, անտառներու, պարտէզներու մէջ ու դէմը ելնող հայուն թերթ մը կը հրամցնէ: Իր առաքելութիւնը շարունակելով՝ գիշերներն ալ կը շրջի բոլոր հայաշատ սրճարաններն ու ճաշարանները, տուններն ու սենեակները, թատրոններն ու սինէմաները ու թերթ կը բաժնէ: Կէս դիշերէն վերջը կը սկսի աւելի մեծ գործունէութեան որ կ'առնէ միջազգային հանդամանք: Մինչեւ լոյս կը շրջի Փարիզի մէջ ու թերթ կը նուիրէ թափառաշրջիկներուն, զբօսաշրջիկներուն, գիշերաշրջիկներուն, առանց սեռի, կրօնի, ազգի ու դրաման խտրութեան:

Իր ցրուիչի գործունէութեան սահմանները կ'ըլլան Մօնթարթիէն Մօնթարնաս եւ Սէն Միշէլէն Շարանթօն: Առաւօտուն ալ բարեսիրական տենդէ մը բռնուած թերթ կը ձգէ հիւանդախոցներու նամակատուփին մէջ, չքաւոր անկարներուն համար: Թերթեր կը թողու նաեւ հասարակաց նստարաններուն եւ ճեմիչներուն անկիւնները: Եւ այս բոլորէն վերջ Արշակունի կ'երթայ քնախալ փառաւոր ու անմահական տենչով ու երազով:

— Հանգի՛ստ իր բազմաչարչար ոտքերուն եւ գիշերաջան կզակին:

Արշակունի աշխարհի միակ դերասանն է որ Արուեստին համար՝ իր վրայ գոյութիւն ունեցող ամէն բան կը զոհէ, բացի սակայն իր իշ-

խանութենէն, քանի որ այս վերջինը... գոյութենէ զուրկ է: Փաստերք:

Անգամ մը շարժապատկերի խաղի մը մէջ գլուխը անհետացած դերակատարի պահանջ կ'ըլլայ: Արշակունի ի սէր արուեստին անհետացած կուտայ իր գլուխը, զրկուելով չար բախտի նման սեւ իր մազերէն: Ուրիշ խաղի մը համար յօնքերը անհետացած դերակատարի անհրաժեշտութիւն: Արշակունին է որ կ'ածիլէ իր յօնքերը: Երբորք ֆիլմի մը ակուսապլիկ դերակատարի պէտք: Արշակունի ինք իր ձեռքով կը քաշէ ակուսները: Զորորք ֆիլմի մը համար անուղեղ դերակատարի որոնում: Արշակունի շիտակ կ'երթայ թեկնածու կը ներկայանայ: Կը պատմեն նաեւ, թէ արեւելեան խաղի մը մէջ ներքինիի գլխաւոր դեր մը ստանձնած է Արշակունի, յանուն արուեստին միշտ իրմէ բան մը զոհելով:

Ու Արշակունի իրաւամբ կ'ըսէ.

— Ես որ թատրոնի համար կը զոհեմ, ա'լ կրնաք երեւակայել թէ եթէ Հայաստանի իշխան ըլլայի որքան մարդեր պիտի զոհէի...

Բարեբախտաբար սակայն Արշակունի դերասան է, անվնաս ու նոյնիսկ հետաքրքիր բարեկամ:

* * *

Արշակունիի կարողութեանց լայնքն ու հասակը միջակէն վեր է բաւական: Իր կերպարանքը եթէ իշխանական չէ՝ դոնէ իշխանի դեր կատարողի տպաւորութիւնը կը թողու լիովին: Նման է արգելական Մէֆիստոֆէլի մը, որ ունի միակնոց ու վրան մեկնոց: Իր դէմքին վրայ գրեթէ միշտ բնածխային թթուի մշուշ մը կայ, զոր միշտ կը փչէ... Եւ փչածը կ'իյնայ կամ երկնի մէջ եւ կամ երկրի խորը: Դրէք իր մատին վրայ որ եւ է իր, ինք կամ անձ, եւ քիչ վերջ ձեր գրածը պէտք է փնտռէք ամպերուն մէջ կամ անդունդներուն:

Իշխանը տաղանդաւոր փչող է: Երբ իր սիրած մէկ նիւթին վրայ խօսի, կը սկսի փչել եւ ուռեցնել զայն եւ օդապարիկի նման վեր հանել: Բարեբախտաբար սովորութիւն չունի անձի մը գովքը ընելով զայն ուռեցնելու, հակառակ պարագային շատ մը մարդիկ իրմէ փրշուած պիտի ուռէին եւ վերջ ի վերջոյ մեծաշառաչ... պայթէին: Իր փչած նիւթերը երեք են ընդհանրապէս.

- Շարժանկար,
- Տաղաչափութիւն,
- Կէտադրութիւն:

Եւ ահա թէ իշխանը ի'նչպէս կը փչէր իր... եռասրինդը:

— Սինէմա, եղբայր, սինէմա... Ապագան սինէմայինն է: Աշխարհը սինէմայինն է: Սինէման վաղը պիտի խօսի. ա'լ դերասան Տրդատ Նշանեանին խե'րը տես: Սինէմայով դաս պիտի աւանդուի. ա'լ Մարկոս Նաթանեանին խե'րը տես: Սինէման գրականութիւն պիտի ընէ. ա'լ Օր. Նունիկ Տէր Աւետիսեանի խե'րը տես: Սինէման նկարի պէս գունաւոր պիտի ըլլայ. ա'լ նկարիչ Հրանդ Ալեանաքին խե'րը տես: Սինէման պիտի պատարագէ, երգէ, քարոզէ, լայ ու դամբանախօսէ. ա'լ Վառձապուհ եպիսկոպոս Գիպարեանին խե'րը տես: Սինէման պիտի արթնցնէ, օրօր ըսէ, քնացնէ. ա'լ Աւետի Դուրեանին խե'րը տես: Սինէման մեղ պիտի կառավարէ. ա'լ վարդապետներուն եւ թաղականներուն խե'րը տես: Սինէման մեր տունը տեղը պիտի ըլլայ. ա'լ սանդուղակապետի՝ Թէնարտիէին խե'րը տես: Սինէման պիտի մրցի ու կրօնուի. ա'լ պատերազմին խե'րը տես: Սինէման մեղ ամէն տեղ պիտի տանի. ա'լ մէքթօներուն, օքօներուն, վէրօներուն եւ ալքօներուն խե'րը տես: Սինէման պիտի վիպէ. ա'լ Արմէն Շիրանեանին խե'րը տես: Սինէման պիտի կենսադրէ. ա'լ Արշակ Ալպոյաճեանին խե'րը տես: Սինէման իրական բարիք մը պիտի ըլլայ. ա'լ Բարեգործականին խե'րը տես: Սինէման մեր սիրուհին պիտի ըլլայ. ա'լ կիներուն խե'րը տես: Սինէման Դաշնակցութեան դէմ պիտի ըլլայ. ա'լ Ռամկավարներուն խե'րը տես: Սինէման ազգային բորբականտ պիտի ընէ. ա'լ հոնտորներուն խե'րը տես: Սինէման տնօրէն պիտի չունենայ. ա'լ Վահան Մալեղեանին խե'րը տես: Սինէմային նախադասը իշխան մը պիտի ըլլայ. ա'լ փաշային խե'րը տես: Ամենայն ինչ սինէմային պիտի ազդուի, ճղմուի, տիրապետուի, չքանայ. ա'լ ամէն բանին խե'րը տես: Սինէմա, սինէմայի, սինէմայէ, սինէմայով...

— Հապա խոհարարները, հացագործները, դերձակներն ու կօշկակարները... Անո'նք ալ պիտի ազդուին սինէմայէն, կը հարցնէ ունկընդէր մը:

— Ամէնքն ալ, ամէնքն ալ, ամէնքն ալ,— կը բղաւէ վրդովուած իշխանը:

- Բայց ինչպէ՞ս...
- Սինէմային ցուցադրած եղերերգութիւններէն ազդուած՝ հացագործները՝ հաց, դերձակները՝ հագուստ, խոհարարները՝ ճաշ եւ կօշկակարները՝ կօշիկ պիտի տան դերասաններուն:
- Իսկ ժողովուրդը ի'նչ պիտի ուտէ եւ հագուի...
- Եղբայր, մինչեւ հիմակ ժողովուրդը կերաւ ու հագաւ. ա'լ

կարգը դերասաններուն է :

— Ուրեմն ժողովուրդը մերկ ու անօթի փորո՞վ պիտի վայելէ սինէման . . .

— Հարկա՛ւ : Պիտի վայելէ , սակայն . . .

— Լա՛ւ : Հապա տաղաչափութի՞ւնը . ա՛ն ալ պիտի աղղուի սինէմայէն :

— Երբեք : Չափերը եւ կէտերը անմահ են : Ընդհակառակը , բոլոր դերասաններն ու դերասանուհիները պիտի սորվին տաղաչափութիւնն ու կէտադրութիւնը : Նոր դարաշրջան : Պիտի յայտարարուի . — չափաշրջան եւ կէտաշրջան : Ոտքի՛ : Կարգ ու սարք : Ծարք շարք : Տուներ : Մէկ սող : Չորս , չորս , երեք : Կամ չորս , չորս , չորս : Ի կարգ : Բարելաւում : Հինգ հինգ :

Կերթամաղբիւր (չո՛րս)

Ըլոյսիք : (Երե՛ք , վերջակէ՛տ :

Ուեսակերթամ (չո՛րս)

Դէպիւնաղբիւր (չո՛րս)

Ըլոյսին : (Երե՛ք : Վերջակէ՛տ) : Օրինակ : Ուրիշ մը : Չորս , երեք , չորս , երեք : Վարուժան : Դասընկերս : Մուրաւ-Ռափայէլեան : Վենետիկ : Չորս , երեք , չորս , երեք : Ո՛ւշ :

Գարնան-ամուտ (չո՛րս)

Երեկոյ (երեք)

Միր-պալատին (չո՛րս)

Մէջմարմար՝ (երեք , բո՛ւթ)

Բակուր-Սիւնեաց (չորս)

Նա-հա-պետ (երեք)

Շըքեղ-հանդէս (չորս)

Մըկուտար . (երեք , կէ՛տ)

Կէտադրութիւնն ալ պիտի չաղղուի : Կէտադրութիւնը տիեզերքն իսկ է : Ծիրանի դօտին՝ փակագիծ , արեւը՝ միջակէտ , արեւ ու լուսին՝ վերջակէտ , շանթը՝ շեշտ , կայծակը՝ բութ , ճառագայթը՝ դիծ : Կէտադրութիւնը մարդն իսկ է . յօնքերը՝ հարցական , աչքերը՝ միջակէտներ , քիթը շեշտ , ծուռ քիթը՝ բութ , թուշին փոսը՝ կէտ , աչքերը , ականջները , քիթին ծակերն ու մանաւանդ շրթունքները վերջակէտներ . . . Նայեցէ՛ք իմ դէմքիս . լաւ գրուած կէտադրութիւն մըն է : Չայն պէտք է պահել կնոջ մը ծիծերուն . . . փակագիծներուն մէջ :

Եւ սակայն իշխանին դէմքի կէտադրութիւնը պէտք է խոստովանիլ որ մի քիչ երկրաշարժուած է : Տակն ու վրայ բան մը կայ իր երե-

սին վրայ : Կարծես յօնքին մէկը վեր է փախած , յօնքին միւսն ալ աչքին քովն է իջած : Քիթը միշտ կը խաղայ երեսին զանազան մասերուն վրայ : Լեզուին ըսելիք չկայ սակայն . անիկա իր տեղն է միշտ :

Արշակունի խորապէս հաւատալով սինէմային ապագայ թագաւորութեան՝ իր իշխանութիւնը Հայաստանի վրայէն վերցուց ու դրաւ սինէմայի գահին առջեւ : Արշակունի , սակայն , հակառակ շարժապատկերի դերասան մը ըլլալուն միշտ պարծանքով կը կրկնէ «Գօմէտի - Ֆրանսէզի նախկին դերասան» ըլլալը :

Իր ստորագրութեան մէջ այդ տիտղոսը միշտ կը յիշուի : Նորեկ փարիզահայերը հիացումով լսած են իշխանին Փրանսական ազգութատրոնին՝ նախկին դերասան մը ըլլալու հանգամանքը : Ատիկա ճշմարտութիւն մը կամ ստութիւն մը չէ ամբողջովին : Կարելի է զայն կոչել ճշմարտութիւն , եթէ այդ հանգամանքը զանակով լաւ մը ըստըկուի :

Այս առթիւ կը մէջբերենք տխուր միջադէպ մը . —

Օր մը , սրճարանի մը մէջ , յայտնի դերասան Շահունի , դանակը ձեռք առնելու ժամանակը եկած կը համարէ , ստիկըլու համար իշխանին «Գօմէտի - Ֆրանսէզի նախկին դերասան»ութիւնը : Իշխանը խիստ զգայուն՝ կը կատարի : Շահունի խիստ կատարի՝ կը յարձակի :

— Ինձ խոսի՛ր սօ՛ , է՛լ բաւական է . . . ո՞վ ես ուղում խաբել . . . իշխան միշխան . . . դերասան մերասան ես ասում . . . Գօմէտի - Ֆրանսէզ . . . դու իսկի դօմէտի ես խաղում . . .

— Պարո՛ն , լեզու՛դ : Վերջակէտ : Ծո՛ւտ : Ձնջէ շեշտերդ : Ըսէ «ներողութիւն» : Ստոր . . . ակէտ : Կրկին «ներողութիւն» ըսէ : Վերջակէտ : Պատի՛ւ : Ես այսքան տարի հոս , Փարիզ : Դուն լեռնէն , հոս , իշխանս նախատել . . . Պատիւս , սուրս , մենամարտ . . . Ծո՛ւտ , սուրս , մարմնոյդ վրայ պիտի գրեմ սուրովս՝ շեշտ բութ , բութ ստոր , ստոր միջակէտ , միջակէտ վերջակէտ , նորէն վերջակէտ , կրկին վերջակէտ . . . դիակիդ վրայ սուրովս կախման կէտեր . . . դիակիդ վրայ ոտքովս չափ տամ . . . ամենէն մեծ չափը , լա՛յն , երկա՛ր չափը . . . չո՛րս , չո՛րս , չո՛րս , չո՛րս ու յաւիտենական վերջակէտ :

— Հայերէն խօսի՛ր , սօ՛ , հայերէն . . . հողեմ քո գլուխը էտ վերջակէտներով : Լուի՛ր թէ չէ . . . Տեսնո՞ւմ ես էս բոռնցքը . . . Նա մի գեղեցիկ միջակէտ է . . . էդ միջակէտը կը դնեմ քո գլխի վրայ . . . Տեսնո՞ւմ ես էս հիշք մատները . . . սրանք լաւ կէտեր են քո երեսի կաշու

համար... Նամուսը պահիր, լուրջ կաց թէ չէ կը պատահեմ քո իշխանութիւնը... ես գնդապետ ու պարէտ եմ...

— Ես իբրեւ իշխան քեզ պաշտօնանկ կ'ընեմ...

— Ախր, դու խկապէս խելագարուել ես...

— Վաղը յանձնէ համազգեստդ... Հասարակ զինուոր ես...

— Իսկ դու հասարակ դերասան... Երբ պատերազմ էր, ես կըուում էի թշնամու դէմ, թողած թատրոն ու գեղարուեստ... Նոյնը եւ այստեղ, Ֆրանսիայում... բոլոր դերասանները մեկնել էին ճակատ, քեզ նման վատերը մնացին քաղաքներում... Առիթը յարմար էր, արտիստ չկար, մտար Ֆրանսիական խմբի մէջ ու դառար մեր գլխին՝ դերասան... սա չէ՞ բոլորը... Եթէ դու կոմէտի Ֆրանսէզի դերասան ես, հիմի խաղա էլի...

— Թատերական պատիւ... Ես ծափեր խլեցի...

— Այո՛, խլեցիր միայն, աւազակ... Մի օր էլ դերասանները վերադարձան ու քեզ իբրեւ մի անպէտք շոր դուրս շարտեցին փողոց...

— Սո՛ւրս, սո՛ւրս... վերջակէտ մը պիտի գրեմ այս զինուորին վրայ...

Գեղարուեստի երկու ասպետները իրարու վրայ կը վազեն... ողբերգական դերակատարութեամբ: Յանկարծ սակայն «Փարիզի Տրամաթիք թատերախումբի ղեկավար» Սմբատ վրայ հասնելով կը բաժնէ դանոնք, պոռալով.

— Յանուն Փարիզի Տրամաթիքին դադրեցուցէք կռիւը:

Խոր լուսթիւն կը տիրէ ու Սմբատ կը պոռայ գլինկանին.

— Փարիզի հայ տրամաթիք թատերախումբի հաշտոյն եօթը կարմիր Պոռտոյի շիշեր բերել հաճեցէք...

Շիշերը կը բերուին, տասնեակ մը գաւաթներով: Երկու սեղաններ իրար կը միացուին: Դերասաններ ու թատերասէրներ կը բոլորուին: Շահունի եւ Արչակունի դէմ դիմաց, ծայրերը սեղանին: Դերասան Սմբատ կեդրոնը: Լաւ տրամադրութիւն: Բաժակները կը լեցուին Սմբատէն, որ կը գոռայ.

— Փարիզի հայ տրամաթիք թատերախումբի կենացը...

— Կենացը, — կը համերգեն բացի երկու ասպետներէն:

— Իշխանին կենացը, կը պոռան քանի մը ներկաներ:

Հայկական աղմուկ մը կը սկսի:

— Հայ թատրոնին կենացը:

Չեն դիմանար կը պարպեն:

— Ապագայ հայ սինէմային կենացը:

Կը տկարանան ու կը ճնկեն:

— Հայ մեծագոյն դերասան Պետրոս Աղամեանի յիշատակին:

Կը յուզուին ու կը խմեն:

— Պետրոս Աղամեանի յաջորդներուն կենացը, կը պոռայ թատերասէր մը, գլխաւ մը ընողի երանութեամբ:

Դերասանները շնորհակալութիւն յայտնելով կ'ըմպեն:

— Տիկ. Սիրանոյշին կենացը...

— Մնակեանին յիշատակին...

— Յասուլիաճեանին յիշատակին...

— Ալեքսանեանին յիշատակին...

Սմբատ յանկարծ կը պոռայ դիւանագլխորէն.

— Ո՞վ է ան, որ հայ ապրող դերասաններուն կենացը համար երեք շիշ գինի պիտի ապսպրէ:

Ամէնքը կը լռեն:

Սմբատ մէկուն կը սպառնայ.

— Բարեկամ, դուն Արէլեանին կենացը մէկ շիշ ապսպրէ, իսկ դուն ալ Ջարիֆեանին կենացը, դուն ալ Փափաղեանին կենացը, դուն ալ Սեւումեանի յիշատակին, դուն ալ յանուն իմ ապագայ գործունէութեան...

Մարդիկը ստիպուած կ'ապսպրեն, ու կը սկսի նոր կենացներու շարքը:

— Իշխանին կենացը, — կը պոռայ ներկաներէն մին:

— Իշխանին:

Իշխանը ոտքի կ'ելնէ ու խոնարհութիւն մը կ'ընէ:

— Բաժակաճառ:

— Ազնիւ ներկաներ եւ ազնիւ արուեստակիցներ, ես կը խմեմ այս բաժակը ա՛յն մեծ մարդոց կենացը, որոնք զինուորական ու արուեստագէտ են միանգամայն, որոնք համազգեստաւոր մարմինով ու մերկ հոգիով են, որոնք խղճամիտ, բժախնդիր, առաքինի են ու կէտի մը մէջ կրնան ովկէանոս մը տեսնել եւ ովկէանոսի մը մէջ կէտ... ձուկ մը: Ես կը խմեմ այս բաժակը հայրենի բազմին զինուոր եւ մայրենի բեմին դերասան Շահունիին եւ ի՛մ կենացս, յայտարարելով զինագաղար: Սուրս թող կորչի իր պատեանին մէջ: Եթէ պատեանս չընդունի, ես դայն կը գետեղեմ իշխանական կուրծքիս մէջ եւ թոյլ չեմ տար անոր՝ մխուրի եղբոր մը սրտին ճիշդ կեդրոնը:

Խիստ յուզուած ոտքի կ'ենէ Շահունի:

— Իշխա՛ն, ես յայտարարում եմ հաշտութիւն: Ահա պարզում եմ իմ սպիտակ թաշկինակը որպէս դրօշ հաշտութեան: Մեր արիւնի փոխան թող հոսի կարմիր Բորտոյի գինին: Ինը հարիւր տասնըվեց թուին, երբ ես իմ ձիւնոր դադախները գնդով արշաւում էի դէպի հայկական նահանգները, էրզրումի ճանապարհի վրայ նկատեցի մի ինչ որ մարդկային կերպարանք: Վերցնում եմ իմ դիտակը, ու նայում: Այո՛, նա իսկ որ մի մարդ էր: Նետի նման թռչում եմ եւ հասնում նրա մօտ: Հարց ու փորձ եմ անում: Նա մի թուրք էր եւ դերասան: Ծառայել էր Կէլ Հասանի խմբում, մի ժամանակ էլ խաղացել է Մնակեանի հետ: Իմ՝ գնդապետիս կրծքի տակ դարթեց արտիստի սիրտը: Նա թշնամի ազգից էր բայց դերասան էր էլի, դերասա՛ն: Նա գտնւում էր վատ դրութեան մէջ: Համարեա մերկ էր ու սոված: Զինուորական բարեւ տուի նրան, էտ մարտիրոսացած արտիստին: Ղազախները ոչինչ չհասկանալով ուզում էին տեղն ու տեղը խփել: «Կացէ՛ք», հրամայեցի նրանց: Մի ձի տուի նրան ու հետս միասին վերցրի: Մի քանի օրից յետոյ, բանից դուրս եկաւ, որ նա մի ստորին լըրտես է եղել: Նա մեզ պատճառեց մեծ վնաս: Եթէ դու էլ նրան ես նման, ես կը փշրեմ էս բաժակը. իսկ եթէ ջան աղբէր, աղիղ աղբէր մի դերասան ես, ես միշտ կը խմեմ քո կենացը, իմ աղնիւ Արշակունի: Ես կարծում եմ որ Արշակունու սրտի մէջ ետում է մի աղնիւ արիւն, աղնիւ ու կարմիր որպէս էս գինին... խմում եմ իմ եղբօր կենացը...

Սեղանին ծայրերէն Արշակունի եւ Շահունի իրար երկարեցան համբուրուելու համար:

Քիչ առաջ, կռուի միջոցին զանոյք բաժնող Սմբատը այս անգամ ալ իր ջայլամի թեւերը բանալով կրկին զանոնք բաժնեց իրարմէ, պոռալով.

— Կեցէ՛ք, է՛ս պիտի խօսիմ, է՛ս, իբրեւ ղեկավար Փարիզի հայ տրամաթիք թատերախումբի: Ե՛ս, վեց տարի առաջ, Փարիզի մէջ, իմ անձնական ջանքերովս, հիմնեցի Փարիզի հայ տրամաթիք թատերախումբը որ մինչեւ հիմակ ութսունըթը ներկայացում տուած է: Ե՛ս, միակ հայ դերասանը եղայ որ թատրոնի սիրոյն իմ անձնական գործերս, անձնական փառքս ու դրամս զոհեցի: Եւ այս բոլորը, յանուն ղեզարուեստին: Ես մէկ նպատակ ունէի: Յոյց տալ մեր քաղաքակրթութիւնը Փրանսական ազգին: Եւ յաջողեցայ: Խումբիս կողմով թեւէն մինչեւ այսօր, է՛ս, անարժանաբար ստացած եմ բազմաթիւ գնահատականներ իբրեւ դերասան, թատերական գործիչ եւն. : Այո՛,

որովհետեւ է՛ս էի հիմնադիրը, է՛ս էի գլխաւոր դերակատարը, է՛ս էի ողբերգուն, կատակերգուն, հակառակորդի եւ ծերի դերեր խաղացող արուեստագէտը: Ժամանակ եղած է որ ուզած եմ բոլոր մեծ թատերախաղերու գլխաւոր դերերը իրար միացնել ու խաղալ, ապահար թողելու համար Փրանսական ազգը: Ե՛ս, ժամանակ մը մտածած եմ նաեւ թատերախաղի մը բոլոր դերերը իրարու վրայ դնել ու մինակս խաղալ, ցոյց տալու համար հայ տաղանդին մեծութիւնը: Ե՛ս էի նաեւ խումբիս դերուսոյցը, է՛ս էի վարադոյր քաշողը, է՛ս էի յուշարարը, է՛ս էի գրպանէս դրամ վճարողը, ինչպէս այսօր կը վճարեմ սա եօթը պարսպ շիշերուն համար... Ես դրամին ու փառքին կարեւորութիւն չեմ տար, է՛ս եմ որ կը սիրեմ գործը... Ես բնաւ եսապաշտ չեմ եղած: Ընդհակառակը: Ես էի որ հալածեցի եսապաշտութիւնը, փառասիրութիւնը հայ թատրոնին: Ես եղայ Փարիզի մէջ իշխանին առաջին բարեկամը եւ անոր տաղանդին արժանի դեր ու դրամ խոստացայ: Դարձեալ է՛ս եմ որ զայն կռիւէն դէպի հաշտութիւն տարի: Ես կը խմեմ իմ կենացս, իբրեւ ղեկավար Փարիզի հայ տրամաթիք թատերախումբի, որուն ութսունըթերոդ ներկայացումը պիտի սարքեմ քանի մը շաբաթէն, մասնակցութեամբ դերասաններ Շահունիի եւ Արշակունիի:

Արշակունի ոտքի ելաւ:

— Յայտագրին մէջ այդպէս չգրես: Պէտք է կարգը պահպանել: Գրէ՛, մասնակցութեամբ դերասաններ Արշակունիի եւ Շահունիի... իմ անունս առջեւը եւ քիչ մը աւելի խոշոր: Իմ համբաւս միջազգային է ու անուանս սկզբնատառը Շահունիին առաջին դիրէն առաջ է... Այս բոլորէն դուրս կը պահանջեմ գլխաւոր դերը եւ 500 Փրանք օրավարձ: Շահունի ոտքի կը ցատկէ:

— Եթէ այդպէս լինի, ես չեմ խաղայ, չեմ խաղայ, չեմ խաղայ... Ախր, չի կարելի է՛, չի կարելի... Էսքան երեւակայող մի տիպ չեմ տեսել կեանքումս... Ախր, քեզ ժողովուրդը չի ճանաչում, ոչ մի մարդ քեզ համար կոպէկ չի տայ... Եթէ ես թոյլ եմ տալիս որ քո անունը դնեն իմի ետեւը, դա համարիւր մի մեծ պատիւ քեզ համար, դա իմ աղնուութիւնից է...

Կրկին կը բռնկին ասպետները: Արշակունի բռնեց ղեկերը հեղեղներ կ'արձակէ: Նոյնպէս Շահունի: Սմբատ մէկ ձայնով կը պոռայ.

- Յանուն Փարիզի Հայ Տրամաթիքին լռեցէ՛ք:
- Կորի՛ր դու էլ քո Տրամաթիքով...
- Ի՞նչ... ես... թատերախո՞ւմբս...
- Լռի՛ր, շառլատան... Ես գործ ունեմ էս Արշակունու հետ...

ես նրա ցոյց տամ թէ ո՛վ է մայրաքաղաքի Պարէտը...

— Ես աստիճանով քենէ բարձր եմ, իշխան եմ: Ես արուեստով քենէ բարձր եմ. առաջնակարգ դերասան եմ: Ես զարգացումով քենէ բարձր եմ. հայագէտ, Փրանսագէտ, իտալագէտ եմ ու գիտեմ տաղա-
շափութիւն եւ կէտադրութիւն:

— Կեցի՛ր, — մէջ կը մտնէ Սմբատ, — ես ալ պիտի խօսիմ... սա ապերախտ Շահունիին նայէ, թէ՛ եօթը շիշ գինիներս խմէ եւ թէ՛ իս-
խատէ գիս... յանուն Փարիզի հայ տրամաթիքին լռէ, ե՛ս պիտի խօ-
սիմ...

— Ո՛չ, չպիտի լռեմ, ե՛ս պիտի խօսիմ... դուն ալ ինքզինքդ դե-
րասանի տեղ ես դեր ու երկուքուկէս մարդով խումբ ես կազմեր...

— Ի՞նչ, դո՞ւն ալ ինձի դէմ ցցուեցար... դո՞ւն ալ... յանուն
Հայ Տրամաթիքի...

— Կուուեցէք տղերք, կուուեցէք, հոսհոս տղերք, կուուեցէք քաջ
քաջ, կ'երգէր Շահունին:

Յանկարծ փոթորիկ մը փրթաւ: Երեքը մէկ իրար փաթթուեցան:
Իւրաքանչիւրը միւս երկուքին դէմ: ամէն բան մթնեց ու խառնուե-
ցաւ: Ամէն բան փոխուեցաւ: Կը լսուէին հետեւեալ բաները.

- Կէտադրութիւն...
- Ստախօսութիւն...
- Տրամաթիք ընկերութիւն...
- Մայրաքաղաքի պարէտ...
- Միջազգային համբաւ...
- Փարիզի Տրամաթիք...
- Խաչագող...
- Շանթաժիտ...
- Շառլաթան...
- Լաքէ...
- Սամաթիացի...
- Գարթալցի...
- Լեռնցի...
- Հոսհոս...
- Հէնցումէնց...
- Բութ...
- Ստո՛ր...
- Վերջակէ՛տ:

* * *

Այս կռիւէն քանի մը շարաթ վերջ իշխան Արշակունի օր մը կ'ար-
թննայ եւ առանց անկողնէն ելլելու կը սկսի օրուան հայերէն թերթը
կարդալ:

Յանկարծ գեղեցկօրէն զգայացունց լուրի մը կը հանդիպի.

«Յայտնի մեծահարուստ պարոն Յարութիւնեան հայկական սինէ-
մայի ընկերութիւն մը հիմնելու համար կը տրամադրէ մէկ միլիոն
Փրանք: Պր. Յարութիւնեանին իսպառակն է հայկական կեանքէ առ-
նուած շարժանկարներու միջոցաւ ցեղային բրոքահանդ կատարել օ-
տար միջավայրերու մէջ: Որոշուած է բեմադրել ազգային հերոս՝ քաջ
Անդրանիկի ռադմական կեանքը»:

Մինչեւ այստեղ իշխան Արշակունի ուրախութեան ճառագայթներ
կ'արձակէ ու կը պոռայ.

— Պռաւօ՛, պռաւօ՛... կեցցէ Յարութիւնեանը... Սքանչելի դա-
դափար, որուն հայրութիւնը սակայն իմս է: Ի դո՛րծ, Արշակունի, ի
դո՛րծ: Անպայման վաղը միւս օր հրաւիրագիր կը ստանամ: Պայման-
ներս խիստ են ու վերջնական: Ես պէտք է ըլլամ մէքէօր ան սէնը,
գլխաւոր դերակատարը եւ դանձապահ: Առանց ինձի հայկական Ֆիլ-
մը ցնորք է:

Արշակունի մէկ կողմէ կը հագուի ու միւս կողմէ կը շարունակէ
ընթերցումը:

«Պր. Յարութիւնեան իր այս ծրագիրը գործադրելու համար իր
գրասենեակը հրաւիրած է յայտնի դերասան Շահունին ու անոր ըրած
է կարեւոր կանխավճար մը: Դերասան Շահունի մօտերս կը մեկնի
Սերպիա, իր հետ ունենալով Փրանսացի յայտնի դերասանուհի մը»:

Արշակունիի ուրախութիւնը փոքր կը մնայ, սարսափելի խիթեր
պատճառելով իրեն: Մէկ սրունքը տափատին մէջ ու միւս սրունքը
դեռ մերկ՝ կը քարանայ կը մնայ: Բիշ վերջ ուշքի գալու համար երե-
սին պաղ ջուր կը զարնէ ու քիչ մըն ալ պաղ ջուր կը խմէ: Թերթը
ձեռքին մէջ ճմրթկելով կ'իյնայ փողոց ճմրթկուած տրամադրու-
թեամբ: Առաջին գործը կ'ըլլայ երթալ խմբագրատունները իր արդար
բողոքի ձայնը բարձրացնելու:

— Տգիտութի՛ւն, անիրաւութի՛ւն, դաւաճանութի՛ւն ու գողու-
թի՛ւն... իմս է սինէմայով բրոքահանդ ընելու գաղափարը, ի՛մս է
հայկական սինէմա կազմակերպելու իրաւունքը... Ե՛ս եմ միակ մէ-

թէօր ան սէնը, արթիստը, գոնսէրվաթուառի ծաղիկը եւ Գոմէտի-
Ֆրանսէզի պտուղը... Ե՛ս կը հասկնամ Ֆիլմէ, տաղաչափութենէ եւ
կէտադրութենէ... Ե՛ս է որ լեզուագէտ եմ... իմ պաշտօնս գողցուած
է, իմ կատարելիք դերս յափշտակուած... խայտառակութիւն եւ բար-
բարոսութիւն է եղածը...

Արշակունի բաւական օրեր, դանազաններու առջեւ, կ'երգէ իր
պարտութեան այնքան դառն երգ-երգոցը: Մարդիկ կը լռեն, իրա-
ւունք կուտան շատ անգամ, կը յուսադրեն, կը միտիթարեն եւ սակայն
միւս կողմէ դերասան Շահունին, գեղեցկուհի մը թեւը զարկած ու
մէկ միլիոն կոնակը շալկած, առաջին կարգով կը մեկնի Սերպիա:

Արշակունիի մարմնոյն մէջ արիւն չի մնար: Կը բռնկի իր գլուխը:
Մագերն անգամ կ'այրին: Բոց կը փսխէ, կրակ կը ծամէ ու վառօդ կը
շնչէ, պատգամելով.

- Ոճիր կամ անձնասպանութիւն...
- Ու հէք անիրուած Արշակունի վերջնականապէս կը մտադրէ.
- Անձնասպանութիւն կամ ոճիր...
- Երբեմն ալ.
- Ոճիր կամ անձնասպանութիւն:

Ոճիրը սակայն իշխանի մը համար անվայել գտնելով կը հանդի
անձնասպանութեան:

Անձնասպանութեան ալ ձեւը կը խորհի:

— Օղային կա՞ղը բանալ, ատրճանա՞կ պարպել, չուա՞նէ մը
կախուել թէ ջուրը նետուել: Ո՞րը աւելի իշխանակա՞ն է: Կը դիմէ իր
բարեկամներու խորհուրդին:

— Օղային կազին ծորակով մեռնիլը շատ հասարակ բան է: Աղ-
քատախնամ մահ մըն է, կ'առարկէ մին: Ատրճանակ մը առ եւ ուղեղիդ
քաշէ՛, մահը վայրկենական կ'ըլլայ ու պատուաւոր:

— Ատրճանակն ալ հինցաւ ու հոտեցաւ, — կը փնտռէ ուրիշ մը: —
Դիւրին մահը վատերուն համար է: Չուան մը առ ու վղիկ անցուր:
Մահը անոյշ կ'ըլլայ ու իրական քաջագործութիւն:

— Չուանը գոհհիկ բան է, — կը բարկանայ երրորդ մը: — Ջուրը
նետուէ: Ջուրը խորհուրդ ունի: Աշխարհի մեծագոյն մասը ջուրէ կը
բաղկանայ, իսկ փոքրիկ մէկ մասը ցամաքէ: Ջուրի մէջ մեռնելով
դուն կ'ապացուցանես, թէ աշխարհի մեծ մասին համար ես դուն:
Նայեալներն ու մարգրիտները ջուրին մէջ կ'ապրին: Քու տեղը հո՛ն
է:

Ոչ ոք սակայն խորհուրդ չի տար հրաժարիլ իր դաղափարէն:
Ա՛խ, բարեկամները...

Արշակունի ջուրով անձնասպանութիւն կը մտադրէ: Կը թափառի
Սէն դետին եղերքը ու կը վերադառնայ: Հետեւեալ օր կրկին իր քայ-
լերը դէպի գետեզերք կ'ուղղէ ու նորէն կը վերադառնայ:

- Ջրապաշտ բարեկամը կը հանդիպի իրեն ու կ'ըսէ աներեսաբար.
- Բարեւ իշխան, դեռ կ'ապրի՞ս: Ջուրը չնետուեցա՞ր:
- Եղբայր, քաջ լուրորդ եմ, կը վախնամ որ կը լողամ ու կ'աղա-
տիմ...

Արշակունի հնարք մը կը գտնէ: Փոխանակ ինք ջուրին երթալու,
ջուրը իրեն բերել: Ու հիմակ ջուր կը ներարկէ իր ուղեղին մէջ, ամէն
առաւօտ, կանոնաւորաբար: Եւ սակայն իր ուղեղի կղզին դեռ շատ
ջուր կը վերցնէ, բարեբախտաբար:

Բժիշկ մը կը հաստատէ, թէ պաղ ջուրի ներարկումը բարերար
կրնայ ըլլալ, դուրս վանելով իշխանին մտքէն սեւ ու կրքոտ ծրագիր-
ներ:

Իմ աղնիւ ու անիրաւուած բարեկամս՝ իշխան Արշակունի, իբրեւ
հին իշխանաձուկ, վարժ ըլլալով ջուրի եւ ալիքի մէջ ապրել, լիայրյս
եմ որ, ողջ առողջ դուրս պիտի ելլէ իր ջրային կացութենէն, կրկին
տապկուելու համար, միշտ իբրեւ ձուկ, թատրոնի եւ սինէմայի բար-
ձրը կրակներուն վրայ:



ԱՐՁՈՒՆԻ ՍՐԲԱԶԱՆ

Տիմոթէոս աւագ քահանայ երբ անհասանելի կամօքն Աստուծոյ նշանակուեցաւ Լուսավիել քաղաքի Հայոց հողեւոր հովիւ՝ իր առաջին գործը ըրաւ քննել իր հօտը, դնելու համար իր անձը ոչխարներուն վրայ:


Աստուածահաճոյ իր քննութեան արդիւնքէն հասկցաւ որ իր հօտին մէջ մէկ ոչխար անգամ չկար: Հօտը կը բաղկանար այծերէ: Այո՛, այ՝ ծե՛ր՝ որոնք կը ցատկէին, — կամ աւելի ուղիղ խօսելով — ցատկած էին բարձրութիւններու վրայ, ըլլալով իշխան, կոմս, պէյ, բէկ, մէլիք, խան, դատէ, տէլլա, տը, Փօն, տօն:

- Իր հօտին ցանկը աչքէ անցուց .
- Բրէնս Գուրտոն Լուսինեան
- Բրէնս Գալֆայեան
- Բրէնս տը Բագրատիտ
- Կոմս Ոստանիկ Տէր Մարգարեանց
- Միրզա խան Զուլայեցի
- Բասքալ տը լա Ֆարիհա (այս այծը դեռ ոստում չըրած կը կոչուէր՝ Յարութիւն Ունճեան)
- Տ՛Ատեան (նախապէս՝ Տիգրան Տատեան)
- Աշօ տ՛Արօնցի (Աշոտ Տարոնցի)
- Բ. տը Մարգ (Բարսեղ Տէր Մարգարեան)
- Մելիք տ՛Իգրանեան (Մելիքսեղեկ Տիգրանեան)
- Իվան Սէրգէյ Արամ Արամօֆ (Արամ Արամեան)
- Աշա բէկ Զատենց (Աղաբէկ Աղատեան)
- Մարք պէյ Ազեանց (Մարգար Պէյազեան)
- Շվարց Փօն Շաւարշան (Շաւարշ Շաւարշեան)
- Մուրատ պէյ Նամազեան (Մուրատ Պէյնամազեան)
- Աշոտ պէյ Օղլու (Աշոտ Պէյօղլուեան)
- Սիս խան Ամիր (Սիսակ Խանամիրեան)
- Շարապ խան Եանց (Վ. Երէպախանեան)
- Էտուար Տօն Ապէտի (Ետուար Տօնապետեան)
- Պերճգատէ (Պերճ Զատէեան)
- Դաւիթ բէկ (Դաւիթին անունը Աստուած գիտէ)

Ամէնքն ալ աղնուական եւ առաւել աղնուասիրտ: Պատուական, շնորհքով ազգայիններ: Ազգին պատիւ բերող անձնաւորութիւնք: Ընտրեալ դաս, բարձր դաս:

Ուրեմն ինք մասնաւորապէս հովիւն էր աղնուականաց: Սանտրեց մաղերը, յարգարեց մօրուքը եւ անոր վրայ դրաւ իր պելները: Փայլեցուց աղնարկը, սրբեց շրթունքը եւ անոր վրայ դրաւ լեզուն: Հայելին վերջապէս խոստովանեցաւ որ հովիւն ալ մէկն էր: Երբ ամբողջ հօտը աղնուական էր, ի՞նչպէս կարելի էր որ հովիւը ըլլար ոսամիկ: Աղնուականը կը ճանչցուի իր անունով: Մականունը Այրեան էր՝ ըրաւ Արջունի:

Հովիւը անմիջապէս 1000 օրինակ այցաքարդ տպել տուաւ գաղղիներէն լեզուով:



Քարդին վրայ դրուած էր արջու մը պատկերը: Երկրորդ տպագրութեան ժամանակ չարածճի տպարանատէրը կը հանէ արջին պատկերը՝ տեղը դնելով աղուէսի մը գլուխը:

Կը պատմեն թէ երրորդ տպագրութեան ժամանակ ալ աղուէսին քլիշէն կորսուած ըլլալով՝ կը տպեն կոկորդիլոսի մը նկարը:

Տէր Տիմոթէոս քրիստոնէական տիպար համակերպութիւնով չէր բողոքած տպարանական այդ այլափոխութեանց դէմ եւ առանց մերժելու ընդունած էր դանոնք, միայն զեղչ մը կատարել տուած էր գիւնին վրայ:

Որոշեց իր հօտին այծերուն բուրդէն անկողին պատրաստել եւ իր անձը դնել վրան:

Եւ աւագ հօր առաջին գործը եղաւ լալադին աղօթել:

— Եղիցի կամք մեր ի երկրի ինչպէս եւ կամք քո ի յերկնի, կամք քո, քո, քո...

Եկեացէ իմ եւ այծից արքայութիւն, եւ արքայութիւն քո, քո, քո...

Սուրբ եղիցի նորաստեղծեալ, ազնուացեալ ու սրբացեալ անուն իմ եւ սուրբ եղիցին ազնուական անունքն իմ այծից եւ սուրբ եղիցի անուն քո, քո, քո... ամէն:

Եւ հեկեկաց իր ցնծութենէն:

Այծերու վրայ կը տեսնուէր խորունկ տպաւորութիւն եւ ծանր յուզում:

Աւագ հայրը տեսաւ որ այծերը խռովուած են իր աղօթքէն:

Այս եղելութեան ականատես՝ խորհրդածեց.

— Ըլլալով է ի երկրի կամ խնդացնող քաջ կամ լացնող ճարտար:

Ընտրեց վերջինը, քանզի ան էր որ կը պատշաճէր ե՛ւ քրիստոնէական ոգիին, ե՛ւ իր սեփական ընդունակութեանց՝ որ ուղղակի կը հակէր դէպի արամաթիկը եւ մեղսորամաթիկը:

Եւ, փա՛ռք Տեսոն, Սելովամի աղբիւրներուն չափ առատ եղան իր արցունքները: Եւ հոսեցան՝ սակայն ո՛չ յարտաքս այլ ի ներքս: Ներքին շատրուան:

Երաշտութեան ժամանակ երբ ներքնահոսումները անօրինարար դործադուլ կը յայտարարէին՝ աւագ Հայրը, քաւելի բանազոգութեամբ, կը հետեւէր դերասան Ռուբէն Պիննէմէճեանի ճարտար հնարքին ու վեր կը քաշէր իր քիթը, տալով լացողի պատրանք: Ինք այս կերպով այնքան լաւ սկսաւ լալ ու հեծկտալ որ պիտի կրնար դերասան Մարտիրոս Մնակեանի դերուստյցը ըլլալ:

Եւ արդէն նախ քան իր քահանայութիւնը եղած էր սիրող այլ վարպետ դերակատար: Անձնաւորած էր լալահառաչ դերեր, ներկայացնելով սրտակեղէք տեսարաններ: Իր շնորհիւ Մեծն Ներսէս մարմնաւորուած էր եւ վերապրած ողբադիւն հեծութեամբ: Իր թատերական բնատուր ձիւրքերուն միջոցաւ Սահակ Պարթեւ տեսանելի ըրած էր իր հասակը եւ իր արտասուահեղձ աչքերը:

Տէր հայրը սակայն դադրած էր ներկայացնելէ կրօնական տեսարաններ, օրհնեալ հայրապետներ եւ սրբազան ողբերգութիւններ: Այս անգամ ինքն էր որ պիտի ցուցադրէր ինքզինքը: Կը դիտակցէր թէ այստեղ ալ մաս ունի սրբազնասուրբ թատրոնը եւ սակայն բաժին ունին նաեւ այլ արուեստներ — երաժշտութիւն, ճարտասանութիւն:

Լուսավիելեան հրապարակներուն վրայ վխտացող ո՛չ մէկ վարպետի դիմեց աւագ հայրը: Ինքնօգնութիւն: Իր աշխատութեան սեն-

եակը եթէ ունենար լեզու՝ մեղի շատ բան պիտի պատմէր Տիմոթէոս հօր դեղարուեստական մարդանքներէն:

Երաժշտական առողանութեան մէջ եթէ Ծնորհալի մը կամ Կոմիտաս մը չեղաւ, այսինքն եթէ սոխակ մը չեղաւ այլ սակայն հարկ է խոստովանիլ թէ բազմաթիւ թուշուններու ձայնին տիրացաւ: Եթէ մերթ բու մը կը տեսնէին իր մէջ շատեր, ուրիշներ ալ կը նշմարէին համակրելի շիկահաւ մը, եթէ ոմանք թութակ մը կ'ողջունէին իր մէջ, ուրիշներ ալ զգային իր մէջ վերաւոր աղանի մը:

Եթէ դերակատարութեան մէջ չեղաւ «աստուածային կապիկ»ը դիտենք սակայն թէ եղաւ ազնուական Արջունի մը ու խաղաց իրեն յանձնուած պաշտօնը, տեղին եւ շրջանակին յարմար:

Ճարտասանութեան մէջ եթէ առիւծ մը չեղաւ բայց յայտնութիւն մը եղաւ իբր անչար կոկորդիլոս: Եւ այդ կենդանախումբը, իրմով, իր մէջ, ապրեցաւ «Արցունքի հովիտ»ին մէջ, ուռենիներու տակն ու վրան, մերթ դրախտում եւ յաճախ ալ Նոյեան տապանում:

Թող ներուի սակայն մեկ միացնել մեր գնահատութեանց՝ դիտողութիւններ ալ իր արուեստներուն համար:

Իր դերողայուն Քէնօրի ձայնով երբ քարոզ կը բարբառի ու կը յանդի անպայման սրտայոյզ վերջաբանի՝ diminuentօն խիստ արագ կը կատարէ: Եւ հակառակ իր diminuentօի արագութեան դրեթէ բնաւ չցուցադրեր առողջ allegro մը կամ forticimo մը:

Իր սրբազան դերակատարութեան ժամանակ (պատարագ, նախագահ, դամբանախօս) ղինքը չենք դտներ տիրական՝ այլ խիստ յուզուած, ընկճուած: Որքան պիտի պատշաճէր իր ազնիւ անունին եւ համբաւին կանգնիլ եւ ձեռաց վսեմ շարժումով զարմացնել հանդիսականները:

Իր ճարտասանութեան մէջ ալ անյայտ կախման կէտեր շատ կան: Կան նաեւ կարճ նախադասութիւններ — լացերով ընդհատուած — որոնք կը կտրատեն շունչը, մեծվայելչութիւնը եւ տպաւորութիւնը: Աղբուած կ'երեւի ապագայապաշտներէ եւ խորանարդապաշտներէ, մնալով սակայն իր խորքով ուսմանթիկ կլորապաշտ մը:

Իր այս պակասները սակայն կը լեցնէ — յորդեցնելու աստիճան — աւուր պատշաճի ու միայնակ ոտանաւորներով, որոնք ապուրի նման լեցուն կ'ըլլան դաւառաբառառ բանջարեղէնով, աշխարհաբար հիւթով եւ գրաբար ծեծուած միտով:

* * *

Արջունիի խոհալը երեք մաս :

Իտէալի երրորդութիւն :

Ա. — Եպիսկոպոսանալ, նման Պիլարեան սրբազանի :

Բ. — «Հայոց հայրիկ» կոչուիլ, նման Երիմեանի :

Գ. — Պատուոյ լէգէոնի արժանանալ, նման Արշակ Զօպանեանի :

Հովիւը կը փափաքէր բարձրանալ, սարերը ելլել, լեռնե՛րը, կատարնե՛րը...

Եպիսկոպոս ըլլալ փայլը աւելցնելու համար :

«Հայոց հայրիկ» ըլլալ շուքը աւելցնելու համար :

Պատուոյ լէգէոնի արժանանալ՝ իր փայլն ու շուքը դադարական grande Républiqueին կողմէ վաւերացնելու համար :

Իտէալին Ա. արարը կատարուեցաւ : Եպիսկոպոսացաւ :

Ահա թէ ի՛նչպէս :

Դիմում եւ խնդրագիր : Պատուաւոր ճամբայ :

Դիմեց Լուսավիճի թաղականութեան : Պատասխանը եղաւ «ո՛չ» :

Դիմեց էջմիածին : Պատասխանը եղաւ «չէ՛» :

Ինք սակայն «Այո՛» ըսած էր : Եւ կարեւորն ալ այդ էր :

Այդ միջոցին հակառակորդներու մէջ ասուլիս մը սկսաւ, այնքան անտրամարանական .

— Յաւանութիւն, մօն չէր, յաւանութիւն : Չափը կ'անցնէ : Տասըչորս հայ կար Լուսավիճի մէջ առաջ, զինքը իբր դըռնապան, եկեղեցին բանալ գոցելու համար, հոս դրկեցին : Հիմալ հազարաւոր հայերու կեդրոնի մը մէջ դարձեալ իր պաշտօնին վրայ սրահեր ենք : Ու տակաւին գոհ չէ, կ'ուզէ եպիսկոպոս ըլլալ...

— Ո՞ր դարգացումովը, ո՞ր արժէքովը, մօն չէր, չափը իրաւ անցուց... : Իրեն հասկցնելու է ասիկա :

— Այդ չափին պէտք չկայ : Մ'ենք ալ միւս ծայրը երթալու չենք : Վերջապէս ուզած մարդներնիս է : Ուղածնուս պէս...

— Oui mais...

— Այո՛, սակայն լաց ըսենք՝ կուլայ, քիչ լաց ըսենք՝ քիչ կուլայ, շատ լաց ըսենք՝ շատ կուլայ : Մի՛ խօսիր ըսենք՝ չի խօսիր : Դիւրաւ կարելի չէ գտնել...

Այս խօսակցութիւններէն դանազան փունջեր մինչեւ Արջունիին քիթն ու ականջը կը հասնէին եւ սակայն ան քրիստոնէական աննա-

խընթաց համբերութեամբ, զգաստութեամբ, խոնարհութեամբ կուլ տուաւ այս բոլոր անիրաւ ըսի - ըսաները :

Պիլարեան սրբազան սակայն երբ իբր կաթողիկոսական լիազօր պատուիրակ Լուսավիճ եկաւ՝ Արջունի պարզեց իր խոհալին առաջին մասը :

Պիլարեան առատաձեռնութեամբ անմիջապէս «այո՛» ըսաւ : Դիմեց թաղականներուն եւ ջոջերուն, վերջապէս ստանալով անոնց հաւանութիւնը : Կը մնար էջմիածինը : Պիլարեան որոշեց ինք դիմել էջմիածին : Արջունի աւելի դործնական, ըսաւ .

— Սրբազան եղբայր, քու նախա«այո»դ եւ Փարիզի թաղականութեան «այո»ն բաւական են :

Ու թաղականութեան դիրը եւ Պիլարեանի յանձնարարականը առնելով ճամբայ ելաւ դէպի Վաղարշապատ :

«Կատարուած իրողութիւն» :

Լուսավիճն դէպի Վաղարշապատ այս թուիչքը շահեցաւ եպիսկոպոսութիւնը :

էջմիածինը յանդուգն ճամբորդի մը եւ հիւրի մը չէր կրնար ըսել՝ «ո՛չ» :

Արջունի քաջամարտ էր առաջանալու լուսաշող մայթերուն վրայ, սովիէտական երկրի մէջ չկրցաւ լաւ քալել : Ձիւն կար ու սառ : Ոտքը սահեցաւ եւ ինկաւ : Աւա՛ղ, կտորեց մէկ սրունքը : Հաշուեյարդարը ցոյց տուաւ որ եպիսկոպոսութիւն առած էր եւ տուած էր մէկ սրունք :

Կազարով հասաւ Լուսավիճ ուր մէկուկէս սրունքով աւելի լաւ կարելի էր քալել քան թէ սովիէտական երկրի մէջ չորս սրունքով :

Լուսավիճի հայերը իրենց սրբազան հօր կաղութիւնը տեսնելով ըսին .

— Չարմանալի է որ Արջունի է եւ սառի վրայ քալելու վարժութիւն չունի...

Իսկ նախանձոտ բանաստեղծները ըսին .

— Բօլ Վալէրի կ'ըսէ . «Ոտանաւորը պարել է իսկ արձակը քալել :» Սրբազանը այդ ոտքով այլեւս չի կրնար պարել, այսինքն ոտանաւոր դրել, չի կրնար նաեւ քալել, այսինքն արձակ դրել :

— Ուրե՞մն...

— Ո՛չ կրնայ պարել, ո՛չ կրնայ քալել : Իրեն կը մնայ նստիլ իր եպիսկոպոսական բազկաթոռին վրայ :

Եւ սակայն դիւրին դիւրին տեղը նստող մէկը չէ : Առանց գործունէութեան անկարող է ասլիլ :

Լուսավիլի բանաստեղծները սխալեցան : Սրբազանը սաստկացուց իր եռանդը : Պարեց ալ, քալեց ալ ու նոյնիսկ ոստումներ ըրաւ :

Ահա այսպէս եպիսկոպոսացաւ Արջունի :

Պիլարեան մտադիր էր Լուսավիլի կղերին մէջ ունենալ երախտաւորեալ մը, իր մարդը :

Պիլարեանի հաշիւը սխալ դուրս եկաւ :

Արջունի նոյն աստիճանը ունենալով ա'լ հաւասար գետնի վրայ կ'ուզէր գործել : Պիլարեան ղեկը ձեռք առած էր : Արջունիի դրօշակը ծալլուած էր : Պիլարեան առագաստ կը բանար : Արջունի սիրտը կը բանար... ցաւը պատմելու համար :

Փոխանակ իրարու մօտենալու, իրարմէ հեռացած էին .

Պիլարեան կ'ըսէր .

— Ապերախտ... Ագռա՛ւ... Կերա՛ւ, կերա՛ւ, հիմակ աչքս հանել կ'ուզէ :

Արջունի կը մտածէր .

— Եթէ ես ագռաւ եմ, դիակը ո՞վ է :

* * *

Պիլարեան թէեւ ազնուական տիտղոս մը չունէր սակայն գիտաւոր աստղի պոչին նման բան մը փակցուցած էր իր անունին . — Եւրոպայի Հայոց կաթողիկոսական լիազօր ներկայացուցիչ : Պիլարեան իր լիազօրութեամբ կը ձգտէր դէպի բացարձակ միապետութիւն կամ տիկտատուրա : Արջունի սրբազան հանրապետական վարչաձեւի կողմնակից մըն էր, «grande République»-ի մէջ ապրած ըլլալով : Պիլարեան դըլուի չէր ծոեր հարուստներուն առջեւ, չըլլալով ճկուն, կենցաղագէտ, արդիական : Արջունի կ'ակնածէր աշխարհականներէն քանզի անոնք էին որ կը շէնցնէին Աստուծոյ տունը իրենց ծնունդներով, հարսանիքներով, մահերով եւ մանաւանդ ժամուցներով :

Պայքարը պայթեցաւ :

Պիլարեան թեւերը մերկացուց ու ցցեց կուրծքը : Իր փորը վահանի կը նմանէր : Արջունի սրբազան՝ մտաւ մարտին մէջ իբր զէնք ունենալով իր արցունքները : Իր ետեւ սակայն հայ ջոջերը պահեստի դունդի նման կանգնած էին : Կ'ըսէր .

— Ամէն թռչունի միս չուտուիր իսկ արջին միսը երբեք :

Պիլարեան խիստ էր քահանաներուն հետ : Քահանաները զայն կը

յարգէին ատելով : Օր մը, քահանայ մը պատժուեցաւ Պիլարեանէն եւ զրկուեցաւ քանի մը շաբաթ պաշտօնավարելէ :

Արջունի սակայն նոյն քահանայն շաբաթուան մը գործով զրկեց Լոնտոն : Այս որ լսեց խիստ բարկացաւ Պիլարեան :

Ու պատերազմը պաշտօնապէս յայտարարուեցաւ : Ո՛չ Աստուած, ո՛չ Յիսուս Քրիստոս, ոչ սուրբերը գործ չունեցան այդ խաղմին մէջ :

— Ի՞նչպէս կը համարձակիս իմ պատժած մէկ քահանաս պաշտօնով զրկել Լոնտրա :

— Ես իբրեւ Լուսավիլի հայոց հոգեւոր հովիւ միշտ իրաւատու եմ Ս. Բաթմինոս եկեղեցւոյս պատկանող քահանայ մը զրկել ուզած վայրս :

Ու երկնցաւ վէճը :

Այդ հակաճառութենէն ճաշակ մը կուտանք .

— Պիտի հասկցնեմ քեզի թէ ի՞նչ ըսել է համայն Եւրոպայի հայոց հոգեւոր լիազօր հովիւը նշանակուելու եւ ներկայացուցիչը ըլլալ ամենայն հայոց հայրապետին :

— Ամբողջ Եւրոպան, հոգւով մարմնով, քեզի ըլլայ : Լուսավիլը սակայն քանի դեռ կենդանի եմ, մարդու չեմ տար :

— Ուրեմն պարզապէս կը ժպրհիս դէմ կանգնել էջմիրածնայ Սուրբ աթոռին :

— Քաւ լիցի : Ես էջմիրածնայ մէջ էի քանի մը ամիսներ առաջ եւ ինձ պատուով ընդունեցին : Գովեցին իմ լուսավիլեան գործունէութիւնս դիս եպիսկոպոսացներով եւ (կուլայ) մաղթելով որ անշեղ շարունակեմ իմ ճամբաս : Բաց աստի Լուսավիլի հոգեւոր հովուութիւնը հիմակ (յուզուած) տեսակ մը անպաշտօն պատրիարքութեան փոխուած է, հաղարաւոր տարազիւր հայերու ներկայութեամբ : Ի՞նչպէս կարելի է որ լիազօրդ խորհիս հրամանիդ ներքեւ առնել պատրիարքութիւն մը :

— Հաղարաւոր դաղթական հայերու անունով կը խօսիս եւ սակայն տուած ես անոնց ընտրելու իրաւունք : Դուք հիներդ, հոս ալ, տեղացիի դուրսեցիլի խնդիր կը հանէք ու ետքն ալ հաղարաւոր հոգիի անունով կը խօսիք : Պիտի հասկցնեմ ամէնուդ ալ :

— Ես ամէն բան հասկցած եմ : Եւրոպան քուկինդ է իսկ Լուսավիլը եւ շրջակայքը իմս :

— Միսը առիր ոսկորնե՞րը ինձի կը յանձնես :

— Վէրքը միտին վրայ է : Վէրքը ինձի թող : Այդ ծանր վիրարութեամբ իմ կ'ըսէր : Իսկ զալով ոսկորներուն, անոնք լաւ են, այդ ոսկորներով կրնաս լաւ ապուր պատրաստել :

- Մսագործ :
- (Ողբադին հեծութեամբ) մի՛ ըսեր, սիրտս կը նուաղի, կ'իյնամ, կը մարիմ, հոգեւարք կ'ըլլամ :
- Հապա ի՞նչ Լուսավիւր ճակտի՞դ գրուած գիտցար :
- Լուսավիւր չէ որ ճակտիս գրուած է : Ես է որ գրուած եմ Լուսավիւր ճակտին (կուլայ) :
- Քեզի Ամբիկէ զրկելու է . կոկորդիլոսներու երկիրը :
- Եթէ ես կուլամ, ցաւս մեծ է .
- Լացդ կեղծիք է : Եթէ արցունք ունենայիր կը խեղդէի քեզ արցունքներուդ մէջ . . .
- Պիլարեան թաշկինակ մը կը հանէ ու կը քսէ Արջունիի աչքերուն :
- Կը տեսնե՞ս, կը տեսնե՞ս, կաթիլ մը արցունք չկայ աչքերուդ մէջ :
- Յանցանքը թաշկինակինդ է . . . : Անիկա ծծող չէ :
- Պիլարեան կը փորձուի ծծուն թուղթ առնել ու քսել Արջունիի աչքերուն :
- Ծծուն թուղթն ալ պիտի չթրջի . . .
- Քանզի խնայողութեան համար վար տեսակի ծծուն թուղթ կը գործածենք :
- Իսկ դուն կ'երեւի արդէն որ լաւ տեսակի ծծող ես եւ քու սեփական արցունքներդ կը ծծես, այնպէս որ անոնք երբեք չեն հոսիր :
- Մի՛ ըսեր, սիրտս կը նուաղի . . .
- Մի՛ վախնար սիրտդ արջային է :
- Կը բողբեմ կաթողիկոսին : Ան ինծի միւռոն քսած է :
- Ոտքիդ տակ ալ երեւի նաւթածարպ քսեց :
- Մի՛ ըսեր, կուլամ . . .
- Քեզի խոր վիրապ մը իջեցնեմ ու հոն լաց :
- Ես խոր վիրապի արժանի չեմ . այնտեղ սուրբ Գրիգոր լուսաւորիչը իջած է :
- Դուն ինքդ արդէն խոր վիրապ մըն ես :
- Օր մը մէջս կ'առնեմ քեզ . . . քրիստոնէաբար : Իմ վիրապս ու պալատս՝ Լուսավիւր Ս . Բալամինոս եկեղեցին է :
- Ս . Բալամինոս եկեղեցին խանութի կարծեցիր : Այս եկեղեցին, ինչպէս նաեւ համայն հայոց եկեղեցիները, տարածուած ի սիւրբ աշխարհի, կախեալ են էջմիածնայ ամենայն հայոց հայրապետէն, որ ընտրուած է անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս բոլոր կաթողիկէ հայոց . . .

- Ս . Բալամինոս եկեղեցին իմս է . . .
- Այդ հերիտիկոսականը կրկնեցի՞ր էջմիածնայ սուրբ աթոռին առջեւ . . .
- Եթէ կրկնող ըլլայի կը կրկնէի : Ես հեղինակութիւն մի եմ :
- Անտիպ հեղինակութիւն մըն ես : Քեզի դժոխքի լոյսը ընծայել թող իմ ճիտիս պարտքը ըլլայ : Ինծի Պիլարեան կ'ըսեն :
- Իսկ ինծի ալ համայն երկրիս մէջ՝ Արջունի կ'ըսեն :
- Քեզ կը բռնեմ, իբրեւ արջ, ու կը խաղցնեմ ուղածիս պէս :
- Նախ կշտացուր եւ ապա խաղցուր . քանզի ասուած է «չի խաղար արջը անօթի» :
- Կեր ինքզինքդ եւ խմէ արցունքներդ :
- Ես ցարդ յարգանք ու պատկառանք եմ ճաշակած այս civilisationի մեծ հայրենեաց մէջ, այստեղ է grande République : Լուսավիւրն է փորձաքար հանճարի . . .
- Եթէ քու գլուխդ հանճարի է, իմ գլուխս է փորձաքարը : Կը զարնուինք ու կը տեսնենք :
- Չարնելը հակաքրիստոնէական է : Լաւագոյն է շփուել : Grande Républiqueի մէջ grande guerre վերջացած է : Չիք այլեւս զարնուիլ : Ծրջանն է շփման ու շօշափման :
- Գիտեմ որ վարժ ես : Կը շփես կը փայլեցնես ու լաւ ալ կը շոշափես արծաթը : Եւ սակայն ես քեզի ուրիշ բան չոչափել պիտի տամ : Տարտարոսի հուրերը . . .
- (Կրկին լալագին) մի՛ ըսեր, սիրտս կը նուաղի, ես ծեր հրեշտակ մի եմ . . .
- Յնորած : Անկեալ հրեշտակ մը որուն թեւերէն բռնած պիտի տանիմ տարտարոս :
- Մի՛ ըսեր, սիրտս կը նուաղի, ես ծեր ու կանգուն հրեշտակ մի եմ :
- Կոնակդ տուեր ես ջոջերուն եւ կը կարծես որ անկործանելի՞ ես :
- Ես վէմն եմ Ս . Բալամինոս եկեղեցիին, ես հիմնաքարն եմ Լուսավիւրի հայութեան :
- Քեզի գերեզմանաքարի կը փոխեմ :
- Իսկ դուն ներքեւ կը մնաս, մեռեալ իբրեւ :
- Ես քեզ կը շրջեմ ու յարութիւն կ'առնեմ :
- Ես ալ վիզէդ կը կախուիմ իբրեւ . . . խաչքար :
- Բոունձքովս կը ջախջախեմ քեզ :

- Ջրահուած եմ սրբութեամբ :
- Կը մեղանչես... : Լռէ' :
- Եւ սակայն կը դառնայ... լեզուս :
- Կը կտրեմ լեզուդ :
- Մի' փորձուիր նահատակել զիս : Լեզուս եթէ կտրես , իմ հօտս զայն մասունքի կը փոխէ :
- Լեզուն ոսկոր չունի որ մասունք ըլլայ :
- Այո' , համակ միս է լեզուս : Ես ոսկորը քեզ ձգած եմ : Ես քեզ ոսկոր կը ձգեմ :
- Ես ալ քեզ՝ կաշի :
- Պատերազմը ոչ մէկ կողմի շահ կը բերէ : Երկուստեք կ'ըլլան մեռեալներ եւ կորուստներ : Խաղաղութիւնն է շահու շրջանը :
- Դուն կը խորհիս խանութպանի նման :
- Իսկ դուն գէշ առեւտրականի պէս :
- Կը բաւէ այսքան հակաճառութիւն : Դուն ինձի ենթարկուած ես :
- Լաւագոյն է սահմանները ճշդել :
- Դուն սահմանը անցած ես :
- Ես իմ քաղաքիս մէջ եմ : Արարատեան լեռնէն եկեր ես ու Երևանն պարտէզին մէջ եղողը կ'ուզես վճարել : Ես այս քաղաքինն եմ , այս քաղաքը իմս է : Իմ շուքս մինչեւ Միջերկրական կ'երկարի :
- Ե՞ս է որ լեռնէն կուզամ : Արջերն են որ լեռնէն կ'իջնեն :
- Արջը երբոր մարդանայ լաւ է : Մարդը երբոր արջանայ գէշ է :
- Եթէ շատ առաջանաս՝ քեզի կարգալոյծ ընել կուտամ :
- Իմ սքեմս փակած է ոսկորներուս :
- Ուրեմն ոսկորալոյծ կ'ընեմ քեզ :
- Սիրտս կը նուաղի : Կը թելադրեմ քեզ հաշտութեամբ հեռանալ :
- Լուսավիւր իմ կեդրոնս է :
- Իսկ ես Լուսավիւրի կեդրոնն եմ :
- Դուն անոր մէջ կէտ մըն ես :
- Բայց կեդրոնական կէտը :
- Կէտը կէտ է :
- Կէտը յաճախ բանալին է իմաստին :
- Կէտը բառ չէ որ զգենու իմաստ :
- Բառը կէտ չէ այլ սակայն կէտը բառ է : Կիտարառ : Տիեզերքը կէտէ մը կախեալ է : Մեծ Կէտը :

- Կէտը փոշի մըն է :
- Մեղայ ըսէ : Կէտը ոսկի է : Անկիտութիւնը թշուառութիւն է :
- Կէտը կէտ է :
- Անշուշտ որ կէտը կէտ է : Ուրեմն ինչո՞ւ կը վիճիս :
- Դուն է որ կը վիճիս կէտը կիտութենէ դուրս հանելով ու զայն բարձրացնելով :
- Դուն է որ կէտը կիտութենէ դուրս հանցիր ու զայն ստորագնահատեցիր : Կէտը անխախտ է :
- Կէտի պաշտամունքը ունիս դուն : Կիտապաշտ ես : Յիսուս երբեք կէտի մասին չխօսեցաւ : Դուն հեթանոս մըն ես :
- Աւետարանը կէտերով լեցուն է :
- Դուն Աւետարանի միայն կէտերը ճաշակած ես : Վարդին միայն փուշերը :
- Հերիտիկոս ես : Աւետարանը փուշ չունի : Անիկա անթառամ եւ անփուշ վարդ է : Կէտը կէտ է :
- Կէտը կը սրբեն , կ'աւելն , կը մաքրեն :
- Բայց ան խորէն կը կիտանայ , կուգայ իր տեղը կը նստի : Կէտը անկործանելի է , անմահ է...
- Կէտը աղտ է : Գրականութեան մէջէն իսկ զայն վտարողներ կան :
- Կէտը կարկուտ է : Անոր դէմ խօսողը կ'ըլլայ կարկտահար — կիտահար :
- Կէտը բիծ է : Եկեղեցին պիտի մաքրեմ բիծերէ : Բոունձքս կուտեմ խառնիկի նման կ'անցընեմ վրայէդ ու կը մաքրեմ հաշիւդ : Դո՛ւրս կորսուէ... դո՛ւրս...
- Արջունի եկեղեցւոյ բակը ելաւ ու վար ձգեց իր մարմինը : Անոր անկումը՝ Պիլարեանի առաջին վայրէջքը եղաւ :
- Պիլարեան անպայման մտածեց .
- «Արջը օրհասականը հօրազոյնս կուտին» :
- Հոգաբարձութիւնը իրար անցաւ : Խնդիր :
- Պիլարեան յախուռն մարդ , օր մըն ալ իր դէմը հանեց մեծահարուստ մը : Ուրիշ օր մը , ամուսնալուծման խնդրի մը առթիւ իր դէմ հանեց ուրիշ մեծ հարուստ մը : Օր մըն ալ ամբողջ ջոջերը իր դէմ հանած էր : Ջոջերն ալ զինքը եկեղեցիէն հանեցին :
- Ու Լուսավիւրի հոգեւոր հովիւ մնաց մեր Տիմոթէոս սրբազանը :

* * *

Արջունի իր բազում շնորհներուն կը կցէ նաեւ այլ ստաքինութիւն մը.— վարուելու ձեւը գիտնալ մեծահարուստներուն հետ: Եւ Լուսավիլի նման տեղ մը, ուր այնքան հայազգի ջոջեր կան, սա մի շատ կարեւոր առաւելութիւն է: Ան, ուրիշ եպիսկոպոսներու նման, երբ հարուստ մը տեսնէ՝ անմիջապէս դրամ կորոզելու մասին չի մտածեր, հոգ չէ թէ այդ դրամը ազգային նպատակի մը համար պէտք ըլլայ: Ո՛չ: Ան կը պատուէ հարուստը պարզապէս զանիկա պատուած ըլլալու համար: Այսինքն՝ արուեստը արուեստին համար: Ուրիշ բան է ըլլալ մաքրակրօն արուեստագէտ: Ի դուր տեղը չէ որ շնչած ու արտաշնչած եւ Լուսավիլի մէջ: Չկարծուի սակայն թէ ան ուրացած է Արեւելքը: Քաւ լիցի: Թեւերը բացած է ու գրկած երկուքն ալ: Գրկած, սեղմած ու խառնած: Քաղաքավարական բոլոր ձեւերն ու գոյները միացուցած է: Արեւելեան քաղաքավարութիւնը ձուլած է արեւմտեանին հետ ու երեւան է բերած ինքնատիպ քաղաքավարութիւն մը: Ի պատիւ իրեն հարկ է արձանագրել որ ձուլելու, խառնելու, խմորելու մէջ նմանը չկայ: Ձուլած է նաեւ հայկազեան շատ մը բարբառներ: Սառնած է նաեւ ազգային խնդիրները, մեղմելու կամ քաղցրացնելու համար:

Արջունի կրկնապէս քաղաքավար եկեղեցական մըն է: Այդ իսկ պատճառով շահած է համակրութիւններ եւ անոնցմէ ծնող բոլոր պլտուղները: Բայց այն քաղաքավարութիւնը չի փութը անբերրի գետիններու վրայ:

Իրմէ պատուողը համը կ'աննէ թէ՛ արեւելքի, եւ թէ՛ արեւմուտքի քաղաքավարութեանց: Այսինքն քաղաքավարութեան ու ժգնութեան՝ շատեր կ'ըսեն չափազանցութիւն — եւ քաղաքավարութեան նրբութեան — ոմանք կ'ըսեն կեղծաւորութիւն: Այդպէս ըսողները ձգելով իրենց անքաղաքավարութեան մէջ՝ պատկերով մը կը փափաքինք ցոյց տալ իր քաղաքավարական մէկ արտայայտութիւնը:

Պատահած է որ հայ մեծատուն մը իրեն տայ մի այցելութիւն:

Արջունի, հակառակ իր կազութեան, մինչեւ դուռը կը վաղէ, գետնամած խոնարհութեամբ, լայնօրէն օրօրելով իր երեք լանջախաչերը, ու հառաչալից կուրծքով եւ նուազուն աչքերով կը հծծէ.

— Հրամմեցէք, հրամմեցէք, հրամմեցէք տէր իմ ազնուամեծար, հրամմեցէք, պատիւ է պատիւ՛ ու փառք, հրամմեցէք, բաղմեցէ՛ք...

Կը նստի մեծատունը իսկ Արջունի միշտ ոտքի է:

— Ազնուամեծար տէր, արդեօք հրամա՞ն մը ունիք, բա՞ն մը կը

փափաքիք, ազնուամեծար տէր իմ... Այս ի՞նչ պատիւ է կ'ընէք «հայոց հայրիկ»ին, ազնուամեծար տէր...

— Խնդրեմ, նստեցէք, սրբազան:

— Նստիմ, ազնուամեծար տէր: Ձեր ներկայութեան ես ոտքի վըրայ նստածի պէս եմ: Աւելի քան նստած: Այնքան հանգիստ, այնքան գոհ, այնքան... Ազնուամեծար տէր... Նստիլը ինչ է որ, Ազնուամեծար տէր: Ձեր ներկայութիւնն է կարեւորը, հոյակապը, վսեմը, անսկնկալը... պատիւ, պատիւ է, ազնուամեծար տէր...

— Խնդրեմ... խնդրեմ...

— Օ՛, ո՛չ, մի՛ խնդրէք, ազնուամեծար տէր, դուք հրամայելու համար էք աշխարհ եկած, ազնուամեծար տէր...

— Փափաքեցայ երկու վայրկեան միայն տեսնել ձեզ...

— Ձեր փափաքը օրհեալ է, ազնուամեծար տէր, նուիրական է... Եթէ կը փափաքիք հարիւր վայրկեան... Ամբողջովին ձերն եմ, ազնուամեծար տէր... պատիւ է... խնդրեմ, հրամայեցէք, ես Աստուծմէ կարգուած ձեր ծառան եմ, ազնուամեծար տէր...

— Սրբազան հայր...

— Պատիւ կ'ընէք, ազնուամեծար տէր, պատիւը մեծ է երբ «հայր» կ'ըսէք, ազնուամեծար տէր որդիս... Ձեզ նման որդի ունենալը փառքերուն վերինն է, Ազնուամեծար տէր որդիս... Երջանիկ է հայրիկը... Երջանիկ եմ...

— Ժամանակ շատ չունենալով, սրբազան հայր...

— Գիտեմ, տէր իմ, յոյժ բազմազբազ էք: Գիտեմ որ ձեզ նման մեծ անձնաւորութեանց ժամանակը դուտ ոսկի է: Այդ ոսկիէն գիտեմ նաեւ որ ինձ ալ բաժին կը հանէք: Պատիւը մեծ է, ազնուութիւնը մեծ, մեծութիւնը ամենամեծ, ազնուամեծար տէր...

— Լսեցէ՛ք

— Կը լսեմ, ազնուամեծար տէր, նաեւ կը զգամ, ազնուամեծար, նաեւ կը մտածեմ, տէր, նաեւ կը հոտոտեմ, կը ճաշակեմ ձեր յերկայութիւնը, բարձր ներկայութիւն, ազնուամեծար տէր...

— Սրբազան հայր, փոքրիկ գործի մը համար ստիպուած էի ձեզի հանդիպիլ: Ձէի կարծեր որ վաղը՝ գետնայարկի սենեակին մէջ Պիլարեանը պիտի գտնուի: Բակէն անցած ատենս տեսայ զինքը: Արագ արագ անցայ: Կը կարծեմ որ շտեսաւ զիս: Հիմակ ի՞նչ կարելի է ընել առանց իրեն հանդիպելու սակից դուրս ելլելու համար: Ուրիշ օր մը կը տեսնուիմ այդ փոքրիկ գործին համար:

— Ազնուամեծար տէր, վար իջնեմ ու իր սենեակին դուռը դոցեմ ձեռով մը...

— Ո՛չ, ո՛չ, կը կասկածի...

— Հազար Ֆրանքնոց մը բռնեմ իր աչքերուն առջեւ, ազնուամեծար տէր իմ, եւ հարցնեմ թէ՛ իսկակա՞ն է թէ կեղծ...

— Ոչ այդ, ոչ այ այդ...

— **Երթամ իր դռանը առջեւ կանգնիմ, ազնուամեծար տէր...**

— Խեղբի մօտ է...

— Անշուշտ, ազնուամեծար տէր, վարագոյրի նման կ'ըլլամ դռան մէջ... Ձեզի համար, ազնուամեծար տէր, կ'ըլլամ վարագոյր, գօրգ, բարձ, թաշկինակ...

— Ժամանակ չունիմ... շուտ ուրեմն, սրբազան, վար իջէք ու դրանք մէջ տարածուեցէք, ես արագօրէն կ'անցնիմ կ'երթամ...

Ու սանդուխէն վար երեք լանջախաչերու օրօրումներով կ'իջնէր սեւ վարագոյր մը որ կանգ առաւ, գամուեցաւ Պիլարեանի դրան առջեւ, ըսելով.

— Սրբազան եղբայր, օգը շատ տաք է... հոս աղէկ է սակայն...

— Սրբազան, ետեւէդ մէկը փախցուցիր...

— Տաքէն մարդ կը փախցնէ...

— Բան մը անցաւ...

— Ձեփիւուն էր, սրբազան եղբայր...

— «Հայոց հայրիկ»:

Խրիմեան եթէ ողջ ըլլար կը դիմէր անոր խնդրագրերով մը, յանուն յաջորդութեան: Մէկուն կարելի չէր դիմել այսպիսի խնդրի մը համար: Դիմեց... հնարամտութեան:

Ու դէմը ելլողին սկսաւ խօսիլ եւ ըսել.

— Գիտէ՞ք ինչ պատահեցաւ անցեալ օր: Նիսի կողմերէն ութսունամեայ հայ կին մը, եկել էր Փարիզ, յատկապէս նրա համար որ զիս տեսնէ: Հին ծանօթ, ազնուական մի ընտանիքի վերջին անդամն է այդ կինը: Եկաւ, դուռս զարկաւ, ներս մտաւ ծունկի եկաւ ու աւսաց.

— Դո՞ւ ես, այդ դո՞ւ ես իմ սրբազան, ա՛լ աչքս դոց կրնամ մեռնիլ: Ո՞րքան ժամանակէ ի վեր կը փափաքէի տեսնել քեզ, հայոց հայրիկը: Այսօր երջանիկ եմ, երջանիկ: Օրհնէ՛ զիս, հայրիկս, օրհնէ՛ զիս...

Յուզումէս սիրտս նուաղեցաւ: Բռնեցի իր թեւերից, վեր վեցուցի ու նստեցուցի իմ դիմաց:

Նա լալիս էր, լալիս...: Նա միշտ ինձ էր նայում եւ հեկեկալով «հայոց հայրիկ», «հայոց հայրիկ» էր կրկնում:

Յետոյ մի քիչ դրամ տուեց աղքատներին համար ու հեռացաւ: Կը լսէի դեռ իր ձայնը որ կ'ըսէր.

— «Հայոց հայրիկ»ը տեսայ: Երջանիկ եմ: Ա՛լ մահը թող գայ: **Պատրաստ եմ: «Հայոց հայրիկ»ը տեսայ...**

Ուրիշ օր մը, ուրիշէ մը.

— Հանդիստի վայրկեան մը չունիմ, ամէն ոք «հայոց հայրիկ» ասելով վրաս կուգան...

Օր մը՝ մէկու մը հարցուցի.

— Ո՞րքան իրաւ է Արջունի «հայոց հայրիկ» եղած ըլլալը: Բարեկամս պատասխանեց.

— Իր կաղութեան չափ: Կէսը սուտ, կէսը իրաւ: Որքան չար են մարդիկ:

Մնացած է իտէալին երրորդ մասը: Պատուոյ լէզէոն: Այս մասին բան մը ըսելու ի վիճակի չեմք: Խօսքը՝ Նորատուենեան էֆէնտիկնն է:

Ինչպէս ցոյց տուինք Տիմոթէոս Փարիզի հովիւ եւ Արջունի ըլլալէ առաջ՝ լիւտէսահայերը բռնուած էին ազնուականանալու եւ կամ լաւ եւս է ըսել ազնուանանալու տենչէն: Իշխան Արշակունի անուն դերասանը տակն ու վրայ ընել սկսած էր Լիւտէսը: Այցաքարտին վրայ թագ մը տպել տուած էր: Արջունի ժամանակը եկած համարեց կեղծ ազնուականները թափելու: Եւ Կիրակի օր մը, կոնդակ մը կարդաց եկեղեցւոյն մէջ: Կը ներկայացնենց այդ թուղթը:

«Մի ոմն դերասան անուամբ Հայկազուն ծախէ անձն իւր իբրեւ Արշակունի եւ Իշխան: Մի ոմն Հայկազուն հէք՝ որ ժպրհի առնուլ անունն Արշակունեաց բազմերախտ մեծ տոհմին արքայական:

Արջունի տան նախկին տոհմապետը լինելով պինդ կապեալ բարեկամական եւ դաշնակից զգացմամբ հետ Արշակունեաց մեք համարեմք, զերդ Արջունի տան շառաւիղ, մեծ պարտք կանգնեալ ցցուիլ ըիմք, զերդ Արջունի տան շառաւիղ, մեծ պարտք կանգնեալ ցցուիլ վահան իբրեւ ոսկեպատ, կանգնիլ պաշտպան իբրեւ պարիսպ անառիկ՝

ընդդէմ չիշխանին Հայկազուն որ ստոր մտօք սրբապիղծ արչաւէ դէս պղգանունն Արչակունեաց :

Է ժամանակ տալ վախճան հատու՝ սիրադորժութեանց այսպիսի եւ կացուցանել ազատ Ազատանիս հայոց պղծութենէ բամկաց : Է ժամանակ ջոկման աղնիւր եւ անշահի, մարդարտի եւ աւազի, դատման, դաման կեղծի եւ խեղճանաց :

Զի աղղ մեր լինի երիցս խայտառակ առ ոտս տանն Պրանկաց, խարէութեամբ նմանակ եւ ազնուականքն հայոց հարադատ՝ լինին դոճը անմեղ, առաջի պղգաց լուսաւորաց :

Թելադրեմք պարոնին Հայկազուն լինել առ լի խոնարհամիտ զգաստութեամբ եւ ասեմք «ճանիր զքեզ» : Տանք յիշել իւրեան թէ դերասանք բերմամբ իւրեանց ասպարէզի եւ դերի՝ լինեն յաճախ իշխան կամ արքայ՝ այլ սակայն թիւրիմացութիւն մեծ է երբ խախտու կարծեօք եւ կասկածակա՞ն մտօք՝ սկսին սոնքալ կենաց մէջ եւս իրբեւ իշխանի ազնուական : Երբ արար թատրոնի դոնէ վախճան իւր, երբ լինի ձղի վարագոյրն, յայնժամ վերջանան իշխանութիւնք խարուսիկ : Վայր իջնեն թաղեր խաւարարս, վերանան սուսերք փայտեաց եւ անձն դերակատար մերթ դնա ի խուց, որկորով դատարի : Երեւի Հայկազուն խաղայր մաս իշխանի եւ շարունակէր իւր խաղ յետ թատրերգութեան, արտաքս բեմի :

Արդ հայցեմք Աստուծմէ որ խելք բաշխէ մեր աղգին որ չիլիճուրի այսպիսի աղէտ խայտառակ ո՛չ աստ, ո՛չ անդ, ո՛չ յաւիտեան, ամէն :

Այս ոսկեղարու լեղուով դրուած կոնդակը, օրուան եւ իմաստին յարմար, հանդիսաւոր ձայնով կարդացուելէ ճիշդ մէկ շաբաթ վերջ, այսինքն հետեւեալ կիրակի օր, Լուսավիի Ս. Բալամինոս եկեղեցիին առջեւ՝ իշխան Արչակունի կը բաժնէ բարեպաշտ հաստատութեան հետեւեալ թուոցիկը :

Սիրելի հայրենակիցներ .

Մեր վարդապետը անցեալ կիրակի օր, ինքնադիր կոնդակով մը ճգնէր է ջրել իմ անուրանալի Արչակունիութիւնս : Այս քայլը կը համարեմ դաւաճանութիւն՝ հանդէպ հայ ցեղին ու մասնաւորապէս մեր արքայական հարստութեան :

Երբ ամբողջ աշխարհ կը խոնարհի մեր առջեւ պատկառանքով՝ վարդապետ մը իր մէկ թուղթով կը կարծէ վերջ դրած ըլլալ մեր տոհմին : Երբ Թուրքերը չուրացան իմ Արչակունիութիւնս եւ հայրս չարչարեցին՝ հիմակ հայ կղերական մը, խղճալի տգիտութեամբ, եւ աւելին՝ անքաւելի համարձակութեամբ այսպիսի քայլ մը կ'առնէ իմ տոհմ

մական ծագումս սուտ հանելով : Եւ այս քայլը կ'առնէ անորակելի ու չհաշխարհիկ մաքրավէլութեամբ մը : Իր անդոյ տոհմը ցոյց կուտայ բարեկամ եւ դաշնակից Արչակունեաց . խնդուքս կուգայ : Եւ կը կ'նակ խնդուք մը : Առաջին խնդուք՝ կը ծիծաղիմ իր Արջունի ըլլալուն համար եւ բացէ ի բաց, իշխանօրէն սուտ եւ կեղծ կը յայտարարեմ : Երկրորդ խնդուք՝ Արջունիները Արչակունեաց հարստութեան ժամանակ կը ներկայացնէին պարզ դիւզական ազնուականութիւն մը, ենթակայ անշուշտ Արչակունի արքայից արքաներուն : Ինչպէս կարելի է որ Արչակունի թագաւոր մը դաշնակից ըլլայ Արջունի դիւզապետի մը : Բարեկամ . թերեւս չնորհ մը թագաւորական վեհանձնութեան : Երրորդ խնդուք՝ եթէ նոյնիսկ վարդապետը իսկապէս Արջունի մըն է, չմտածե՞ց որ կընայի ետ առնել իր ազնուական տիտղոսը, չնորհազրկելով զինքը :

Ու ամէն բանէ վերջ՝ ես կընամ պատմագէտ Ժիւսիլի մը առջեւ ցոյց տալ Արչակունեաց տոհմական հաստատուն ծառը, իր ամբողջ շառաւիղներով եւ հաստատել ամէն բան :

Կը հրաւիրեմ զինքն ալ որ բարեհաճի նոյն այդ Ժիւսիլին առջեւ Արջունի տունկին ցպիկը ցոյց տալ :

Կեցցե՛ն Արչակունիները :
Անկցին իրապէս սուտ ազնուականները :

ԻՇԽԱՆ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Կարեւոր էջ մը դանց առած պիտի ըլլայինք, եթէ չներկայացնէինք սրբազանին ոտանաւորներէն դէթ երկու հատ : Առաջինը ուղղուած Պօղոս Նուպար փաշայի սգահանդէսին առթիւ, իսկ երկրորդը Հ. Բ. Ը. Միութեան յրբեւեանին, միեւնոյն օրը :

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է :

Առ Մեծն Պօղոս փաշա Նուպար ողբացեալ

Օրհնեալ լինի յիշատակն մեծն Պօղոս փաշա Նուպարի,
Որ ողջ կենաց մէջ եղաւ մեծ բարերար յոյժ բարի :
Հայրենասէր վեհ հսկայ որ չդպաւ կապարի,
Մարտնչոզ քաջ որ չեղաւ երբեք ի մէջ գուպարի,
Այլ իր բանն էր խիստ ոյժեղ նրման սըրուած տապարի,
Իւր յիշատակն, ո՛հ, յաւերժ մեր մէջ պիտի միշտ ապրի,
Ըլլանք քունի մէջ, ըլլանք մէջ ճաշի եւ կամ պարի :

Փաշան սեպուհ մ'էր գործոց ոչ թէ բառի,
 Թէեւ ոչ գիտէր ոսկի լեզուն գրաբարի,
 Այլ խօսէր մերթ վերջերս ըստ աշխարհաբարի:
 Ամէն հայ սիրտ այսօր իբեն կը փարի,
 Ամէն լեզու որ կ'երկնայ իր փառքը կը բարբառի,
 Ի՛նչ փաշա էր, բարեկամ էր հետը ամէն քիտարի:
 Շատեր իբեն գէժ առին քայլեր խեղափառի,
 Եւ սակայն ինկան մէջ սաստիկ առապարի:
 Ի մէջ գործոյ աղգային եղաւ նրման փայլուն լամբարի,
 Իր ախունը թեւածեց ինչուան աշխարհ Չանդիպարի,
 Ելան կեցան յարզանքի խումբերը գուժ պարպարի:
 Բացեց սիրտը հանգոյն մեծ ու լիառատ ամպարի,
 Թըռեալ մենէ, ձրգեաց մեղ առանց մի խապարի,
 Մեր սուգ կըսկիծ է խայթող նրման պիտարի,
 Օրհնեալ լինի մեծ փաշա Պօղոս Նուպարը ամէն ամենարարի:

Առ Բարեգործական

Առքիւ յորելեանականի
 Տօնին հանդիսականի՝
 Բազմօգուտ Բարեգործականի,
 Տարածուած նրման ուղկանի,
 Կանգուն նրման մականի,
 Սպիտակ քար երկանի,
 Նրման աշխոյժ նոկանի:
 Մաղթեմ ոյժը վրկանի,
 Մարել ճայնը կականի,
 Ըլլալ շէնք բիւրյարկանի,
 Արական իգականի,
 Իգական արականի,
 Ի մէջ ազգին եգականի:
 Փոխուիլ մեծ քերականի,
 Ըլլալ պէս գոյականի,
 Ու վըսեմ ածականի,
 Որքին քով հարցականի,
 Ոմանց բացառականի,
 Այլոց քով հայցականի,

Ամէնուն քով ուղղականի,
 Ամէնուն մէջ գործիականի,
 Ծրագիր գործնականի,
 Խորհուրդ վերացականի,
 Ըլլալ երգ վիպականի,
 Ըլլալ երկ դասականի,
 Գրական դրականի,
 Գրական գրականի:
 Խողովակ պապականի,
 Հաստը կապ բողոքականի
 Ընդմէջ լուսաւորչականի,
 Այս է գործ Բարեգործականի:
 Գործ է Բարեգործականի,
 Միացում Դաշնակցականի,
 Ինչպէս Հնչակեանի,
 Ռամկավարականի,
Եւ համայնավարականի!
 Ոյժ տալ հայկականի,
 Ո՛չ երէմիականի,
 Այլ քրիստոնէականի:
 Մաղթեմ անդամներ միլիոն մի քանի,
 Երկար կեանք նրման շարականի,
 Ամէն ամէնականի:

*Շատեր սակայն, նախանձոտներ, կը հեզնեն Արջունիի ստանա-
 ւորները՝ երգելով՝*

— Լէ՛, Լէ՛, Լէ՛, Լէ՛, խորանի,
 Խասում բաշա մէյտանի,
 Օխտը դուրուշ, տաս բարա,
 Բիրէն խանէն կը բանի...:

* * *

*Արջունի երբեմն նամակներ կը ստանար Պոլսէն: Հայրեր էին այդ
 նամակները ստորագրողները: Անոնք կը փախաքէին իմանալ իրենց
 ուսանող զաւակներուն վարած կեանքը: Եւ Արջունի խղճաւորէն կը
 պատասխանէր ստացած նամակներուն: Ահաւասիկ քանի մը հատ այդ
 գիրերէն:*

— Ազնուաշուք Մանուկ էֆէնտի,

Ընկալայ ձեր նամակը եւ խորոյն ձեռնարկեցի ձեր որդւոյն՝ Մեւրթոնի կենցաղը առարկայ դարձնել քննութեան: Այս առթիւ, կը դռլեմ ձեր հայրական բարձր զգացումները: Շնորհակալութիւն խորին՝ ներփակին համար: Ազնուաշուք էֆէնտի, դժբախտաբար լաւ տեղեկութիւններ պիտի չկարենամ հաղորդել ձեզ: Ձեր որդին՝ Մեւրթոնը եղած է մի մոլութեան աէր: Կու խաղայ քավլու: Օրական տասը ժամ եւ աւելի՝ տասնչորսունքները (զար) իր ձեռքէն վար չի թողուր: Եւ աւելի սոսկալին ասեմ: Կու խաղայ դրամով: Իւրաքանչիւր խաղը տասը ֆրանքի: Ո՛հ, սիրտս կը բզկտուի...:

Անցեալ օր բարեկամ աղբային մը ինձ էր այցելած: Որոշեցինք զնալ եւ ճաշել միասին: Օդը տաք լինելով մտանք մի սրճարան, ստքի վրայ առնելու մէյմէկ զովացուցիչ: Յանկարծ հայերէն բարձր խօսակցութիւն մը լսեցի: Սրճարանին խորը երկու հայորդիներ նստած նարտ կու խաղային դռուժ — դոչուժով: Մէկը Մեւրթոնն էր, աւա՛ղ: Կեցած տեղս սկսայ դողալ, սիրտս նուաղեցաւ, եւ բաժակը ձեռքէս ինկաւ, ըլլալով փշո՛ւր, փշո՛ւր...:

Քովս գտնուող աղբայինը եթէ չբռնէր զիս, ո՛հ, դեռին էի ինկած: Ա՛հ, ըսի, հէք Մանուկ էֆէնտի, ահա՛ որդիդ...:

Որդիդ Մեւրթոնը լուր չունէր պատահածէն ու ամբողջ ձայնով կու պտար:

— Տիւ — շէշ...:

Միւսը կ'ըսէր.

— Շէշ ու պէշ...:

Եւ դժոխոց աղմուկ մը.

— Հէր եէֆ... տիւ պարա... տէօր ֆար... իֆի պիր... ֆիար ու եէֆ... հէր եէֆ...:

Երբ որդւոյդ մօտեցայ՝ նա արդէն «մարս» եղած էր:

Սկսայ խօսիլ իրեն հետ: Նա ականջ չէր կախեր ինձ, աւա՛ղ: Խաղը վերսկսաւ: Ես սակայն կանգնած էի, բարեկամիս հետ, այնտեղ ու կը յամառէի, պնդելով որ թողու խաղը: Անգամ մը եւս կորսնցուց ձեր որդին եւ անպատկանօրէն ըսաւ ինձ.

— «Ուզուրաւդ» եկար ինձի:

Ես սկսայ արտասուել իմ յուզումէն: Մեւրթոնի սիրտը կակուղցաւ: Նա խոստացաւ ինձ մօտ գալ տեսակցութեան համար:

Վստահ եղէք, Մանուկ էֆէնտի որ Աստուծով պիտի յաջողիմ եւս կացուցանել զինքը իր այս մոլութենէն:

Կ'ազօթեմ առ Բարձեալն որ շնորհ տայ ձեր դաւկին եւ ձեզ բնծայէ նա, լի շնորհօք եւ հայրասիրութեամբ՝ քանզի տիպար հայր մի էք դուք պատուական:

Մեր Տէր Յիսուսի օրհնութիւնը ձեր եւ ձեր ընտանեաց վրայ ըլլայ. ամէն:

Ահաւաստիկ երկրորդ նամակ մը.

— Մեծապատիւ Տիգրան էֆէնտի Ալթունեան

Ընկալայ ձեր 6 ամսաթիւ դիւրը եւ ներվակը: Ի սքառէ շնորհակալ եմ եւ ազօթող ձեր առատածեռնութեան եւ ձեր բարձր, օրինակելի զաղափարին եւ զգացմանց համար: Ներփակէ՛ք մաս մը բաժին հանեցի տեղւոյս աղքատաց: Ձեզ նման բարերար ազնիւ անձնաւորութեան համար, պատրաստ եմ անել ամէն կարգի ծառայութիւն:

Ձեր խնդրանքին համաձայն՝ դանաղան կողմնակի միջոցներով հետամուտ եղայ իրազեկ հանդիսանալու ձեր որդի՝ պարոն Յարութիւնի աօրեայ կեանքին:

Պրպտութիւնս, ցաւալի է ասել, Տիգրան էֆէնտի, ուրախացուցիչ ոչ մի հանգամանք երեւան բերեցին: Աւա՛ղ, ձեր որդին վաղաժամ կերպիւ անձնատուր է եղած մի սոսկալի մոլութեան: Նա տո՛ւական ցանկութեամբ լի, ցոյի ու յայրատ մի կեանք կը վարէ, թողած իր բժշկական մասնագիտութիւնը, բարէ՛:

Ինձ հաղորդեցին թէ ձեր որդին — ներեցէք որ ակամայ ստիպեալ եմ խոցուել ձեր հայրական ազնիւ սիրտը — ունի մի կին, ծագմամբ Պորտոցի, կասկածելի ծնունդով ու դայթակղական վարքով եւ անուամբ Ռօզալի: Բայց, եղո՛ւկ, որ այսքանով չվերջանար իր պղծութիւնը: Նա ունի նաեւ երկրորդ մի հոմանուէր՝ Իվօն անուամբ: Մի շարքուած եւ լիտի կին: Ռօզալի եւ Իվօն, անցեալ ամիս, կ'ընեն կուլմեծ: Ոստիկանութիւնը կ'ըլլայ միջամուխ: Յատուկ նամակաւ՝ պարոն Յարութիւնը ինձ մօտ կանչեցի եւ աւետարանական խրատներով զգաստութեան հրաւէր կարգացի: Յորդորներէս աղբուած կ'երեւի: Հոյիլի նման պարտիմ, յետ այսու, հսկել իր վրայ. այս մասին անհոգ կացէք: Շատ լաւ էք ըրած դրելով ինձ: Ուրիշ հայրեր ալ կրնան զիմել. ըսէք իրենց: Թող չքաշուին:

Ընդունեցէք, մեծապատիւ Տիգր, իմ խորին շնորհակալիքիս հետ նաեւ իմ սրտագին օրհնութիւնները ձեր եւ ձեր ընտանեաց համար:

Աստուած ձեզ կարողութիւն, ձեր ընտանեաց արեւշատութիւն եւ ձեր որդւոյն շնորհ պարգեւէ: Ամէն:

Պրն. Տիգրան Ալթունեան մէկ երկու տարի կը թղթակցի սրբազանին հետ : Յը մըն ալ, առանց ոչ ոքի լուր տալու կը հասնի ԼուսաՎիլ :

Պրն. Տիգրան Ալթունեան արտաքինով տխրոյժ էր ու մանաւանդ կը հազուէր չափազանց համեստ, նոյնիսկ կարելի է ըսել թափթփած էր : Չայնը խղճուկ հագազ մը :

Պրն. Ալթունեան պարտք կը համարէ ամէնէն առաջ ներկայանալ իր սիրելի սրբազանին : Եկեղեցիին բակէն անցնելով կը բարձրանայ վեր : Սենեակը բաց ու սրբազանը բազկաթոռի վրայ դտնելով կ'ըսէ յուզուած ,

— Սրբազան, սրբազան...

Բայց դեռ խօսքը չաւարտած կը փրփրի Արջուին .

— Ի՞նչ է նորէն... հանգիստ ձգեցէք զիս... ա՛լ բաւական է... Աս ամէն օր է... Կորսուէ՛ր...

— Սրբազան, խնդրեմ... գիտէ՞ք թէ ո՛վ եմ...

— Ո՞վ կ'ուզես ան եղիր... Ա՛լ համբերութիւնս հատաւ... կորսուէ՛ր...

— Ես Պոլսէն կուգամ... Տիգրան Ալթունեանն եմ ես...

Հէքեաթի պարիկ մը կը փոխէ սրբազանը զայն վերածելով նոր մարդու : Սրբազանը ստքի կը ցատկէ երեք լանջախաչերը շարժելով .

— Ի՞նչ... Տիգրան է՞ք նորի՞ն էք դուք... ա՛հ, բիւր ներդուլութիւն... հրամմեցէք, հրամմեցէք... ա՛խ, չէք գիտեր... կը պաղատիմ, հրամմեցէք Տիգրան է՞ք նորիս...

— Ո՞չ : Դուք կ'երեւի երկու տեսակ ընդունելութիւն ունիք : Ես այդպէս չէի կարծէր : Մե՛ղք...

Տիգրան է՞ք նորի կը հեռանայ...

* * *

Յաղագս բարեկամութեան :

Սրբազանը բարեկամ ու նոյնիսկ մտերիմ եղած է գրեթէ բոլոր ազգային ողբացեալ մեծ գէմքերուն հետ : Այդ մտերմութիւնները եթէ ծագած են ի կենդանութեան, դարգացած են սակայն յետ մահու : Երբեմն նոյնիսկ ծագած են յետ մահու : Չէ՞ որ կան անդրժիբեան սէրեր, կան նաեւ անդրդերեղմանեան մտերմութիւններ : Սա մի երեւոյթ է :

Սրբազանը շատ անգամ եղած է առաջնորդող, խրախուսող, խրատատու, թելադրող իր այդ մեծ բարեկամութեանց ընթացքին : Շինած

է բարեկամներու ճոխ հաւաքածոյ մը, քիչ մը ամէն ասպարէզէ . — Եկեղեցական, քաղաքական, զինուորական, գրական, գեղարուեստական եւ առեւտրական : Ահաւասիկ քանի մը անուններ, ամէնէն կարեւորներէն . — Յովնէան, Եղիշէ Դուրեան, Զօրավար Նազարբէկեան, Անդրանիկ, Մինաս Չերազ, Ատոմ Եարճանեան, գերասան Մ. Մնակեան, Երուանդ Օտեան, Էգնայեան, Մանթաշօֆ եւն. : Յիշեալները միշտ մենտոր մը ունեցած են յանձին մեր եկեղեցականին : Դժբախտաբար երբեմն մտիկ չեն ըրած զինքը, այդ իսկ պատճառով սխալած են : Խօսքը կուտանք սրբազանին .

— Գաջ Անդրանիկ երբ պատանի էր՝ իրեն Ա. Բ. Գ. կը սորվեցնէի : Նա միշտ Հ. Յ. Դ. կ'ասէր : Կ'ասէի նրան . — Մ'օ՛ղաղայ հայոց այրուքէնը Հ. Յ. Դ. ու չի սկսիր : Նա ի՞նչ պինդ գլուխն էր : Կը յամառէր ու կ'ասէր՝ Հ. Յ. Դ. : Կ'ասէի նրան . — «Անդրանի՛կ, Անդրանի՛կ, մի՛ հանէր բարկութիւնս՝ վերջը գէշ կը լինի... սօ, լակոտ, դո՞ւ ես որ պիտի փոխես սուրբ կարգը Ս. Մեսրոպի տառերուն» : Որո՞ւ կ'ասես : Մի օր էլ համբերութիւնս հատաւ ու շա՛ղկ ապտակ մը դարկեցի : Զարկեցի բայց վերջն էլ մի անկիւն գնացի ու աչացս արտասուքը սրբեցի : Անցան ատիկներ : Նա եղաւ հերոս : Օ՛ր, սրբան քրտինք եմ թափել նրա սորվեցնելու համար «հայոց պատմութիւն» : Նրա մէջ վառ եմ պահել հայրենասիրութիւնը : Նա այդ դատարարակութեամբ մի զիւցազն դուրս եկաւ : Ամէն անգամ որ տեսնում էի նրան խրատում եւ ասում էի . — Անդրանիկ, որդի, լեռներում խոհեմ եղիր, զգոյշ կաց, լաւ նայիր քեզ երբ թշնամին գնդակ է արձակում : Յետոյ թէ պաղ չառնես, չմըսես : Կ'ասէի նրան շատ բաներ եւ նա գլուխը կախ՝ ինձ մտիկ կուտար : Իսկ երբ գլուխ ցցէր՝ կ'ասէի նրան . — Յիշում ես չէ՞ քն աստակը, խերօք կաց թէ չէ, էլի կ'ապտակեմ հա՛... : Նա կը ժպտար ու իմ աչքը կը համբուրէր : «Հայրիկ, հայրիկ» կ'ասէր : Ա՛խ, Անդրանիկը, քաջ Անդրանիկը հի, հի, հի (կուլայ) : Նա հայոց հերոս, ազգի պարծանք... : Հայոց կուտանք սղապտակ թող հիւսեն... : Իմ անմահ սրբին է Անդրանիկը...

Խօսքը կուտանք կրկին սրբազանին որ բարբառի զօրավար Նազարբէկեանի մասին : Այս նետուած խօսքերը կը տեսնուի որ մենք լաւ ենք ըրած բռնելով եւ այստեղ այժմ գեակելով .

— Երբ էջմիրածնից վերադառնում էի՝ Թիֆլիզում եղայ արկածաւալ : Տիւրք է կը պատմութիւնը : Հիւանդանոցից դուրս գալուց յետոյ իմ առաջին գործը եղաւ գնալ ու տեսնել հայոց մեծ սպարապետին՝ գեներալ Նազարբէկեանին : Այնտեղ կարող էին տարբեր կերպով

մեկնել եմ այցելութիւնը: Բայց ես չվարանեցի եւ այցելեցի նրան: Գտայ զօրավարին իր խցիկում: Նրա ձեռքը սեղմեցի եւ աչքերին նայեցի: Նա էլ ինձ նայեց: Յետոյ նրան երկինքը ցոյց տուեցի եւ ասացի լակոնական կերպիւ.— հաւատք, յոյս, սէր եւ համբերութիւն, մեր զօրավար: Եւ երկուսով լացեցինք: Դա մի պատմական րոպէ էր հայոց պատմութեան համար: Նա ինձ ասաց.— «Հայրի՛կ, հայրի՛կ, որքան կուզենայի տեսնել քեզ: Եւ հիմի որ քեզ տեսայ որքան կուզենայի աւանդել իմ հոգին»: Նրան մի անդամ էլ երկինքը ցոյց տուեցի եւ ասացի.— խաղաղութիւնը քեզ հետ լինի, աղօթք արա, աղօթք արա, աղօթք: Պինդ համբուրուեցինք: Ի վերջոյ գեներալը ինձ ասաց.— Դու մահուան թէ կենաց հրեշտակ ես»: Ես էլ հաճոյակատարութեամբ ասացի.— որը որ քեզ դուր-կը դայ: Ա՛խ, ի՛նչ զօրավար էր, ի՛նչ... ա՛խ... (կուլայ):

Յիշողութիւններով, երեւակայութիւններով, մանրամէտքերով հարուստ է մեր սրբազանը: Դժբախտաբար դրի չէ առած իր յիշողութիւնները: Հայոց պատմութիւնը այսպէս շատ բան է կորսնցուցած: Մենք կուզանք մասամբ դարձանել կարեւոր պահաս մը:

Շարունակենք կամ տանք շարունակել.

— Օրմանեանը, օ՛, Օրմանեանը: Հոգեւոր ծնողս է նա, Օրմանեանը: Նրա պատրիարքութեան օրով մի քանի անգամ գաղտնի տեսակցութիւն եմ ունեցել նրա հետ: Գլուխ դիտի մի ասուլիս: Խնդիրը ազգային էր, ի՛նչ օրեր էին: Մի անգամ նրան ասացի խորհրդաւոր.— Սրբազան, յատուկ նամակ եմ ստացել, շշուկներ են շրջում թէ...: Նա հասկացաւ, նա կը հասկանար ինձ եւ ասաց.— Այո՛, իրաւունք ունիս, բայց ի՛նչ արած, այլ կերպ չի կարելի, մոմենտը կրիտիկական է: Բայց էլի ականջ կը տար ինձ, ես էլ նրան ականջ կը տայի: Ա՛հ, Օրմանեանը, իմ հոգեւոր ծնողը: Յետոյ միշտ թղթակցել եմ նրա հետ: Նրա անկման օրերին միշտ էլ խրախուսել եմ: Մե՛ղք որ իր նամակները կորուցի, մե՛ղք...: Մի անգամ էլ ինձ մտիկ չարաւ, մի նամակով նրան խորհուրդ էի տուել: Նա իմ խորհրդի հակառակ գործեց եւ լաւ չարաւ: Յետոյ այդ ինքն էլ խոստովանեց: Ամենայնգէտս նա մեծ եկեղեցական էր, աւա՛ղ...:

— Իմ հոգեւոր ծնողներից մէկն էլ Շղիշէ Դուրեան սրբազանն է: Նրան շատ էի յարգում: Յարգանքը փոխադարձ էր: Նրան թեւադրում էի պարապել բանաստեղծութեամբ: Ափսո՛ս, որ ինձ շատ քիչ անգամ էր մտիկ անում: Նա շատ քանքարաթաքոյց դուրս եկաւ, ափսո՛ս,

ափսո՛ս: Բայց նա մի մեծ գլուխ էր, լիքը մի գլուխ: Իմ հոգեւոր ծնողներից է: Ի՛նչ սրբազան էր... ա՛խ...:

— Դերասան Մնակեանին ասում էի.— Մարտիրո՛ս, Մարտիրո՛ս, ախր շատ ես զգայուն, դու էլ ճիշտ ու ճիշտ ինձ նման ես, լաւ չէ, լաւ չէ կեքան զգացմունք: Շատ ես յուզում, շատ ես լալիս: Նա էլ ինձ կ'ասէր.— Հայրիկ, հապա դու էլ նոյնն ես անում: Շուտ ես յուզում, շատ ես լալիս: Նա ինձ մտիկ չէր անում, ես էլ նրան մտիկ չէի անում: Աւա՛ղ, երկուսով անուզողայ էինք: Ի՛նչ զգայուն մարդ էր: Նրան տեսնելով ինքս ինձ էի տեսնում: Նա հիմի ասըում է իմ մէջ:

— Մի պատուական հայ էր Մինաս Ձերազը: Նա խելքը գլխին ազգային մի գործիչ էր: Քանի անգամ «Հայրիկ» ասելով քովս է եկած: Նեղ րոպէներին նրան յուսադրել եմ: Նա էլ չկայ այսօր: Որքան մեռել է տեսել հայրիկը: Աստուած հոգին լուսաւորի Մինասին: Նա ազգի համար զոհարեցուց, ա՛խ...:

— Ի՞նչպէս ուզում էք որ չճանաչեմ Ատոմ Շարճանեանին: Ես ու նա պարապում էինք: Նա ինձ մի քիչ գաղղիէրէնի դաս էր տալիս ես էլ նրան դրարարից էի խօսում: Ի դուր տեղը չէ որ յետոյ նրա լեզուն նման դռան Նարեկացու լեզուին: Նա մեծ բանաստեղծ դուրս եկաւ: Նա հայոց ազգի նահատակներից եղաւ: Վա՛խ իմ Ատոմին...:

— Երուանդ Օտեանը...: Նա խօսք մտիկ անողը չէր: Նա մեղանջում էր լրջութեան պահասից: Ի՛նչ հարբեցողն էր...: Հազար անգամ ասել եմ նրան.— Ա՛յ, տղայ, լուրջ բաներ գրիր, լուրջ: Հանաքի ժամը չի: Եթէ նա ինձ մտիկ արած լինէր մի մեծ բանաստեղծ դուրս կը դար նրանից: Մի անգամ էլ նրան խորհուրդ եմ տուել գրել մի մեծ պատմական վէպ՝ Արջունի տոհմի անցեալից: Այդ էլ որ մտիկ չարաւ էլ ոչ մի խօսք չասացի նրան:

Հայ ծնած ըլլալուս համար շատ եմ լսած դամբանականներ: Եւ ատանց ազգայնամոլութեան կուզամ յայտարարել որ հայերս գերադանց, անմրցելի դամբանախօսներ ենք: Լսած եմ դամբանականներ որոնք գիւղի մը բոլոր մասնայատկութիւնները ունէին: Ու դամբանականներ որոնք կրցած են մահուան գերագոյն զաղափարը գետեղել հոգիներու մէջ: Ու դամբանախօսներ, որոնք նոյնացած են մահուան հետ ու ըստ այնմ վարուած հանդիսականներուն հետ: Եւ տակաւին խանդավառօրէն միտքարող դամբանախօսներ, որոնք փառաբանած են

մահն ու մեռեալը, ողջերուն սրտին մէջ մեռնելու անհուն փափաք մը ստեղծելով:

Եւ սակայն այս բոլոր դամբանախօսները կ'անչքանան, կը կորնչին Արջունի սրբազանին քով:

Դժբախտաբար երեք դամբանական միայն լսած եմ իրմէ: Կուտամ երեքն ալ նոյնութեամբ:

Առաջին.

— Տիար Թէոտորոս Օհանողլուեան իր ամբողջ կենաց ընթացքին եղած է օրինակելի բարերար մը:

Գուցէ շատեր զարմանան այս յայտարարութեանս համար քանզի հանգուցեալը ճանչցուած է այլ կերպիւ: Վասնզի իր բարերարութիւնները մնացած են անձանօթ: Վասնզի ան կը բարեգործէր զաղտնօրէն: Ես մասնաւորապէս պրպտելով իր բարձր կենցաղը՝ զմայլաբէն հիացմամբ տեսայ որ Տիար Թէոտորոս Օհանողլուեանը քրիստոնէարար, համեստօրէն այլ սակայն լիարուսն առասաճեռնութեամբ ստատրած է հայ մանկանց կրթութեան, հայ եկեղեցեաց պայծառութեան, հայ վանուց բարգաւաճման, հայ մամլոյ առաջացման: Եւ տակաւին հարիւրաւոր աղքատիկ ընտանիքներ իրմէ ստացած են կանոնաւորապէս ամուսկան խղաստի կարեւոր գումարներ:

Տիար Թէոտորոս Օհանողլուան ճիշտ Քրիստոսի ուղած, նախընտրած բարերարն էր: Երբոր անոր աջ ձեռքը կուտար՝ ձախ ձեռքը չէր իմանար: Երբոր ձախ ձեռքով կուտար՝ աջ ձեռքը չէր իմանար:

Ա՛խ, ողբացեալ պարոն Թէոտորոս Օհանողլուեան, ա՛խ...: Ամբողջ երկրագունտիս վրայ քանի հոգի կարելի է համբել իրեն նման: Ան կուտա՛ր, կուտա՛ր, եւ կուտա՛ր: Սակայն ո՛չ ոք գիտէր թէ ան կուտա՛ր, կուտա՛ր, կուտա՛ր: Ան չունէր բարերարի փառք ու համբաւ: Ընդհակառակն ամէն ոք Տիար Թէոտորոսը նկատած էր իրրեւ կծծի, անդութ, ազահ ու չար անձնաւորութիւն մը:

Օ՛ր, ա՛խ...: Մինչդեռ մեծ ոգի Թէոտորոսը, սուրբ անձ, ազնիւ մարդ, իր ամբողջ կեանքի ընթացքին բարերարութիւն է ըրած միմիայն:

Եթէ իրեն դիմողները բոլորն ալ վստած է, պատճառը ա՛ն էր որ չէր ուզէր բարերար հուշակուիլ եւ պատուել:

Այո՛, նա կը վոնէր եւ սակայն միւս կողմէ ուրիշ հարուստ հայու մը միջոցաւ գումար մը կը հասցնէր վտարեալ անձին: Եւ այսպէս

ուրիշներ էին, ուրիշ հարուստներ, որ իր շնորհիւ կը համարուէին բարեսիրտ, բարերար:

Ա՛խ, Թէոտորոս, անդուգական բարերար, ջերմ հայրենասէր, հաւատացեալ քրիստոնեայ, հայ մամլոյ բարեկամ եւ ընտանիքի թռչնօգի անդամ:

Գուհոգի անշուշտ բազմած է երկնքի գոգը, հրեշտակաց գիրկը: Գուհանաց եւ փայփայանած մէջ եւ լուսոյ վրայ:

Ա՛խ ,սղակիր հանդիսականք, ա՛խ, երէկ գիշեր երազիս մէջ տեսայ Տիար Թէոտորոսը: Ան ինձ յանձնարարեց 15,000 Քրանքի ընկալադրով մը դիմել իր ժառանգորդաց: Ան փափաքեցաւ որ այլքան մը գումար տրամադրուի եկեղեցւոյս պաշտօնէութեան:

Ես խիստ զգածուած, ա՛խ... , հանգուցեալին յետ մահու այս խիստ գովելի եւ օրինակելի գաղափարէն՝ կը գործադրեմ իր կամքը, միմիայն չխոտվելու համար իր յաւիտենական հանգիստը: Ամէն:

Երկրորդ

Ողբացեալ Թէոդիկի գաղաղին վրայ հակելով եւ յոյժ յուզումնահեղձ կախանով ու լայլաբէն շեշտելով՝ այսպէս դամբանախօսեց.

— Ա՛խ... ա՛խ...

Վա՛խ եմ ըսէր Թէոդիկս...

Աղուոր Թէոդիկս, անոյշ աղաս...

Աս ի՞նչ ըրիր դուն... հաւնեցա՞ր ըրածիդ...

Ասանկ բան կ'ըլլայ միթէ...

Վայլում առա՞ւ աս ըրածդ...

Եւ յանկարծակի... առանց մտաք բարեաւ մը ըսելու, քէնոտածի նման...

Մե՛ղք... մե՛ղք...

Թէոդիկ, Թէոդիկ... գաւակս, ըսէ՛, ինձի, ըսէ՛, ի՞նչու մեռար, Ա՛խ Թէոդիկս, աննման գաւակս, աշխատասէր, ողորմած, բարեսիրտ ու մէկ հատիկ մանչս, արեւս...

Աս եղա՞ւ, վայլե՞ց, ճղիկ ճղիկ կոտորիմ...

Ի՞նչու մեռար, օղուլս, փաշա Թէոդիկս...

Աս ի՞նչ ըրիր, ես վրոս, ջանս ջիկեարս...

Թէոդիկ, Թէոդիկ... Ա՛խ, Թէոդիկը...

Ա՛խ, ըսեմ, ա՛խ...

Թէոդիկը...

Թէ... Թէո... դիկը... Թէ... Թո... Թի... Թա...

Չէ', չէ', ա'լ չեմ կրնար շարունակել...

Հի', հի', հի', հիո'ւր... ո'ւր... «չուօլօթօ'ր»...

Ուշագիւր ընթերցողը պիտի գիտէ որ հակառակ էր յուզումներուն Արջունի սրբազան տեղւոյն համաձայն ոճ եւ լեզու կը փոխէ: Ասիկա իր մտքի հարստութիւններէն մին է:

Երրորդ.

Գերասան Սարիմ Մաքսուտեանի մայրիկը մեռած էր: Սրբազանը արտասանեց իր գլուխ գործոց դամբանականներէն մին.

— Ա'խ... ա'խ...

Մահը...

Ահաւասիկ դագաղ մը եւս մեր անաջ:

Այո', դագաղ մը մեր անաջ: Անոր նայելով յիշատակ մը կ'ունենանամ: Մեռեալին նայելով յիշատակներէս մին կեանք կ'առնէ: Տարիներ, տարիներ անաջ էր: Շապին — Գարահիսարէն Պոլիս գացած էի: Գատը գիւղ էի: Գատը գիւղի դարիպ տէրտէրն էի: Ղարիպ տէրտէրը սիրուած ու յարգուած էի թաղեցի բարեպաշտ տանուտէրներէն: Ղարիպ տէրտէրը մուտք ունէր մեծամեծաց յարկերէն ներս: Հէ'յ, Գատը գիւղ: Կը յիշեմ Նուրեանները, Մալխասեանները, Ալթունեանները, Չիմէնեանները, Յովակիմեանները, Ունճեանները, Մալգեանները: Մեծատուն եւ պատուական, պատուական ընտանիքներ: Օրհնեալ, բարեգութ, հիւրընկալ գերդաստաններ: Սրտերնին բաց, սեղաննին բաց, քսակնին բաց: Ա'հ, շատ էին բարեկամները դարիպ տէրտէրին: Ղարիպ տէրտէրը նման չէր միւս դարիպ տէրտէրներուն: Ան սիրուած էր, զնահատուած: Եւ այսպէս շատ օրեր դարիպ տէրտէրը կ'ըլլար հայ մեծատանց քով:

Օր մը, Մաքսուտեաններու տան մէջ իմացայ որ Շապին — Գարահիսարէն վեց հատ հայրդիւներ Պոլիս են բերուած, մահուան վճիռով:

Ա'խ, ըսի, ա'խ...:

Վեց հատ կտրիճներ, հայրեխատէր, քաջ, բարեպաշտ, վեց հատ կանանչ արեւներ որոնք պիտի կախուէին կամուրջին երկու գլուխները: Երեքը Ղալաթիոյ կողմը, ա'խ...: Միւս երեքն ալ Պոլսոյ կողմը, վա'խ...: Ղարիպ տէրտէրին սիրտը վեր ելաւ: Մտածեցի, չափեցի, ձեւեցի եւ լացի:

Դարման մը, ա'խ, մէկ դարման...

Մաքսուտեան էֆէնտիին ոտքերը ինկայ եւ ըսի.

— Հրաշք կ'ուղեմ, վեց կտրիճներուս համար հրաշք մը...

Այս դագաղին մէջ հանդչող տիկիներ Մաքսուտեան էֆէնտիին կ'իննէր: Իմ վիճակս տեսնելով արտասուեց եւ ըսաւ ամուսնոյն.

— Բան մը ըրէ', ազատէ տղաքը:

Ա'խ, ի'նչ քաղցր, հլու հնադանդ եւ քրիստոսանուէր կ'ին մ'ըն էր: Մաքսուտ պէյը ըսաւ.

— Ես բան մը չեմ կրնար ընել զժբախտաբար: Շուտով Սիմոն պէյին զնա: Քեզի երկու տող գիր կուտամ:

Մաքսուտ պէյին նամակը անուելով շիտակ Սիմոն պէյին վրայ վազեցի: Պատմեցի ամէն բան, լացի, աղաչեցի, փէշը բռնեցի:

Շատ յուզուեցաւ Սիմոն պէյը եւ զիս պատրիարքին զրկեց: Պատրիարքն ալ զիս մտիկ ընելէ վերջ, Երլաղ, Սուլթանին դիմեց: Եւ, երկու ժամ վերջ, վերադառնալով ըսաւ ինձի.

— Տէրտէր, ե'լ տունդ զնա հանգիստ սրտով: Վեց կտրիճներդ ներուժ ստացան: Ազատուած են:

Ա'խ, ա'խ, Պատրիարքիս ոտքերը համբուրեցի: Ուրախութենէս սկսայ արտասուել: Գոնապանին ձեռքերը կը սեղմէի: Ըրածս թողածս չէի գիտէր: Պարիկ բան չէր, վեց արեւներս ազատած էի, փրկած: Ղարիպ տէրտէրը երջանիկ էր, դո'հ էր, ուրա'խ էր, յուզուած: Ղարիպ տէրտէրը անկից վերջ գիտաւոր աստղի նման հեռացաւ Պոլսոյ արեւնոտ երկնակամարին վրայէն: Ի'նչ օրեր էին, ի'նչ օրեր...

Մաքսուտեան տիկինը հողին թող հանգչի խաղաղութեամբ: Ամէն:

Շատ խոր էր այս դամբանականին ձգած տպաւորութիւնը հանդիսական սգակիրներուն վրայ:

Շատեր սկսան յայտնել կարծիքներ: Ահաւասիկ հատընտիր քաղուած մը:

— Եպիսկոպոսին յիշատակները ճոխ են գերեզմանատան մը նըման:

— Ի'նչ զգայնութիւն... որքա՞ն կուլայ... Չոր մէկը չէ...:

— Անձրեւարեր սրբազան մ'ըն է... միշտ կ'անձրեւէ Լուսավիլ քաղաքին վրայ եւ հայոց եկեղեցիին մէջ... օրհնութիւն է աս...:

— Բայց եկեղեցիին խոնաւութեան պատճառը ինքն է... Սէն գետին յորդելուն պատճառը նոյնպէս...: Եթէ օր մը Նեղոս գետը ցամաքի, Տիմոթէոս սրբազան կրնայ փրկել Նգիպոտոսը...

— Կը սխալիս, ան դետի ակ չի կրնար ըլլալ քանզի մէկ կաթիլ արցունք չի թափեր: Անոր արցունքները շատուանի ջուրի կը նմանին, միշտ մէջը կը հոսին:

— Ամենայն դէպս սուրբ մարդ է: Ես աչքովս տեսայ. դամբանախօսած պահուն եկեղեցիին կամարը բացուեցաւ եւ երկնքէն բու մը իջնելով՝ թառեցաւ սրբազանին վեղարին վրայ:

Շատ դամբանականներ խօսած է Արջունի: Դեռ շատ դամբանականներ կրնայ արտասանել: Դեռ օր մը կրնայ իմ վրաս ալ խօսիլ:

Իր բարութեան եւ անյիշատարութեան վրայ մտած եմ:

Շատ հաւանաբար այսպէս դամբանախօսէ իմ վրաս:

— Թէեւ ան զիս շատ քաջքեց, աւելի պակաս բաներ ըսաւ եւ սակայն ես կը ներեմ իրեն: Թողութիւն կը շնորհեմ, աղօթելով եւ խնդրելով որ մեր տէր Աստուածն ալ ներէ իրեն: Թող արժանի ըլլայ Արքայութեան եւ մեծ ու փոքր Արջը համաստեղութեանց լուսերուն մէջ լողայ իր հողին:

Աստուծմէ սակայն կը խնդրեմ որ, այս կէս լուսաւորչական եւ կէս կաթոլիկ եւ ամբողջովին հեթանոս դրաղէտը քաւարանի շրջանէ մը անցնի: Թող զինքը նետել տայ, սանկ մէկ ամիս մը, դուրի մը մէջ, որ արջերով լեցուն ըլլայ: Ամէն:

* * *

Օր մը, մեծահարուստ ազգայինի մը յուզարկաւորութեան ժամանակ, երբ սրբազանը կը դամբանախօսէր, ներկաներուն մէջ դանուող զուեցերիացի բասթէօր մը — Պէրն քաղաքէն —, կը հետաքրքրուի հայ եկեղեցականին ինքնատիպ անձնաւորութիւնով ու քովը դանուող իրեն բարեկամ հայու մը կը հարցնէ սրբազանին անունը: Կը տրուի իրեն անունը, հանդերձ թարգմանութիւնով: Բասթէօրը սանձարձակ խանդավառութենէ բնուած վեր վեր կը ցատկէ: Յուզարկաւորութեանէն վերջ կը փութայ սրբազանին քով ու կ'ըսէ.

— Յղբա՛յր իմ, եղբայր իմ... Ի՞նչ ուրախութիւն է ինձի համար ծանօթանալ այլազգի ցեղակիցի մը: Ես ինքս ալ, նման իմ ծննդավայրիս բոլոր բնիկներուն, սեռած եմ արջերէ: Արջազուններ ենք, ի՞նչ փառք: Մեր քաղաքին անունը՝ Պէրն՝ արդէն կը նշանակէ արջ, դերմաներէն լեզուով: Պատմութիւնը կը հաստատէ թէ մեր նախնիքը արջեր էին: Ունինք աւանդավէպեր: Ունինք նաեւ վիրասպ մը մեր քաղաքին մէջ, լի արջերով: Կը յարզենք մեր չպայծառակերպուած նախա-

տիպը եւ կը կերակրենք: Փափաքելի էր ինձ համար՝ դիտնալ ձեր Արջութեան պատմութիւնը: Կը հրաւիրեմ ձեզ իր ցեղակից այցելել մեր քաղաքը: Որքան խանդավառութիւն պիտի ստեղծէք եթէ մեր ժողովարանին մէջ, մեր արջազուն հայրենակիցներուն ներկայութեան խօսիք եւ հանդիսաւոր թափորով շրջիք մեր քաղաքին հրապարակներուն վրայ, իր զինանշանին ու դրօշակին ներքեւ, որոնք կը ներկայացնեն մեծ Արջ մը: Մենք ձեռք ձեռքի տուած կրնանք ջախջախել անօրէն Տարվինը որ մարդկութիւնը սեռած կը կարծէ կապիկներէ:

Այսքան յորդառատ խօսքեր լսելէ վերջ սրբազանը կ'ըսէ. Տարվին իրաւունք ունի: Ռամիկները սեռած են կապիկներէ իսկ աղնուականները սեռած են արջերէ: Սա իմ խորին համոզումս է:

— Օ՛, ս'չ, մի՛ ըսէք: Կ'աղաչեմ ունկնդրեցէք: Մենք ունինք ահագին փաստեր՝ ջախջախելու համար Տարվինը: Մտադիր ենք հաստատել թանգարան մը եւ կենդանաբանական պարտէզ մը, նուիրուած յատկապէս արջերու: Պիտի հաւաքենք թուխ, ճերմակ, ճարճական, prochile, lippu, baribal, cocotiers եւ grizzli արջեր: Դիմած ենք Ափրիկէի, Սիպերիոյ, Ուկրաինոյ, Ֆրանսական Փիրէնէի, Միջագետքի, Պաղեստինի եւ Ալաւքայի արջառատ վայրերու որսորդներուն: Որոշած ենք մեր մայրաքաղաք Պէրնը ընել արջոստայն:

Գիտական աշխատանքներ ունինք, որոնք պիտի արամադրուին եւ դիւրացնեն մեր աշխատանքը: Ձեզ ալ այնտեղ կը մտցնենք: Պէրն հրամայեցէք: Պիտի տեսնէք մեր արջախաղերը, արջակրկէսները, արջարանը: Ու վաղը միւս օր անպայման բոլոր մարդիկ պիտի դզան իրենց արջութիւնը եւ Պէրն պիտի վազեն: Այս՛, պիտի դան տեսնելու մարդկութեան իսկական Աղամ — Եւաները: Պէրնն է մարդկութեան եղէմը:

— Ուրախ եմ ձեզ նման բարեկամ մը դանելուս համար քանզի իմ ետեւէս կ'ըսեն եղեր. — ours mal léché.

— Այդպէս ըսողները envoyer à l'ours: Որ եւ է զարդացած անհատ անկարող է արջին հանձարը ուրանալ: Արջը շատ բան տուաւ մարդկութեան:

— Կը կրկնեմ նոր լոյսեր բացիք մէջս: Ուրախ եմ եւ հպարտ ձեզ նման բարեկամ մը շահելուս: Կը ճոխացնէք իմ միտքս եւ աղնուականի յաւակնութիւնս:

— Բայց, այս՛, բայց շատ պարզ է: Ներեցէք որ ըսեմ թէ նախնական ծանօթութիւններ միայն ունիք ձեր ցեղի մասին: Այսպէ՞ս կ'ըլլան Հայաստանեան արջազունները...

- Ա՛խ, եթէ դիտնաք մեր քաշածները: Թուրքե՛րը, թուրքե՛րը...
- Երեւի արջերէ սեռած չեն անոնք...
- Արջին մեծն են անոնք...
- Ի՞նչ կ'ըսէք... հիանալի է, հիանալի...
- Բայց ի՞նչպէս թէ հիանալի...
- Ձէ՞ որ ըսիք թէ Թուրքերը մեծ արջեր են...
- Այո, սակայն, այսինքն վայրենի են...
- Վայրենի՞... Թ', թիւրիմացութիւն, պարզապէս թիւրիմացութիւն է: Ծնորհակալ եմ ձեռնէ: Լաւ գաղափար մըն է: Ես հարկ է որ Թուրքիա մեկնիմ...
- Չգուշացէք: Այնտեղ է որ նահատակուեցան իմ գերդաստանէս 85 արջուներն...
- Բայց ոչինչ կը հասկնամ: Կը դարմացնէք զիս: Արջը արջ կը սպաննէ՞...: Թիւրիմացութիւն դարձեալ:
- Թիւրիմացութիւն եթէ կ'ուզէք բայց զիտցէք որ այդ թիւրիմացութիւնը դժոխային է, սոսկալի է, չտեսնուած թիւրիմացութիւն է: Յետոյ այդ թիւրիմացութիւնը միշտ եւ յաւիտեան կը կրկնուի այդ երկրին մէջ: Ձեզ հետ ալ կրնայ պատահիլ այդ թիւրիմացութիւնը: Այո՛, այդ արիւնտտ մալ անքանտիւն:
- Բայց ճիշտ թիւրիմացութիւն ըլլալու համար հարկ է Թուրքիա մեկնիմ: Առաքելութիւն մը պիտի ըլլայ իմս: Հարթել թիւրիմացութիւնը որ կը ծագի առանց որոշ պատճառի:
- Թուրքերը մահմետական են:
- Այդ ոչինչ: Կ'որսամ զիրենք ըրիտանէական սուրբ միջոցներով: Իրաւ է որ դժուար է կատարել որոտրդութիւն արջի բայց այդ բանը կը դիւրանայ ինծի համար, արջազունի մը համար: Հետս կը տանիմ առատ միս, մեզր եւ պտուղներ: Այդ առթիւ կը ճամբորդեմ նաեւ մինչեւ Սիպերիա ու կը տանիմ թուխ արջերուն ողջսյնները սպիտակներուն:
- Ի՞նչեր կ'ըսէք...
- Բայց անշուշտ: Հարկ է գործել: Անկէ կ'անցնիմ Ալասքա եւ հիւսիսային Գանատա, ուսումնասիրելու համար grizzli արջերը:
- Բայց այդ ցուրտ վայրերուն մէջ... սառնամանիքներուն մէջ...
- Արջազուն մը ցուրտէն կամ տաքէն չի վախնար: Արջային ու

- հակարջային բեւեռները մեր տիրապետութեան տակ են: Եւ յետոյ մուշտակէ վերարկու կը հագնիմ:
- Այո՛, լաւ հագուեցէք, ամենայն դէպս լաւ հագուեցէք: Երկու պատճառով: Նախ ինքզինքնիդ ցուրտին դէմ պաշտպանելու համար եւ երկրորդ ու կարեւորը՝ որպէսզի ամբարիշտներ այլեւս չկարենան ըսել.— etre fait comme un meneur d'ours.
- Այդպէս ըսողները, ցուրտին հետ մ'իտսին, envoyer à l'ours.
- Կը հաճի՞ք ինծի արջ մը զրկել, սիպերիական արջ մը, էրբ նուէր...
- Mais, bien sûr, un ours avec un ourson:
- Կանխայայտ շնորհակալութիւններս:
- Եթէ կը փափաքիք հաս մըն ալ Թուրքիայէն զրկեմ:
- Ամենեւին: Անոնք ձեզի թող ըլլան: Երիտալ Պէրն փոխադրեցէք: Արջերը ձեզ հետ ըլլան, երթաք բարեաւ:
- Ծնորհակալութիւն: Մնաք բարով:
- Կը սպասեմ ձեր զրկելիք պատուանշանին:
- Անմիջապէս որ տեղս հասնիմ կը ճամբեմ: Կը կախէք ձեր խաչին քով:
- Ուրեմն լանջախաչիս քով պիտի ունենամ արջախաչ մը:
- Յտեսութիւն: Ա՛, չմոռնաք մեզ: Երբ ստացաք մեր հրակէրը՝ անմիջապէս փութացէք Պէրն ձեր տոհմին պատմական փաստաթղթերով: Մի՛ մոռնաք փաստաթղթերը, շատ կարեւոր են անոնք, ջախջախելու համար Տարվինը: Այդ վաւերաթուղթերը մեծագումար գինով կրնաք ծախել մեր մատենադարանին: Գործ մը: Յիշեցէք նաեւ այն պատիւները, որոնց պիտի արժանանաք բովանդակ Հելլետիոյ մէջ: Յտեսութիւն:

* * *

Բաթթօրին մեկնելէն վերջ, սրբազանը անհրաժեշտ համարեց վենետիկի, Վիէնայի, Երուսաղէմի, Էջմիածնայ եւ Պոլսոյ մատենադարաններու գրքերուն եւ գրչագիր մատենաներուն մէջ փնտռել տալ վաւերաթուղթեր որոնք պատմեն Արջունի տոհմի մասին:

Ամիսներ ու տարիներ անցան եւ բոլոր փնտռողները անցան ընդունայն: Այս բանը մեծ վիշտ պատճառեց սրբազանին: Իրեն ծանօթ գրադէտներու եւ բանասէրներու ճաշեր խոստացաւ՝ յանուն քանի մը տող ծանօթութեան: Ո՛չ ոք սակայն դարերու համայնակուլ խաւարէն

յաջողեցաւ լոյսին բերել փոքրիկ տեղեկութիւն մը որ վերաբերէր Արջունի տոհմին :

Ես ինքս սակայն , բախտաւոր դիպուածով մը , ժԳ դարու պատկանող գրչագիր Աւետարանի մը սկիզբը դատած եմ երկու էջնոց գրութիւն մը որ կը սրտամէ Արջուկենց տոհմապեաներէն Կիւրեղի վայրագ վրէժխնդրութիւնը ընդգէմ Բղնունի Վզրուկի :

Ահաւասիկ դէպքը , ամփոփ կերպով :

Բղնունի վզրուկ կնութեան կ'ուզէ Արջունիներու տոհմապետ Կիւրեղի՝ Կատարինէ դուստրը : Կիւրեղ կը մերժէ առաջարկը , Բղնունի Վզրուկի վարք ու բարքին ծանօթ ըլլալով : Վզրուկ կը բարկանայ եւ դէշեր մը իր մարդոցով կ'առեւանգէ Կիւրեղի աղջիկը ու կը քաշուի իր ամբոցը : Արջալոյսը չծագած Կիւրեղ կը պաշարէ ամբոցը եւ կուտի աղանջանը կուտայ : Երկու կողմէն սաստիկ կը մարտնչին : Թրեր , շարաթներ կը տեւէ պաշարումը : Քառասուն օր վերջ սակայն Վզրուկ ճարահասա՝ Կիւրեղի աղջկան Կատարինէին կը հագուեցնէ արջի մորթ ու կը զրկէ Կիւրեղի ըսելով .

— Ես արջու աղջիկ չեմ ուզեր :

Սաստիկ բարկութենէ Կիւրեղի մայերը կը ցցուին ու այնպէս ալ կը մնան : Աչքերը կ'ուռին ու կը սկսին դառնալ ու դառնալ : Կը դառնայ իսկաւ զլուխը իր վզին վրայ : Երթունքին մէկ կողմէն թոյն , միւս կողմէն կրակ կը սկսի վազել : Ուժգին յարձակողականի հրաման կ'արձակէ : Բղնունի Վզրուկի մարդիկը անկարող պատերազմելու կը յանձնուին : Կիւրեղ կը մանէ ամբոցէն ներս եւ ողջ ողջ կը բռնէ Վզրուկը : Կիւրեղ պարկի մը մէջ կը դնէ Վզրուկը : Նոյն պարկին մէջ կը խոթէ իսկաւ արջ մը : Պարկին բերանը կը կապէ ու կը սկսի խարաղանել : Վայրագ արջը իր կատաղութենէն կը փարատէ Վզրուկը : Երկուքն ալ պարկին մէջ կը մահանան , դարհուրելի աղաղակներ արձակելով :

Խնդիրը սակայն այսքանով չի վերջանար :

Արջունի Կիւրեղի տոհմակիցները՝ արջին մահը տեսնելով կ'ըմբոստանան իրենց պետին դէմ , անոր մահը պահանջելով : Վզրուկի տոհմակիցները կը քաջալերեն այս շարժումը , Կիւրեղէն վրէժ լուծելու համար : Մաժակ Արջունի որ պետը կը հանդիսանայ այս աղքատամբութեան , ամբոխը կը հրահրէ ըսելով .

— Եղբայրասպան ու հայրասպան է Կիւրեղ : Մեռցուց մի արջ : Արջն է մեր հարազատ եղբայր : Մենք անկէ կը սեռինք : Արջն է սուրբ

կերպանի : Սուրբ երկիրը լեցուն է արջերով : Պիղծ Կիւրեղը թող մեռնի :

Կիւրեղ սակայն իր պաղարիւնութիւնը չի կորսնցնէր : Կը սկսի գոռալ , պղտիկ պատմական ճառ մը խօսել եւ հանդարտեցնել ամբոխը ու տիրել կացութեան :

— Ո՛վ դաւաճաններ , ո՛վ ազէտ տխմարներ , ո՛վ արջեր , ո՛վ , ո՛վ ձեզի ըսաւ որ Արջունի կոչուելուս համար արջերէ սերած ենք մենք : Այդ ի՞նչ նախատինք կը հասցնէք մեր տոհմին , ո՛վ արջամիտներ : Զեր մէջէն բնաւ մէկը չի՞ դիտէր որ երկնային երկու ծանօթ համաստեղութիւններ կան՝ Մեծ Արջ ու Փոքր Արջ , այսինքն Արջունի անունով : Մենք Փոքր Արջէն կը սերինք եւ ոչ թէ վայրենի ու վայրագ արջ կենդանիէն : Մենք արջեր չենք այլ արջուկ աստղեր : Մենք աստեղածին ենք ու երկնային :

Խանդավառութիւն մը կը ստեղծուի որուն նմանը քիչ տեսնուած է Արջունի տոհմի տարեգրութեանց մէջ :

Կիւրեղ իր մարդոց գլուխը կ'անցնի եւ սուրէ կ'անցնէ Բղնունիները իսկ Մաժակի ալ կաշին կը քերթէ : Մէկ քանի դաւաղերներ ալ կը կորնչին մահուամբ :

Արջունիներու տոհմապետ Կիւրեղ իր թափած արիւններուն , իր մեղքերուն քաւութեան համար՝ մեղաւոր Սրապիոն Օչնեցի սարկաւազին դրի առնել տուած է Աւետարանս :

Այս Աւետարանս ամէն կարգացող թող Կիւրեղի հոգւոյն համար աղօթք մը ընէ : Զընողը լինի անիծեալ : Ամէն :

Այստեղ կ'աւարտի պատմութիւնը :

Ես իմ աղօթքս ըրի :

Արջունի սրբազանին կը մնայ՝ Կիւրեղի , իր դատեր Կատարինէի եւ մեղաւոր Սրապիոն Օչնեցի սարկաւազի հոգիներուն փրկութեան համար՝ կատարել հոգեհանգստեան հանդիսաւոր սուրբ պատարագ , քանի որ աստեղափայլ կը դառնայ ու կը փրկուի ամէն տեսակի արջութենէ :

Բազմաթիւ եւ յոյժ նշանաւոր են սրբազանին բազմաբարբառ ու բազմօգուտ քարոզները :

Քարոզի պահուն երբ նշմարէ որ Արջակ Զօպանեան եկեղեցիէն ներս կը մտնէ , կը սկսի խօսիլ մաքուր արեւմտահայերէն .

— Եւ Մելիքսեղեկ սրբազանը ինծի ըսաւ...

Քիչ վերջ կը տեսնէ որ Աւետիս Ահարոնեան ներկայ է.

— Եւ ես ասացի նրան՝ Մելիքսեղեկ սրբազանիք...

Մէյմըն ալ դիմացը կը գտնէ գաւառացի Դաւիթ բէկը.

— Սրբազանը թէեւ այդպէս ըսաց բայց ես իրեն ըսուցի. — Ի՞նչ ըսեցիր... Եւ էն ասեց նոյն խօսքը: Իրեն ասացի. — Սրբազան, սրբազան, հինէն խօսք ասուցուած է այդ մասին:

Չկարծուի սակայն որ իր քարոզը ճոխ է միայն հայագիտութեամբ:

Յանկարծ իրարանցում մը կը սկսի իր շուրջը: Հայր սուրբը կը շփոթի: Կը քննէ շուրջը: Ա՛, Նորատունկեան էֆէնտին է: Խանդավառ կը շարունակէ քարոզը.

— Այդպէս ըսաւ Մելիքսեղեկ սրբազանը: Աւա՛ղ, այն ժամանակուան սխալ քաղաքականութիւնը այդպէս էր: Չկար խոհականութիւն, բազմիմաստութիւն, եւ չկար (լալով) միաբա...նու...նու...ու...թի...թի...ուն: (Հանդիսաւոր դադար: Անակնկալ): Սակայն յետոյ (բարձր) Նորատունկեան մե՛ծ էֆէնտին շնորհիւ՝ ազգային քաղաքականութիւնը դտաւ իր շէնքով ու շնորհով (դարձեալ լալագին) քրիստոնէական տիպար ճամբան:

Իրարանցում մը եւս: Քէլէկեան խան եւ Համբարձումեան եկեղեցիին առաջամասը կ'առաջնորդուին: Արջունիի ներշնչումը նոր խանդավառութեամբ կը մտրակուի:

— Եւ այդ քրիստոնէական ճամբէն ընթացան հայ մեծատուններ, ու ըրին պարտ ու պատշաճը, լիառատ բարերարութեամբ, (լալով) քրիստոնէավայել սրտով ու հոգևով, արժանանալով համայն ազգին երախտագիտութեան, յարգանքին ու սիրոյն: Մեծոգի բարերարները ազգիս՝ ինչպէս Քէլէկեան մեծ խանը եւ Համբարձումեան մե՛ծ առեւտրականը: Օրհնեալ ըլլան: Մե՛ծ ազգայիններ, մե՛ծ հոգիներ, մե՛ծ, մե՛ծ...

Նոր իրարանցում: Այս անգամ, օ՛, բանը ուրիշ է: Եկողը տարբեր անձ: Գաղղիացի եւ ծերակուտական: Վեց եօթը հոգի կը շարժին փոյթեռանդն ու քաղաքավար: Յարգանքի նրբութիւնն ու խորութիւնը անթերի: Պապը Ալիական ցոլացում, պայծառ տեսակէն: Հայր սուրբ Արջունի երանելի արքեպիսկոպոստ կը շարունակէ.

— (Պինդ հանդիսաւոր) եւ այսօր հայութիւնը ահա ասպնջական

ու ասպետական (բարձրագոյ) մե՛ծ Փրանսայի, La France, մեծ հանրապետութեան, grande Républiqueին մէջ խաղաղ, երջանիկ, անդորր ու բարեկեցիկ կ'ապրի: Այս վեհանձն երկրին մէջ, La France généreuse, որ հայոց երկրորդ հայրենիքն է, seconde patrie, Պրանսա՛, Պրանսա՛... (ձեռքերը բարձրացնելով) օրհնեալ ըլլայ, յաւիտեան, (diminuento) Ա՛... ա՛... մէ... մէ... ն... հի՛, հի՛... հիո՛ւր...

Ըստ Արջունիին Պրանսահայոց երկրորդ հայրենիքն է Գաղղիան, Անգլիոյ հայոց երկրորդ հայրենիքն է Ալպիոնը եւ այսպէս շարունակաբար:

Եթէ Լոնտոնի մէջ քարոզ խօսի՝ պիտի յայտարարէ անգլիերէն.

— Մեծն Ալպիոնը, կրանա Պըրթաներ, մեր երկրորդ հայրենիքը, սէքընտ Փատըրլանտ...

Իսկ եթէ Հոմօի մէջ քարոզէ.

— Հայերուս, Արմէնոներուն երկրորդ հայրենիքը, քարիսիմօ, պէյլա Իտալիա՛ն է, սըկօնտէ բաթրիա... Իտալիա՛, Իտալիա՛, մօլթօ ճէնթիլէ, մօլթօ պէլլա, սըկօնտէ բաթրիա...

Ու եթէ Աթէնքի մէջ ճառէ.

— Մեր ցեղին երկրորդ հայրենիքը էլլատան է: Ասիկա այսպէս է եղած Օմիրոսի, Սոկրատի, Պլատոնի, Պէրիկլէսի, Սօֆօկլէսի օրբէն մինչեւ Վէնիդէյօսի օրը: Մե՛ծ, հի՛ն, դեղեցիկ Յունաստանը, օմօրֆի, մեղալի էլլատան, լէֆտէրօ բաթրիտա...

Եթէ նոյնիսկ Մոսկոնայի մէջ տրուի իրեն քարոզ բարբառի՝ պիտի ըսէ անայլայլ.

— Տավարիչի, Սովեթական խարաչօ Ռուսիան է մեր եւ ամէնուն, բոլոր պրօլետարներուն առաջին ու երկրորդ հայրենիքը: Փթարոյէ ոտտին... խարաչօ... Փթարոյէ ոտտին... տավարիչ էլիչ, Լուպլու... Սովեթտինսկի, Փթատոյէ ոտտին...

Անցնինք Գահիրէ:

— Պօղոս Նուպար մե՛ծ փաշայի եւ համայն Եգիպտահայոց երկրորդ մե՛ծ հայրենիքն է Մըսըրը: պէլէտ ըտնին... պէլէտ ըտնին... մալէ՛շ...

Հասպա եթէ Թէհրանի մէջ խօսի.

— Իրա՛ն, Իրա՛ն, Աճեմիստա՛ն, Պարսկաստա՛ն, մէնիմ վաթանը տօվլօմ... մեծ պատմութիւն... Քսերքսես, Դարեհ, Յազկերտ,

Արիասլան... Մեծ գրահանութիւն՝ Ֆիրտուսի, Հաֆըզ, Օմար Խայ-
եամ եւ Արամ Չարըք... Մէն թանդըրի վէ Իրան զուլլի րմ... Ֆարսիս-
տան մէնիմ վաթանը տօվվօմ... վաթանը տօվվօմ...


Եւ Արջունի Զանդիպարի, Թանանարիվայի, Ճիպուլթիի, Քիլի-
մանճարոյի ու Բաթախիւնի մէջ նոյնը պիտի յայտարարէ, քաջաբար
ու վստահօրէն:

Եւ իրաւունք ալ ունի: Քանզի հայերը կարծէք միշտ երկրորդ
հայրենիքներ միայն ունեցած են:

Արջունիի կատարեալ կերպարանքը ունենալու համար՝ աստեղա-
ղարդ գիշեր մը մտէք բանջարանոց մը եւ մարդահասակ ու ծուռ ցից
մը անկեցէք: Յիցին անցուցէք սեւ սքեմ: Քիչ մը վերը տեղաւորեցէք
վեղար մը ու անոր տակ միմիայն ուրարտական Քիթ մը: Կախեցէք
կուրծքէն երեք լանջախաչ: Այսքան: Երբոր առաւօտ ըլլայ դիտեցէք:

Պատկերը յար եւ նման է իրեն: Եթէ չհամոզուիք՝ կրնաք Արջու-
նի սրբազանը բանջարանոցին միւս ծայրը կանգնեցնել եւ տեսնել որ
ոչինչ կայ իբրեւ տարբերութիւն:

Յետոյ օգտադործեցէք կատարուած աշխատանքը:



ՄԵՐՕՐԵԱՅ ԾԻԾԱՂՆԵՐ

(1927 - 1932)

«ՅԱՐԳՈՂ»ԱԿԱՆՆԵՐԸ

(Տեսարան մը ՅԱՐԳՈՂի ժողովէն)

Շաւարշ Նարդունի.— Կան արդար յաւակնոտներ ու անարդար
յաւակնոտներ: Ան որ տաղանդ ունի, վայել է իրեն յաւակնութիւնը,
իսկ ան որ անտաղանդ է՝ պարզապէս ծիծաղելի է իր յաւակնութիւ-
նը...

Յարութիւն Ֆրէնկեան.— Մենք նորերս տաղանդ ունինք, նոր,
ուժեղ, խիղիս, ըմբօտ, յախուճ ու ստեղծող տաղանդ... Մեր
յաւակնոտութիւնը աւելի քան արդար է... Այո՛, մենք նորերս պիտի
ստեղծենք...

Հրաչ Զարդարեան.— Նախ ստեղծենք վերջը խօսինք: Ես կ'ու-
ղէի լսել յաւակնոտութեան ծագման մասին... Հոմերոսն ու Շէյքս-
փիրը չենք ճանչցած...

Վ. Կախաւեան.— Դուն կրնաս չճանչնալ: Ես սակայն կը ճանչնամ
Հոմերոսը, Եսքիլէսը, Սոֆոկլէսը, Եւրիպիդէսը, Տիրտէոսը, Արքի-
լոքասը, Տանդէն, Թասօն, Շէյքսփիրը, Գորնէյլը, Ռասինը, Լամար-
դինը, Վոլթէսը, Հիւկօն, Ալֆ. տը Վինեին, Ալֆ. տը Միւսէն, Վէր-
լէնը, Պօպէսը, Սամէնը, Անաթօլ Ֆրանսը...

Սեդրակ Սասունի.— Ես ալ կարծեմ կը ճանչնամ սա դիմացի գե-
ղեցիկ օրիորդը, որ կարծեմ արժանի է իմ հետեւիլիզնդ մարդու սի-
րոյս...

Վ. Կախաւեան.— Իպսէնը, Կէօթէն, Շիլլէրը, Հաուսլոմանը,
Զուտերմանը, Շնիցլէրը, Կ'Անունցիօն, Ատա Նեկրին...

Երուանդ Քօչարեան.— Ախր, կա՛ց, է՛... Ես չգիտեմ թէ ե՛րբ է
եղել յաւակնոտութեան ծագումը, բայց զարգացումը հէնց քեզնից ու
մեզնից է...

Վ. Կախաւեան.— Թոլսթօն, Կորբին, Քէն, Չելսովը, Անարէեւը,

Թուրկենէֆը, Պուշկինը, Լերմոնտովը...

Վ. Ս. — Ես կը կարծեմ որ արդար յաւակնութիւնը սկսած է առաւելին թարգմանութենէս...

Հրաչ Զարդարեան. — Լոէ', կը բողոքեմ... Թարգմանիչները իրաւունք չունին յաւակնութիւններ ունենալու... Այդ իրաւունքը մե'րն է, մե'րը...

Վ. Կախաւեան. — Կը ճանչնամ նաեւ Սէրվանթէսը, Մօլլէտը, Կոկօլը, Մարք Թուէյնը, Բուրթըլիիւր, Քլէման Վոթէլը...

Հրանդ Բալուեան. — Յաւակնութիւնը կը սկսի շատ խօսելէն կամ շատ լռելէն...

Վ. Կախաւեան. — Դեռ կը ճանչնամ Մատամ Սէվինեէն, Քարմէն Սիլվան, փրէնսէս տը Նօայլը, Մատամ Ռաշէլը...

Սեդրակ Սասունի. — Եթէ իրաւ է որ այդքան կին կը ճանչնաս, նախանձելի ես ուրեմն, Կաքա'ւ...

Տիկ. Լաս. — Սէրը գրականութիւնից էլ բարձր արուեստ է եւ այդ մարդիկ էդ հաճոյքը չեն ըմբոսնում...

Օհան Կարօ. — Ես համաձայն եմ Ն. ի հետ, համամիտ եմ Կ. ի հետ, համակարծիք եմ Յ. ի հետ, համախոհ եմ Ք. ի հետ ու համարողոք եմ Զ. ի հետ: Չպէտք է մոռանալ որ Ս. էլ իրաւացի է. Վ. ն էլ: Յաւակնութիւն... Դա ի հարկէ մեր արդար սեփականութիւնն է...

Երուանդ Քոչարեան. — Ախր, ի՞նչ ես դուրս տալիս... Ես մերժում եմ քո համախոհութիւնը...

Վ. Կախաւեան. — Մի' ընդմիջէք... Կը ճանչնամ Խայեամը, Ֆիրտուսին, Ջարալին, Հաֆըզը, էլ Մուսարին...

Հրաչ Զարդարեան. — Չճանչցածներուդ անունները տուր որ աւելի շուտ ըմնայ...

Յարութիւն Պուռնազեան. — Խօսք կ'ուղեմ... Չի ճանչնար Շապին Գարահիսարի Ելլիսի ձիերը ու Կ. Պուրոյ ձանիկ աղբարը...

Վ. Կախաւեան. — Կը ճանչնամ... (Յանկա'րծ: Մէ' կը: Կը ցատկէ': Երուանդ Քոչարեանն է: Կը պոռա'յ: Ամէնքը աղէ արձան):

Երուանդ Քոչարեան. — Կացէ'ք: Մի' շարժուէք: Ի սէր Արուեստին մի բոպէ քարացէ'ք: Ոչ ոք չպէտք է շարժուէ: Այսպէս: Հրաչաւի է: Էվրեֆա': Ես գտեւ եմ իմ գլուխ գործոցը: Մի մոռանաք ձեր այս կարգը, ձեւը, միմիկայն: Ես կը ստեղծեմ ձեզանից մի արձանախումբ՝ «Յաւակնոտութեան Սինօլը»: Հիմի կարող էք ցրուել: (Ու կը ցըրուին):

Մէկը. — Ի՞նչ յաւակնոտ է այս մարդը, կը կարծէ թէ իր արուեստը բաւակա'ն է մեզ նման տաղանդները անմահացնելու համար...

«ԾԱՆՐ ԲԵՌ»

Բարեգործականի ընդհ. տնօրէն Տիար Վահան Մալէգեան, իր պաշտօնի ձեռնարկած օրերուն յայտարարեց հանդիսաւորապէս.

— «Ծանր բեռ ուսերուս, կրկին ազգային գործունէութեան մէջ կը մտնեմ»:

Ես այն ժամանակ բան մը չհասկցայ այս յայտարարութենէն:

Քիչ վերջ, սակայն, «ծանր բեռ»ը լուսարանուցաւ: Ու տեսանք որ ատիկա ուրիշ բան չէ, եթէ ոչ տողակ մը, որուն մէջ ամսական 10,000 Փրանք կայ:

Մալէգեան իրաւունք ունէր: Ու ահա քանի մը ամիս է որ լոկի մնջիկ, ամէն ամսագլխու կը տանի այդ «ծանր բեռ»ը:

Ամերիկայի Պայքար Թերթը, սակայն, ազնուօրէն զգածուած Տիար Մալէգեանի ամսական 10 հազար Փրանքի «ծանր բեռ»ը շարկելէն, ելեր է ու այդ գումարը վերածեր է տոլարի: Նախ Մալէգեանի բեռնակրութիւնը թեթեւցնելու եւ երկրորդ՝ ցոյց տալու համար թէ տնօրէնին համար 400 տոլարը մեծ բան մը չէ: Ընդհակառակն ան դեռ կրնայ քանի մը անգամ այդ տեսակ բեռ տանիլ մինչեւ... պանքա:

Հաւանաբար վաղը միւս օր ալ Անգլիայէն ուրիշ սիրտցաւ ազգային մը ելլէ ու «ծանր բեռ»ը աւելի թեթեւցնել ուղէ, 80 սղերլինի վերածելով դայն ու յայտարարելով — Ամօ'թ է որ Բարեգործականի հուժկու տնօրէնը 80 սղերլինի չնչին բեռով մը հեզնուի:

Եւ սակայն, աշխարհ միայն արեւմուտքով կազմուած չէ: Անդին կայ ու կը մնայ հսկայական Արեւելքը: Եթէ յանկարծ վաղը, Յունահայ մը, 10,000 Փրանքը տրախմիի վերածէ՝ Մալէգեանի բեռը կ'ըլլայ 30,000 տրախմի:

Եթէ Պուլկարահայ մը լէվայի վերածէ, կը ստանայ 55,000 լէվա:

Եւ վերջապէս, եթէ Պուրտահայ մը դայն իր երկրի դրամին փոխէ, Մալէգեան կ'ունենայ 72,000 դըշ. բեռ մը, որ իսկապէս ծանրածանր է: Քէմալիստ մը անգամ պիտի կըէր անոր ծանրութեան տակ:

Աս է, ան է, իրականութիւն է սակայն որ Մալէգեան բաւական իրաւունք ունի յայտարարելու.

— «Ծանր բեռ ունիմ ուսերուս»:

Տիկինը հիւանդները սիրելուն համար իր տապանագիրէն ալ կը տեսնուի թէ Մեղոց աւանի մարդոց հետ անհաշտ ապրած է եւ թաղուած է Ակնայ եղ գիւղին մէջ եւ ոչ էջ: Իսհաք Սիւլէյման իր համանուն գրքին մէջ կը գրէ թէ յիշեալ տիկինը իր երեսուն տարուան ծառան ճամբած է հիւանդանալու մեղքը գործած ըլլալուն համար: Ուրեմն անհեթեթ է կարծել թէ հայ բժշկական պատմութիւնը փառաւոր էջ մը շահած է»:

ԿԻՆ ԴՈՒ . . .

Հայ խմբագրապետ մը կիսամսեայ հանդէս մը կը հրատարակէր... ամիսը մէկ անգամ:

Հայ բանաստեղծ մըն ալ իր ոտանաւորները կը տպէր այդ հանդէսին իւրաքանչիւր թիւին մէջ... քանի մը անգամ:

Յախուռն հայ դրող մըն ալ, խմբագրապետին տանը մէջ յիշեալ բանաստեղծը բերանացի կը քննադատէր, ընդամէնը... մէկ անգամ:

Խմբագրապետին կինը անմիջապէս կը փութայ՝ բանաստեղծին կնոջ մօտ.

— Գիտե՞ս, Պ. Խը ի՞նչ կ'ըսէ ամուսնոյդ համար:

— Ի՞նչ...

— Թէ «անիկա բանաստեղծ չէ»:

— Լա՛ւ, դուք ի՞նչ ըսիք:

— Ամուսինս ու ես՝ ջերմապէս հակաճառեցինք:

— Շատ աղէկ: Առաջին անգամ որ տեսնեմ այդ Պ. Խը, անոր մագերը պիտի փեթոտեմ:

— Եւ շատ լաւ կ'ընես: Ահա առիթը: Կիրակի երեկոյ թէյասեղան մը ունինք ի պատիւ մեր աշխատակիցներուն: Սրտագինս հրաւիրուած էք: Պ. Խն ալ ներկայ պիտի ըլլայ:

— Շատ լաւ: Պիտի տեսնուիմ այդ Պ. Խին հետ: Իմ ամուսինս Հայոց ամէնէն մեծ բանաստեղծն է:

Թէյասեղանը կ'աւարտի, առանց միջադէպի: Աշխատակիցները թիչ մը դուրս կ'ելլեն օդ ծծելու: Պ. Խ. խումբին յետամնացն է: Բանաստեղծին տիկինը քայլերը դանդաղեցնելով, կը մօտենայ Պ. Խին.

— Պարո՛ն, դուք ամուսնոյս համար բանաստեղծ չէ, ըսեր էք:

Հիմակ ալ, իմ ներկայութեանս, կրնա՞ք կրկնել ձեր կարծիքը...:

— Տիկին, հիմակ աւելի վճռականօրէն կրնամ ըսել թէ ձեր ամուսինը բացարձակապէս բանաստեղծ չէ...

— Ի՞նչ, ի՞նչ... ի՞նչպէս...

— Այո՛, տիկին, ձեր ամուսինը բանաստեղծ չէ: Դուք ա՛յնքան գեղեցիկ, ա՛յնքան սիրուն, ա՛յնքան հմայիչ կին մըն էք որ, եթէ աւանակ մը ձեր քով կապեն, երեք օրէն բանաստեղծ կը դառնայ: Իսկ ձեր ամուսինը տիւ եւ գիշեր ձեր մօտ ըլլալով, դարձեալ չէ կրցեր բանաստեղծ ըլլալ...

— Ո՛հ, ի՛նչեր կ'ըսէք... Իրա՞ւ այդքան գեղեցիկ եմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՏԵՐԸ ԵՒ ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

Անցեալները Տիկին Զ. Եսայեան կ'երթայ Կարտան (Մարտէլ) բանախօսելու: Այդ աշխատաւորական դաղութին քանի մը կարմիրները իրենց խուռն բացակայութեամբ կը ղիմաւորեն Տիկինը:

Ուրիշ Դաշնակցական մը, ընկեր Մարգար, անելի մատնուած տիկինին կ'առաջարկէ.

— Եթէ ձեր կարմրուկները չեն ուղեր ձեզ լսել, մենք ձեզ կը լրսենք: Հրամայեցէք մեր տունը: Դաշնակցականի մը տունին մէջ շատ աւելի բազմութիւն կարելի է գտնել, քան կարմիրներու երեկոյթին մէջ:

Ու Տիկինը կը մտնէ Մարգարի տունը, ուր կը գտնէ խնջոյք, սեղան, բազմութիւն, ոգեւորութիւն:

Տիկինը սիկարէթը կը վառէ, հատ մըն ալ կը խմէ ու կը սկսի ճառը.

— Հայաստանը առաջուան պէս չէ. բարեփոխուած է: Հոն ամէն օր կը շինեն: Ես կենդանի վկայ եմ: Ի՛նչ սրահներ, ի՛նչ սենեակներ շինեցին, գիշեր ցերեկ խնձի հաճոյք պատճառելու համար: Համով ու տելիքներ ունին: Ինձի շատ բաներ կերցուցին: Հիմակ Հայաստանի ամէն բանը համ ունի: Տուեկերը, ձուկերը անմամն են: Կը լսեմ թէ վերադարձէս ի վեր շատ աւելի բաներ շինած են:

Ու ճառը լրացնելով, կը սկսի սեղանը աւարտել:

Մշեցի մը կը հարցնէ.

— Անուշ բերնիդ մատաղ, Տիկին ջան, հապա ինչո՞ւ մեր Մշեցի աղբրտանք այսքան տարի բանտերու մէջ կը մնան...

— Բա՞նտ... բայց Հայաստանի խորհրդային բանտերը շատ աւելի օդատուն, շատ աւելի գեղեցիկ են քան այս տուները: Հայաստանի բանտարկեալները պարահանդէս ու ներկայացում կը սարքեն: Շատ ազատ ու շատ անկախ են: Ես իրենց այցելեցի: Ինձմէ շատ գոհ մնացին: Օրուան հոգէն գերծ են: Կ'ուտեն, կը խմեն, կը պառկին ու կը քնանան: Դուրսը եղողները չարաչար կ'աշխատին, սենեակի չզոյութենէ ու ապրուստի սղութենէ կը նեղուին: Ամէն ոք այնտեղ երանի կուտայ բանտարկեալներուն: Ինչո՞ւ ապերախ կ'ըլլաք կառավարութեան դէմ, երբ ձեր հայրենակիցները իր մասնաւոր տան մէջ կը պատուարէ ու պահապան զինուորներով կը հսկէ անոնց վրայ, մօր մը պէս:

Տիկինին այս յաւելուածական ճառէն յետոյ Հայաստանցի մը կը գոչէ.

— Տօ', հիմի հասկացայ թէ բանը ի՛նչումն է: Հազար ապրիւս, Զապէլ ջան: Ուրեմն էդ բոլոր լաւ բաներ բանտումն են եւ ոչ թէ դըրսում: Ուրեմն կարմիրներ որ գոփում են Հայաստանը, բանտերի՞ համար են: Ախր, մեզ էլ սարէք ու բանտարկէք: Էստեղ հանքերում աշխատելով մեռանք է՛ր...

Ու բաժակներ կը պարպուին, մաղթելով որ արտասահմանի ամբողջ հայութիւնը մօտաւոր ապագային բանտարկուի Խորհրդային Դրախտին մէջ:

Ներկայ մը քովինին կը հարցնէ.

— Ինչո՞ւ ուրեմն Տիկինը հոն չբանտարկեցին:

— Որպէսզի չըսեն թէ կողմնակցութիւն կ'ընեն ու իրենց կուսակիցներուն կը կերցնեն բանտին հացն ու կերակուրը:

Երկրորդ մը կը պատասխանէ.

— Այդպէս չէ: Որովհետեւ տեղ չէ մնացած բանտերու մէջ: Տիկինին ալ մի՛նակ խեղք բանտարկեր են...

«ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ»

«Ժամանակ», ոճիր – արկածներու Պոլսոյ պաշտօնական օրկանը, վերջերս յաճախ կ'արձանագրէ «զղայացունց» դէպքեր:

Նմոյշ մը.

— «Անցեալ կիրակի, մեծապատիւ Տիար Թորոս էֆէնտի Կակոսեան, Գուրու – Զէշմէի Երեւման Ս. Խաչ եկեղեցին այցելելով եւ զմայլազին ունկնդրելով Մամբրէ վրդ. Սաղաթէլեանի խիստ հոգե-

շուքի քարոզը, Դպրաց Դասու անթերի երգեցողութիւնը, Սահակ քհնյ. Մովսէսեանի հանդիսաւոր պատարագը ու ժամկոչ Մրաս աղբոր «Աղքատախնամի պնակն է, անտես մի' առնէք» լալազին յանկերգը, իր սիրտը խիստ շատ զգածուած է ու ձեռքը գրպանը տանելով, հանած է գրամապանակը եւ օրինակելի բարեսրտութեամբ՝ եկեղեցւոյ բարեգարգութեան համար նուիրած է 50 դահեկան»:

(Որ թարգմանի վեց Փրանք):

«Ժամանակ» աղագուտ թերթը՝ այսօրինակ լուրերուն հարկ եղած վայրը կ'ընծայէ վեց տողնոց սոյնօրինակ վերնագիրներով.

- «Թորոս էֆ. Կակոսեան՝ Գուրու – Զէշմէ»,
- «Մամբրէ վրդ. ի հոգեշունչ փարոզը»,
- «Դպրաց Դասը՝ անթերի»,
- «Սահակ ֆիւյ. պատարագիչ»,
- «Մրաս աղբոր «Անտես մի' առնէք»ը»,
- «Նոր նուիրատուութիւն»:

Եւ այս բոլոր արարողութիւնները, յանուն վեց Փրանքի: Հետաքրքիր է գիտնալ թէ՛ եթէ Թորոս էֆէնտի Կակոսեան, եկեղեցիին նուիրէր Տիար Մալեղեանի ստացած ամսական 10,000 Փրանքին կէսպատիկ դումարը, «Ժամանակ» ի՛նչպէս պիտի յայտարարէր զայն:

Հաւանաբար այդօրինակ պարագայի մը, «Ժամանակ» խեղճ աղագուտ թերթը իր չորս էջերն ալ ամբողջովին վերնագիրներով պիտի լեցնէր, բուն բովանդակութիւնը վերապահելով իր... յաջորդական թիւերուն:

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՍԵՐԸ

Հայ հարուստ մը կը ճանչնամ որ բացառաբար ու բացառիկ ընթերցասէր մըն է: Աւելի ձիւ՞տ՝ հրէշային ընթերցամոլ մըն է:

Ներկայացնեմ:

Հայրենակիցի մը հետ միասին գործ մըն է հիմնած: Ամէն օր Յառաջ մը կը գնէ որուն 25 սանթիմը կը վճարէ իր գործին ընկերը: Միասին կը կարդան: Իրիկունները, խանութը գոցուած պահուն՝ կ'իւրացնէ թերթը ու կ'երթայ տուն: Իր բնակած յարկաբաժնին վրայ կը գտնուի Հայ մը որ բաժանորդ է Ազգաբարի: Յառաջը կուտայ ու կը ստանայ Ազգաբար, պայմանաւ որ Յառաջը իրեն վերադարձուի,

մինչ Ազգաբարձը իր քով կը մնայ : Ազգաբարձը կը զրկէ Եգիպտոս , բարեկամի մը ու փոխարէն կը ստանայ Յուսարիք ու Արեւ : Իսկ Յառաջներուն շարաթուան երեք թիւերը կը զրկէ իր փարիզարճակ մէկ ծանոթին ու կը ստանայ Երեւանի երեք թիւերը : Յառաջի մնացեալ երեք թիւերն ալ կը զրկէ ուրիշի մը ու կը ստանայ անկէ Բուժանք , Նոր Երկիր : Այս բոլոր թերթերը կարգալէ վերջ , վրան աւելցնելով Յուսարեքը եւ Արեւը , ամէնքը մէկ կը զրկէ Նիւ Եորք գանուող իր մէկ ազգականին ու փոխարէնը կը ստանայ Հայրենիք , Ասպարէզ , Պայքար , Նոր Օր , Կռունկ , Կոչնակ : Այս թերթերն ալ կարգալէ վերջ գանոնք կը յանձնէ մէկու մը ու կը ստանայ ամսական 50 Փրանք : Ուրեմն ամսական 13—15 Փրանքով կը կարգայ 15 թերթ ու իր տուած դրամը ստանալէ վերջ զուտ շահ կ'ունենայ 35 Փրանք ու 35,000 դաղափար :

Եւ տակաւին պնդողներ կան թէ հայ մամուլը իր օգտակար դերին մէջ չէ :

ՄԵՐ ՄԵՌՆԵՆԵՐԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ

Սողոմոն Կուլիկեան անուն ծանօթ մը ունի : Աշխարհի մէջ միակ մարդ մըն էր : Կարծես դեռիէն բուսած կամ ծառի մը ճիւղէն ինկած : Ազնիւ մարդ էր , բայց դժբախտ ու մանաւանդ հիւանդ : Անցեալ օր — ձեզի օրեր — մեռեր է : Ահաւասիկ մահազգը .—

«Տիար Յակոբոս Կուլիկեան եւ գաւակունք , Տիար Աբրահամ Կուլիկեան եւ գաւակունք , տէր եւ տիկին Սաղաթէլ Կունտոգեան եւ գաւակունք , Տիար Մատթէոս Թորոսեան , Այրի տիկին Սօֆի Ագապեան (Սթօֆօլմ) , եւ իր գաւակը (Որովայնաֆաղաֆ) , Օր . Զայէլ Ծուլիկեան (Փարիզ) , Տիար Մեսրոպ Թովմասեան (Ատլանտեան Ովկիանոս) , Տ . Աղլադեան (Զանգիսար) , Տիար Ողբունի (Քամչաքֆա) , Տ . Սարենց (Ն . Զելանտա) , Տ . Հովենց (օդանաւ ի հաղադական) , Տ . Մատաթեան (Մանչէսթըր) , Տ . Արիստոմեանց (Կալկաթա) , Տ . Իշխանիսանմեանց (Սահարա) , Տ . Ծովակալ (Լօգան) եւ Քէշիշեան (Լոնտոն) , Գնանեան (Պերլին) , Խորանեան (Վիէննա) , Միւսսեան (Աքէնք) բնտանիքները եւ համայն ազգականք կը ծանուցանեն դառնակակիծ մահը :

ՏԻԱՐ ՍՈՂՈՄՈՆ ԿՈՒԼԻԿԵԱՆ

(Նախկին անդամ Թաղական Խորհրդի եւ կալուածոց հոգաբարձութեան)

Իրենց թոռան , գակին , հօրը , մեծ հօրը , ամուսնոյն , հօրեղբորը , մօ-

րեղբորը , եղբորը , քեռայրին , ազգականին՝ որ տեղի ունեցաւ իր 59 տարեկան ծաղիկ հասակին մէջ , չարչարագին հոգեվարքէ մը վերջ , որ տեւեց 58 տարի :

Յուդարկաւորութեան տխուր արարողութիւնը պիտի կատարուի... Եւն . Եւն . :

Նախ մարդ կ'ապշի կը մնայ թէ ո՞ւրկէ բուսան այս ազգականները :

Երկրորդ՝ Ի՞նչպէս կըցան այդքան հեռուներէն՝ մահը իմանալ ու միասին ծանուցանել :

Տարօրինակ ազգ ենք , ըսելիք չկայ :

Երբ ողջ ենք , ոչ ազգական ունինք , ո՛չ բարեկամ : Անդամ մը որ մեռանք ահա սիրողներ ու լացողներ կը ծնին :

Ամէն ազգ մահով կը պակսի . իսկ մենք մահով կ'աւելնանք :

ՊՈԼՍԱՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԸ

Պոլսահայ թերթերուն չորրորդ էջերը միշտ մեր բժիշկներն են որ գրուած են . . . դրամով : Եւ անխնայաբար ինչպէս ամէն կարգի գրաւորները կ'ըլլան յաւակնոտ ու սանձարձակ : Մեր բժիշկներն էին որ բացառութիւն պիտի կազմէին : Կարգանք անոնցմէ մէկուն ծանուցումը :

ՏՈՒԹ . Մ . Մ . ՄԱՀՈՒՆԻ — Հանրահոջակ մասնագէտ , վկայեալ Փարիզէն , նախկին բժիշկ Սէն — Լուի , Նէֆեր , Սինկեր ու Շաքանթոն հիւանդանոցներու :

Կը ծանուցանէ վսեմաշուք հասարակութեան քէ իր արքայանման , հոյակապ , պալատանման քիւնիքին մէջ կը դարմանէ արանց , կանանց , մանկանց , ծերոց , երիտասարդաց , պատանեկաց բոլոր գաղտնի ու յայտնի հիւանդութիւնները :

Գեռ նոր վերադարձած ըլլալով Փարիզ — Պերլին — Վիէննայէն ուր գացած էր մասնաւոր ուսումնասիրութիւններու համար , իր հետը բերած է բազմաթիւ գործիքներ ու ապագայ մեթոտներ : Մասնագէտ է մասնաւորապէս ֆրանկոստի , ստամոքսի լայնութեան , ամլութեան , շտակերութեան , շտախօսութեան ու յուսահատ անկարողութեան : Այս վերջին հիւանդութիւնը կը բուժէ մոգական հասցով մը որ դիրքական ազդեցութիւն ունի : Կը պարգեւէ առողջութիւն , գեղեցկութիւն , երիտասարդութիւն : Իր պատուոյն վրայ կ'երդնու թուրքերանութիւն

չընել: Հայ լայֆ հիւանդներու համար ի վերին Երուսաղէմի ոնով սեմետակներ կահաւորուած է:

Հիւանդ կ'ընդունի ամէն վայրկեան: Հիւանդները իրար չեն տեսներ: Մէկ դռնէն կ'առնէ միւս դռնէն կը հանէ: Վերջապէս կը պարզելէ յաւիտեանական հանգիստ:

Այս բոլորը լաւ է քիչ մը ծիծաղելու համար: Սակայն իրենց ծանուցումներուն շրջազիծերը այնքան սեւ ու հաստ են որ կը յիշեցնեն մահուան ազդերը:

Եւ իրենց ամբողջ շատախօսութեան մէջ, միակ լուրջ ու անկեղծ մասը այդ սեւ սեւ գիծերն են կարծեմ:

ՆԱԻԱՐԵԱՆ ԵՒ ԻՐ ԳԻՐՔԸ

Երբեմն ուսուցիչ, հերոս կոմիտաս վարդապետի նշանաւոր այցելու եւ քերթող - քարգմանիչ Պ. Ա. Նաւարեան լոյս ընծայած է Ֆրանսերէն հատոր մը, որուն մէջ հայ բանաստեղծներէն հատընտիր կտորներ կը ներկայացնէ, հանդերձ դրախօսութեամբ:

Միտքս դրադատական դրել չէ: Այդ պաշտօնը իր բազում պաշտօնեաներն ունի մեր մէջ:

Ես քանի մը աւետիս միայն պիտի տամ հայ գրասէր հասարակութեան:

Առաջին - Վահան Մալէղեանը հասարակ թուղթ մտտող, չաջողած փաստաբան ու Հ. Բ. Ը. Մ. ընդհ. աիօրէն միայն կը ճանչնան շատեր: Իրականութիւնը այդպէս չէ սակայն: Նաւարեան իր գրքով կը յայտնէ Մալէղեանը իբրեւ բանաստեղծ եւ տաղանդաւոր բանաստեղծ:

Պէտք չէ զարմանալ:

Ամսական 10,000 Ֆրանքը հրաշքներ կրնայ գործել: Կրնայ կապիւղը այլափոխել մարդու: Կրնայ մարդը պայծառակերպել բանաստեղծի: Կրնայ բանաստեղծը յեղափոխել հանճարի: Հիները իրաւունք ունին եղեր դրամին տաղանդ ըսելու: Եւ երբ հին ատեն դրամը տաղանդէր, ի՞նչու հիմակ 10,000 Ֆրանքը հանճար չըլլայ: Ճարպիկ մարդիկ թէ՛ դրամի եւ թէ՛ հանճարի տէր կ'ըլլան միանգամայն եւ ցեղին փառքին նպաստ կուտան իրենց կարողութեամբ: Մալէղեան եւ Նաւարեան իրարու պակաս կը լրացնեն ու երկուքն ալ... կը փայլին:

Մաղթենք որ այդ փայլը մոմի կեանք չունենայ:

Ուրիշ աւետիս մը:

Յովհ. Պողոսեան անուն բանաստեղծ մըն ալ ունինք եղեր:

Շնորհակալութեան պարտք մը կը ծանրանայ իւրաքանչիւր Հայոց վրայ, քանզի Նաւարեան պղտոր ջուրերու վրայ նաւերով մեզի մարդրիտ կը հրամցնէ:

Ամէնէն ուրախառիթ աւետիսը:

Օր. Նաղենի Տ. Միքայէլեան բանաստեղծուհի մըն ալ ունինք եղեր: Ի՞նչ ցնծութիւն, Աստուած իմ: Այս օրիորդը անկեղծ քնարերգու մըն է եւ շատ ինքնատիպ:

Գրքին մէջ անիրաւութիւն մը կայ սակայն. — Որո՞վ իրաւամբ Օր. Նուրիկ Տէր Ղեւոնդեանը ներս չէ առնուած: Օր. Նունիկն ալ Մալէղեանի չափ այլակերպուած է, Յ. Պողոսեանի չափ յայտնուած է եւ Օր. Նաղենի Տ. Միքայէլեանէն աւելի յանդուգն է, քանի որ կը ստորագրէ նոյնիսկ զամբիւղարո՞յր քերթուածներ, հարսնիքէն մինչեւ ողջերթ:

Յամենայն դէպս, Նաւարեան քաջ նաւորդ է: Լաւ գիտէ թէ ո՞ր նաւահանգիստներէն պէտք է ապրանք վերցնել:

ԱՊԱԳԱՅԱՊԱՇՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Հայ դրականութեան վէպերու եւ քերթուածներու շրջանին մէջ կը գտնուինք: Քանի մը ամիս վերջ կը սկսի Տարեցոյցներու սէզօնը: Հայ քերթողներ, ամէն կողմէ — աշխարհի ո՞ր կողմը պակաս է՝ հայ քերթող կամ մեր քերթողներուն ո՞ր կողմը պակաս է բացի գլուխէ ու... դրպանէ — իրարու ետեւէ հատորներ հրատարակ կը նետեն: Փողի համար չի, իսկապէս դադափարի համար: Բարի ալ են: Անպայման մէկ մէկ օրինակ կը դրկեն ինծի՝ գրելով «Առ քաջ գրչեղբայր Ընկեր վագրիկն, որ իր «լացը ծիծաղ է արել», համբոյրով...» Ինծի դըրկուած այս հատորները, սովորութիւն ունիմ կարդալու բարեկամի մը որ հիացող է ապագայապաշտ բանաստեղծութեան: Գրեթէ ոչ մէկ հատորէ համ կ'առնէ: Կ'ախորժի Մարինէթիէն, Քօրրատօ Կովոնիէն, Ճիւղբոյն ու բոլոր ապագայապաշտներէն:

Քանի մը օր առաջ դարձեալ հատոր մը ստացայ: Իրիկունը ինծի եկաւ ապագայապաշտ բարեկամս, որուն ըսի.

— Լաւ որ եկար. սքանչելի հատոր մը ստացած եմ: Քու ճաշակիդ գիրքն է: Տաղանդաւոր ապագայապաշտ բանաստեղծ մը: Անունը

չեմ տար սակայն : Կարդամ մէկ քերթուածը ու մտիկ ըրէ :
Բարեկամս խոտաւ , մազերը խառնեց , սիկառէթ մը վառեց ու ա-
կանջը տնկեց :
Ես կարդացի հետեւեալը .

ՓՈՒՇԻՆ ՎՐԱՅ . . .
(Տաղ առ ուրախութիւն)

Մահը ,
Անոյշ հրիտակ ,
Մեռնող կնոջ մը ետեւէն . . .
Սիրունիս ,
Առաւօտը յոյսիս ,
Խրայնանքն է իրիկուան ,
Իրիկուան հովուերգութիւն . . .
Թափուն արցունքս
Քու այդ մատներով ,
Այս իրիկուն ,
Անճառաւորեամբ սրբէ' . . .
Ճերմակ մագերս ,
Հին սէր , համր ցաւ ,
Խիղճ չունիւն . . .
Օր պիտի գայ ,
Կարօտի կտոր օր
Եւ նրագ , աշուն , ձիւն , օտար աստղեր . . .
Ա՛հ , այն նամբան ,
Փունարնրքի ժայռերուն վրայ ,
Վիտօշ ,
Օվջէ Գուբէլի ջերմուկին մէջ ,
Ի Փավլօփօ ,
Եւ եղանակ մը եղելիններու քնարէն .
— Պէլլա Վօտա . . . »

— Հոյակապ քերթուած է , աղաղակեց բարեկամս ու զիրքը ձեռ-
քէս յափշտակեց :
Ես սենեակէն դուրս սպրդեցայ :
Կարդացածս պարզապէս քերթուածներուն վերնագիրները՝ այս-
ինքն գրքին ՅԱՆԿՆ էր :

ՌԱՄԿԱՎԱՐ ՀԱՆԴԵՍ

Ամերիկայի Ռամկավար թերթերուն մէջ , վերջերս սկսանք հան-
դիպել , սոյնօրինակ հանդէսի նկարագրութեանց .

— «Ռամկ . Ազատական կուսակցութեան տեղւոյս «խումբ» ա-
կումբին հանդիսաւոր հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի , 20 մայիս ,
ժամը շին , Տոլարէյչըն կանանչ սրահին մէջ , ստուար ու հասարակ
բազմութեան մը բացակայութեան , սակայն կլորիկ ու կոկիկ աղա-
յիններու ներկայութեան :

Ընկեր Յովակիմ Յովասափեան ցաւ ի սիրտ յայտնեց թէ օրուան
բանախօսը Տքթ . Չ . Մ . Կակոսեան հեռաձայնած է թէ պիտի չկարե-
նայ ներկայ գտնուիլ հանդէսին : Ընկեր Յովակիմ փաստերով ապա-
ցուցուց թէ հէք օրուան հէ՛ք բանախօսը անպայման առեւանդուած է
Դաշնակցականներէ :

Ներկաները բուն կերպով ծափահարեցին ընկեր Յովակիմը եւ իր
յայտարարութիւնը :

Ընկերուհի Օր . Մըրրի դաշնակի վրայ նուազեց «Դաշնակցութեան
Քայլերգ»ը : Օրիորդը դաշնակցականի մը նշանուած ըլլալով , թոյլ-
տուութիւն է խնդրեր իր նշանածէն ռամկավար հանդէսի մէջ նուազե-
լու համար : Անիծեալ իշանածն ալ պայման է դրեր որ նուազէ միայն
«Դաշնակցութեան Քայլերգ»ը : Օր . Մըրրի շուրջ մըրիկ մը բարձրա-
ցաւ : Օրիորդը սակայն մըրիկահաւի նման մըրիկէն դուրս ելաւ :

Օր . Իդապէլ պարեց դրօշապար մը : Ներկաները իրենց արդար
զայրոյթը յայտնեցին երբ տեսան որ օրիորդին ձեռքի դրօշակը դաշ-
նակցականներուն եռագոյնն է : Քաջ ընկեր մը , Պ . Մեսրոպեան բեմ
ցատկելով օրիորդին ընծայեց կարմիր դրօշակ մը : Օրիորդը սկսաւ
պարել , բուն ծափերու մէջ : Քիչ վերջ սակայն դրօշը նետեց գետին
ու վրան կոխեց : Խորհրդային Հայաստանէն վերադարձած ընկ . Մար-
ուս բողոքեց : Օրիորդը պատասխանեց թէ պարին պահանջն է այդ :
Խնդիրը անուշի կապուեցաւ : Ընկ . Յովասափեան ջախջախիչ փաստե-
րով ապացուցուց թէ դաշնակցականի մատ կայ գործին մէջ :

Յետոյ քէյք պիտի բաժնուէր ներկաներուն : Քէյքերը , սակայն ,
թթուեր էին : Ընկ . Յովասափեան համեղ ապացոյցներով հաստատեց
թէ դաշնակցական մը թթուեցուցեր է զանոնք :

Ներկաները տուն վերադարձան . . . ռամկավար տպաւորութեամբ :

ԱԼՊՕՄ

Հայրենի մը կը ճանչնամ Պոլսէն :

Սոսկալի դարհուրելի ու դիւային գրասէր մը, քնարասէր մը ու գեղարուեստասէր մըն է : Տարիներ առաջ հաստ ու շքեղ դարդատետր մը գնած է իբրեւ ալյօմ ու կը դիմէ մինչեւ հիմա՝ դերասաններու, երգիչներու, երաժիշտներու, արձանագործներու, բժիշկներու, փաստաբաններու, գրողներու, բանաստեղծներու, յեղափոխակախներու եւ վարդապետ - եպիսկոպոսներու, որպէսզի բան մը գրեն, դժեն կամ մրոտեն վերջապէս : Պոլսէն սկսեալ, ճիշտ եօթը տարի է, ետեւէս ինկած է, որպէսզի բան մըն ալ ես գրեմ իր հարուստ ալյօմին մէջ : Առանց մերժելու, միշտ յետաձգած եմ, ի՞նչ մեղքս պահեմ, որպէսզի միշտ վայելեմ իր շնորհալի մօտիկութիւնը, միշտ տեսնեմ իր տանջանքը, միշտ լսեմ իր լալաղին աղաչանքը :

Օր մը, Պոլսոյ մէջ, եկաւ գտաւ զիս ու ըսաւ խանդավառօրէն :

- Գիտե՞ս, դերասան Սեւոմեանը մեռա՞ւ...
- Այո՛, գիտեմ, մե՛ղք եղաւ, շա՛տ մեղք... մեր մտաւորական դերասանն էր... մայրենի բեմը գեղեցիկ սիւնէ մը գրկուեցաւ...
- Երբ հեռացաւ, տարօրինակ գտայ իր խանդավառութիւնը :
- Տարիներ վերջ երբ Իտալիայէն Փարիզ հասայ՝ անմիջապէս եկաւ գտաւ զիս ու ըսաւ, ժպտելով.
- Նկարիչ Քիւրքճեանը մեռա՞ւ...
- Ա՛խ, այո՛... Շատ սիրած էի իր հոգիին ու իր կտաններուն օջախները...

Չարմանալի գտայ իր ժպիտները :

Բաւական ամիսներ առաջ նորէն եկաւ գտաւ զիս ու պարելով ցատկելով ըսաւ.

- Մըմբեանն ալ մեռեր է...
- Այո՛, եւ շատ յուզուած եմ...
- Երբ հեռացաւ՝ անմեկնելի գտայ իր աշխոյժը, գոյժ մը հաղորդելու առթիւ...
- Քանի մը ամիսներ առաջ, օր մը ճամբան դիմացս ելաւ ու առանց բարեւ տալու, ըսաւ երջանկօրէն.
- Գիտե՞ս, չէ՞, Երուանդ Օտեանը Նոյ Նահապետին քով է գացեր, անխարդախ օղի խմելու համար...
- Իր խօսքերն ու ըսելու ձեւը դարմացուցիչ ու դայրացուցիչ էին :

Ու խորհեցայ միամտօրէն .

— Կ'երեւի թէ այս աղջկան յուզուելու ձեւը այսպէս է... Արուեստագէտները կ'ըլլան տարօրէն, այս աղջիկն ալ անոնց քուսակով քուսակով եղեր է... ապագայապաշտ զգացողութեան տէր :

Գեռ քանի մը շաբաթ առաջ հիւանդ պառկած էի : Միակ այցելուն զոր ունեցայ այս գրասէր - գեղարուեստասէր օրինորդն էր իր... ալյօմով : Ձեւ բանի որպիսութեան, առողջութեան ու մխիթարութեան քանի մը թափթփուք խօսքերէ վերջ՝ պաղատազին սկսաւ աղաչել որպէսզի բան մը գրեմ իր ալյօմին մէջ :

Ըսի .

- Կը գրեմ սակայն մէկ պայմանով :
- Լա՛ւ :
- Պէտք է ըսես ինձի թէ ի՞նչու կ'ուրախանաս, կը ժպտիս, կը խանդավառուիս, կ'երջանկանաս վերջապէս՝ ամէն անգամ որ մտաւորական մը կամ արուեստագէտ մը կը մեռնի :
- Պահ մը լռելէ վերջ, երեսոս նայեցաւ ու ըսաւ .
- Եթէ ըսեմ՝ չես գրեր ալյօմիս մէջ :
- Պատուոյ խօսք որ կը գրեմ :
- Լա՛ւ ուրեմն : Մտիկ ըրէ՛ : Կը պաշտեմ ալյօմս : Ասիկա իմ վիճս է : Ես ալյօմի Ֆէթիշական մըն եմ : Կ'ուզեմ որ ալյօմս նշանաւոր մարդոց գրութիւններով լեցուի, պայմանաւ որ այդ նշանաւոր մարդիկը ալյօմիս մէջ գրելէ վերջ... մեռնին, որպէսզի իրենց գրութիւնը, ձեռագիրը եւ ստորագրութիւնը աւելի արժէք ստանայ, ալյօմիս թանկագին թանգարանի մը վերածելով : Եւ զարմանալի բան է, ո՛վ որ ալյօմիս մէջ գրէ՝ շատ չապրիր : Մինակ Մըմբեանն ու Օտեանը շատ զիմացան : Բացառաբար սա վերջին ամիսներն է որ գործս ձախորդ երթալ սկսած է : Մարդ մեռած չունի : Չկարծես սակայն թէ քու մահը ալ կ'ուզեմ, չէ՛ :

Ու գրիչը ձեռք առի աղաղակելով .

- Պատուոյս համար թող մեռնիմ...
- Ու գրեցի, հետեւեալը, Ալյօմին առաջին էջին վրայ, որ կարծեմ կաթողիկոսին յատկացուած ըլլալու էր .
- «Գրո՛ղ, Գկարիչ, Երգի՛չ, արձանագործ, դերասա՛ն,
- Մի՛ մի՛ գրէ՛ք, մի՛ մի՛ գծէ՛ք Երբեք այս ալյօմին մէջ : Մահացուցիչ տեսարակ մըն է այս : Գրողը իր ձեռքը տնկելէ վերջ իր ոտքն ալ կը

տնկէ: Փաստեր շատ կան: Թող ես ձեզի համար նահատակուիմ:

Այս առթիւ, ձեզի ուրիշ բան մըն ալ ըսե՞մ: Ոչ միայն այս Ալպո-մին, այլ մեր իրականութեան մէջ ալ մի՛ գծէ՛ք, գրէ՛ք, մի խաղաք, եր-գէ՛ք՝ եթէ կ'ուզէ՛ք... ապրիլ:

«ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

Քանի մը շարժւած առաջ բացումը կատարուեցաւ, Բարեգործա-կանի շէնքին մէջ Ազգ. Մատենադարանին:

Մատենադարանի բացումէն մէկ օր վերջ Տոքթ. Վ. Թորգոմեան սրահէն ներս մտնել ուզած է հին հայ ազգօգուտ բժիշկներու վրայ իր կատարելիք մէկ ուսումնասիրութեան համար կարգ մը գրքեր թղթա-տելու մտքով: Արամ Անտոնեան անոր ըսած է, թէ կարելի չէ առանց արտօնազրի ներս մտնել: Պատուիրած է որ պրն. Հէքիմեանէն արտօ-նազիր մը ստանայ: Պրն. Հէքիմեան ալ յայտնած է, որ արտօնազիրը պէտք է Մալէզեանէն ստորագրուի: Մալէզեանն ալ երկու օր վերջ Պելճիքայէն գալով յայտնած է, որ արտօնազիրը Նորատունկեանէն պէտք է կնքուի: Շարժ մը վերջ Նորատունկեան ըսած է որ Տոքթ. Թորգոմեանի ուսումնասիրութեան լրջութիւնը պէտք է քննուի: Պրն. Բասմաշեան խնդիրը քննելով նպաստաւոր կամ աննպաստ վճիռ մը չէ կրցած արձակել: Գործը յղուած է Մարկոս Նաթանեանին, որ այդ հարցը իր իրաւասութեանէն վեր գտած է: Եղելութիւնը պատմուած է Պօղոս Նուպար փաշային, որ այս մասին յանձնախումբ մը կազմել հրամայած է: Շարժ մը վերջը կազմուած է յանձնախումբ մը Լեւոն Բաշալեանէ, Արշակ Չօպանեանէ, Տրգրան Կամսարականէ, պրոֆ. Ա-զոնցէ եւ իրաւաբան Պապաշանեանէ բաղկացող:

Հիմակ այս յանձնախումբին վճիռին կը սպասուի Տոքթ. Թորգոմե-անը մատենադարանէն ներս առնելու համար:

Լուր ելաւ, որ յանձնախումբը երկար վիճարանութիւններէ վերջ որոշում տուած է որ Տոքթ. Թորգոմեանը կրնայ իր կատարելիք ու-սումնասիրութեան համար մտնել մատենադարան:

Վերջապէս, արտօնազիրը կը պատրաստեն ու ցրուելի մը ձեռքով կը զրկեն Տոքթ. Թորգոմեանի տունը: Ու ահա թէ տունէն ի՛նչ կը պա-պասխանեն:

— Տոքթորը յուսահատած ելաւ գնաց Վիէննա՝ Մխիթարեաննե-րուն մատենադարանը: Շարժութեան մը մէջ իր ուսումնասիրութիւնը կատարեց: Այսօր հեռագիրը առինք, վաղը առաւօտ կը հասնի ու ա՛լ ձեզի պէտք չունի:

ՔԵՐԹՈՒԱԾ

Ո՞վ է մտածած կամ ո՞վ է հաշուած թէ քանի՞ բանաստեղծ ու-նինք:

Ես կը կարծէի թէ առառաւելն երեք հարիւր բանաստեղծ ունինք: Բարեկամ մը կը պնդէր թէ եօթն անգամ աւելի ունինք ոտանաւոր գրող երանելիներ: Մերժեցի: Գրաւի եկանք: Ու մեր գրաւէն ամիս մը վերջ, այսինքն քանի մը շարժ առաջ, բարեկամս ինքզինքը ու գրպանէն հանեց տետրակ մը, որուն մէջ 2600 անուններ ու կեղծանուններ կային, ամէնքն ալ բանաստեղծ, Աստուած իմ, ա-մէ՛նքն ալ: Սարսափեցայ, քանզի... կորսնցուցած էի գրաւը: Բա-րեկամս աւելցուց:

— Ասոնք տակաւին իրենց քերթուածները լոյս ընծայած ծանօթ քերթողներ են: Անդին կայ տակաւին անտիպ բանաստեղծներու հսկա-յական փաղանգը, որ խմբագրապետի մը հրամանին կը սպասէ յար-ձակելու համար մուսային վրայ եւ մտնելու համար մամուլի տակ:

— Թող ուրեմն ամէնքն ալ մտնեն մամուլի տակ ու ճգմուին, ըսի սրտմտութեամբ:

Վայրկեան մըն էր այս սակայն. յետոյ խորհեցայ եւ ցնծացի:

Բանաստեղծ ազգ մըն ենք, անվիճելիօրէն:

Դժբախտութիւնը այնտեղ է սակայն, որ բանաստեղծ ազգ մըն ենք միայն ու չենք միանգամայն ընթերցող ազգ:

Ա՛հ, եթէ մեր լեզուն միջազգային լեզու ըլլար, ա՛հ...: Այն Ժա-մանակ ազգովին կը բանաստեղծէինք, ունկընդիր եւ ընթերցող ունե-նալով համայն մարդկութիւնը:

Երբ մանաւանդ այդ համերգին վարիչ — տնօրէնութիւնը յանձ-նուէր մէկ մէքթ բանաստեղծ Վահան Մալէզեանին: Նուազախումբին նուէր կը յանձնէինք Հրանդ Նազարեանցին, սաղը՝ իր մենաշնորհեալ փողը կը յանձնէինք Հրանդ Նազարեանցին, սաղը՝ իր մենաշնորհեալ Լեւոն Խաճանեանին, թմբուկն ալ կուտայինք... Ենովք Արմէնին:

Ա՛հ, եթէ մեր լեզուն միջազգային լեզու ըլլար, ա՛հ...:

Գոնէ մեր ազգին ազգ մըն ալ իբրեւ ընթերցող պէտք էր: Եթէ

ժամանակին քիւրտերուն հայերէն սորվեցնէինք, հիմակ մեր համալ-
գային նուազախումբը պիտի ունենար ունկընդիր-ընթերցող հասարա-
կութիւն մը, բաղկացած Զարօ աղաներէ, Սայիտ պէկերէ եւ Խէչդա-
րէններէ :

Պետրոնիոս Հոռովի աստուածներուն առատութեան ակնարկե-
լով կ'ըսէ եղեր .

— Այս քաղաքին մէջ աւելի աստուած կայ քան թէ մարդ :

Մենք ալ կրնանք ըսել հետեւողութեամբ .

— Մեր ազգին մէջ աւելի բանաստեղծ կայ քան թէ . . . մարդ :

Չկարծենք սակայն թէ բանաստեղծները տմարդի են եւ կամ գեր-
մարդ են : Աւելի ուղիղ պիտի ըլլայ ըսել .

— Մեր ազգին մէջ աւելի բանաստեղծ կայ քան թէ ընթերցող :

Դարման մը այս աննախանձելի երջանկութեան :

Ուրիշ ճար չկայ : Ազգը ջանանք բաժնել երկուքի : Ջանանք կ'ըսեմ,
քանզի այս ազգը շատ աւելի դիւրին է բաժնել տասը կոտորի քան եր-
կու մասի վերածել : Մէկ մասը թող ամբողջ տարի մը երգէ , միւս
մասն ալ թող ամբողջ տարի մը ունկընդրէ : Եւ փոխադարձաբար : Խիստ
շատ տաղանդաւորները , որոնք չեն կրնար զսպել իրենց ներշնչումներն
ու արտաշնչումները՝ հոգ չէ , թող բացառութիւն ըլլան եւ ամէն տարի
երգեն՝ ինչպէս մեր մէկ մէքը Մալէղեանը եւ անչափելի ու անդասելի
բանաստեղծուհի օր . Նունիկ Տ . Ղեւոնդեանը :

Առաջարկս ընդունուելէ եւ իրագործուելէ վերջ, կը խնդրեմ որ
ինծի յանձնուի, ի պատիւ գիւտիս լոկ ինծի վերապահուի եւ մենա-
շնորհուի մեր բանաստեղծներուն հատընտիր քերթուածներէն դիրք մը
կազմելու վերջերս ստեղծուած թանկագին պաշտօնը, որուն ներկայի
վարիչ — նաւապետն է պրն . Նաւարեան : Այս խնդրանքս մասնաւորա-
պէս Բարեգործականի ամենաբարձր ուշադրութեան կը յանդգնիմ
յանձնել : Թող Միութիւնը վստահ ըլլայ որ պաշտօնս 10,000 խղճմը-
տութեամբ եւ 10,000 Փրանք արժէք ունեցող ճաշակով պիտի կատա-
րեմ :

Ճաշակիս մասին ջախջախիչ ապացոյց մը տուած ըլլալու համար
ըսեմ թէ գրքիս մէջ պիտի հիւրընկալեմ Վահան Մալէղեանի բոլոր
«Անցած Օրեր»ը եւ բոլոր գալոց օրերը ոսկերէր :

Ու դեռ աւելին , հրաշալի'ն :

Կը խոստանամ նոյնիսկ անփոփոխութիւն հաստատել ու վաւերա-
ցնել թէ Հ . Բարեգործականը ինքնին մեր ամէնէն հոյակապ քեր-
թուածն է : Երգ երգոց : Գլուխ գործոց : Հրաշալի երկասիրութիւն :

Եւ ի՞նչ քերթուած , ո՛վ Աստուած : Քերթուած մըն է Բարեգոր-
ծականը, որուն «յանգ»երը հանրի մը չափ հարուստ են : Բան մը որ
վիճարանութիւն չի վերցնէր :

Բարեգործական քերթուածին «հատած»ներն ալ հարուստ են :
Փոխանակ սովորական քերթուածներուն նման չորս , չորս , չորս , եւ
կամ չորս , չորս , երեք , եւ կամ հինգ , եւ կամ չորս , երեք , չորս , ե-
րեք , օ՛ , Բարեգործական քերթուածին «հատած»ներն են երեք հա-
ղար , երեք հաղար , կամ հինգ հաղար , հինգ հաղար եւ կամ . . . տասը
հաղար , տասը հաղար : Աննախընթաց «հատած» մըն է այս , որ ոչ մէկ
ազգի գրականութեան եւ նոյնիսկ գրականութեան մէջ չէ՛ տեսնուած :

Բարեգործական քերթուածին «տուն»երն ալ արարք ըման ու պա-
լատ են : Քերթուածին բարձրութիւնը իշխանական է : Քերթուածին
միջակէտները անգլիական հնչուն ոսկի ու վերջակէտերը հինգը մէկ-
նոց ոսկի են :

Քերթուածին ամբողջ արժէքը, բանագողութենէ գերծ պահելու
համար , Անգլիոյ գրամատթուղթերու մատենագարանը դրուած է , այ-
սինքն պանքան Բըրլաք եղած է :

Քերթուածը ունի միմիայն մէկ պակասութիւն : Նիւթը միօրինակ
է . ազգային բարերարութիւն , ազգիս բարերարութիւն :

Բարեբախտաբար վերջերս Վահան Մալէղեան բաւական լայնօրէն
փոփոխութեան ենթարկեց Բարեգործական քերթուածին նիւթը՝ ազ-
գիս բարերարութիւնը եւ զայն ըրաւ «անձիս բարերարութիւն , քակիս
բարերարութիւն , միշտ բարերարութիւն , ամէն ամսադրուիս բարերա-
րութիւն . . . » :

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Երամ Արամեան ծնած է Մարզուան , գացած է Պարսկաստան , ան-
ցած է Եւրոպա : Ու հայ ընթերցող հասարակութեան ներկայացուցած
է իր Պարսկաստանի մէջ գտած հայկական գոհարները : Այդ գոհար-
ները ուրիշ բան չեն , եթէ ոչ «պարսկահայ աշուղներու երգերը» :

Խաւարէ ու կորուստէ փրկած է հետեւեալ պարսկահայ աշուղ-
ները .— Աշուղ Պախիթար Ասատուր , Աշուղ Խաչատուր Սուլթան , Ա-
շուղ Սէրվի Խուսրէվ , Աշուղ Շահպէնտէր Սէրգիս Աճէմի Գարբիէլ :

Ու այդ աշուղներու գործերէն հատուածներ հրատարակութեան
տուած է , զանազան թերթերու մէջ , հանդերձ ուսումնասիրութեամբ :

Աչուզ Պախթիար Ասատուրի համար գրած է.—

«Նա երգում էր Ասատուրի զօրութիւնը, Քրիստոսի հրաշագործութիւնները եւ սուրբերի գովքն էր անում: Նա դաւանում էր խաչը իբրեւ մարդկային փրկութեան խարխիւ: Նա մի միտարկական աշուղ էր: Նրա գործերը, մեծ մասամբ, աւաճ, կորսուած, կարելի է համեմատել Նարեկացու գործի հետ: Նա երգում էր սրբութեամբ ու շքանորհով: Նա իսկական երգիչ էր»:

Աչուզ Պաշատուր Սուլթանի մասին ալ հետեւեալ տողերն է գրած Երամ Արամեանը, միշտ ուսաստաններէն.—

«Նա ազգի, հայրենիքի երգիչն էր: Նրա երգերում չկային ժամ, մոմ ու խոռնկ: Նա երգում էր հայոց հին փառքերը, նոր օրերի տառապանքը եւ ապագայի յոյսը: Նա ժողովրդի հարազատ թարգմանն էր: Նա էր իսկական աշուղը»:

Աչուզ Սէրվի Սուսրէվի մասին ալ հետեւեալ տողերն է գրած մեր բանահաւաքը.—

«Նրա երգերում կարելի է հանդիպել ե՛ւ կրօնական զգացմունքներին ե՛ւ ազգային ոգու ե՛ւ համամարդկային ճշտութիւններին: Նրա հոգին եղել է բազմադոյն: Եւ նա է իսկական աշուղը, որ ունեցել է բազմաթիւ ապրումներ»:

Երամ Արամեան ի վերջոյ մեղի կը ներկայացնէ Շահպէտէր Սէրգիս Աճէմի Գարրիէլ աշուղը, որ կատարեալ խենթի մեծ հոչակ կը վայելէ եղեր: Ու իր գովասանքներուն ամբողջ մթերքը կը հոսեցնէ այս աշուղին վրայ: Կուտայ նաեւ այդ աշուղին գործերէն օրինակներ: Մանաւանդ անոր մէկ տաղը որ ահաւասիկ.

ԳԻԺԻ ԲԱՆԸ

Թագաւորին չեմ նանաչում,
Նրա առջ չեմ աղաչում,
Ինձ ասում են՝ Գիծ Գաբրիէլ,
Ես Աստուծուց չեմ ամաչում...

Ձեմ ընդունի օրէնք, իշխան,
Բոլոր գրքեր ոտի կոխան,
Ինձ ասում են՝ Գիծ Գաբրիէլ,
Կը հանեմ Շահն ի կախաղան:

Մարդիկ բոլոր ինձ չեն յարգում,
Ու ծեր կանայք ինձ չեն կարգում,

Ինձ ասում են՝ Գիծ Գաբրիէլ,
Գլխիս օյին են միշտ սարքում:

Կը գայ մի օր հրակարմիր,
Կը տապալուեն խալիֆ, էմիր,
Ինձ ասում են՝ Գիծ Գաբրիէլ,
Էս հին աշխարհն կ'անեմ քամիր:

Ու կը քանդեմ ամէն տանիք,
Ձեմ նանաչում ես ընտանիք,
Ինձ ասում են՝ Գիծ Գաբրիէլ,
Ձունեմ կըրօն ու հայրենիք:

Մի ջարդ կը տամ բոլոր մարդկանց,
Իբրեւ պըռաս ու իբրեւ տանձ,
Ինձ ասում են՝ Գիծ Գաբրիէլ,
Կը քալանեմ ամէն մի գանձ:

Անդարման եմ ու եամա՛ն եմ,
Ես ուտան եմ ու խըմա՛ն եմ,
Ինձ ասում են՝ Գիծ Գաբրիէլ,
Հին կարգերի գերեզման եմ...

Սպաննել եմ եօքը իկիտ,
Կողբոսել եմ տաք գապիտ,
Ինձ ասում են քանիք Գաբրիէլ,
Ջարդելու եմ մարդկանց եգիտ...

Էս աշխարհը հնացել ա,
Մարդը իսկի քնացել ա,
Գիծ Գաբրիէլը մնացել ա,
Նա էլ խելիքից գնացել ա:

Ու Երամ Արամեան բերանը կը բանայ.—
«Ահաւասիկ, ահաւասիկ մի իսկական երգիչ, մի իսկական պօէմա: Բողեւիկեան մի մարդարէական նախերգանք: Տարերային ըմբոստութեան մի մուրճէ աղաղակ հին կարգերի անհասարութեան դէմ: Բողոքի, ցաւի ու զայրոյթի մի հսկայական հրաբուխ, մի անսպասե-

լի լոյսի ժայթքում էր խաւար վայրում, էդ խաւար ժամին: Հեզ- նանքի ու կատաղութեան մի արդար ու սասանեցուցիչ կանչ է Գիտ Գարբիէլի գլուխ գործոցը: Անկեղծութեան մի գետ է որ վաղում է նրա տաղի իւրաքանչիւր տան մէջ: Այդ գետը փոխում է ջրիէ՛ծի ու ծովահնում եւ ալեկոծւում... Գիտ Գարբիէլը նախալէնինեան շրջանի ամենամեծ երգիչն է, խկական երգիչը»:

Ահաւասիկ հակիրճ կերպով ներկայացուցի Արամեան Երամի բա- նահաւաքի գործը:

Գրագէտ բարեկամ մը սակայն հաստատապէս կը պնդէր անցեալ օր ու կ'ըսէր.

— Երամ Արամեան բանահաւաք մը չէ...

— Հապա ի՞նչ է, ըսինք:

— Հեղինակ մըն է:

— Բայց ո՞ւր են իր հեղինակութիւնները:

— Իր գոած աշուղները ան հանած է ոչ թէ Պարսկաստանէն, այլ իր խելագատակին մէջէն:

Բանահաւաք կամ հեղինակ՝ հարկ է խոտտովանիլ, որ Երամ Ա- րամեան կարեւոր դեր մը կատարելու վրայ է մեզի համար կամ որ նոյնն է... ինքզինքին համար:

Արամեան Երամ երեք տարի առաջ Հայաստան հրաւիրուեցաւ նախալէնինեան շրջանէն նոր աշուղներ երեւան հանելու համար:

«ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՄԻՒՍԻՈՆՆԵՐ»

Ներսէս Վարժապետեան Պատրիարք օր մը կը հարցնէ Մինաս Չե- րազի.

— Հրաժարականն տուի եւ եթէ ընդունուի միտք ունիմ Եւրոպա երթալ, մասամբ դարմանելու համար շաքարախոտ, այլ մանաւանդ ազգային դատին նուիրուելու համար: Կը հաւատա՞ս որ կարենամ օգ- տակար ըլլալ...

— Սրբազան Հայր, երբ անլեզու Խրիմեան Սրբազանը կրցաւ Եւ- րոպայի մէջ համակրանք շահիլ՝ Դուք Ձեր քաջավարժ Փրանսերէնովն ու գիււանազխտական լեզուովը կրնաք շատ մեծ ազդեցութիւն գոր- ծել:

Ներսէս Պատրիարք կ'ըսէ.

— Մինասիկ, եթէ Եւրոպա երթամ քեզ ինձի հետ պիտի տանիմ

իրբեւ քարտուղար: Ո՞րքան դրամով կրնանք համեստօրէն ապրիլ Եւ- րոպայի մէջ:

Եւ Մինաս Չերազ կը ներկայացնէ վերիվերոյ մի հաշիւ: Ներսէս կ'ըսէ.

— Եթէ ատ է՝ մեծ բան մը չէ: Ես այս նպատակով քիչ մը դրամ պահած եմ էստեան եղբայրներուն քով: Մեր երկուքին ալ կը բաւէ եւ բեռ չենք ըլլար ժողովուրդին՝ որուն չուանովը հօր չիջնուիր:

* * *

Ներսէս Վարժապետեանի կենսագրութեան մէջ կարգացի այս տե- սակցութիւնը եւ յիշողութեամբ դրի առի: Կարգացած օրս սակայն թեւս դրքին վրայ դրի ու ցուցամաստ ալ ճակտիս վրայ դնելով սկսայ խոկալ, աչքերս երկինք յառած:

Ներսէս Պատրիարքը վախցեր է ժողովուրդին չուանով հօրը իջ- նել: Այդ օրերուն, երբ ժողովուրդը այնքան միամիտ էր, Պատրիարքը մը՝ ժողովուրդին չուանով հօր իջնելու համար զգացած վախը մէկ քանով կարելի է մեկնել. անճարակութիւնն է այդ բանը: Ներսէս Պատրիարք հակառակ գեղեցիկ, սիրուած, հօր, ուսեալ անձ մը ըլ- լալուն՝ չունի եղբր ճարտիկութիւն:

Բարեբախտաբար, սակայն, մեր օրերու եկեղեցականներն ու շատ մը աշխարհականները ոչ միայն ժողովուրդին չուանով ժողովուրդը հօրը կ'ելլեն, այլ նամանաւանդ ժողովուրդին չուանով ժողովուրդը հօրը կ'իջեցնեն ու վրայէն ալ հօրին կափարիչը կը գոցեն: Ու տակաւին ժողովուրդին չուանով ժողովուրդը կապողներ ալ պակաս չեն:

Ի՞նչ յառաջեիմութիւն եւ ի՞նչ ճարտարութիւն անբաղդատելի: Ժողովուրդին չուանով գեւ ի՞նչ հրաշալի խաղեր կը խաղան. — Աչք- կապուկ, կախօրրան, չուանախաղ:

* * *

Օր մը, Եղիա, Չուիցերիայում՝ Լէմանի ափին, կ'ըսէ Մինաս Չե- րազի.

— Յանուն մեր վաղեմի բարեկամութեան, զոհողութիւն մը պի- տի խնդրեմ քեռէ: Զէ չըսես:

— Ի՞նչ է նայինք ըսելիքդ, — կը հարցնէ Չերազ:

Եղիա կը շարունակէ. —

— Չերազ իմ Մինաս, ո՞հ հոյակապ օր մըն է այսօր: Ահա Լէմա՛- նը, որ շրջապատուած կանաչ դաշտերէ՝ կը խայտայ լուսակարկաչ՝ արեւին տակ: Քանի որ կենանք չժպտեցաւ մեր երկուքին ալ, մտնենք

Ու կարողալէ վերջ ինծի պէս ըրէք: Դրէք ձեր թեւը գրքին վրայ, դրէք նաեւ ձեր ցուցամատը ձեր ճակատին վրայ, նայեցէ՛ք երկինք եւ շուտով մէկը ղրկեցէ՛ք, որպէսզի լուսանկարիչ մը կանչելով ձեր սպտակերը քաշէ:

« ՀԱՅԿԱԿԱՆ ԷՄԲԵՐԻՒԱԼԻԶՄ »

Կարմիրները բոլորովին իրաւունք ունին «Հայկական էմբերիալիզմ» անունը խօսք մը փակցնելու մեր ազգին ճակատին:

Անկասկած, Հայկական կայսերապաշտութիւն մը գոյութիւն ունի որ օրըստօրէ եւս առաւել կ'աշխարհակալէ: Նուաճուած երկիրներուն մէջ կան արդէն Յունաստաններ, Ֆրանսաներ, Պուլկարիաներ, Իտալիաներ, Ռուսիաներ, Պելճիքաներ եւ Միացեալ Նահանգներ:

Հայկական աշխարհակալութիւնը իր գրաւած հողերուն վրայ կը կանգնէ նոր Մասիաներ, Արազածներ, Նպատներ ու Գրգուռներ, կը վազցնէ նոր Եփրատներ, Տիգրիսներ, Արաքսներ, Ախուրեաններ, կը կերտէ նոր Անիներ, Կարիններ, Երեւաններ, կը ծաղկեցնէ նոր Տարօններ, Վասպուրականներ, Շիրակներ, բարձր ու փոքր հայքեր եւ կը բուսցնէ նոր Արտամէտի խնձորներ, նոր Սարբերդի տանձեր ու նոր Պայազիտի... դդումներ:

Եւ հետզհետէ կ'ընդարձակուին Հայաստանի սահմանները: Օրը մօտ է երբ պիտի ունենանք հայրենիք մը մեծատարած ու անսահման:

Ռմանք կ'առարկեն թէ «Սորհրդային Հայաստան»ն է մեր հայրենիքը եւ, աւա՛ղ, այնքան փոքր է, այնքան անբաւական: Այդ մարդիկը տակաւին չեն դիտեր թէ «Սորհրդային Հայաստան»ը մեր հայրենիքին մայրաքաղաքն է լոկ եւ իբր մայրաքաղաք աշխարհի ամենէն ընդարձակն է:

— Եթէ «Սորհրդային Հայաստան»ը մեր հայրենիքին մայրաքաղաքն է՝ Երեւանը ի՞նչ է հապա, — կը հարցնեն:

Ու չեն դիտեր թէ Երեւան ըսուածը մեր մայրաքաղաքին մէկ դըլ-խաւոր թաղն է միայն:

Այս բոլորը Փրանսացի մը մենէ լաւ գիտէ: Անցեալները իմ ներկայութեանս սպանիացի մը երբ կը հարցնէր իր Փրանսացի բարեկամին թէ ո՞ւր է Հայաստանը եւ ո՞րոնք են իր սահմանները. Փրանսացի բարեկամս իմ բերանս փորձելով ըսաւ.

— Հայաստանը հոս է, հոն է, ամէն տեղ է: Հայաստանի սահ-

մանները վերջին հինգ — վեց տարիներու ընթացքին շատ ընդարձակուած են: Արեւելքէն Չինաստան, հիւսիսային արեւելքէն Սինկաբուր եւ Ճափա: Արեւմուտքէն Խաղաղական Ովկիանոս, հիւսիսային արեւմուտքէն Պէհլինկայի նեղուց, հարաւային արեւմուտքէն Հրոյ երկիր եւ Բաթակոնիա: Հիւսիսէն Նոր Զելանտա, Սկանտինաւիա, Իսլանտա, Կրօէլանտա եւ Գանատա, հարաւէն Սէյլան, Ատէն, Եթովպիա, Զանդիպար, Սահարա, Մարոք:

— Ուրեմն Սպանիան գրաւուած է, գոչեց դող ելած Սպանիացիին: — Դեռ ոչ. սակայն սաշարուած է. ճար չկայ, պիտի յանձնուիք: Աշխարհակալ եւ սակայն քաղաքակիրթ ազգ մըն ենք: Գացած գրաւած, տիրած տեղերն իս քանդելու տեղ կը շինենք: Եւ ինչե՛ր, ինչե՛ր: Զորն ասեմ կամ զորն խոստովանիմ: Հայկական ճարտարարուեստին բոլոր տեսակները կը շինենք ու կը տարածենք: Փաստրմաներ, աբոլոր տեսակները կը շինենք ու կը տարածենք: Փաստրմաներ, աբոլոր տեսակներ, չէմբլներ, մաճուններ, հրուշակներ, եղինձներ, օղիներ, պուխտներ, չէմբլներ, մաճուններ, հրուշակներ, եղինձներ, օղիներ, ազանդերներ, թուզի աճուշներ, վարունդի թթուններ, անուշապուրներ եւ... կուտախնձորներ:

Կը շինենք թերթեր, դերքեր, գրադարաններ, միութիւններ, եկեղեցիներ, ժողովատուններ, տէրտէրներ ու պատուելիներ... Կը շինենք, կը ստեղծենք պաշտօններ, կը սնկենք խամածիկներ, կը բաշխենք 10,000ներ... Կը շինենք բանաստեղծներ, տաղանդներ, դերասաններ, փողի ու թմբուկի երաժիշտներ:

Հայաստանի ծովածաւալ սահմաններուն մէջ կ'աղօթենք, կը պարենք, կ'ուտենք, կը խմենք ու կը քնանանք:

Ամէնքն իս ալ Մովսէսներ, Ահարոններ, Դաւիթներ, Սողոմոններ ու անուագն Յօբ Երանելիներ ենք, կամօքն Յիսուսի Քրիստոսի: Ասիկա Յիսուսի փառքն է ու Տիրոջ Յաղթանակը:

Գովենք Տէրը եւ կարդանք... շարունակութիւնը: Հայաստան ամէն բանէ վեր ու ու վար: Ամէն տեղ Հայաստան: Ա՛լ պիտի չըսենք «Հայաստան աշխարհ» այլ պիտի ըսենք աշխարհ — Հայաստան:

Փողոցէ մը կ'անցնիմ ու կը տեսնեմ «Արշակաւան»... նպարավաճառատունը. ներս մտնելով կը տեսնեմ «Շիրակ»... օղին, «Տիգրիս»... ձէթը եւ «Արգէոս»... ապուխտը: Դուրս ելլելով կը հանդիպիմ բարեկամի մը.

— Ո՞ւր բարով... — «Անի» կ'երթամ...

- Ուսումնասիրութեա՞ր...
 - Ո՛չ. ժողով ունինք...
- Ուրիշ բարեկամ մը ահա.
- Դուն ո՞ւր բարով...
 - «Տարօն» կ'երթամ...
 - Յեղափոխութեա՞ն...
 - Չէ, եղբայր, երեկոյթ ունինք...
 - Իսկ դո՞ւն...
- «Երեւան» կ'երթամ, յօղուած ունիմ «հայկական էմբերլայդը-մ»ի դէմ...

- Հապա դուն ո՞ւր կ'երթաս, Ամբակում...
- Ծապլվար կ'երթամ, լուրջ կռիւ ունինք...

Մինակս ճամբաս կը շարունակեմ: Կը տեսնեմ «Շիրակ»... հիւ-
կարկատի խանութը, «Արգար»... լուսանկարչատունը, քիչ անդին
«Արարատ»... դերձակատունը, քիչ մը վեր «Մուշ»... գրադարանը,
քիչ մը վար «Երեւան»... խմբագրատունը, քիչ մը ձախ «Վաստու-
րան»... ճաշարանը, քիչ մը աջ «Պիթլիզ»... վաճառատունը, քիչ մը
հեռու «Սեւան»... գորգագործարանը, աւելի անդին «Կիլիկիա»...
ակումբը, ա՛լ աւելի անդին «Չմշկածաք»... պանդոկը, անդին «Թում-
զարա»... գրատունը, ասդին «Յշական»... հրատարակչականը, յայտ-
կոյս «Քաջն Վարդան»... ներկայացումը, յայնկոյս «Անդրանիկ»...
թատերգութիւնը:

Վերջապէս կը հասնիմ Լաֆայէթ փողոց, կարծելով որ ոչ – հայ-
կական թաղամասի մը մէջ եմ: Եւ ահա դիմացս կը ցցուի... «Մա-
սիս»ը եւ քիչ անդին «Արաքս»ը...:

Կեցցէ՛ հայկական կայսրութիւնը որուն սահմաններուն մէջ ոչ
արեւը մարը կը մտնէ եւ ոչ ալ հայը անկողին:

ՄՏԿԻ ԲԵՌՆԱԿԻՐՆԵՐ

Շատ տեսակի մարդիկ ունինք...
Այս անգամ պիտի խօսինք զարգացելոց մասին: Այս մարդիկը
խիստ լուրջ, բաւական յարգուած, ուսումնական եւ մանաւանդ ու-

սումնաստենչ գլուխներ են: Ընդհանրապէս մինչեւ երեսունը հինգ –
քառասուն տարեկան կ'երթան համալսարաններ, մինչեւ վաթսուն
– վաթսունը հինգ տարեկան կը շարունակեն ընթերցումներ եւ ապա կը
նստին ու կը մտմտան, կը մտածեն, կը խոկան, կ'ամփոփուին, կը
սուզուին հասկնալու համար աշխարհքի բանը:

Այս մարդոց գլուխը նման է բուսաբանական պարտէզի: Աշխարհի
հազար կողմերէն խոտեր, ծաղիկներ, տերեւներ, ծառեր բերուած ու
տնկուած են: Մուտքը արգելուած է: Եւ դրախաը դուրկ է սեփական
ծաղիկէ ու սրտուղէ:

Ուրիշներ ուրիշ բաներու կը նմանցնեն այս մարդիկը: Ոմանք
կ'ըսեն թէ անոնք «գրքի մուկեր» են կամ «կատուներ մատենադարա-
նի» եւ կամ «հին գրատուն», «ամբար գիտելեաց», «բառարան կենդա-
նի»:

Անոնք պարզապէս մտքի բեռնակիրներ են եւ իրենց ուղեղին մէջ
կը դիզեն գրքեր ու գիտելիքներ: Եւ երբ տեղ չի մնայ իրենց ուղե-
ղում, այս անգամ գրքերն ու գիտելիքները կը սկսին դիզել իրենց ու-
ղեղին վրայ: Եւ օր մըն ալ գրքերու ծանրութենէն կը կքին, կը լռեն,
կը տառապին ու կը քաշեն նահատակներու նման:

Տխուր է անոնց պատկերը:
Ընդհանրապէս կ'ունենան մօրուք, ակնոց: Իրենց դիմագիծները
կարծէք կը ներկայացնեն Բարելոնի քարտէսը կամ լարելըինթոսի մը
յատակադիծը:

Բեռնակիր մտաւորականներ են...
Պէտք չէ թերանալ յարգանքի մէջ:
Գրեթէ ասանկ մէկն էր նաեւ Եղիա Տէմիրճիպաշեանը:
Այս առթիւ մանրավէպ մը իր կեանքէն ու իր խօսքէն մանաւանդ:
Օր մը Եղիա դուրս կ'ելլէ «Սուրհանդակ» թերթի խմբագրատու-
նէն, ընկերակցութեամբ Միսաքեան Շաւարշին:

- Կը քաշեն, կը խօսին:
- Եղիա կը խօսի ու կը հարցնէ Շաւարշին.
- Տղաս, կը կարդա՞ս...
- Այո՛, Պարոն Տէմիրճիպաշեան...
- Շա՞տ կը կարդաս...
- Բաւական...
- Կը հաղորդակցի՞ս միշտ փիլիսոփայական, իմաստասիրական
մեծ մտքերուն հետ...
- Բաւական...

— Քեզի խրատ մը տամ...

— Առ Եղիա կը կենայ: Կը նայի Ծաւարչի աչքերուն մէջ ու կ'ըսէ տխուր լըջութեամբ.

— Տղա՛ս, մի՛, շատ մի՛ կարգար... վերջը ինծի պէս կ'ըլլաս...

— Առ հիմակ ըսելու է այս խօսքը մտքի նոր բեռնակիրներուն.

— Ձգո՛՛ջ, վերջը Եղիային պէս կ'ըլլաք...

— Առ դեռ տուող, ստեղծող, պողատու միտք էր Եղիան: Հասցա ի՞նչ ըսել անմիտք ու անպտուղ բեռնակիրներուն.

— Վերջը Եղիայէն ալ գէշ կ'ըլլաք...

Հէ՛ք մտքի բեռնակիրներ, որո՞ք մեծ մտքերու ահաղին բեռները կը շալկեն անդադար: Մեծ մտքերու ծառաները եղած են: Գերուած են: Բռնուած մեծերու ճիրաններէն: Եւ կորսնցուցած են իրենց իմացականութիւնը: Չունին սեփական միտք, կարծիք, դատողութիւն, տրամաբանութիւն: Եթէ սովորական հարց մը տաք իրենց անոնք կը պատասխանեն.

— Այս մասին Թէնի կարծիքը որոշ է...

— Լիպկինեխտ կ'ըսէ որ...

— Ըստ Արիստոտէլի...

— Պղատոն շատ լաւ բացատրած է այդ կէտը...

— Ռընանի հետեւեալ խօսքը միտքը պահէ...

— Շոպէնհաուէր այդ մասին երկարօրէն խօսած է...

— Նիցչէն կարգա՛ ու պիտի տեսնես...

— Կառուցիկ ըսածիդ ճիշտ հակառակը ապացուցած է...

— Ըստ Լէնինի...

— Պէրկսոնը շատ ուժգնօրէն ապացուցած է ըսելիքս...

— Այնչեթայն շատ պարզ կերպով հաստատած է որ...

Հէ՛ք մտքի բեռնակիրներ:

Անօգուտ է անոնց ըսել.

— Ի՞նչ է այս մասին սեփական կարծիքդ...

— Պէրկսոնի կարծիքը այն է որ...

— Եղբայր, ձգէ սա Պէրկսոնը, քու կարծիքդ ի՞նչ է...

— Թէն ըսած է որ...

— Հասկցանք, քո՛ւ կարծիքդ...

— Նիցչէ կը կարծէ որ...

— Քո՛ւ կարծիքդ...

— Իմ կարծիքս Շոպէնհաուէրի կարծիքն է... ես անոր կարծիքէն եմ դայն կարգալէս ի վեր...

— Անկէ առաջ ի՞նչ էր սեփական կարծիքդ...

— Անկէ առաջ Քանդի կարծիքէն էի...

— Անկէ ալ առաջ...

— Անկէ ալ առաջ անշուշտ դեռ կարծիք չունէի...

— Ասկէ վերջի սեփական կարծիքդ ի՞նչ պիտի ըլլայ...

— Չորս հինգ գրքեր ունիմ կարդալիք, նոր դնեցի, սեփականութիւններս են, անոնցմէ կախում ունի կարծիքս...

Բարեկամներ, ուղեղ ըսուածը ուժի տարողութիւն մը ունի: Մահաւանդ գերի ուղեղները: Երբոր ուղեղին վրայ կը գրուի թուղթի ահաղին ծանրութիւններ, գրքե՛ր, անշուշտ հէ՛ք ուղեղը տակը կը սկսի ճզմուիլ, ճզմուիլ ու ջրոտիլ:

Եւ ջրոտ ուղեղէ մը կարելի չէ սպասել սեփական կարծիք այլ միայն.

— Նիցչէ...

— Պէրկսոն...

— Շոպէնհաուէր...

— Շորէնի... մահերդ:

« Հ 0 Կ »

Փարիզի հայաշատ թաղերէն հեռու փողոցի մը գլխաւոր սրճարանը կը մտնեմ ու կը խնդրեմ.

— Ամուրէք մը:

Յաճախողները ցանցառ են: Անակնկալ: Սեղանէս քիչ մը հեռու նստած են երկու հոգի ու հայերէն կը բարբառին ու կը փրփրին: Իրենց խօսակցութեան նիւթն է՝ «Հօկ»ը...

Հանդարտ ու գոհ կ'ունկնդրեմ: Նիւթը շահեկան է ու խօսողները անշահախնդիր:

— Եղբայր, ամօթ է ըսելս, սակայն «Հօկ»ը ի՞նչ է...

— Վա՛յ, առ ի՞նչ հարցում է... Ժամ մըն է կը խօսիմ ու տակաւին խնդրոյ առարկային ի՞նչ ըլլալը չե՞ս գիտեր...

— Այսինքն թէ, եղբայր, գիտեմ որ հայկական միութիւն մըն է, սակայն «Հօկ» ի՞նչ ըսել է, ի՞նչ իմաստ ունի, ի՞նչ արձու է, ի՞նչ նըպատակ կը հետապնդէ:

— Եղբայր, «Հօկ»ը, «Հայրենիքի Օգնութեան Կոմիտէ»ն է, առաջին գրքերով կազմուած է «Հօկ» անունը. իսկ նպատակը արդէն առաջին գրքերով կազմուած է «Հօկ» անունը.

նունին մէջ խտացած է. — «Հայրենիքի Օղնութեան Կոմիտէ»...
— Հիմակ լուսարանուեցայ: է՛, ի՞նչպէս, դոնէ բաւական օդնե՞ց հայրենիքին:

— ձիշտ չկարենալ օդնելուն համար, վերջերս խորհրդային հայրենիքի կառավարութիւնը փոխեց անոր նպատակը: «Հօկ»ը, ներկայիս, ուրիշ պաշտօն ունի. այն է երկրէն ստացուած որոշ գումարներու փոխարէն՝ արծարծել սէր հայրենեաց, ի լոյս ընծայել պրակներ, մը-գում տալ մամլոյ եւայլն:

— Ատ ինչի՞ն «Հօկ»ը, «Հայրենիքի Օղնութեան Կոմիտէ»ն եղաւ ուրեմն: Գոնէ թող անուանափոխէին, քանի որ ըսածիդ համաձայն ներկայիս իր անուն մէջ իր նախկին նպատակը չկայ:

— Երբեք ալ անուն փոխելու հարկ չկայ: «Հօկ»ը նորէն «Հօկ» է եւ շատ իրաւամբ, քանի որ իր հիմակուան դրութեան պատկերացումն ալ կայ իր անունին մէջ:

— Ի՞նչպէս...
— Լսէ՛: «Հօկ»ը առաջ Հայրենիքի Օղնութեան Կոմիտէի պաշտօն պիտի կատարէր, իսկ հիմակ եղած է Հայրենիքէն Օգտուող Կոմիտէ, որով սկզբնատուերը եթէ քով քովի բերես, նորէն «Հօկ» անունը կը կազմուի...:

ՀԱՅ ԲՈՂՇԵՒԻԿՆԵՐՈՒ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Հայ բողշեւիկները, այս տարի եւս Փարիզի Սալ Վակրամի սրահին մէջ, յապաղումով, տօնեցին իրենց՝ Հայաստանի փրկիչ դառնալուն տարեդարձը:

Սրահին քառորդը լեցուած էր Ռամկավար պուրժուաներուն ճաշատ դուխներով: Անոնք առաջին մասը դրաւած էին եւ հանդէսին փայլը աւելցուցած:

Սրահին երկրորդ քառորդը լեցուած էր գոյնգոյն կարմիրներէ: Անոնք միջին մասը դրաւած էին եւ հանդէսին փայլը կարմրեցուցած:

Սրահին երրորդ քառորդը լեցուած էր Դաշնակցական հետաքրքիրներէ:

Սրահին չորրորդ քառորդը պարսպ էր: Ասիկա նախատինք նկատելով Լէյնինի յիշատակին, այդ պարսպ մասը լեցուցին անմիջապէս պրոլետարական, շինարարական եւ համաշխարհային յեղափոխութեան համար կարեւոր... զաղափարներով:

Սրահը լեցուած համարուելէ վերջ հանդէսը սկսաւ: Մէկը արտասանեց, ի մէջ այլոց, Շ. Կուրղիկեանի «Բանուորները»:

— «Այդ մե՛նք եմք գալիս՝
Մաշուած բանկոններ, իւրոտ ու մրոտ,
Տրարուած գտակ, աղտոտ մագերով,
Մեծ մասամբ դեղնած, գծուծ ու բոկոտ...»

Եւ սակայն դերասանին բաճկոնը մաշուած չէր: Եթէ նոր դնուած չէր, հեռու էր սակայն հրեայի ապրանք ըլլալէ: Բաճկոնը իւրոտ ալ չէր: Եթէ տեղ տեղ աստղակայակ կանթեղի իւղեր կային, անոնք սակայն կերուխումի ժամանակ ինկած իւղի կաթիլներ էին եւ ոչ երբեք մեքենայի իւղեր: «Տրորուած դտակ»ը գոյութիւն չունէր, իսկ իր մեքենայի իւղեր: «Տրորուած դտակ»ը գոյութիւն չունէր, իսկ իր «աղտոտ մագեր»ը այդ պահուն գոյնէ իրրեւ մաղ — եթէ ոչ իրրեւ դը-լուխ — մաքուր եւ սանտրուած էին: «Դեղին» ալ չէր, այլ Պոտոտյի դինիով կարմրած, բոկոտ ալ չէր, այլ զոյգ մը կօշիկ հագած, կարծեմ Chaussures André վաճառատունէն:

Արտասանութիւնը շարունակուեցաւ.
— Մեմք բանուորներս՝ ապրելու ահից,
Կեանքի շուկայում ստոր վաճառքից էժան ծախուածներ...
Ո՛հ մեծ տղուկներ, մարդկային կեանքի,
Ստեղծագործութեան անարգ խեղդիչներ,
Դո՛ւ՛ք՝ փարքամուքեան, անառակ տեմիչի
Քնած խիղներով անարգ խեղդիչներ, քմրած խլուրդներ,
Դո՛ւ՛ք, ամօք-ապարտ գերեզման փորող
Գարշ քանիներդ սուրբ ազատութեան,
Ձեր նմանների արիւնը լախող,
Բողբոջ յոյսերի դիեր հոգեհան...»

Այս խօսքերուն ի լուր առաջին կարգը գրաւող Ռամկավար վաճառականները, գործարանատէրերը, չէֆերը, անօրէնները վախկոտ տազնապի մը մատնուեցան:

Վահան Մալեղեան ըսաւ իր քովը նստող Ռամկավարի մը.
— Արդեօք այս խօսքերը ինձի՞ ուղղուած են... Արդեօք 10,000

Փրանք առնելը՞ն համար այս խօսքերը կ'ըսուին... Այս խօսքերը ուղղուած են 10,000 տղար ամասկան եկամուտ ունեցողներուն:

Ռամկավար գրադէտ մը հարցուց իր քովի ընկերոջ.
— Այս խօսքերը որո՞ւ կը կարծէք որ ուղղուած ըլլան...

— Ես կը մտածեմ որ մեզի պէսներուն ուղղուած են:

— Օ՛ր, ո՛չ... Հայ համայնավարները այդքան անկենցաղաբէտ չեն... Եղբայր, Եթէ մենք հարուստ ենք՝ սակայն միշտ բարեկամ ենք Խորհրդային Հայաստանին...

Հայ կոշիկի դործարանտէր մը ծոցացաւ ու ըսաւ.

— Մօն շէր, մեր հասցէին կը հայհոյեն կոր...

— Չեմ կարծեր, էֆէնտի, այդ խօսքերը մեծ ֆապրիքաներ բանեցնողներուն համար են... Դուք քանի՞ հոգի կ'աշխատեցնէք որ...

— Քանի մը հարիւր հոգի ունիմ...

— Ի՞նչ կարեւորութիւն ունի... Դուք ալ անոնց չափ կ'աշխատիք կոր... Այդ խօսքերը քանի մը հազար բանուոր ունեցողներուն համար են...

— Մօնշէն, մենք բանուորներէն աւելի կը յոգնինք կոր... Մենք կատարեալ բեռնակիր եղած ենք... Այս ամիս պանքան դրամ կրելով հոգիս բերանս եկաւ...

Գոհարավաճառ մը մէջ կը մտնէ.

— Մօնշէն, ասոնք մեր գերդաստանին կը հայհոյեն կոր... այդ խօսքերը արիւն կը հոտին կոր... Խաղա մը չէլած ես իմ տեղս երթամ...

— Տեղերնիդ նստեցէք... մօնշէն, այդ խօսքերը Դաշնակցականներուն համար են...

— Մօնշէն, Դաշնակցականները «փարթամութեան, անառակ տենչի» մարդիկ չեն... Ասոնք շիտկէ շիտակ մեզի կը քֆրեն կոր...

— Կը սխալիք, էֆէնտի, պր. Չօպանեանը ստուգարանեց ամէն ինչ... Այդ խօսքերը 10,000 բանուոր ունեցողներուն ուղղուած են...

— Ուրեմն խօսքերուն կէսը ինծի ուղղուած է...

— Բայց, էֆէնտի, դուք Խորհրդային Հայաստանի բարեկամ էք եւ փոխադարձաբար...

— Մօնշէն, այս աշխարհի վրայ բարեկամներէն վախնալու է... մանաւանդ կարմիր բարեկամներէ...

Ուրիշ մը մէջ կը մտնայ.

— Բարեկամներ, այս եղած խօսքերուն ի՞նչ կ'ըսէք... ես չեմ հաւնիր կոր... Կ'ուզէ՞ք որ դոները դոցեն ու մեզ կողոպտելէ վերջ, կազը լեցնեն ու մեզ բռնկեն...

— Ի՞նչ, եէնիչէրի՞ զխոցար ասոնք...

— Տարբերութիւննին քաջութեան պակասութիւնն է միայն...

— Խենթ բաներ կ'ըսէք կոր... Այդ խօսքերով մեզ կը պաշտպա-

նեն կոր, Խապար չունիք... Քանի մը միլիոնի տէր էք եղեր ու ինքզինքնիդ պուրժուա կը կարծէք... Պուրժուա ըսածդ հարիւր միլիաոս թերլին կ'ունենայ անուագն... Այս կառավարութիւնը մայիր մայիր մեզ կը շահագործէ կոր... Տարեկան 500,000 տուրք կուտամ կոր... հոգիս կը հանեն կոր... Շատ իրաւունք ունին բուլճեւիկները կառավարութեան դէմ ըլլալու... «Ո՛ր մեծ տղրուկներ մարդկային կեանքի, ստեղծագործութեան անարդ խեղդիչներ»...

Վահան Մալեղեան մտածեց.

— Ինչ որ ալ ըլլայ ինծի համար չեն... Ես ամիսը 10,000 ունիմ միայն եւ յետոյ տարիներով բանաստեղծութեան բանուոր մը եղած եմ, թէեւ բան մը չեմ շահած, սակայն, անուն մը կրցած եմ շինել...

Արտասանութիւնը կը շարունակուէր.

— «Դու՛ք՝ վայելչութեան, անարդար կեանքի ընտիր ըմբիշներ...

Հա՛ մեմք եմք գալիս,
Գարեւոր վշտի գրկանքի բովից
Հալածանքների, գարշ սարկութեան մոռացուած խաւից՝
Կրծքով փշրելու փառքը տիրողին,
Գահը բռնութեան, ստրուկի շղթան,
Նոր ուղի հարքել մեզ նմաններին,
Արժանի կոչման, հաւասարութեան,
Այդպէս եմք գալիս»...

Գոհարավաճառ մը մտածեց.

— Եթէ ասոնք կուրծքով պիտի փշրեն ամէն բան, շատ վտանգաւոր մարդիկ չեն... իմ քացաւ մէկ հատիկ է, հազար բուլճեւիկ կուրծք կրնայ փշրել...

Վաճառական մը մտածեց.

— Մէջը սուրով քացաւ մը գնելու է... կուրծքով փշրելու եթէ դան, մաֆ կ'ըլլան...

Արտասանութիւնը վերջացած էր:

— Պաաւօ՛, պաաւօ՛, պի՛ս... դոռացողները նոյն Ռամկավարներն էին:

ԿՆԿԱՅ ՄԱԶ ԵՒ ԿՂԵՐԻ ՄՕՐՈՒՔ

Շատունց է որ ծանօթ էի հայ կաթողիկ ընտանիքի մը որ կը բաղ- կանայ երեք անդամներէ — բարա, մամա եւ մամդէլ:

Մամդէլը որ կը կոչուի Սիւզան, ամէն կիրակի ու տօնի կը յաճա- խէ իր թաղին Փրանսահան եկեղեցին: Պինդ պէրասէր, յոյժ թեթեւ, նուրբ ու նազնի աղջիկ մըն է: Հազիւ քառասուն քելօ կը կշռէ եւ սա- կայն ատիկա իսկ շատ գտնելով՝ կամաւոր կերպով կը սննդադրկուի որպէսզի չըլլայ որ գերնայ եւ նմանի հաստ ու կլոր հայու կնկան: Իր կամաւոր սննդադրկութեան փոխարէն կը ճաշակէ ամէն կիրակի... Ս. Հաղորդութիւն: Քանի մը ամիսներ առաջ, ըստ իր սովորութեան կ'երթայ իր բնակած թաղին եկեղեցին ու ներկայանալով Արեւելքէն նոր եկած վարդապետի մը, կը խնդրէ որ խոստովանցնէ զինքը:

Վարդապետը գովելով մատմուղէլ Սիւզանի կրօնական ջերմե- անդութիւնը կ'անցնի խոստովանահօր վանդակին ետեւ ու կը անկէ գլուխը: Սիւզան ալ իր կարգին, ծունկի գալով վանդակին առջեւ՝ կը բանայ իր բերանը:

Վարդապետը հարցումներ կ'ուղղէ, անասելի, անլսելի մեղքեր կը պրպտէ ու միշտ գլուխը կը մօտեցնէ մատմուղէլ Սիւզանի վար- գերանգ վարդաբոյր բերնին:

Սիւզան կը խոստովանի, նոր մեղքեր կը գեղգեղէ ու բերանը կը մօտեցնէ վարդապետին գլուխին:

Օ՛, քանիօն սուրբ տեսարան, արժանի նոր Ռաֆայէլէ մը նկար- ուելու եւ Վատիկանին մէջ կախուելու:

Վարդապետը կը վերանայ իր պաշտօնին մէջ ու աւելի վար կը կախէ իր գլուխը: Վարդապետին մօրուքէն երկու փունջ մաղ դուրս կ'ելլեն վանդակին ձեւերէն: Մատմաղէլ Սիւզան, ինքնամոռաց, զանոնք իր ալա կառսօն կտրուած մաղերը կարծելով, շնորհալի շար- ժումով, կը բռնէ եւ իր ականջներուն ետեւ կը տեղաւորէ: Վարդապե- տը կ'արբեհայ.— կը հեւայ եւ կը բարբառի.

- Խօսէ՛, աղջիկս, խօսէ՛... ուրիշ ուրիշ ի՞նչ մեղքեր ունիս...
- Ո՛չ, վարդապետ...
- Օ՛, ստեղծի է... Ուրեմն դեռ չե՞ս սիրած...
- Ո՛չ, վարդապետ...
- Անքաւելի՛ մեղք որ կը քաւուի վարդապետ մը սիրելով...

— Քաւեա, անօրէնութիւնս իմ, վարդապետ.

— Աղջի՛կս...

Վերջապէս խոստովանանքը կ'աւարտի եւ սակայն վարդապետ ու Սիւզան չեն կրնար բաժնուիլ իրարմէ, մօրուքի թելերով կապուած ըլլալով:

Գորդեան հանգոյցը կը բացուի վերջապէս, տաժանքոտ աշխա- տանքներէ վերջ:

Ու մատմուղէլ Սիւզան ուշ ատեն տուն կը վերադառնայ իր մեղ- քերէն, բոլոր մեղքերէն սրբուած, սկսթուած ու լեցուած... մանուկ Յիսուսով:

Անցեալ օր տեսայ Սիւզանը եւ ըսի.

— Ողջո՛յն քեզ, Մարիամ:

ԱՐՈՒԵՍՏԻ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Երբ Պոլիս էինք՝ երբեմն կ'այցելէինք թրքական թատրոնները, զանազան ներկայացումներու հանդիսատես ըլլալու համար: Միջնա- բարներուն մանաւանդ շատ կը դայթակղէինք, քանզի սրահ կը նետ- ուէին տասնեակ մը վաճառորդներ ու կը պոռչտային: Անոնք փխտէնե- բու մէջ ունէին զանազան ուտելիքներ ու խմելիքներ եւ անդադար կ'ազդարարէին իրենց ապրանքները.

- Սիմի՛ք, քազ սիմի՛ք, եաղը սիմի՛ք,
- Սիմիքի՛մ, աւսամը սիմիքի՛մ...
- Էյլէնեկի՛ք, չէյիքուէք, ֆըսալք...
- Տոնուրմամ քայմալը տըր...
- Քուրապիլիեր...
- Ու մնացեալը շարունակենք հայերէն.
- Պանիք հա՛ց, փորը ախօթիներուն համար պանիք հա՛ց...
- Շաքար, շօօլա...
- Քանը քալաքի ջուր, օշարակ...
- Ու ինծի հետ ներկայ եղող գերասան կամ գրող ընկերներս կը սրտմտէին ու կը բարբառէին.
- Այս ի՞նչ խայտառակութիւն է...
- Վայրենի են...
- Թատրոնը շուկայ են շիներ...
- Սրբապիղծներ, զգո՛յ՛՛՛...

— Ե՞րբ, ա՛հ, Ե՞րբ պիտի դայ թատրոնի նազովընցին ու խարա-
դանը առնելով յարձակի սա զգուշի վաճառորդներուն վրայ ու շահե-
ցնելով զուռայ.— «Դուք իմ տուն ազօթից արարիք այս աւազակաց» :
Եւ փշուր փշուր ընէ բոլոր փոկեղները, կաղինները, ընկոյզները, շա-
քարները, անուշեղէնները եւ թափէ ջուրերը, օշարակները, պաղպա-
ղակները եւն., եւն.՛, եւն. :

Ու մինչ ընկերներս երազուն կը սպասէին Մեսխային՝ անդին վա-
ճառորդները խանդավառօրէն կը շարունակէին իրենց գործը.

- Սիմիթի՛մ, եաղը սիմիթի՛մ...
- Տօնտուրմամ քայմաքը տըր...
- Ֆընտը՛ք, ֆըստը՛ք...

Ու այս բոլորը ոչինչ : Սայտառակութիւնը կը դարդանար ներ-
կայացման ընթացքին :

Երկրորդ արարուածն է :

Դերասանուհի մը կուլայ բեմին վրայ : Հեկեկանքներ : Ու յան-
կարծ՝

- Չա՛թ, չա՛թ, չա՛թ... (Մէկը ընկոյզ կը կտորէ) վայրկեան
կ'անցնի ու՛
- Չը՛թ... չը՛թ, չը՛թ... չը՛թ, չը՛թ, չը՛թ, չը՛թ...

(Հանգիստականք կաղին կը կտորեն) :

Իեմը : Թշուառ հայր մը իր աղջիկը կը միւթարէ իր անցեալէն
ողբերգական անցքեր պատմելով :

Սրահում.— չըբիս, չըբա՛խ...

Շուկան է որ կը բանի...

(Աչխատանքն է, աղատութի՛ւն) :

Յանկարծ մէկը անձնատղան կ'ըլլայ բեմին վրայ :

Վարը մէկը կը պոռայ խիստ յուզուած՝

- Սիմիթիմ փարան չտուիր...
- Սո՛ւս... սո՛ւս...
- Երկո՞ւ անգամ պիտի տամ, անամօթ...
- Չտուիր բսի...
- Տուի...
- Չտուիր...
- Աւ ուրեմն, բա՛յց...

- Վա՛յ, վա՛յ...
 - Բա՛յց...
 - Անկցի՛ս, դետինն անցնիս...
 - Սիմիթիմ, վա՛խ սիմիթի՛մ...
- (Զգի վարագոյր)

* * *

Անցեալները, Փարիզի մէջ, ներկայ եղայ Սուրբեան խումբի մէկ
ներկայացման : «Աշուղ Ղարիբ» : Ներկայացման մասին չէ որ պիտի
խօսիմ : Ուժեղէս վեր է այդ խաղը վեր առնել ու... վար դարնել : Ա-
տիկա Սամսոնի գործ է : Ու եթէ թուրք թատրոնը Յիսուսի պէտք ունի
հայ թատրոնն ալ նոյնքան պէտք ունի Սամսոնի : Ես պիտի խօսիմ այն
հայ ներկայացման մասին որ խաղաց հայ հասարակութիւնը, ներկա-
յացման ընթացքին, թատերակցութիւն մը ունենալով խումբին հետ :

- (Վարագոյրը բաց է ու բաց են նաեւ բոլոր բերանները) :
- Կարպիս, ծօ՛, սիկարա մը նետէ աէ իմենք...
- Օննիկ, բռնէ...
- (Վերնայարկէն սրահ սիկարէք մը կ'իջնայ) :
- Կարպիս ծօ, քիպրիքը մոոցար...
- Սմմա ըրիբ ա՛, քովի միւսիէդ վառէ, փառտոն ըսելով...
- Չայն մը.— սո՛ւս եղեք պե՛...
- Սիկարա մըն ալ քեզի նետե՞մ, իրաչիկ...
- Սիկարա չէ ամա, ֆընտըլս ֆըստըլս բան մը ունիս իէ բաքէք
բրէ վար նետէ...
- Կին մը.— Աղջի Եղսաբէթ, սա շօքօլաթէն քիչ մը Մաննօին
տուր...
- Հողեմ գլուխը, ինչ ծակաչք է...
- Պղտի է քա, աղջի...
- Մի տղամարդ.— Ափսոս որ մի չիլ գլինի չվերցրենք շուկայից...
- Մի ուրիշը.— Վարագոյրը փակուելուց յետոյ դուրս կը գնանք ու
մի մի հատ անոյշ կ'անենք...
- Ախր, էտեղ խմելու քէյֆն ուրիշ ա... Ափսո՛ս որ մի չիլ գլի-
նի չվերցրինք հետներս...
- Էտ մէկը ճիշտ ա...
- Տօ՛, տես, ո՞նց են խմում դերասանները... Ոնց լաւ են քա-
շում...

լուրիան կը սկսին ուսել : Պատուելին մօտերս կը սկսի հետեւեալ քա-
րօզներուն , միշտ նոյն նպատակներով .

- Ա. «Իերձակութիւն ու կրօնք» ,
- Բ. «Կօշկակարութիւն ու կրօնք» :
- Գ. «Ծխավանառութիւն ու կրօնք» :

Պատուելի Պափնոսին անւայթաք յաջողութիւն ու նիւթերու ա-
ստուութիւն կը մաղթե՛մ ի բոլոր սրտէ : Երկնաւոր հայրը սր երկինքն
է , թող պատուելի Պափնոսին նոր Պօտոսներ պարզեւէ :

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

Յիսուսի փառքը երգող բողոքական բարեկամ մը ունիմ : Անցեալ
օր հանդիպեցանք իրարու : Սկսանք քալել ու խօսիլ : Պօսած ժամանակ
խօսակիցին աչքերուն նայելու սովորութիւնը չունի բարեկամս : Գե-
տին ալ չի նայիր . քաւ լիցի , երկնահայեաց է : Կը խօսի մեզմ ու յու-
զումով :

Պօսեցայ ու ըսի իրեն .

— Եղբայր Ղազարոս , Միացեալ Նահանգներու մէջ դաշտային
մկրտութիւններ տեղի կ'ունենան , իսկ Գերմանիոյ մէջ օդային , այս-
ինքն օդանաւով ամուսնութիւններ : Ի՞նչ են ասոնց պատճառները :

— Յիսուսի փառքը , պատասխանեց եղբայր Ղազարոս , ինքնագոհ
երանութիւնով :

— Եղբայր Ղազարոս , կրօնական դաշտահանդէսին ու օդահան-
դէսին մէջ ի՞նչպէս կը գտնես Յիսուսի փառք :

— Տիրոջ յաղթանակը , երկրորդեց բարեկամս :

— Բայց ինդրեմ մեկնաբանէ : Թո՛ղ լակոնական ոնդ ու լուսարա-
նէ : Գոհացո՛ւր զիս :

— Այս ալ Յիսուսի փառքն է ու տիրոջ յաղթանակը :

— Ո՞րք . . .

— Մաքուր հետաքրքրութիւնդ : Կրկնէ ինծի հետ հետեւեալ երգը .

«Յիսուսի է , Յիսուսի

Ճամբան Փառքի եւ Յոյսի

Անհաւատը մեկուսի՝

Օր մը կուգայ Յիսուսի . . . :

— Բայց հարցումիս պատասխանը , կրկնեցի ապշած :

— Ահա , կիսամոլոր եղբայր : Աստուածորդւոյն մահէն վերջ Բը-

րիստոնէութիւնը շատերու մէջ մտած էր : Յիսուսի փառքը երգողները
գետնափոր տաճարներու , նկուղներու , դամբարաններու մէջ կը կա-
տարէին իրենց պաշտամունքը : Քրիստոնէութիւնը հետգիտէ լայն-
ցաւ : Չգնաւորները գայն տարին քարայրներու , որջերու , անապատ-
ներու մէջ : Օրթոտոքսներն ու լուսաւորչականները քրիստոնէութիւնը
տարին վանքերու խուրճիկներու ու տաճարներու ցոյցերուն մէջ : Կաթո-
լիկութիւնը գայն տարաւ գիղերու , քաղաքներու եւ մայրաքաղաքներու
մէջ : Կը տեսնես որ քրիստոնէութիւնը հետգիտէ աւելի լայնօրէն
տարածուեցաւ : Բողոքականութեան վերապահուած էր ամենամեծ
դերը : Բողոքականութիւնը տարաւ քրիստոնէութիւնը Ափրիկէի խո-
րերը , Ասիոյ խաւարները , Ովկիանիոյ խաւարները ու մանաւանդ Ա-
մերիկայի խորանները : Պատեցուց գայն գետերու վրայ , ջրվէժներու
մէջ , ովկէանոսներու տակը , դաշտերուն վրայ ու օդերուն մէջ : Ահա
այսպէս քրիստոնէութիւնը տարածուեցաւ , ելաւ , խորունկցաւ ,
բարձրացաւ , ընդարձակուեցաւ , անհունացաւ , եւ դեռ ծաւալելու ե-
տել է . . . Ահա Յիսուսի փառքը եւ Տիրոջ յաղթանակը :

— Գե՛շ վախճանի կը դիմէ սակայն քրիստոնէութիւնը , առաք-
կեցի :

Կեցաւ ու աչքերը երկինք յառելով անշարժացաւ :

— Այո , գե՛շ վախճանի մը կը դիմէ քրիստոնէութիւնը : Քանի որ
այդքան կը տարածուի , կը լայննայ , այդքան կը բարձրանայ՝ շատ
բնականաբար հետգիտէ պիտի բարակնայ , պիտի փրքի , պիտի չոր-
նայ , անօրանայ ու չքանայ :

Եղբայր Ղազար փախաւ քովէս երգելով .

«Յիսուսի է , Յիսուսի . . . »

ԴԵՐԱՍԱՆԸ

— Բարեւ : Շաբաթ գիշեր մեզի էք : Ի նպաստ մեր միութեան ե-
րեկոյթ պարահանդէս մը սարքած ենք : Արտասանութիւն մը :

— Ամենայն սիրով : Սկզբունքս գիտէք անշուշտ : Անվճար ոչ մէկ
տեղ չեմ երթար : Անցեալները Բ. Միութեան վարչութեան անդամնե-
րըն ալ հրաւիրեցին . սակայն չուզեցին վճարում ընել : Ամիս մը առաջ
ալ նոյնը պատահեցաւ Ո. միութեան երեկոյթին առթիւ : Դրամ ուզե-
լուս վշտացան :

— Բնաւ իրաւունք չունին վշտանալու : Շատ պարզ է որ դրամ

պիտի ուղէք, ձեր իրաւունքն է ատիկա...

— Շատ շնորհակալ եմ որ այդպէս կ'արտայայտուիք...

— Եւ սակայն մեր միութեան պարագան տարբեր է: Նկատի ունեցէք մեր նպատակը: Այս բացառիկ դործ մըն է: Ձեր կողմէ զոհողութիւն մը անհրաժեշտ է...

— Եղբայր, ի վիճակի չեմ զոհողութեան...

— Ամօթ է, խաչ որ ամօթ է... Ձեր համբաւին արատ կը բերէք մեր հրաւերը մերժելով:

— Եղբայր, անկուտի եմ... Կը հասկնա՞ք թէ Ի՞նչ ըսել է անկուտի, այսինքն ողբացեալ Մրմբեանի հոմանիչն եմ եւ ծիծաղացեալ Մալէգեանի հականիշը...

— Կատակը մէկդի... Շարժի գիշեր կը սպասենք... Յաջորդ երեկոյթին բան մը կը վճարենք...

— Եղբայր, յաջորդ երեկոյթին բան մըն ալ մի վճարէք, հիմակ վճարեցէք...

— Ինչո՞ւ յաջորդին չվճարենք... պիտի վճարենք...

— Լաւ ուրեմն, աւելի լաւ: Ասոր ալ վճարեցէք, անոր ալ:

— Ա՛, ո՛չ ասոր: Յաջորդին լաւ վճարում մը կ'ընենք, երկուքին տեղը կը բռնէ...

Խեղճ դերասանը տեղի կուտայ: Զամբու ծախս կը ճարէ: Հաստատու արգուկեղ կուտայ եւ շարժի երեկոյ կը հասնի երեկոյթին:

Օրիորդ մը ծաղիկ մը կը զետեղէ դերասանին լամբակին, միւս ձեռքով պնակ մը երկարելով: Դերասանը դրամը կը ցնծայ:

Տոմսավաճառը, նոյնպէս օրիորդ, առաջին կարգի տոմսակ մը կը հրամցնէ: Բազմութիւն կայ եւ Միութեան անդամները այնտեղ չեն՝ դերասանը կը ցնծայ: Կէս ժամ վերջ բեմին վրայ է:

Պարտապահանջ բարեկամ մը քովը կը տմայէ եւ աննելիքը կը պահանջէ, սպառնալով սկանտալ բարձրացնել: Միութեան անդամներէն է: Դերասանը կը ցնծայ:

Գեղարուեստական մասը կ'աւարտի: Դռները կը դոցուին: Կը սկսի աճուրդը: Նկար մը աճուրդի դրուած է: Դերասանը անկիւն մը քաշուած է: Միութեան մէկ անդամը դերասանին անունով 50 Քրանք կ'աւելցնէ: Դերասանը կը ծափահարուի: Գեղանի օրիորդ մը կուգայ դերասանէն 50 Քրանք գանձելու: Դերասանը կը ցնծայ: Պարերը կը սկսին:

Միութեան ուրիշ մէկ անդամը դերասանին կը մօտենայ ու կ'ըսէ.

— Բան մը չէ՞ք խմեր...

Պիւֆէ կ'երթան:

Մէյմէկ խմիչք: Մէյմէկ հատ եւս: Եւս: Եւ եւս... ալեկոծութեամբ գտէր աղաչեսցուք:

Բարեկամ միութենականը ուրիշ բարեկամ մը տեսնելով կ'ըսէ դերասանին.

— Վայրկեան մը, հիմակ կուգամ:

Ան երթալն է ու դեռ կուգայ...

Դերասանը պիւֆէին առջեւ... կը կախուի: Սպասարկողը կ'ողջ դրամ: Դերասանին քով չէ մնացած կուտ: Սայտառակութիւն: Դերասանը 28 Քրանք կը պարտի Միութեան:

— Յաջորդ երեկոյթին արտասանութիւն մը կ'ընեմ ու պարտքս կը վճարեմ, կ'ըսէ դերասանը:

Հայ դերասանին դերը պարտք վճարելէն անդին չէ անցած արդէն:

Եւ դեռ կայ. աւելին՝ ու առանց չափազանցութեան:

Կը պատահի որ շքեղ երեկոյթ — պարահանդէսին մէջ տիկին մը քար մը կորսնցնէ: Քար մը, Աստուած իմ, քար մը:

Այդ քարը բերնէ բերան կը մեծնայ, կը ծանրանայ, կ'արձանանայ ու կ'ըլլայ դերեզմանաքար ու կ'իյնայ դերասանին գլխուն վրայ.

— Օ՛, տարակոյս չկայ որ դերասանը դողցած է: Ի՞նչ խաչադող են սա դերասանները...

ԽԱԶԱԳՈՂՆԵՐԸ

Հնուց ի վեր Փարիզը կեդրոն եղած է հայ խաչադողներու: Հիմակ սակայն անոնք հասակ ու թիւ են նետած եւ կազմակերպուած են: Անոնք նոյնիսկ դասակարգերու բաժնուած են ու շրջանակներ ճշտած: Նեղ օրերու մէջ զիրար կը կողոպտեն:

Անոնց մէջ կան նոյնիսկ մտաւորականներ, քիչ շատ ծանօթ դէմքեր, արուեստագէտներ, միջազգային ծաղիկներ եւ հասարակ ծոյլեր: Կան որոնք դործ մը ունին ու միւս կողմէ կը մշակեն խաչադողութիւնը: Կան որ խաչադողութեամբ դործ մըն են ձեռք բերած: Իսկ կան ալ որոնք մասնագիտութիւն են ըրած եւ սկզբունքով հակառակ են ամէն կարգի դործերու:

Կայ նոյնիսկ մէկը որ քսանըսինգ տարիներէ ի վեր անգործ է :

Ընդհանուր հայ խաչագողութիւնը մտադիր է իր վեթերանին քսանեւհինգամեայ անգործունէութեան... յորեկեանը տօնելու :

Կան որոնք ասպետի նման են , կան ալ որոնք մուրացկանի պէս են :

Կան՝ որոնք բժիշկի մը կը ներկայանան , զայն կը խարեն կամ կը կաշառեն եւ թողախտաւորի վկայական մը ձեռք կ'անցնեն ու կը շրջին տունէ տուն , խանութէ խանութ , տեղէ տեղ՝ զբամ կը հանդանակեն : Երբ անոնց հարցնէք թէ ինչո՞վ կը զբաղիք , անոնք կը պատասխանեն հպարտութեամբ .

— Թողախտաւոր ենք...

Կան ալ որ ամէն տեղ կը դիմեն , կը թախտին ու կ'երգեն .

— Կառավարութիւնը երեք օր պայմանաժամ տուած է ինձի քաղաքէն հեռանալու : Զբաղարտութեան մը զոհ եմ : Բարի վարուց վկայականներ ունիմ : Ստիպուած եմ Պելճիքա մեկնիլ : Երեք ամիսէ ի վեր բանտն էի : Սանթիմ չունիմ : Չամբորդութեան համար քիչ մը դրամ հաճեցէք տալ...

— Արհեստով ի՞նչ ես հիմա , կը հարցնէ իր խաչագող մէկը ընկերը .

— Երկրէն վտարուած մըն եմ...

Խաչագողներն ալ տաղանդ ունին եւ անուրանալի : Կան որոնք հասարակ մուրացկան կը մնան եւ օրապահիկ մը ճարելով կը գոհանան : Կան ալ որոնք եթէ աշխարհը կլլեն , աչք ու ձեռք կ'երկնցնեն լուսինը կողոպտելու : Այս վերջինները կը յառաջդիմեն , հնարքներ եւ հրաշքներ կը գործեն , կը յարգուին խաչագողներէ եւ նոյնիսկ պատուաւոր անձերէ եւ իբր հանձարեղ միշտ ամէնէն խիստ քննադատէն «պուաւօ»ն կը խլեն :

Անցեալները հայ հարուստի մը կը ներկայանայ վեց տարուան սկանակ հայ խաչագող մը , անգործ թշուառի դերով :

— Զորս օրէ ի վեր անօթի եմ , ի սէր Աստուծոյ 100 Փրանք տուէք...

— Վա՛յ , հարիւր Փրա՞նք պէտք է փորդ կշտացնելու համար...

— Քաւ լիցի , խիստ սահաւապեա եմ : Շաբաթէ մը ի վեր պանդոկէն վճարուած եմ դրամ չկարենալ վճարելուս համար : Շաբաթէ մը ի վեր փողոցները կը պառկիմ գիշերները : Շաբաթէ մը ի վեր ճերմակեղէն չեմ փոխած : 100 Փրանքը հազիւ կը փրկէ զիս , մէկ օրուան համար : Կ'ազաչեմ , չէ մի՛ ըսէք : Հաւատացէք անձնասպանութեան մասին կը մտածեմ... : Խեղբիս դալը բան մը չէ...

Հայ հարուստը 50 Փրանք տալով դժուարաւ կը ճամբէ մեր մարդուկը :

Խաչագողը սաստիկ կը բարկանայ : Եւ եթէ խաչագող մը եւ այն ալ տաղանդաւոր խաչագող մը բարկանայ , սոսկալի բաներ կ'ընայ ընել :

Սոյն խաչագողը կը լսէ թէ յիշեալ հայ հարուստը գիշերները խաղատուն մը կը յաճախէ : Լորտի նման կը հագուի , կը սքուի եւ երեկոյեան կ'երթայ հարուստին յաճախած խաղատունը եւ հարուստը այնտեղ գտնելով անոր գիմացը գիրք կը բռնէ : Հարուստը կ'ապշի , կը քարանայ ու կը պապանքի : Ահագին բաղմութիւն , եռուզեռ : Խաղը կը սկսի : Հարիւրներ , հազարներ : Թղթադրամները կը գիզուին հետզհետէ հայ խաչագողին առջեւ : Շատեր կը կորսնցնեն : Խեղճ հայ վաճառականը տխրաբացած է : Միշտ ձեռքը դրամասպանակին կը տանի եւ հարիւրնոցներ կը հանէ : Իր բոլոր հանածները հինգ վայրկեան վերջ կը մտնեն խաչագողին գրպանը : Կէս գիշեր կ'ըլլայ : Եւ տաղանդաւոր հայ խաչագողը հայ վաճառականին 50 Փրանքով , հայ վաճառականին 5000 Փրանքը կը կողոպտէ... պատուաւորապէս :

Ասիկա հեքեաթի իրականութիւնն չէ , այլ իրականութիւն մը... հեքեաթային :

Տաղանդը , ի ծնէ տաղանդը տարբեր է , նոյնիսկ խաչագողութեան մէջ :

Այս խաչագողներուն մէջ կան այնպիսիներ , որոնք իրենց դործը կ'արդարացնեն բարձր ու ինքնատիպ վարդապետութեամբ :

Անցեալները տեսակցութիւն մը ունեցայ անոնցմէ ահանաւոր դէմքի մը հետ .

— Եղբայր , մի՛ բարկանար խօսքերուս , բայց ինչո՞ւ խաչագողութեամբ կը պարապիք : Ինչո՞ւ այս անպիսի դործը :

— Խաչագող , մե՞նք... յիմարացա՞ր ի՛նչ է... Ընդհակառակը մենք հակախաչագողակաշիներ ենք... մենք խաչագողներու պատուհասն ու պատիժն ենք...

— Ի՞նչպէս...

— Ի՞նչպէս թէ ինչպէս... նախ ճշտենք թէ ո՞վ է խաչագողը : Մենք մասնաւոր առաքելութիւն մըն ենք բուն խաչագողներուն , իսկական , մեծ խաչագողներուն դէմ պայքարող... Մենք վրէժի կոմիտէ մըն ենք...

— Բայց որո՞նք են այդ բուն , այդ իսկական մեծ խաչագողները...

— Օ՛ր , արեւուն լոյսին տակն են . եպիսկոպոսներ , պատուելիներ ,

բարեգործականներ, առեւտրականներ, աղաներ, պէյեր, էֆէնտիններ ու վաշխառուներ...

— Հապա դուք ի՞նչ էք, դուք ալ անոնց փոքրաւորները չէ՞ք...

— Երբե՛ք, քաւ լիցի, ընդհակառակը...: Ես ըսի որ մենք մասնաւոր առաքելութիւն մը ունինք: Սաչագողները մենք չենք: Սաչագողները չէ՛ք, սպետերն են, տնօրէններն են, տէրերն են: Անոնք կը կողոպտեն ժողովուրդը: Մենք ալ զիրենք կը կողոպտենք պարզապէս ժողովուրդին վրէժը լուծելու համար...

— Լաւ: Ուրեմն ինչո՞ւ դուք հասարակ խեղճ ժողովուրդն ալ կը կողոպտէք երբեմն...

— Եղբայր, մենք հարուստը կը կողոպտենք ժողովուրդին վրէժը լուծելու համար, իսկ ժողովուրդէն ալ մեր տուրքը կը գանձենք որովհետեւ իրենց դատին համար կ'աշխատինք: Հարուստը պէտք է մերէ կողոպտուի, աղքատն ալ պէտք է իր վրէժը լուծողները վարձատրէ...:

ՃԱՊԱՂԱԿԱՆ

Ճապաղ գիւղի Հայրենակցական մեծ Միութիւնը ունէր մի հաւաքոյթ: Ճապաղ գիւղացիները անշուշտ այնտեղ էին: Գրեթէ բոլորին ալ կուրծքը ուռած էր: Պատճա՞ռ: Ճապաղ գիւղցի ըլլալուն: Ճապաղցի մը ոտքի կ'ելլէ ու կ'ըսէ.

— Ես ճապաղ գիւղցի եմ եւ...

Բայց զեւ հագիւ «Ճապաղ գեղցի եմ» ըսած, ուրիշ մը կ'ելլէ ու կը պոռայ.

— Եթէ դուն պարզապէս ճապաղգեղցի ես, ինքս բնիկ ճապաղցի եմ...

Ու ահա կը ստեղծուի խառնիճաղանճը:

— Իսկ ես ալ հարազատ ճապաղգեղցի եմ...

— Դուն ճապաղցի ես, սակայն ճապաղգեղի դուրսէն ես, մինչդեռ ես ճիշտ ճապաղի ներսէն եմ...

— Դուն կանուխէն Պոլիս ես գացած, մինչդեռ ես քառասուն տարի ճապաղգեղի մէջ եմ ապրած...

— Դուն ճապաղգեղի իմ արտերուս մշակն էիր, քու փրկիւած արնակի գիւղէն հեռու, դաշտին ծայրն էր...

— Ես ճապաղի ճիշդ կեդրոնը ծնած...

— Ու հոն ալ մեռած ես:

— Կը բողոքեմ, ճապաղ գեղցի մը չի՛ մեռնիր: Դուն է որ պիտի մեռնիս որովհետեւ մեր գեղին օդը քիչ ես ծծած...

— Ճապաղի օդն ու արեւը իմ գրպանիս մէջ էր: Ճիշտ եօթը տարի ճապաղ գեղի ոչսութիւնը ըրած եմ...

— Դուն ճապաղի վաշխառու, բռնապետը, լրտեսը, ամօ՛թն ես եղած...

— Ապերախտ, լիտի, լակոտ, մեր մեծ գերդաստանն է որ հիմնած է ճապաղը... Իմ գերդաստանս Անիէն է գաղթած:

— Քու գերդաստանդ էր որ ծախեց Անին, բայց չկրցաւ ճապաղը ծախել...

— Ուրացող, ճապաղի հրաշագործ եկեղեցին իմ աղնուական մեծ պապս է շինած...

— Մխալ է ու սուտ: Պապդ՝ Հաճի Թաթոս Կուլիուլ Օղլին Պրալբան գիւղացի էր: Թող իր գեղին մէջ շինեք եկեղեցին: Իմ իկիտ պապս ըսած է որ քու պապդ Պրալբանցի է:

— Հապա քու պապդ... Քու պապդ ալ Զովուան գեղէն վոնտուելով ճապաղ եկած է...

— Երկուքդ ալ լռեցէք: Ահա մէջտեղ ելաւ որ երկուքդ ալ բնիկ ու հարազատ ճապաղցիներ չէք: Մէկդ Պրալբանցի, մէկդ Զովուանցի: Բուն, բնիկ, հարազատ ու մաքուր ճապաղցի որ կայ, ան ալ ե՛ս եմ...

— Դո՞ւն... Դո՞ւն... Ծօ՛, քու մօրքուրներդ ու քուրերդ միշտ ձրձրան գեղ հարս կ'երթային, որովհետեւ դուք բնիկ ձրձրանցի էք...

— Դուն ալ պապանձէ ուրեմն: Կարձեմ ե՛ս պիտի մ'իտի իսկական ճապաղցի:

— Դո՞ւն, քէալաչ, դուն բնաւ բերան բանալու չես որովհետեւ հէրդ բօշա էր ու երեք տարին մէկ անգամ ճապաղ կուգար, դաշտին մէջ վրան կը պարնէր ու մեր գեղի հաւերը, սագերը, բագերը կը թալէր... Մի՞տդ է վերջին տարին բաներ մը թալաթոսեր էր որ Տ. Թորոսը սօխան առաւ վրան վաղեց...

— Հապա՛ Տ. Թորոսը... Ես Տէր Թորոսի հարազատ թոռն եմ: Մեր Տ. Թորոսն էր որ հիմնեց ճապաղի մանկապարտէզը...

— Թորոս քահանայ երբեք ալ ճապաղ չէ ծնած: Խեղճ վարժապետ մըն էր, փոքր անօթի, վրան դուլիս բաց, մեր գեղն եկաւ նախ մարդ եղաւ յետոյ ալ քահանայ...

— Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր...

— Լռեցէ՛ք, լուսթի՛ւն... ճապաղ գեղս առեր թալանի կուտաք,

դուք դուրսէն եկածներ, դուրսը ասրածներ, դուրսեցիներ, ու իմ անունը չէք յիշեր, ինձմէ չէք վախնար: Ես մար ու ձագով, եօթը պորտով բնիկ ձապաղցի եմ: ձապաղցի ըլլալս գրուած է, համ թուղթիս մէջ, համ դաղէթի մէջ...

— Դո՞ւն հա՞, դո՞ւն... ծօ՛, դուն չէ թէ ձապաղցի, հապա Պըրպըրանցի, Զովոանցի, Ճրճրանցի ալ չես... Դուն ծննդաւայր չունիս: ձապաղցի չես ու ա՛լ ասկից վերջ չես կրնար ըլլալ: ձապաղցին ե՛ս եմ, ե՛ս:

— Հողե՛մ ձեր գլուխն ալ, ձապաղն ալ: Դուն չես, ես չեմ, ա՛ն չէ, մենք չենք, դուք չէք, անոնք չեն, հապա ո՞վ են ձապաղցիները: Զեր ըսածին նայելով ձապաղ գեղը կամ անապատ էր ուր մարդ չէ ծընած ու ասրած եւ կամ ձապաղը Փարիզէն, Լոնտոնէն, Նիւ Եորքէն, Պոստոնէն շատ աւելի մեծ է որ ձեռք ձեռք կը քաշէք ու պատառ պատառ կ'ընէք: Վա՛յ հողեմ ձեր ձապաղը...

Ժողովը կը շարունակուի դեռ:

ԴԵՐԱՍԱՆ ՇԱՀԵԱԹՈՒՆԻԻ ԶԱՌԸ

— Պատերազմ էր: Զիւարի դադախներ խմբով անցնում էինք սահմանը: Զմեռ էր. համատարած ձիւն: Սոսկալի սեւ օրեր էին: Ամալութի՛ւն, լուսթի՛ւն, տխրութիւն: Մեր գլուխները վրայով անցնում էին ազոաններ, երամ երամ ազոաններ: Դրակետեաններ էին պատմում: Վիշտն ու վրէժը մեր սրտում՝ ձիւներով առաջ էինք գընում: Փետրուարի մի սառնաչունչ առաւօտ էր: Արեւը վաղուց ծագել էր: Զիւաներով շտապում էինք առաջ, ձիւնի լայնարձակ դաշտերի վըրայով:

Մէկ էլ, հեռո՛ւն, համատարած ձեան վրայ մի բան եմ նշմարում: Վերցնում եմ իմ դիտակը — որ իշխան Նիքոլա Տուտուկին Բուրցով Վլատիմիրիչն էր ինձ նուիրել — եւ նայում եմ, նայում... Հրամայում եմ իմ ձիւարի դադախների խմբիս առաջանալ արագ, շո՛ւտ, շո՛ւտ: Հինգ բոպէ եւ թուշելով հասնում ենք:

Ի՞նչ եմ տեսնում, իմ Աստուած... — Օ՛, եթէ հարիւր տարի ասրեմ չեմ մոռանայ, չեմ մոռանայ, չեմ մոռանայ...

Մի կին, մի հայ կին, մի հայ մայր, մի մայրի՛կ, պառկած համատարած ձեան վրայ, վիբրաւոր, մահացած: Մաղերը ցրիւ, կուծքը

բաց, կոնակը մերկ, շորերը պատառուտուն, աչքերը չեշտ դէպի Մասիսը...

Այո՛, մի հայ մայր եւ նրա կոնակին մխուած մի նիզակ, մի երկար նիզակ, երկա՛ր, երկա՛ր...: Եւ մի մանուկ որ անգիտակից խաղում է նիզակի հետ, նիզակի հետ խաղում, խաղո՛ւմ...

Իսկոյն ցած եմ իջնում ձիուցս եւ հրամայում իմ դադախներին՝ թողել մեռեալին, նահատակին: Մի քանի բոպէ անց դնում ենք մայրիկը փոսի մէջ: Փափախները հանում ենք. զինուորական բարեւ: Բոլորս սրբում ենք մեր արտասուքները: Յետոյ իմ թեւերի մէջ եմ առնում երեխան ու հարցնում.

— Բալա Ջան, ազիդ բալա, ի՞նչպէս է քո անունը:

Եւ նա ինձ ասում է.

— Ռօզաննա...

Օ՛, Ռօզաննա, ի՞նչ գեղեցիկն էր, ի՞նչ սիրունիկը... քնքուշիկ, անուշիկ... նայում եմ նրա աչքերին, նայում եմ, նայում... նա ունէր կապոյտ կապոյտ, գեղեցիկ աչքեր...

Ինձ հետ եմ վերցնում երեխան: Նրան որդեգիր եմ անում: Մի անգամ էլ սրբում եմ իմ արտասուքը, կանգնում եմ ձիու վրայ եւ վրէժի մի սոսկալի ձայնով հրամայում եմ դադախների խմբիս.

— Առա՛ջ:

Պատերազմ էր: Զմեռ. համատարած ձիւն: Սոսկալի սեւ օրեր էին:

Առաջին քաղաքը որ հասնում ենք՝ Ռօզաննային նոր շորեր եմ հագցնում, շաքարեղէն եմ առնում եւ գնում եմ որբանոց եւ տնօրէնուհուն ասում.

— Զեղ եմ բերում մի հայ որբուհի, իմ գեղեցիկ կապոյտ կապոյտ աչքերով Ռօզաննային: Լաւ պահեցէք նրան, լաւ պահեցէք, լա՛ւ...: Նա վշտի ծաղիկ է, նա տառապանքի կոկոն, նա կապոյտ կապոյտ գեղեցիկ աչքերով մի մատաղ հրեշտակ է: Նա հայ պարտիզի վարդ է, լաւ պահեցէք կարմիր վարդին, ա՛րոյշ վարդին, դաշտի միջին...: Մի օր կը գամ ու կը վերցնեմ իմ Ռօզաննային: Հիմի ես գնում եմ իմ ձիւարի դադախների խմբով: Պատերազմ է: Զմեռ. համատարած ձիւն: Սոսկալի սեւ օրեր...

Ու գնացինք: Զեմ ուզում ասել թէ ի՞նչ կուխներ, ի՞նչ ճակատամարտներ, ի՞նչ պաշարումներ արեցինք: Էդ բոլորը երկար կը լինի: Դա բարդ է, պարզ եւ հասկնալի: Պատերազմ էր: Զմեռ. համատարած ձիւն...

Անցան տարիներ: Արիւնի տարիներ: Աշխարհը բռնկել էր: Մոսկալի, սոսկալի սեւ օրեր...

Եւ ահա մի օր էլ պատերազմը վերջացած էր: Զինները հարուած էին: Իմ առաջին գործը եղաւ ցատկել իմ ձիու վրայ եւ գնալ այն քաղաքը ուր գտնուում էր իմ դեղեցիկ կապոյտ աչքերով Ռօզաննան: Հասնում եմ որբանոց, անօրէնուհուն առաջ եմ վազում եւ ասում...

— Տուր, յետ տուր իմ դեղեցիկ կապոյտ աչքերով Ռօզաննային, տուր ինձ իմ Ռօզաննային...

Բայց նա չի պատասխանում: Կախում է գլուխը եւ տխուր՝ ոչինչ չի ասում...

Բռնում եմ նրա ձեռքերից, ցնցում եւ աղաղակում...

— Ո՞ւր է իմ Ռօզաննան, իմ դեղեցիկ կապոյտ կապոյտ աչքերով Ռօզաննան... Ի՞նչ արիր նրան... ո՞ւր է... ասա... ասա...

Եւ նա ինձ ասում է, արցունքներ ձեռքից...

— Մեռա՛ւ...

— Մեռա՛ւ... մեռա՛ւ... իմ Ռօզաննա՞ն... իմ դեղեցիկ, սեւ սեւ աչքերով Ռօզաննա՞ն... մեռա՛ւ... ձի՛՞ր չէ... ձի՛՞ր չէ... Ռօզաննան... Ե՞րբ... ո՞րպէս... Ի՞նչից... մեռա՛ւ... Մեռա՛ւ... Մե՛ռ... ա՛... ա՛... ասա...

Ընկնում եմ ինչպէս մի ցաւազար, ընկնում եմ ինչպէս մի խելագար, ընկնում եմ:

Ափսո՛ս, իմ ջանս, իմ բարաս, իմ Ռօզաննաս գնացել էր միանալ իր ազիզ մայրիկին...

Հիմի, սիրելիներ, ամէն անգամ թատրոնական բեմի վրայ թէ սինէմայի օբժէքթիվի առաջ երբ մի արամաթիկ դեր եմ կատարում եւ ուզում եմ լալ՝ եւ խկոյն իմ աչքերի առաջ եմ բերում իմ Ռօզաննային, իմ դեղեցիկ սեւ սեւ աչքերով Ռօզաննային ու լալիս եմ, լալիս եմ, լալիս...

* * *

Այս ճառը իր շուքին նման հանգէսէ հանգէս պարտացուցած է մեր համակրելի Շահխաթունին: Որբերու, որբուհիներու, յեղափոխականներու, սպաներու, տիկիներու, կարմիր խաչերու, դրասէրներու, հայրենակցականներու հաւաքոյթներուն մէջ: Անշուշտ փոքրիկ տարբերութիւնով: Օրինակ՝

— Բեմի վրայ թէ սինէմայի օբժէքթիվի առաջ երբ ուզում եմ լալ՝ իմ աչքերի առաջ եմ բերում հայ որբուհուն՝ Ռօզաննային...

— Իմ աչքերի առաջ եմ բերում հայ կնոջ ամենաքնքոյշ փոքրիկ

ներկայացուցչին՝ Ռօզաննային...

— Իմ աչքերի առաջ եմ բերում հայ Կարմիր Սաչին սպասող Ռօզաննային...

— Իմ աչքերի առաջ եմ բերում Վանեցի որբուհուն՝ Ռօզաննային... կապոյտ, կապոյտ աչքերով Ռօզաննային ու լալիս եմ, լալիս, լալիս...

— Կարնեցի Ռօզաննային... սեւ սեւ աչքերով Ռօզաննային...

— Տրապոնցի Ռօզաննային ու լալիս եմ, լալիս, լալիս...

Իսկ մենք երբ ամէն անգամ ուղենք խնդալ՝ մեր աչքերուն առջեւ կը բերենք Ռօզաննան, հոգ չէ թէ աչքերը կապոյտ ըլլան կամ սեւ, Մ՛չեցի ըլլայ թէ Վանեցի, իրաւ ըլլայ թէ սուտ...

Այո՛, ամէն անգամ երբ ուղենք խնդալ կը յիշենք Ռօզաննան՝ անունով եւրոպացի, ճակատագրով հայաստանցի, կէս մէջքը տրապիզոնցի, միւս կէսը կարնեցի, աջ թեւը կեսարացի, ձախը՝ ակնեցի, մէկ աչքը կապոյտ, միւս աչքը սեւ, մէկ ձեռքը թուխ որպէս սարսափելի սեւ օր, միւս ձեռքը սպիտակ՝ որպէս համատարած ձիւն:

ՃԱՊԱՂ ԳԻՒՂԻ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԸ

Ճապաղ Գիւղի Հայրենակցական Միութեան Փարիզի Կեդրոնական Վարչութիւնը մի գաղափար էր յղացած: Մի խիստ հայկական գաղափար: Այն է՝ հրատարակել մի ամսաթերթ, որ պիտի ըլլար Միութեան պաշտօնաթերթը: Վարչութիւնը կը հրաւիրէ Միութեան անդամները ընդհ. ժողովի:

Անդամներուն թիւը 32 է Փարիզի մէջ: Մասնաւոր հրաւիրագիրներ կը ղրկուին անդամներուն: Որոշեալ օրը բոլոր ճապաղցիները ներկայ են:

Զկայ բացակայ: Հարցը լուրջ է: Թերթ պիտի հրատարակուի:

Վարչութեան ատենապետը՝ խօսք ուղելով ընդհ. ժողովի նախագահէն՝ կը պարզէ գաղափարը: Քանի մը հոգի կը խօսին: Ընդհանուր խանդավառութիւն:

Բացարձակ ու ջախջախիչ ու միաձայն մեծամասնութեամբ կ'ընդունուի թերթ հանելու առաջարկը: Ոչ ոք կ'ընդդիմաբանէ:

Կը շնորհաւորեն վարչութեան գաղափարը: Ոմանք կը դատապարտեն վարչութիւնը այս գաղափարը տարի մը առաջ յղացած չըլլալուն համար: Ուրիշներ կը պաշտպանեն վարչութիւնը ըսելով որ՝

այն ատեն դեռ կանխահաս էր այդ գաղափարը, թէ սնտուկին մէջ բաւականաչափ փող չկար եւն.:

Վերջապէս, սկզբունքով խանդավառութեամբ ու կը կրկնենք միաձայնութեամբ կ'ընդունուի թերթ հանելու գաղափարը: Խմբագրապետ մը կարգել հարկ կ'ըլլայ թերթին: Զանազան անուններ կ'առաջարկուին: Ոչ մէկը կ'ընդունուի:

Գաղտնի քուէարկութեան կը դրուի խնդիրը: Ամէն ոք մէկ քուէ միայն կը շահի: Ամէն ոք իր քուէն տուած էր... Ինքզինքնին: Իրարու երես կը նային: Կը հասկնան զիրար: Ամէն ճապարակ կ'ուզէ ըլլալ խմբագրապետ: Եւ մը կը փնտռուի:

Մէկը հնարք մը կը գտնէ ու կ'ըսէ.

— Խմբագրապետ հարկ չէ թերթին: Կազմենք մի խմբագրական մարմին:

Ուրիշ մը տարբեր ձեւի կը վերածէ առաջարկը.

— Թերթը պիտի ունենայ անշուշտ զանազան բաժիններ: Ամէն բաժին հարկ է ունենայ իր խմբագիրը:

Ուրիշ մը բոլորովին կը լուսաբանէ առաջարկը.

Թերթը պէտք է ունենայ շատ բաժիններ որպէսզի ըլլայ բազմահամ, պէսպիսուն:

Այս առաջարկը բերողը պարզապէս ըսել կ'ուզէ՝ թերթը պէտք է ունենայ բազմաթիւ խմբագիրներ:

Յանկարծ մէկը հարց կուտայ.

— Քանի՞ էջ պիտի ըլլայ թերթը:

— Տասնըվեց էջ, կը պատասխանէ վարչութեան ատենապետը.

— Ուրեմն տասնևվեց բաժիններու կը վերածուի, տասնևվեց խմբագիրներով: Օրինակ՝ խմբագրականի բաժին, գրական բաժին, պատմական բաժին, աշխարհագրական բաժին, բանասիրական բաժին, բանահիւսական բաժին, տնտեսական բաժին, լրագրական բաժին, քաղաքական բաժին, կրօնական բաժին, աղգային բաժին, գիւղատնտեսական բաժին, գաւեշտական բաժին, հէքեաթներու բաժին, պրօպագանդի բաժին, ատենագրական բաժին:

Դեռ բաժինները պիտի երկարէին, երբ անդամ մը կը պոռայ.

— Բաւական է: Թերթը տասնըվեց էջ է: Տասնըվեց բաժին եղաւ:

Այս առաջարկը մեծ ծափահարութեամբ կ'ընդունուի:

Ահագին աղմուկէ վերջ կ'ընդունուի խմբագրական կազմը բաղկացած տասնըվեց խմբագիրներէ: Կը կարգացուի իւրաքանչիւր խմբագրի աշունը իր ստանձնած բաժինին յիշատակութեամբ:

Նոր աղմուկ ու նոր անհամաձայնութիւն: Միութեան անդամներուն ընդհ. թիւը 32 ըլլալով, 16ը ընտրուած էին խմբագիր: Միւս ոչ խմբագիր 16ը կը պոռայ ու կը բողոքէ: Ոմանք դեռ կանխահաս կը գտնեն թերթ հանելու ծրագիրը: Ուրիշներ քանի մը հոգիի փառասիրութեան կը վերադրեն դործը: Երրորդներ սպասիկ կը քննադատեն թերթ հանելու միտքը վնասակար ու կործանիչ գտնելով դայն: Զորրորդներ ալ կը հրամայեն ուղղակի հրաժարիլ այդ գործէն, հակառակ պարագային սպառնալով միութենէն հրաժարիլ:

— Քուէի դնենք, կը պոռայ խմբագիրներէն մին:

— Անողուտ է քուէի դնելը, կը ճչայ իրաւամբ, ուրիշ խմբագիր մը ու կ'աւելցնէ, եթէ քուէի դնենք 16 խմբագիրներու համաձայնութեան քուէ պիտի տանք ու պարզ է որ 16 ոչ-խմբագիրներ ալ հակառակ քուէ պիտի տան:

Երրորդ եւ հնարամիտ խմբագիր մը կը պոռայ.

— Կեցէ՛ք: Խիստ կարեւոր բաժին մը մոռցուած է: Թերթը անշուշտ կողք պիտի ունենայ: Կողքին վրայ պիտի ըլլան անշուշտ ծանուցումներ: Խիստ կարեւոր եւ նոյնիսկ ամենակարեւոր բաժինն է աս: Այս բաժինն համար ալ խմբագիր մը պէտք է նշանակենք:

16 ոչ-խմբագիրներէն ամէն մէկը թեկնածու կը ներկայանայ ծանուցմանց բաժնին, մոռնալով որ մէկ վայրկեան առաջ համաձայն չէր թերթին հրատարակութեան: Մէկ հոգի կ'ընտրուի: Կը մնան 15 հոգի ոչ-խմբագիրները ու կրկին կը սկսին փոխել իրենց բերանը ու պոռալ թերթին դէմ: Այս անգամ քուէի դնել կ'առաջարկեն խմբագիրները: Շատ պարզ է որ 17 հոգի թեր ու 15 հոգի դէմ քուէ կուտան:

Ու ճապաղ դիւղի Հայրենակցական Միութեան Փարիզի ընդհ. ժողովը, ձայներու մեծամասնութեամբ կ'որոշէ թերթը հանել: Միւս տասնեւհինգ ոչ-խմբագիրներն ալ նոր ժողով մը գումարելով կ'որոշեն թերթը խաչը հանել:

Ամէնուն ալ կը մաղթենք յաջողութիւն:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Երկու բարեկամներու միջեւ կ'անցնէր հետեւեալ խօսակցութիւնը, փարիզեան սրճարանի մը մէջ:

— Կարդացի՞ր թերթերու մէջ...

— Ի՞նչ բան...

- Անատուլու մնացած հայ բեկորներուն արտաքսումը...
- Դեռ հայերը կան եղեր ան կողմերը...
- Եւ բաւական թուով...
- Պոսալ, հայ ազգը շատ է եղեր, չըսես...
- Բարեկամ, ի՞նչ կ'ընես, կը քնանա՞ս...
- Ո՛չ, մ'ինչեւ ժամը տասներկու կը դրօսնում, ապա կը սլառկիմ ու քունս չի գար...
- Երանի քեզի...
- Ի՞նչ երանի... անքնութենէ կը տառապիմ — սոսկալի բան է:
- Եւ այդքան ժամանակ անքուն մնալով դոնէ հայերէն մէկ թերթ չե՞ս կարդար որ դիտնաս թէ Անատուլի մէջ բոլորովին խղճալի վիճակի մէջ մնացած դեռ հաղարաւոր հայեր կան որոնք հիմակ ողբերգական պայմաններու տակ դուրս կը հանուին երկրէն ու կը դիպուին Սուրիա...
- Եղբայր, ատանկ բաներ կարդալով կը կարծես որ անքնութեանս դարման մը կ'առաջարկես: Անօգուտ է... բայց անգամ մը պիտի փորձեմ ընթերցումը: Թերթ չէ, սակայն կ'ուզեմ «Հաղար ու մէկ Գիշերներ»ը կարդալ...
- Եղբայր, է՛ս ի՞նչ կ'ըսեմ, դո՛ւն ի՞նչ կ'ըսես:
- Անքնութեան մասին չէ՞ որ կը խօսինք:
- Անատուլի հայերու մասին...
- Իրա՞ւ. անո՞նք ալ անքնութենէ կը տառապին... է՛, հիմակ կը հասկնամ որ խղճալի են: Սոսկալի բան է անքնութիւնը...
- Անոնք անքուն են՝ անօթի, ախտուն ըլլալուն համար...
- Պարա՛պ խօսք, ես կուշտ եմ, տուն ալ ունիմ, ինչո՞ւ չեմ կըրնար քնանալ. հիւանդութիւն է աս, բարեկամս...
- Եղբայր, ինքզինքիդ եկուր...
- Անօգուտ է, ամէն բան փորձեցի... բժիշկները տարիքիս կը վերադրեն... Ալ ի՛նչպէս ինքզինքիս պիտի գամ, դէպի մահ կ'երթանք...
- Դէպի մահ այդ թշուառները կ'երթան...
- Իրաւ որ քիչ մըն ալ ազատում է, բայց կեանքն ալ անոյ է...
- Բարեկամ դուն անքնութենէ չէ որ կը տառապիս, այլ... քնախտ է...
- Վա՛յ, ատ ի՞նչ յայտնութիւն է... Երանի թէ ատանկ ըլլար... գիշեր մը քովս եկուր եւ կը համոզուիս:
- Եղբայր, բաւական է սա քունի պատմութիւնդ, ես կը խօսիմ

Անատուլէն վտարուող խեղճ հայ բեկորներու մասին, որոնք սարսափելի վիճակի մէջ Սիւրիա հասած են ու իրենցմով գրագող մարմին մը չունին...

— Սիւրիա՞ հասած են: Ա՛լ ի՞նչ ըլլայ... հանդիստ քուն մը թող քաշեն: Երկիրը տաք է, անկողին — վերմակի ալ պէտք չկայ: Վաղը միւս օր ալ Աստուած եղորմած է...

— Ատ ըսածդ եղաւ, վայլե՞ց...

— Ի՞նչ կայ որ...

— Ատ ի՞նչ սիրտ է քու սիրտդ...

— Հայու սիրտ է...

— Ճիշտ ես, ըսելիք չունիմ: Ատ քու սիրտդ Բարեգործականի սիրտ է, հայրենակցական միութեան սիրտ է, հայ հարուստի սիրտ է:

— Հարկաւ, սրտիս ուժով ըլլալը դիտեմ, ի՞նչ օգուտ սակայն որ անքնութենէ կը տառապիմ...

— Ու ասկից վերջ բնաւ պիտի չկարենաս քնանալ...

— Վա՛յ, ատ ո՞վ ըսաւ, բերանդ խեր բաց...

— Կը մաղթեմ որ բնաւ չկարենաս քնանալ... Ու եթէ վայրկեան մը մրափը գայ ու աչքերդ փակէ, չար, սոսկալի երազներ տեսնես... Անատուլի հայերը իրենց սակրուա ձեռքերով յարձակին վրադ, բռնեն վիզէդ, սրտէդ ու սեղմեն...

— Խենթեցա՞ր, չարացա՞ր... Անոնք իմ ցաւի եղբայրներս են քանի որ... անքուն են:

ՌԻՍՈՒՑԶԱԿԱՆ

Փրանսայում կայ մի որբանոց: Այդ որբանոցը հիմնած է մի «ազգային բարերար»: Այդ որբանոցում անշուշտ կան խոհարարներ, լուսցարարներ, ծառայողներ եւ ուսուցիչներ: Անշուշտ երբեմն կը պատահին ներքին փոքրիկ խնդիրներ: Անշուշտ այդ առթիւ պարոն տնօրէնը կ'ըսէ խօսքեր: Անշուշտ մենք ալ իր խօսքերէն կ'ընենք մէջբերումներ: Ուրեմն մի ճաշակ տնօրէնին խօսքերէն.

— Ի՞նչ է... դարձեալ խոհարարը ըմբոստացա՞ւ... Շո՛ւտ, դոհացում տուէք իրեն, չո՛ւտ... հակառակ պարագային դուցէ կ'առնէ կը քալէ... Օ՛, սոսկալի բան կ'ըլլայ... խիստ դժուար է խոհարար մը ճարել... ու մանաւանդ մ'ինչեւ որ խոհարար մը ճարենք՝ ի՞նչ պիտի ուտեմ ես, ի՞նչ պիտի ուտէք դուք, ի՞նչ պիտի ուտեն որբե-

ըր... խոհարար ճարելը դժուար է... Գոհացում տուէք իրեն... կամ թէ ես խոհանոց երթամ ու իրեն ներկայանամ :

Ու համեստ եւ բոլորին ստամոքսներով մտահոգուող խղճամիտ տնօրէնը իր խորհրդակիցներու խումբով պաշտօնապէս կը մտնէ խոհանոցէն ներս ուր պէխաթուիչ եւ իւղափայլ մեծ խոհարարապետը նստած է աթոռի մը վրայ, ստքը ստքին վրայ ու զայրոյթով կը ծխէ՝ կը ծխէ՝...

Տնօրէն ու ուղեկիցները կը խոնարհին, հաղար կտոր կ'ըլլան խոհարարապետին առջեւ որ բարեհաճի եփել ապուրը, խաշել գետնախնձորը, տապկել ձուկը : Ու գոհացում կուտան, կը ժպտին : Խոհարարապետը կը տնկէ իր արժանապատուութիւնը եւ կը բարեհաճի վերջապէս լաւ ապուր մը խառնել ու անօթի չսպահել որբանոցը :

Ուրիշ օր մըն ալ անշուշտ ուսուցիչ մը կ'ունենայ փոքրիկ խնդիր մը : Որ եւ է փոքրիկ մի խնդիր : Անշուշտ տնօրէնը դարձեալ կը հանէ իր հեղինակաւոր ձայնը ու կ'ըսէ .

— Ի՞նչ է... Ուսուցիչ պր. Ա. ը խնդր՞ ունի... Թող զգոյշ ըլլայ... կը ճամբեմ... Փարիզի մէջ հաղար հատ անօթի ուսուցիչ կայ... հաղար հատ անօթի ուսուցիչ... Մէկը կ'առնեմ իր տեղը կը բերեմ...

Եւ խոհարար ու որբեր կը լսեն տնօրէնին այս պատգամը : Խոհարարը կ'ըսէ .

— Փա՛ռք քեզ Տէր, յաղազս ամենայնի փա՛ռք քեզ, որ զիս խոհարար ես ստեղծեր... Կ'ուտեմ ու կը կերցնեմ... Ի՞նչ պիտի ըլլար վիճակս եթէ ուսուցիչ ծնէիր զիս... Ինքզինքս պիտի կերցնէի ու ինքզինքս ուտէի :

Ու որբերը կ'աղօթեն .

— Ո՛վ մեր հայր Աստուածը, մէկ խնդիր մը ունինք քեզի : Իմաստութիւն չէ որ կ'ուղենք : Ուսում զարգացում չէ որ կ'ուղենք : Ամենեւին : Վերջը դժբախտ ուսուցիչ մը կ'ըլլանք : Ո՛վ Աստուած, մեզի մէջմէկ խոհարար չինէ, խոհարար... : Տուր մեզի սորվիլ ապուրներ խառնել, տապկել, խաշել ամէն բան, ջարդել բոյս ու կենդանի եւ երջանկանալ... :

Եւ օր մըն ալ ուսուցչի պէտք կ'ունենայ տնօրէնը : Կը լսէ թէ Փարիզում կայ մի երիտասարդ որ դիտէ մանկավարժութիւն եւ անպաշտօն է : Նամակ : Երիտասարդը կ'ընդունի առաջարկը : Տեսակցութեան համար որբանոց կը մեկնի : Կը ծանօթանան : Տնօրէնը կ'ըսէ թէ գրաւոր կերպով պիտի յայտնէ իր վերջին խօսքը : Երիտասարդը կը վերա-

դառնայ Փարիզ : Ու քանի մը օր վերջ կը ստանայ հետեւեալ «ութիւն» երգակ նամակը :

«Աղնիւ պարոն,
Տնօրէնութիւնս յարմար դատեց ձեզ մեր որբանոցին ուսուցչական պաշտօնին համար : Հարկ է սակայն ստորագրէք եւ ապա գործադրէք հետեւեալը .

— Երդուելով կը խոստանամ որ տնօրէնին հանդէպ պիտի ունենամ միշտ խոնարհութիւն, հեղութիւն, հնազանդութիւն, քաղաքավարութիւն, կենցաղագիտութիւն, քաղցրութիւն, փոքրութիւն, գնահատութիւն, երախտադիտութիւն եւ լուութիւն :

Երդուելով կը խոստանամ որ խոհարարին հանդէպ պիտի ունենամ միշտ զգուշութիւն, բարեկամութիւն, աղնութիւն, շնորհակալութիւն, շնորհաւորութիւն, զուարթութիւն, համբերութիւն, առողջութիւն եւ օգնութիւն :

Երդուելով կը խոստանամ որ որբերուն հանդէպ պիտի ունենամ միշտ անձնազոհութիւն, անձնուրացութիւն, քաջութիւն, ներողութիւն, աչադոցութիւն, ականջագոցութիւն, սրտաբացութիւն եւ գերութիւն :

Երդուելով կը խոստանամ որ ծառայող կանանց հանդէպ պիտի ունենամ միշտ զգաստութիւն, Ժուժկալութիւն եւ ներքինիութիւն :

Ի մի բան երդուելով կը խոստանամ որ պիտի ունենամ հաստատութեան հանդէպ երկրպագութիւն, փառաբանութիւն եւ առնուազն մէկ տարուան վսեմ ստրկութիւն :

Այս բոլոր յատկութիւնները եթէ ունենաք պիտի ստանաք ամսական 700 Փրանք : Առաջին ամիսը սակայն փորձի շրջան ըլլալով կը վճարենք միայն 600 Փրանք» :

Երիտասարդը հաշիւ կ'ընէ որ իւրաքանչիւր «ութիւն» մէկ Փրանքի հաղիւ կուգայ : Նամակ մը կը գրէ տնօրէնին ու կ'ըսէ .

«Աղնիւ բարեկամ,
Ես անկարող եմ պաշտօնավարել ձեր բարձր հաստատութեան մէջ : Ես սակայն սիրով ամէն ամիս ձեզի 700 Փրանք կը զրկեմ, պայմանաւ որ ինձմէ ուղած ձեր «ութիւն»ներուն քառորդը դո՛ւք գործադրէք» :

Տնօրէնը հիմակ կը փնտոէ ուսուցիչ : Մարդ մըն են զրկած Փարիզ որ հազարաւոր անօթի ուսուցիչներէն մէկը գտնէ ու որբանոց զրկէ : Մարդը կը գտնէ ուսուցիչ մը ու կ'ըսէ .

— Բարեւ բարեկամ, մեր որբանոցին ուսուցիչ կ'ըլլա՞ս...

- Կ'ըլլամ...
- Այս ցերեկ ճաշեցի՞ր...
- Այո՛, ճաշեցի... ինչո՞ւ այս հարցումը...
- Ոչինչ... Այս առաւօ՞տ ալ ճաշեցիր...
- Այո՛, անշուշտ...
- Երէկ իրի՞կուն ալ ճաշեցիր...
- Բայց անտարակոյս...
- Լա՞ւ կը ճաշես միշտ...
- Բայց հարկաւ... Այս քաղաքին մէջ լաւ չճաշողը ճամբան կը բռնէ...
- Ուրեմն միշտ ճաշած ես...
- Շատ պարզ է...
- Չեղաւ ուրեմն... Դուն փարիզ գտնուող ուսուցիչներէն չես:
- Ո՞ր ուսուցիչներէն...
- Անօթի ուսուցիչներէն...
- Փա՞ռք Աստուծոյ, փորս կուշտ է...
- Ես անօթի ուսուցիչներէն կ'ուզեմ հատ մը առնել ու հետս տանիլ...
- Բարի՞ք ըրած ըլլալու համար...
- Օ՛, ո՛չ... որպէսզի հնազանդ ըլլայ ու երախտապարտ...
- Սքանչելի միտք է...
- Մարդը երկրորդ ուսուցիչ մը կը գտնէ ու կը հարցափորձէ.
- Բարեւ, մեր որբանոցը ուսուցիչ ըլլալ կ'ուզե՞ս...
- Կ'ուզեմ...
- Ճաշա՞ծ ես...
- Շնորհակալ եմ... Երկու ժամ է որ ճաշած եմ...
- Ի՞նչ ճաշեցիր...
- Մարտին ձուկ, պիւֆթէկ, ոսպ եւ պանան...
- Ի՞նչ կ'ըսես... Երէկ իրիկո՞ւն ալ այդպէս ճաշեցիր...
- Ո՛չ... Երէկ իրիկուն աւելի լաւ ճաշեցի...
- Ուրեմն անօթի չես...
- Անշուշտ ոչ՝ քանի որ դեռ երկու ժամ է որ ճաշած եմ...
- Այսինքն անօթիին մէկը չես...
- Աստուած չընէ...
- Չեղաւ ուրեմն, բարեկամս...
- Այդ մարդուն պատահեցայ եւ ըսի.
- Բարեկամս, ինչո՞ւ անպատճառ անօթի ուսուցիչ կը փնտռես:

Մարդը պատասխանեց.
 — Եղբայր, ի՞նչ ընեմ, անանկ կ'ուզեն... Անօթի ուսուցիչ կ'ուզեն որբանոցէն...
 — Ի՞նչ պատճառաւ...
 — Որպէսզի վարձատրեն դայն... սատկած էշու գինով:

ԹԵՐԹ ՄԸ ՈՐ ԶՍՄԲԻԻՂ ԶՈՒՆԻ

Փարիզի մէջ Հնչակեանները շարաթը մէկ անգամ թերթ մը կը հանեն «Նոր Երկիր» անունով:
 Այս թերթը չորս էջերէ կը բաղկանայ:
 Առաջին էջին վրայ կը հրատարակուին խմբագրութեան եկած նամակները:
 Երկրորդ էջին վրայ կը հրատարակուին հարսանիքի, նշանուքի, ծնունդի ու սեղանի նկարագրութիւնները:
 Երրորդ էջին վրայ կը հրատարակուին «հնչակեան դրական անդաստանի սոխակ» Օր. Նունիկ Տ. Ղեւոնդեանի քերթուածները:
 Չորրորդ էջին վրայ կը հրատարակուին Օր. Նունիկի յարձակողական յօդուածները, հնչակեան ընկերներու քերթուածները եւ հնչակեան Դաւիթ բէկի բառարանին... ծանուցումը:
 Առաջին էջին վրայ են միշտ խմբագրութեան եկած նամակները միայն: Նամակներուն մէջ ներփակուած դրամը չկայ անշուշտ: Հաւանարար այդ դրամներուն ալ քիչէն զնեն ի մօտոյ:
 Կարդանք քանի մը հատ այդ նամակներէն.
 «Միբելի ընկերներ,
 Ներփակ կը գտնէք 20 տողար, իբր բաժնեգիր, իբր նուէր, իբր նպաստ, իբր փող: Այս դրամով հնչակեան շեփորը լաւ մը հնչեցուցէք»:
 Ս. Դ. Հնչ. կուսակցութեան ... Մասնաճիւղ
 Շարունակներ:
 «Միբելի ընկերներ,
 Հանդէս պիտի սարքէինք ձեզի ի նպաստ, բայց մեր կորովի ընկերներէն միին մեռաւ: Մենք ալ հաւ մը առինք, աճուրդի դրինք ու 1000 Քրանք հաւաքեցինք ու ձեզի կը դրկենք:
 Այս դրամը առէք եւ հնչակեան դրօշը պարզեցէք»:
 Հնչակեաններ

Դեռ կայ, շատ կայ:

«Սիրելի ընկեր խմբագիր,

Դաշտահանդէս սարքեցինք: 800 Փրանք հասոյթ եղաւ: Կէսը մեղի, կէսը ձեղի: Կեցցէ՛ ընկերակցութիւնը: Այդ դրամով դաշտահանդէս մըն ալ դուք սարքեցէ՛ք ու կէսը մեղի ղրկեցէ՛ք: Կեցցէ՛ Հնչակեան ճայութիւնը:

Ս. Դ. Հ. Կուսակցութեան ... Մասնաճիւղ

Կա՛յ, է՛լի կայ...

«Ընկերներ,

Կեցցէ՛ Ս. Դեմօկրատ Հնչակեան Կուսակցութիւնը:

Հին հնչակեան մըն եմ:

Ներփակ կը ղրկեմ 50 Փրանք եւ ոտանաւոր մը, խնդրելով որ տպէք»:

Ընկեր Զ. Մ.

Ու դեռ նամակներ կան որոնք անտիպ կը մնան: Զրկանք մըն է այս բանը հայ լրագրութեան, գրականութեան ու պատմութեան համար: Պէտք է բոլորը հրատարակութեան տալ:

Դեռ անցեալները մէկը նամակ մը գրեց ու չտպուեցաւ:

Կը հաւաստեն թէ յաջորդաբար ամէնքն ալ պիտի տպուին:

«Նոր երկիր»-ի ղրկուած ամէն յօդուած, ամէն թղթակցութիւն, ամէն քերթուած ու ամէն նամակ կը տպուին:

Այս թերթը աշխարհի միակ լրագիրն է որ իր խմբագրատան մէջ չունի... դամբիւղ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԼԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Լուր մը չըջան ըրաւ երկրագունդին վրայ.

— Թրօցքին արտասահման կ'աքսորեն... Թրօցքին Թուրքիա գընաց... Թրօցքի կը ճամբորդէ...

Ծանօթ աղբալին մը օձիքէս բռնեց այդ օրերուն եւ ըսաւ.

— Իմացա՞ր, չէ՞... Թրօցքին արտասահման կը մեկնի... Ռուսիայէն դուրս են հաներ զինքը...

— Այո՛, ի՞նչ կայ որ...

— Եղբայր, ըլլալի՞ք բան է...

— Այո՛, ըլլալի՞ք բան էր Ռուսիոյ մէջ բանտէ արձակուելը...

— Ատանկը չէ... մարդը հիմա ի՞նչպէս պիտի ապրի...

— Ազատ պիտի ապրի...

— Ատանկը չէ... ի՞նչպէս պիտի ապրի... կեանքը սուղ է... մենք չարաչար աշխատելով հազիւ կը տապկուինք կոր, խեղճ Թրօցքին ի՞նչպէս պիտի տապկուի...

— Ան ալ իր իւղովը կը տապկուի...

— Եղբայր ի՞նչ կը դիմանայ պատրաստը ուտելուն...

Բարեկամիս բարի միամտութեանը վրայ փոխեցի խօսելակերպս...

— Իրաւ անանկ... պատրաստ ուտէ՛ տարի մը ուտէ... վե՞րջը...

— Տեսա՞ր... հիմա համոզուեցա՞ր որ վերջը թշուառութիւն է...

— Այո՛, ողբերգութիւն է այդ մարդուն վերջը...

— Եղբայր, ես ու դուն, ամէն կարգի գործեր ըրած ե՞ք ու կ'ընենք... բայց Թրօցքին ի՞նչպէս գործի ըլլայ... խե՛ղճ մարդը...

— Եկուր, սա սրճարանը մտնենք ու ճար մը խորհինք...

— Մտնենք ու խորհինք, ըսաւ ազնիւ բարեկամս:

Առ ի չդոյ՛է օղիի երկու «ամուրէթ» ապսպրեցինք: Խմեցինք Թրօցքի կենացը: Շատ մտածեցինք Թրօցքի կեանքը ապահովելու մասին, բայց միջոց մը չկրցանք գտնել: Առաջարկեցինք հանգանակութիւն ընել, Բարեգործականէն նպաստ խնդրել եւ թերթերու միջոցաւ Փօնտ մը բանալ: Չեղաւ: Բարեկամս խիստ տխրեցաւ: Վերջին պահուն ըսի անոր.

— Դեռ շատ մտատանջուելու պատճառ չունինք... իր իւղը մէկ տարի կը բաւէ իրեն...

Բարեկամս բամուռեցաւ ինչ ըսելով.

— Չէի գիտեր որ Թրօցքին այդքան գէշը ու իւղոտ մէկն է...

Կիրակի օրերը Փարիզի գրոց բրոց տղաքը կը հաւաքուին Սէն Միչէլեան սրճարանի մը մէջ: Կը խօսին գրականութենէ, գիտութենէ եւ արուեստներէ: Ամէնուն թեւին տակ գիրք մը կամ հանդէս մը ու ամէնուն գլխուն տակ տաղանդ մը:

Կիրակի մըն էր: Ձրանստական պատկերադարձ հանդէս մը կը թըղթատէին: Յանկարծ էջ մը՝ որուն վրայ Պուլկարիոյ թագաւորը: Մէկը իր ձեռքը դրաւ այդ էջին վրայ ու ըսաւ.

— Գիտէ՞ք, տղաք, աշխարհի ամենէն աղքատ թագաւորն է աս...

— Իրա՞ւ... ի՞նչ կ'ըսես... հէ՛ք թագաւոր, ըսին ամէն կողմէ...

Ու բոլոր նայուածքները դուրսով լեցուն՝ թափեցան պատկերին վրայ ...

— Այո՛, տղաք, աշխարհի ամենէն աղքատ թագաւորն է... Ի՞նչ ստացած ամսականը աւելի քիչ է քան ամերիկեան հաստատութեան մը տնօրէնին ամսականը...

— Խեղճ թագաւոր...

— Արդէն դէմքէն յայտնի է, հպարտ թշուառութիւնը իր կնիքը դրոշմեր է անոր դէմքին վրայ:

— Ահաւասիկ ազնուական թշուառ մը:

— Իր ստացած ամսականը նուազ է Ֆրանսացի երեսփոխանի մը ամսականէն...

— Ի՞նչ անարդարութիւն, ըսաւ մին...

— Իր ստացած ամսականը կէսն իսկ չէ Վահան Մալեղեանի ստացած ամսականին:

— Ուրեմն մեր աղզը աւելի կ'արժէ քան պետութիւն մը, ըսաւ մին...

— Ուրեմն ա՛լ պէտք չէ ըսել, թէ թագաւորութիւննիս կորսնցուցած աղզ մըն ենք, քանի որ կայսր մը կը պահենք մեր մէջ, ըսաւ ուրիշ մը...

— Հաւանաբար իր ստացած ամսականը հաւասար է ամերիկահայ բանուորի մը շաբաթավարձին, ըսաւ մին...

— Այո՛, հաստատեց առաջին խօսողը:

— Խեղճ թագաւոր պուլկարաց, ողբաց քնարերգու մը:

— Ամէն օր խաշէր պանիր կ'ուտէ, ըսաւ սկսնակ վիպասան մը:

— Առատ կաթ կը խմէ միայն, ըսաւ ուրիշ վիպասան մը:

— Իր ցերեկուան կերակուրը չուշկա պղպեղ է...

— Իրիկուններն ալ պուսս կ'ուտէ միայն...

— Խեղճ թագաւոր...

— Դժբա՛խտ Պուլկարիա...

— Անարդարութիւն...

Ոչ մէկ հարցի մէջ համաձայն չեղող այս փոթորկավարս տղաքը միաձայն զթասրտութեամբ ողբացին դժբախտ Պուլկարիոյ խեղճ թագաւորը...

* * *

Հինգ տարի առաջ Վենետիկ էի:
Գիշերները, Մուրատ — Ռափայէլեանի ստորերկրեայ մէկ սենեա-

կին մէջ կը հաւաքուէինք մի քանի ուսանողներ եւ հսկիչ — ուսուցիչներ:

Գիշեր մը, ուսանող մը, խտալական օրաթերթ մը հանեց դրպանէն ու ըսաւ:

— Տղա՛ք, գիտէ՞ք թէ Իտալիոյ թագաւորական ընտանիքին ճաշացուցակը ի՞նչ է...

— Ձեռք գիտեր ի՞նչ ըլլաւ, սակայն, կը կարծենք որ վառաւոր բան է, ըսաւ շատակեր մը:

— Չարաշար կը սխալիս, ըսաւ խօսողը, հիմակ մտիկ ըրէք, թէ ի՞նչ կուտեն թագաւորը, թագուհին եւ իշխանուհի աղջիկները:

Ու կարգաց հետեւեալը:
— «Մեր սիրելի թագաւորը եւ իր ընտանիքը իրենց ժուժկալ աննդառութեամբ սակաւակերութեան եւ պարզակերութեան բոլոր համաշխարհային մրցանիշները կը կորսեն: Անոնց առաւօտեան նախաճաշն է հետեւեալը:

- Քարուշինօ քաֆէ եւ կալէթա,
- Հաց եւ կրավեէրա:
- Անոնց ցերեկուան ճաշն է.
- Մաքառոնի սուրա:
- Մաքառոնի (բաստա շուտա):
- Պիսքօթա:
- Անոնց նախընթրիքն է.
- Վինօ տի Մարսալա:
- Հաց եւ կրավեէրա:
- Ընթրիք.
- Վինօ տի Սիրակուսա:
- Բաստա շուտա...
- Սպակէթթի...
- Բիզօթթօ...
- Միս եւ վարդանոյշ...
- Ողբը սկսաւ.
- Եղբայր, չըսե՞ս որ մենք ալ անոնց չափ կ'ուտենք:
- Նոյնիսկ անոնցմէ աւելի...
- Խեղճ արքայական ընտանիք...
- Ի՞նչ յուզիչ ճաշացուցակ...
- Ի՞նչ պարզ ստամոքաներ...
- Ի՞նչ հրեշտակային աղիքներ...

— Ի՞նչ խոնարհ կոկորդներ...

— Ի՞նչ համեստ քիմքեր...

— Ի՞նչ սուրբ ահռաներ...

— Ի՞նչ մաքուր շրթունքներ...

— Խեղճ թագաւոր... աղքատ թագուհի... համե՛ստ իշխանուհիներ...

— Հաւատացէք, եթէ հարուստ ըլլայի անոնց ամէն օր երէներ, ձուկեր, իւղեր, հաւկիթներ ու խոզեր պիտի նուիրէի...

— Եկէ՛ք, կոչ մը ուղղե՛ք այս ուղղութեամբ իտալահայ դաղուծին...

Ու գացինք քնանալ ամբողջ էութեամբ լեցուած գութով: Ամբողջ էութեամբ, այո՛: Մեր միտքը, սիրտը, երակները, ստամոքսը եւ աղիքները լեցուն էին գթասարսուծեամբ: Ու մանաւանդ մեր ստամոքսին մէջ լեցած գութը անհանգիստ ըրաւ մեզ ու տեսանք գէշ երազներ:

Իտալիոյ թագաւորն ու թագուհին եւ աղջկունք Տէր Զօրի անապատներուն մէջ սատկած էշեր կ'ուռէին:

Առաւօտուն ամէն մարդ իր տեսած երազը կը պատմէր:

— Հայ գրող Յ. Մամբեանը տեսայ երազիս մէջ, որ ամբողջ կով մը շամփուրի անցուցած կը խորովէր ու կ'ուտէր...

— Լեւոն Էսաճանեանը տեսայ երազիս մէջ, որ ագարակի մը դրան առջեւ պռուկած էր բերանը լայն բացած ու քառասուն ծառաներ տասներկու շտեմարաններու պարունակութիւնները կ'աւելին ու կը լեցընէին Էսաճանեանի բերնին մէջ... Անոր փորը ուռած էր երկրագունդին պէս... Տեսայ նաեւ Իտալիոյ թագաւորական ընտանիքը, որ Էսաճանեանի բերնին երկու քովերէն թափած աւելցուքները կ'ուտէր...

— Ես ալ խումբ մը հայ մտաւորականներ տեսայ երազիս մէջ, որոնք երկրային բոլոր ուտելիքներէն մէկ անգամէն յափրա՛նալու համար՝ առած էին երկրագունդը եւ տարած գրած արեւուն վրայ ու կը խաշէին...

- Սարսափելի՛...
- Այո՛, երկիրը խաշեցին ու վերջն ալ փառաւորապէս կերան...
- Ի՞նչ շատակեր են հայ մտաւորականները...
- Այո՛, երազով շատակեր...

Ու Իտալիոյ արքայական ընտանիքը, պուլկար թագաւորը, Թրոցքին ու դեռ անհամար օտար գրողներ եւ արուեստագէտներ կը շարժեն մեր գութը:

Ու բնաւ երբեք չենք մտահոգուիր հայ գրողի մը, գործիչի մը կամ

արուեստագէտի մը վիճակով: Ի՞նչ անաղագսական, ի՞նչ համամարդկային, ի՞նչ վսեմ ժողովուրդ ենք:

Ու չենք խորհիր մեր բարձր գթութեան մէջ թէ՛

— Թրոցքին եթէ դառանցէ իսկ միլիոն կրնայ շահիլ...

Իսկ հայ նշանաւոր գլուխ մը, եթէ հրաշք ալ գործէ, իր կեանքը չի կրնար ապահովել ոչ «մաքարոնի»ովը ո՛չ ալ «քարուչինօ քաֆէ»ով:

Ես բացառաբար իմ կեանքս ապահոված եմ կարմիր... պղպեղով:

ՄՇԱԿՈՅԹԻ ՏՕՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Քանի մը չարաթ առաջ հեռաւոր ձաւայէն՝ քաղաքս ժամանեց պրն. Սեղբոս Մուրատեանց: Յիշեալ ազգայինը հարաւային արեւելեան Ասիոյ եւ հիւսիսային արեւելեան Ուկրաինոյ մէջ ծանօթ է իբրեւ մեծապատիւ առեւտրական: Կը սեռի Նոր Զուղայի Մուրատեանց բարերար գերդաստանէն: Ինք տակաւին ազգին բարիք մը չէ ըրած, սակայն չարիք ալ չէ հասցուցած: Եւ այս օրերուս ազգին չարիք չհասցնող մը՝ խղճի կատարեալ հանդարտութեամբ կրնայ ինքզինք բարերար հռչակել: Պրն. Սեղբոս Մուրատեանց նոր բարեկամս սակայն, սկսած է մշակել բարերարութեան ծրագիր-կանոնագիր մը, որ յետ մահու գործադրութեան պիտի դրուի անշուշտ... Բարեգործականի կողմէ:

Պրն. Սեղբոս Մուրատեանց երկար տարիներ մնացած ըլլալով հեռաւոր ձաւայի մէջ, կարօտը ունէր Հայաստանի եւ հայերու:

Ինք թէեւ ինծի նման բաղաձայն մըն է, սակայն, ուժգնօրէն կը վկայէ թէ ամէն անգամ որ քիչ մը խմած է՝ բացած է իր բերանը եւ կատարեալ Շահ – Մուրատեանի մը պէս երգած է.

«Հայաստա՛ն, երկիր դրախտավայր»:

Իր երգացանկին մաս կազմած են նաեւ հետեւեալ երգերը. «Հայ եմ ես, մեռնիլ գիտցող հայ եմ ես», «Յանկամ տեսնել զիմ Կիրիկիա», «Հեռաւոր երկիր, նստած գու իժդեհ», եւայլն:

Օր մըն ալ առեւտրական գործով Փարիզ կը հասնի: Կարօտը ունի հայ խօսքի, հայ մարդու, միջավայրի: Փարիզ հասնելուն պէս «Յառաջ» մը կը գնէ: Առաջին, երկրորդ ու երրորդ էջերը լափելէ վերջ կը բանայ չորրորդ էջը: Հանդէս, թատրոն, ժողով, բանախօսութիւն,

Թէյասեղան, ասուլիս, ժամագրութիւն, գրքերու հրատարակութիւն, դասախօսութիւն, սինէմա, ընկերական հաւաքոյթ, ճաշարան, նստա-
րախօսակցութիւն, կրամոֆօն, փաստաբանութիւն, բժշկութիւն, հա-
ւաքութիւն, գրամական փոխառութիւն, տնաշինութիւն, տնկաշի-
նութիւն ու մշակոյթ: Կատարեալ երկիր դրախտաւայր սա Փարիզա-
հայ ոստանը: Շարժում, շինարարութիւն: Պրն. Սեղբոս Մուրատ-
եանց շարժիչ գրքեր կը փափաքի հայկական տեղ մը երթալ: Կը նա-
խընտրէ «Մշակոյթի Տօն»ին հանդէսը: Ու կ'երթայ...: Երկու օր
վերջ կը պատահի ինծի ու բերանը կը բանայ պատմելու համար իր
տպաւորութիւնները: Ես մտիկ ըրի, դուք ալ ըրէք, խիստ շահեկան է:

— Մշակոյթի Տօն որ կարդացի, ըսի մտքէս — Հայը փոխուած
է: Ա՛լ առջինը չէ: Ա՛լ հիմակ սկսած է գնահատել դրականութիւնը,
թատրոնը, արուեստները: Շատ ուրախացայ ու ելայ հանդէսին գացի:
Իրաւ ալ անանկ. ահագին բազմութիւն: Նայեցայ, նայեցայ ու քէյֆս
եկաւ: Բանախօսները ելան ու ճառեցին: Ժողովուրդը խանդավառ էր
իր մշակոյթով ու կը պոռար.

— Պաւօ'....:

Մէկը ելաւ արտասանութիւն ըրաւ, ժողովուրդը ուրախ էր ու
պոռաց.

— Պաւօ'....:

Թատերախաղ խաղացին: Ժողովուրդը իր մշակոյթով վերացած
էր ու պոռաց.

— Պաւօ'....:

Օրիորդներ երգեցին: Ժողովուրդը ցնծութենէն խենթեցած էր ու
պոռաց.

— Պի'ս, պի'ս, պաւօ'....:

Աջ կողմէն մէկը պոռաց.

— Կեցցէ հայ մշակոյթը....:

— Կեցցէ'....:

Ձախ կողմէն ուրիշ մը պոռաց.

— Կեցցէ' հայ դրականութիւնը:

— Կեցցէ'....:

Մէջտեղէն մէկը պոռաց.

— Կեցցէ' հայ թատրոնը....:

— Կեցցէ'....:

— Անմահ է հայ մշակոյթը....:

— Կեցցէ'....:

Ահագին եռուզեռ, խանդավառութիւն հանդէպ հայ մշակոյթին:
Շատ միջիթարական էր այս երեւոյթը: Ուրախութենէս աչքերս լեց-
ուեցան: Յիշեցի հին օրերու մէջ հայ վարժապետներու, հայ գրողնե-
րու եւ դերասաններու քաջածները:

Ու ըսի որ եթէ անոնք գլուխնին վերցնէին ի՛նչ բարեփոխութիւն
պիտի տեսնէին հիմակուան հայ ժողովուրդին մէջ, որ խենթի պէս
սկսած է պաշտել հայ մշակոյթը:

Այս մտածումներու մէջն էի, ու մէյ մըն ալ պաղ ջուր լջաւ գլու-
խէս վար:

— Խե՛ր ըլլայ, պարոն Սեղբո՛ս, հայ մշակոյթին հող չունենալը
գլխտէի, բայց ջուր ունենալը չէի գիտեր....:

— Մտիկ ըրէ՛, շարունակեց բարեկամս, երկու նոր վէպ տպուած
են եղեր: Այդ վէպերէն ծախելու համար քանի մը տասնեակ օրինակ
բերած էին: Ամէնուն առաջարկուեցաւ, որ գնէին....: Ի՞նչ կը կար-
ծես որ ըլլայ....:

— Անշուշտ ամէնն ալ... չգնեցին:

— Խա՛չ, խա՛չ... մէկ հատ գիրք գնող չեղաւ: Տեղն ու տեղը քա-
րացայ, տեղն ու տեղը մնացի, տեղն ու տեղը... Ճալայացայ: Այս
ի՛նչ հեղինակութիւն...: Այս ժողովուրդը հայ մշակոյթին քթին կը խըն-
դայ....: Ո՛ւր են՝ պաւօ կանչողները: Մէկ գիրք գնող չեղաւ, մէկ
գիրք....:

Ու բարեկամիս ըսի.

— Հարկաւ դուն հատ մը գնեցիր....:

— ...

— Կ'երեւի երկու հատ գնեցիր....:

— ...

— Երե՞ք....:

— ...

— Հասկցայ, ապիւր ցասումով, ազնիւ շարժումով ամէնը մէկ
գնած ես....: Ես ալ հիմակ կրնամ պոռալ՝ պաւօ'.... ձեռքդ, ձեռ-
քդ....:

— Պիտի գնէի....:

— Ի՞նչ, չգնեցի՞ր....:

— Պիտի գնէի, սակայն....:

— Հասկցա՛յ, «տեղն ու տեղը քարացած» էիր, սիրտդ ալ, գրպա-
նդդ ալ քարացած էին, «տեղն ու տեղը» ու ամբողջովին քարացած

էիւր... : Իսկ անդին հայ ժողովուրդը փայտացած էր, ու կը վառէր, կը ճարճատէր.— պոռաւօ՛... : Մէկը քարացած, միւսը փայտացած, իսկ հայ գերբը, գերբը ու գրականութիւնը... անմահացած... :

— Անանկը չէ, պիտի գնէի, սակայն ամէցայ : Վախցայ, որ ժողովուրդը կը պոռայ.— պոռաւօ՛, պի՛ս... :

ԱՐՈՒԵՍՏ ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ

Կ'ըսէին.

— Խօսիլը արծաթ է, լռելը ոսկի :

Սրբագրուած է հիմակ այդ սխալը : Ներկայիս խօսիլն է որ ոսկի է, իսկ լռելը պարզապէս հասարակ քար է : Աւազ :

Կ'ըսէին այդ խօսքը հին ատեն եւ սակայն լուսկեացներուն չէր որ կուտային «ոսկերերան» անականը :

Խօսի՛լ... : Ահա հրամայական պահանջը առեւտրական, ընկերային, ազգային ու ընտանեկան կեանքի մէջ : Խօսիլ գիտնալ ու բարբառիլ... : Այս է անհրաժեշտ ընդունակութիւնը : Կզակաշարթութիւնը կենսական շնորհ է : Միակ միջոցը յաջողութեան : Որեւէ տեղ եթէ լուսմնաք ձեզի համար կ'ըսեն մտովի .

— Պարսպ մարդուն մէկն է, դատարկ գլուխ, բան չգիտէր որ ըսէ, ապուշին մեծն է... :

Ու մի՛ վստահիք ո՛չ անունի, ո՛չ արտաքինի :

— Մե՛ղք էր անունին, մե՛ղք էր արտաքինին, մէկը կը կարծէինք զինքը, երկու խօսք ըսելու կարողութիւն չունի... Ի՛նչ տխմար, անհաճոյ, անսահման անձ... :

Իսկ եթէ խօսիք, թ՛,

— Բա՛նը իսկոյն կը փոխուի —

Կ'ըսեն բաց է ի բաց .

— Լեցուն մարդ է, խանդավառ, հաճելի, համակրելի, խելացի, փնտռուած, սիրուած, տաք, կրակոտ մա՛րդ, մա՛րդ, մա՛րդ է... :

Ձի բաւեր ձեր հօրն ու մօրը ձեզի մարդ ծնիլը : Հարկ է վաւերացուի ձեր մարդկութիւնը : Ատիկա կ'ըլլայ խօսելով : Կը խօսիք, կը շատախօսէք, կը ճռուէք ու ապա կը դասուիք դասը մարդոց : Ձեզի կուտան կարեւորութիւն : Կը խնդրեն ձեր կարծիքները : Կը շինէք ախուն :

Նոյնիսկ կ'ապահովէք ապագայ : Այրերը կը պատուեն ձեզ ու կ'իները կը սիրեն : Կ'ապահովցնեմ ձեզ, լուս մարդիկը հրեշտակներէն անդամ չեն սիրուիր :

Ուրեմն՝

— Խօսեցէք, պոռացէք, կանչեցէք, վիճեցէք, ճռուեցէք, քարոզեցէք, բանախօսեցէք... :

Իւրաքանչիւր հայ ընտրեալ մըն է ճարտասանութեան համար : Մի փոքրիկ ճիգ ու ճիչ : Պզտիկ պեղում մը կզակին մէջ :

Աւելի ճիշտը մեր կողմէ պզտիկ դասաւանդութիւն մը ու ձեր կողմէ փոքրիկ համարձակութիւն մը, բաւական է տիրանալու համար խօսելու արուեստին :

Գոտներորդ դարու Արշալոյսն է :

Արթնցուցէք ձեր մէջ քնացող Արիստոտէլը, Կիկերոնը, Ոսկերեբանը, Կլատրսթոնը, Կամպէթթան, Ժոռէսը եւ... Սապահիւրը :

Եւ որպէսզի քաջ արթնայ ձեր մէջ հոետորը նախ՝

Կոնծեցէք երկու հատ... :

— Պաշտադին կը խնդրեմ կոնծեցէ՛ք երկու հատ, որքան ալ ըլլաք մոլեռանդ հակաքրոսական —

Կոնծեցի՞ք... վայրկեան մի՛ կորսնցնէք : Յատկեցէ՛ք ոտքի :

Տուէ՛ք ձեր մարմնոյն դերասանական մի կեցուածք... :

(Աջ ձեռքը սեղանին ու ձախ ձեռքը մէջքին : Եւ կամ աջ ձեռքով (Աջ ձեռքը սեղանին ու ձախ ձեռքը մէջքին : Եւ կամ աջ ձեռքով ձեր ճակատը ու մօրուքը ու ձախով սեղանը : Կամ աջ ձեռքով ձեր ճակատը ու ձախով թուղթ մը : Կրնաք նաեւ ձեր երկու ձեռքերը դնել սեղանին վրայ ու ծոխլ քիչ մը առաջ : Նաեւ կրնաք տարածել ձեր երկու ձեռքերը օդին մէջ, արծուակերպ, եւ ապա իսկոյն բանալ ձեր բերանը եւ բացադանչել ուժեղ ձայնով .

— Ազնիւ հայրենակիցներ... :

Ու անմէջապէս՝

Դադար : Խորհուրդ, քօղ, ամպ :

(Երկինք նայեցէ՛ք) : — Մի՛ հազար :

Մնացէք խոհուն, լուրջ, վերացած :

Կեցէք ինքնավստահ, նոյնիսկ արձակեցէ՛ք ներքին նուրբ քրքիջ մը :

«Պատուա» :

Հասարակութիւնը ելեկտրական ցանցերու մէջ ինկած է :

Յաջողութեան կէսը ապահովուած : Մկսեցէ՛ք :

— Ութսունական թուականներուն... :

Անգամ մը որ այս երկու բառերը պարտ ու պատշաճ ձեւով արտա-
սանեցիք, ա՛լ անկից վերջը վախ չկայ անկումի, թափեցէք ձեր գիտ-
ցած բոլոր բառերը, բոլոր հէքեաթները: Մեծ ածականներ անհրա-
ժեշտ են:

Ձայնը: Պոռացէք երբեմն, երբեմն ալ հաղիւ լսելի ձայնով մըր-
մընջեցէք խել մը բառեր: Թրթոացուցէք ձեր ձայնը:

Ձեւ: Քանի մը բռունցքներ խիստ կարեւոր են: Մուրճով երկաթ
ծեծելու շարժումներ տպաւորութեան կը նպաստեն: Երբեմն մնացէք
երկու ձեռքերը վեր՝ ճիշդ գլուխով կողով տանող բռնակիրներու
նման:

Այս բոլորէն դատ երբեմն բարկացէք, երբեմն ծիծաղեցէք եւ մի
մոռնաք երբեմն ալ լալ ու հեծկլտալ:

Եւ որպէսզի աւելի գործնական ըլլայ մեր դասը, ստորեւ կը ներ-
կայացնենք բանախօսութեան մը համար խիստ պիտանի բառերու ե-
րեք ցանկեր:

Ընթացիկ գոյականներ. — Հերոս, սուրբ, դաւաճան, բռնակալու-
թիւն, աղատադրութիւն, պայքար, կռիւ, ոգի, բանտ, կախաղան,
նահատակ, հաւատք, յոյս, վաղը, արշալոյս, Մասիս, Հայաստան:

Ընթացիկ ածականներ. — Հսկայական, տարերային, անհաւասա-
րակչիւ, սոսկալի, գաղբելի, վիթխարի, անհուճ, անընկճելի, անմահ,
միացեալ...

Ընթացիկ բայեր. — Ձրկուիլ, դարնել, զրահուիլ, զոհաբերուիլ,
քալել, քնանալ, վայելել, մեռնիլ, անմահանալ...

Իւրաքանչիւր նախադասութեան գոյական մը, ածական մը ու բայ
մը առէք եւ խաղացէք, ճիշտ չինացի պղտիկներուն պէս որ երեք գուն-
տով խաղեր կ'ընեն, կը նետեն կը բռնեն: Դուք ալ նետեցէք բռնեցէք:
Գոյական, ածական, բայ: Երեք հատ գնդակ: Այսպէս.

- Հսկայական Մասիսը կը զրահուի...
- (Բառերը արտասանեցէք վանկ առ վանկ: Բառերուն տուէք շեշ-
տեր: Ենչտերը պղպղեք են: Վանկերուն երկարներ: Երկարները աղ են):
- Ու գնդակները.
- Ու անոնք կը զրահուին հսկայական Մասիսի երկունքով...
- Եւ պիտի կանգնինք իբրեւ հսկայական Մասիս, փամփուշտնե-
րով զրահուած...
- Մասիս, զրահուած, հսկայական...
- Հսկայական, Մասիս, զրահուած...
- Ձրահուած, հսկայական, Մասիս...

Ու երբեմն ալ նոր ճառագայթներ աւելցնելու համար ձեր կուռ
բանախօսութեան, արեւելահայերէն խօսեցէք:

— Մասիսից բարեւներ եմ բերել... Էնտեղ, մի բուռը քաջեր
քայլում են ու երգում... երգում են կռիւր... կռիւր, հայրենակից-
ներ, մի մեծ, մի փոթորիկի օր, էլի կը սկսուէ, էնտեղ լեռներում եւ
ձորերում... դա կը լինի օրհասակա՛ն պայքարի կրիտիկական մօմէն-
տը... դաւաճաններն էլ կը հասկանան էդ բանը... բայց դա շատ ուշ
կը լինի... կռիւր... դա կը լինի վերջինը... նոր զոհեր ու նոր յաղ-
թանակ... կը շարժուէ հայկական ճահիճը... էլի մուխով կը լեցուեն
մեր սարերը... էլի պատմութիւնը կը ճոխանայ... էլի, էլի... էլի
լամա սարաքթանի...: Կեցցէ կռիւր...:

Երբեմն քաղցր-խօսեցէք, քանզի «անոյշ լեզուն օձը ծակէն կը հա-
նէ» կ'ըսեն: Երբեմն ալ խօսեցէք լեղի եւ օձերը մտցուցէ՛ք ծակը: Կա-
տարեալ օձահմայ: Անկից վերջ հեշտ է աւանակները ախոռ խօթել կամ
հանել: — Ճառեցէ՛ք...

Կը մնայ վերջաբանը այսինքն... ծափահարութիւնները:

Անպայման մի ուժեղ տպաւորութիւն: Մի ցնցող հրթիռ: Լաւ
փչեցէք: — Կեցցէ՛ Հայաստան...

Ու.
— Շափ, շափ - շափ - շափ - շափ - շափ - շափ - շափ - շափ...
«Կեցէ Հայաստան»ը հասարակութեան համար կը նշանակէ «ծա-
փահարել հայրենիքը» իսկ լոօրէն ու ձեր հաշուոյն կը նշանակէ «ծա-
փահարեցէք զիս»:

Սակայն մի բան կայ:

Եթէ պատահի որ ձեր շար բախտէն հանած վարածին մէկը ար-
դէն պոռացած է «Կեցցէ Հայաստան»ը:

Եւ կամ եթէ դուք անճարակիւն մէկն էք եւ քանի մը պարապ խօսք
ընելու խիստ միջակ ընդունակութիւնն ալ չունիք՝

Այն ժամանակ կը մնայ ձեզի հանդիսաւորապէս աղաղակել.

— Սիրելի հայրենակիցներ, կը հրաւիրեմ ձեզ որ յանուն նահա-
տակ մտաւորականութեան վայրկեան մը ոտքի ելլէք:

Ու ներկաները չուանէն քաշուած խամաճիկներու նման պիտի
գտնէք ոտքի ելած:

Դուք վար ձգեցէք ձեր ձեռքերը, թողուցէք գլուխնիդ որ իյնայ

ձեր աջ ուսին վրայ, թող ըլլայ աչքերնիդ շրճորուն ու լեզունիդ դուրս
ինկած :

Մնացէք այդպէս վայրկեան մը : Մնացէք կախուածի նման :
Եղա՞ւ... : Ազգային հոգտոր էք :

ԱՄԱՆՈՐԵԱՆ

Կազանդը, մականուանեալն Նոր Տարի, կատարեալ խաբերայ մըն
է :

Անիկա չը բարի դէմքով, իր ուռուցիկ տապրակով նման է գողի,
չըջուն վաճառականի : Իրականին մէջ ո՛չ նուէր, ո՛ նորութիւն : Ամե-
նօրեայ աւազակն է որուն անուը կը տօնախմբենք տխմարաբար :

Չկայ Նոր Տարի : Ամէն բան հինին շարունակութիւնն է : Կայ մի-
այն ժամանակը անհունօրէն միակտուր ու տիեզերականօրէն անսկիզբ
ու անվախճան : Մարդիկ դրեր են սահմաններ, չափեր, կէտեր, հան-
գրուաններ : Սուտ, սխալ, խարուսիկ, արուեստական : Ժամանակին
վրայ չի բանիր ո՛չ մկրատ, ո՛չ դանակ, ո՛չ ածելի, ո՛չ արդուկ, ո՛չ ալ
սղոց : Ան է անծակելի, անճեղքելի, անսափրելի, անսղոցելի, անշեր-
տելի :

Չկայ Նոր Տարի, չկայ հին Տարի...

Ո՛չ մէկ տարբերութիւն նորին ու հինին մէջ : Ի՞նչ տարբերութիւն
կրնաք դանել դեկտեմբեր երեսունըմէկին եւ յունուար մէկին մէջ : Ո-
չի՞նչ նոր, ոչի՞նչ փոխուած :

Ամէն բան կը քալէ իր նախկին քայլերով ու հին գլուխով : Փաստ
եւ ապացոյց առատ են նման սունկի, դդումի, կաղամբի եւայլ բան-
ջարեղինաց :

Ահաւասիկ առեւտրական տապանապը որ կը շարունակէ ծակել դը-
րամարկղներ ու գրպաններ : Ահաւասիկ «տէմոկրատ» եւ «պրոլետար»
գրպանները որ կը լեցուին քամիով ու կ'ոռնին առազաստներու նման,
տալով մեզի թեթեւալ ու թեւածել մինչեւ... Կուտինա :

Ահաւասիկ Բարեգործականը իր հանապազօրեայ յանկերգով :

— Տուէ՛ք, տուէ՛ք... Ոսկեղէն Կանոնի Կիրակին է... Արծաթ
Կանոնի երկուշաբթին է... Ադամանդ Կանոնի երեքշաբթին է... Մար-
գարտեղէն Կանոնի չորեքշաբթին է... Հինգշաբթին է, տուէ՛ք, կանո-
նի անկանոնի մի՛ նայիք, տուէ՛ք, առաջ սեռի, տարիքի, դաւանան-
քի, աստիճանի, բաժանումի խտրութեան... Հարիւր Փրանք, յիսուն

Փրանք, տասը Փրանք, մէկ Փրանք... Կաթիլ կաթիլ կ'ըլլայ լճակ որ
վազելով կ'ըլլայ գետակ...

Ու գետակները կը կաղմուէին երթալ թափելու համար ի մէջ ծա-
նօթ ծովերուն... մեռեալ :

Ի՞նչ տարբերութիւն նոր ու հին տարիներուն մէջ, երբ միօրինա-
կութիւնը, յամառութիւնը, մոլեռանդութիւնը, հայհոյութիւնը դա-
հազուրկ չեն եղած մեր խմբագիրներուն, մեր եկեղեցականներուն, յն-
դափոխականներուն, պատուելիներուն զլխուն մէջ :

Ըսէ՛ք, ի՞նչ տարբերութիւն երբ բրոֆ. Ադոնց կը յամառի յայտ-
նել գրական վճիռներ ու կը խօսի ամէն նիւթի վրայ, «ամէն»ը գրելով
կրկին «ե»ով : Երբ ամերիկաբնակ էրեւնց մը ծիծաղ ու արցունք շար-
ժող յաւակնութիւնով ամիսը մէկ վէպ կը թխէ մամուլի տակ ու վզէն
բոժոժներ կախած ինքնիրեն ու՛ղլամը կ'ընէ : Օ՛, խրտուելակ վիպա-
սանութեան պարտէղի :

Ըսէ՛ք, ի՞նչ տարբերութիւն նոր ու հին տարիներուն մէջ երբ մեր
քեղթողամայր, մեր հոմերուհի եւ հնչակեան դիւցազներգակ Օր. Նու-
նիկ Տէր Ղեւոնդեանց ամէն երկվայրկեան դոյական մը կը շնչէ ու զոյգ
մը ածական կ'արտաշնչէ : Որ ճախարակի ու «կոսմոֆօն»ի սկաւառա-
կի պէս կը դարձնէ իր խալապատակը, առանց փոխելու դոնէ իր ա-
սեղը...

Ի՞նչ տարբերութիւն երբ Արջուկեկն — Քիպարեան սրբազան տա-
կաւին կուլայ, երբ Ղ. Դուրեան սրբազան տակաւին կը քարոզէ, երբ
Ռուբէն Որբերեան միշտ կը հառաչէ, երբ Վալադեան Պէյրութէն մին-
չեւ Ամերիկա հաստատած է փապուղի մը ու դամբիւղներով վէպ կը
հասցնէ...

Ի՞նչ տարբերութիւն երբ միայն Քամառ Քաթիպաներու եւ Նալ-
բանդեանցներու յօրեկեանները կը տօնուին :

Եւ ի՞նչ տարբերութիւն երբ յաւերժականօրէն Վահան Մալեղեան
ամսական 10,000 Փրանք կը գրպանէ, որբերու, տարագիրներու եւ այ-
րիներու անունով հաւաքուած դրամէն :

Ձո՞րն ասեմ...

Ինչի՞ս Նոր Տարին եղաւ երբ դարձեալ ցուրտ է, դարձեալ ապ-
րուստը սուղ, դարձեալ հով ու քամի եւ մշուշ :

Եւ սակայն կ'ըսենք, յարգած ըլլալու համար աւանդութիւնը :
— Ծնորհատ՞ր Նոր Տարի...

Ու կը սեղմենք իրարու ձեռք, կը հրամցնենք ըմպելի ու մաղ-
թանքներ :

— Շատ տարիներու...

Ու Կաղանդէն ապառիկ գնելով մի շիշ կարմիր դինի, կը բոլորուինք, կը խմենք կենացը շատերու, մաղթելով որ անայլայլ մնան ու շարունակեն իրենց գործը.— Ճառեն, քարոզեն, թխեն, պոռան, արդուկեն, դանձեն, լպպեն, կլլեն, յօրանջեն ու զառանցեն ամբողջ տարի մը...

Գինի լի'ց...

— Կեանքի՛դ, Հայ ժողովուրդ, համբերութիւնդ անսպառ ըլլայ...:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Դեռ մինչեւ տարի մը առաջ Ձրօնքի դաւառը չունէր իր հայրենակցական միութիւնը: Կերակի օր մը սակայն Խորհրդիներ, Միտրոպոլիտներ, Մաղկաբլուրցիներ ու Մեղրաձորցիներ հաւաքուեցան: Նոյն աւանին պատկանող ճապաղցիները չէին պատասխանած հրաւերին: Ներկաներուն մէջ մէկ ճապաղցի չկար: Բացէ ի բաց մերժած էին դալ ու միանալ Ձրօնքի հայրենակցականին՝ ըսելով.

— Մենք միանա՞նք Միտրոպոլիտներուն, Խորհրդիներուն... էդ քերութեանը: Ո՛չ: Մենք պիտի կազմենք մե՛ր հայրենակցականը:

— Ճապաղցին չի կարող միանալ այլազգի մարդոց հետ: Էնոնք բոլորը քրուրտ են, քրուրտ: Աստուած չանէ որ միանանք:

Ու Ձրօնքցիները կ'ըսէին.

— Քրուրտ, միե՞նք, քրուրտ... եթէ մենք էլ քրուրտ ենք, է՛լ խայ չմնաց... Տօ քրուրտը դո՛ւք էք, դո՛ւք: Բուն խայը որ կայ, էն բուն խայը մե՛նք ենք:

— Ինչ էլ անէք, ինչ էլ ասէք, ճար չկայ, քրուրտ էք, քրուրտ:

— Տօ, մուրացկաններ, մոռացա՞ք էն օրեր որ մեր գիւղ կը մտնէիք, սուտ խաչ կը հանէիք ու հաց կ'աղաչէիք...: Մեր փոքր տղերքն էլ ձեզ կը քարկոծէին:

— Ձեր լակոտների կերած ծեծերը մոռացա՞ք, անաստուածներ: Ձեր երեսի վրայ խայ քրիստոնէի միւռոն չկայ: Որքան էլ պատուուէք, խաբէք սա ու նա, մենք գիտենք ձեր դաղտնիքը, չէ՞: Քրուրտ էք: Խայը որ կայ, խայը մենք ենք: Մի՛նակ մենք:

Եւ կը պատահի որ այս վէճին հանդիսատես ըլլամ ու հարցնեմ ճապաղցիներուն.

— Հայրենակիցներ, աշխարհի վրայ քանի՞ հայ կայ, եթէ դուք էք բուն հայերը:

— Խայը որ կ'ասես, մէկ տասը միլիոն կ'ըլլի, բայց թէ էն բուն խայը հարցնես հաղիւ կ'ըլլի մէկ հազար հոգի:

— Մնացողները ի՞նչ են հասլա:

— Խայ են, խայ ըմմա որ դարկես թէրագու վրէն, որ դարնես մէհէնկ թաշու կը խասկանաս որ կէսով կամ լազ են, կամ հոռոմ կամ արապ... կան եահուտիներ ալ, չէ՛չններ, աճէ՛մի, դպտի, խըզը պաշ ու ամէնից շատ՝ քրուրտ:

Ու ճապաղցիները յամառելով կազմեցին իրենց հայրենակցական միութիւնը:

Անցաւ երկու ամիս: Հասաւ պառակտումը: Ճապաղցիները բաժնուած էին երկու մասի: Մին՝ ճապաղ գիւղի վերի թաղի հայրենակցական միութիւն: Միւսը ճապաղ գիւղի վարի թաղի հայրենակցական միութիւն:

Յուլիս, Օգոստոս: Վարի թաղի հայրենակցական միութիւնը դարձար գլխորուեցաւ: Մնաց ճապաղ գիւղի վերի թաղի հայրենակցական միութիւնը որ յաղթականօրէն կ'աղաղակէր, թաւալող ճապաղցիներու ետեւէն:

— Քրուրտե՛ր, քրուրտե՛ր, սատանի բաժիններ... Հիմի տեսա՞ք որ խայը մենք ենք:

— Քանի՞ հոգի կ'ըլլաք, հարցուցի:

— Որ բուն խայը կը հարցնես մէկ հինգ հարիւր հոգի կը լինի: Էն մաքուր, մաղէ անցած, աղնիւ տեսակի խայը մէկ հինգ հարիւր կայ:

Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր: « Գնաց դարուն, եկաւ աշուն »:

« Խայ »երը միշտ կը թափէին որպէս ճապաղ գիւղի ծառերուն տերեւները:

Դեկտեմբերին կարկտախառն ձիւն տեղաց «ճապաղ գիւղի վերի թաղի հայրենակցական միութեան» վրայ:

Բաժնուած էին երկու մասի:

— « ճապաղ գիւղի վերի թաղի արեւելեան կողմի հայրենակցական միութիւն »:

« ճապաղ գիւղի վերի թաղի արեւմտեան կողմի հայրենակցական միութիւն »:

— Աշխարհի վրայ մնացած էր հաղիւ երկու հարիւր հայ:

Յունուար, Փետրուար, Մարտ:

«Փոթորկարեր հողմունք»:

Ճապաղի վերի թաղի արեւելեան կողմի հայրենակցականը կը մտնէր գերեզման: Ողջ էր ու աշխոյժ վերի թաղի արեւմտեան մասի հայրենակցական միութիւնը:

Չմոռնամ ըսել որ հայերու թիւին նուազման հետ՝ Հայաստանն ալ կը սեղմէր իր սահմանները: Ներգաշնակութիւն:

Ապրիլին Ճապաղցիները դարձեալ իրարանցման մէջ էին.

— Գիտ'ւրտ, քիտ'ւրտ...

Բաժանում:

Կազմուած էր.

«Ճապաղ գիւղի վերի մասի, արեւմտեան կողմի Սաչքար փողոցի հայրենակցական միութիւն»ը:

Ինչպէս նաեւ «Ճապաղ գիւղի վերի մասի արեւմտեան կողմի Սաչքար փողոցի հայրենակցական միութիւն»ը:

Ապրիլի կէսին մնացած էր մինակ Սաչքար փողոցը:

Ապրիլի վերջը անհամաձայնութեան մը հետեւանքով Սաչքարն ալ տապալած էր: Մնացած էր սակայն Ճապաղ գիւղի վերի թաղի արեւմտեան կողմի Սաչքար փողոցի հայրենակցական միութեան դանձապահը, իր ծոցը ունենալով միութեան կնիքը:

Գանձապահը՝ Պարոն Աստուածատուր Աբրահամեան:

Մայիսի առաջին մը հարցուցի իրեն հետաքրքրութիւնով.

— Աշխարհի վրայ քանի՞ հայ կայ:

— Խա՞յ... կ'ասես խա՞յ: Չկա՞յ, աղբէր ճան, չկա՞յ: Բոլորը որ խայ ենք կ'ասեն, մի՛ հաւատար, սուտ են, սո՛ւտ: Աշխարհիս երեսին մէկ խայ կայ, էն էլ ե՛ս եմ. մնացեալը անմիաբան բոշաներ:

Ձուլո՞ւմ էր:

— Արմէնիա՛, Արմէնիա՛... ողբամ դքեղ, Արմէնիա՛...

Բայց ո՛չ: Դեռ աշխարհի վրայ հայ մը կայ՝ գանձապահ կրկնակի, Հայութեան Ղովտը: Աստուածաշունչը օգնութեան հասաւ եւ ըսի.

— Ղո՛վտ, ո՛վ Ղովտ, գի՛նի խմէ... յանուն աշխուժացման:

ՈՐՈՒ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԵՐԿԻՆՔԸ

Իտալական ջրօդանաւերու տորմիդը Յունաստան, Քէմալիստան, Պուլկարիա եւ Լեհաստան այցելելէ յետոյ, վերադարձաւ Իտալիա:

Մուսոլինի ալ օգնաւային փոխ – նախարար Պալպոյի հետ Օրպէթէլլօ երթալով դիմաւորեց օգնաւերը եւ օգնաւորդներուն հըրամցուց կրակէ ճառ մը: Օգնաւորդները յողնած վիճակի մէջ ստիպուած էին այդ ճառը մարսել: Մուսոլինիի ճառին ճառագայթներով օգնաւորդները լուսաւորուեցան, թէ կարելոր գործի մը լծուած են, այսինքն՝ երկինքը գրաւելու:

Մուսոլինիի ճառէն յետոյ հարցուցեր է օգնաւորդներուն.

— «Է՛, սինեօրի, որո՞ւ կը պատկանի երկինքը»:

— Իտալի՛ոյ, Իտալի՛ոյ... մեղի՛, մեղի՛, — պատասխաններ են բոլորը միաձայն:

Եւ իրաւ երկինքը իտալական կալուած մըն է, կատարեալ գաղթավայր: Երբ մանաւանդ Պապն ալ իր վատիկանեան առաջնաշնորհումներն ա՛լ ձեռք ձգեց՝ հիմակ երկինքը եղաւ կաթոլիկ Իտալիոյ սեփականութիւնը:

Չէ՞ որ Աստուծոյ Արքայութիւնը երկնքի մէջ է: Եւ չէ՞ որ Արքայութեան բանալին Պապին մէջքէն կախուած է: Երկնքի տէրն ու տիրակա՞նը իտալացիներն են, պրծա՛ւ:

Բողոքականները, օրթոտոքսները եւ լուսաւորչականները աներկինք մնացին: Թո՛ղ զկանայս եւ զմանկտիս: Ասկից վերջ երկինք ունենալու համար դոնէ յետ մահու, հարկ է աղագափոխ եւ կրօնափոխ ըլլալ, այսինքն՝ կաթոլիկ իտալացի: Այլապէս չիք փրկութիւն:

Երկնքի երկու տէրերն են Մուսոլինի եւ Պապ: Երկնքի ծառաներն ալ, կ'երեւի, մենք ենք, հայերս, պիտի խորհիք: Այդպէս չէ սակայն:

Ձինադագարին վենետիկի Մուրատ Ռափայէլեան վարժարանը կ'այցելէ նախկին սան մը եւ դպրոցին սրահին մէջ ճառ մը կը խօսի աշակերտութեան, նիւթ ունենալով հայկական կոտորածները:

Ճառէն վերջը կը հարցնէ աշակերտներուն.

— Ո՞վ ձեր մէջէն կրնայ ըսել թէ Աստուած ինչո՞ւ կոտորել տուաւ հայերը...:

Լուութիւն: Ոչ ոք կրնայ պատասխանել այս գերկրօնական ու գերմարդկային հարցման:

Երկու վայրկեանի խորհրդաւոր լուութենէ վերջ բանախօսը հանդիաւորապէս կը յայտարարէ.

— Աստուած պէտք ունէր հրեշտակներու մեծ խումբի մը: Շատ մտածեց, թէ ո՞ր ազգէն ընտրէ այդ խումբը: Ամէնէն առաքինի, ամէն-

նէն սուրբ դտաւ հայերը: Եւ կոտորել տուաւ հայերը, որպէսզի ա- նոնցմով շինէ իր հրեշտակախումբը: Ուրեմն, մեր նահատակներուն համար պէտք է որ սգանք եւ Ապրիլ Տասնմէկեան սգատօնը սար- քենք, այլ պէտք է սգանք որ մեզ արժանի չդատեց Աստուած ու մերք կ'ապրինք: Իսկ մեր մեռելներուն համար մենք պէտք է Ապրիլ Տասնը- մէկին պարենք, խմենք, երգենք եւ դուարձանանք:

Ինչպէս կը տեսնուի երկինքը ամբողջովին իտալական չէ սակայն, երբ այնտեղ հայկական զօրաբաժին մը կայ, զինուած փողերով, թե- ւերով եւ սրբութեամբ:

Շատ կարեւոր պարագայ մը կայ, զոր պէտք է անտեսել: Երբ Մուստաֆա Քէմալ Իզմիրը դրաւեց, Պոլսոյ թուրքերը բարբարոս ցըն- ծութեան մէջ էին: Օր մը հասարակաց նաւակով երբ Ոսկեղջիւրի մէջ կը ճամբորդէի, տարիքոտ թուրք մը ըսաւ ինձի.

— Օ՛հ, ի՛նչ լաւ, ի՛նչ լաւ... Ա՛լ Յունական անիծեալ դրօշակը պիտի չտեսնենք...

- Կարելի չէ, ըսի:
- Ի՞նչպէս թէ կարելի չէ, ըսաւ խոժոռ խոժոռ ինձի նայելով...
- Երկինք նայեցէ՛ք...

Մարդը գլուխը վեր առաւ ու ըսաւ.

- Է՛, ի՞նչ կայ...
- Ի՞նչ կայ... Յունական դրօշակ կայ... Յունական դրօշակին գոյները... կապոյտ եւ ճերմակ... Երկինք եւ ամպ... Ամբողջ երկինք- քը Յունական է...

— Անկցի՛ ուրեմն երկինքը, ըսաւ թուրքը, քէնոտած:

Եւ որպէսզի ազգերու մէջ նոր վէճ մը չստեղծուի երկինքի համար, լաւագոյն է դայն յանձնել... թուրքերուն:

Քիչ մըն ալ թող երկինքի հրեշտակները ջարդուին: Այսպիսով թե- րեւս մեր ճակատագիրը կը փոխուի:

Ո՛վ Երկինք, գթա՛ մեզի:

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ

Հսկայ մէկ զարդուածը հայութեան ահա կը գտնուի արտասահ- մանի մէջ:

Քաղաքակրթութեան աղբիւրներուն քովը կանգնած ենք, ի՛նչ փառք ու պատիւ:

Ճառագայթներու ջրվէժներուն եւ հեղեղներուն տակ դիրք ենք բռնած ահա: «Հասցոն յառաջ»:

Լոյսի քաղաքներու մէջ կ'ապրինք: Էհովէ՛...

Լուսաւորութեան ծովուն մէջ ինկած ենք: Ուզենք կը լողանք, ու- ղենք կը քալինք... ծովուն վրայ, ուզենք կը թռչինք... անհունին մէջ, Յիսուսով: Արեւին երթալու քայլ մը մնացած է: Լուսինը եթէ ուզենք նարինջի պէս կը կեղուենք: Ու մինչ ուրիշներ սառուցեալ ով- կէանսներ կ'երթան՝ մենք հին արեւապաշտներ՝ կ'երթանք «դէպի աղբիւրը լոյսին»:

Ազգը կը յառաջդիմէ:

«Լոյս, աւելի լոյս»:

«Աւելի առաջ, աւելի վեր»:

«Հայութիւնն ամէն բանէ վեր»:

Հայեր ունինք, որոնք վաղը միւս օր ձեռքերնին պիտի երկնցնեն ու տանձ մը քաղելու պէս աստղ մը պիտի թռցնեն եւ... ուտեն:

Ազգը կը յառաջդիմէ:

Ընթերցումը կը տարածուի:

Միմիայն տասը հատ կրօնական թերթ ունինք: Չէ՞ք հաւատար, ահա ուրեմն անուններով.

— «Փրկութիւն», «Հայ Խօսնակ», «Կոչնակ», «Մարան Աթա», «Փարոս», «Բանբեր», «Հրեղէն Սիւն», «Սիոն», «Արձագանգ Ճշմար- տութեան» եւ «Յօղ»:

Եւ տասը կրօնական թերթի դէմ միայն մէկ անկրօն թերթ որ կը կոչուի «Անաստուած»:

Թէ՛ այդ տասը կրօնաթերթերով եւ թէ՛ այդ մէկ անկրօնաթերթով միանգամայն կրնանք պարծենալ:

Ո՞ր ազգը մեզի չափ կրօնական է եւ ո՞ր ազգը մեզի չափ ազատա- միտ:

Ազգը կը յառաջդիմէ:

Հրեշտակներ ալ ունինք, սատանաներ ալ:

Խենթեր ալ ունինք, խելօքներ ալ:

Տխմարներ ալ ունինք, հանած վարածներ ալ:

Ազգ ենք է՛, ա՛զգ... մատաղ լինեմ մեր ազգին, ինչ ապրանք որ ուզես կայ եւ շատ կայ... պաղար է՛, չարշի պագար ու պիթ բագար...

Երկայնն ալ կայ, կարճն ալ կայ, լայնն ալ կայ, նեղն ալ կայ, մեծն ալ կայ, պղտիկն ալ կայ, պոչովն ալ կայ, պոչը կտրածն ալ կայ: Կոչնակ տիրացուն ալ կայ, ցօղ սրսկող սարկաւազն ալ կայ, փա-

րոսի պէս մոմ վառող ժամկոչն ալ կայ, արձագանգ ճշմարտութեանը խօսող քարոզիչն ալ կայ:

Տուէ՛ք հաստը փորինը... եպիսկոպոսին եւ երկայն ձեռքինը խաչագողին ու 10,000 Փրանքն ալ... Վահան Մալէղեանին:

Գիտական ու դրական գետնի վրայ ալ տասը — քսան թերթ կրնանք հաշուել:

Աղբային, քաղաքական եւ հասարակական եւ անկախ ու կախազան ելած թերթերը արդէն հաշիւ չունին: Անոնք ծովու աւազներուն եւ երկնքի աստղերուն չափ բազմանալու հակամէտ են:

Ասկից առաջ ամէն գաւառ իր հայրենակցական միութիւնը ունէր: Հիմակ ամէն հայ տուն ու հայ ախոռ՝ իր հայրենակցական միութիւնը ունենալէ զատ իր միութեան պաշտօնական օւկանն ալ կը ձգտի ունենալ:

Ազգը անանկ կը յառաջդիմէ որ վստահօրէն քանի մը տարիէն ա՛լ երկրին վրայ չմնայ ու թեւածէ գէպի... անհուն:

Եւ ճշմարիտ յառաջդիմութիւնը առաջին անգամ մենք պիտի ընենք:

— Սա Փրանսացիներուն, գերմանացիներուն, անգլիացիներուն եւ ամերիկացիներուն յառաջադէմ ազգ կ'ըսենք: Ի՞նչ պարապ խօսք: Ի՞նչիս յառաջադէմն են անոնք, քանի որ դարերէ ի վեր նոյն տեղը, նոյն հողին վրայ փակեր կեցեր են:

Յառաջդիմասէրը մենք ենք, մե՛նք որ անցեալին մէջ Յունաստանէն ելեր ու գացեր ենք Տարտանէլ, ասկէ Փոքր Ասիա, անկէ Փոլիզիա, անկէ երկիր Նայիրի: Դարեր վերջը հայոց մէկ մասը գացեր է Լեհաստան ու անկէ ալ այնքան յառաջդիմեր է որ ալ հետք չենք կրնար տեսնել մենք յետադիմականներս: Հիմակ սակայն քանի մը տարի է դարձեալ սկսած ենք յառաջդիմել: Արեւելքէն եկանք արեւմուտք ու հիւսիս, հաւանաբար քանի մը տարիէն իջնենք հարաւ ու անկէ ալ թեւածենք գէպի... անհուն:

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌՆԵՐԻՆ

Հետեւողութեամբ «Յառաջ»ի

Մուլէն ա վան.— Մեր գիւղը կը գտնուի քարտէսին մէջ եղած տեղը: Մօտաւորապէս 47 հողի ենք: 46ը այր, մէկ հատ մըն ալ կին: Կ'աշխատինք ածխահանքերու մէջ: Վիճակնիս սեփ սեւ է: Հանքին մէ-

ջէն կ'ելլենք գետին մէջ կը մտնենք: Մարմիննիս մաքրելէ վերջ հողինիս ալ գինիով կը մաքրենք: Կեանքերնիս շատ միօրինակ է: Երբեմն սրտի ինզուլթենէ իրարու գլուխ կը պատուենք: Գաղութն առայժմ ոչ մէկ կազմակերպութիւն ունի: Մտադրութիւն կայ Ազատ Որմնագիրներու օթեակ մը հիմնելու: Ասկէ ամիսներ առաջ կազմուեցաւ հակալքօլականներու միութիւն մը որ մէկ օրուան կեանք ունեցաւ:

Գաղութիս առողջական վիճակը նախանձելի ըլլալէ շատ հեռու է: Գետնախնձոր ուտելով գետնին տակը անցնելնիս մօտեցած է: Կը վախնանք որ գետնախնձորին ալ կարօտ կը մնանք օր մը: Մեր ընկերներէն չորս հողի անցեալ օր ճամբեցին: Շատ տեղեր դիմեցին խեղճերը, գործի համար, բայց անօդուտ: Կիրակի օր շողեկառք նստելով շիտակ Փարիզ պիտի գան... քահանայ՝ ձեռնադրուելու համար: Իբաւ է որ անցեալին քիչ մը կասկածելի է՝ սակայն պէտք եղածէն աւելի ապաշխարած են այստեղ, հանքերուն մէջ: Եթէ անգործութիւն պատահի, ամբողջ գաղութն մտադրած է յիշեալներուն օրինակին հետեւիլ: Մենք ամէն օր կը չարչարուինք, կը խաչուինք ու հանքերուն մէջ կը թաղուինք: Մենէ աղէկնե՞րը պիտի գտնեն: Ի՞նչ ընենք, ճակատագիրը այսպէս է եղեր:

Ե՞րբ պիտի բացուի խորհրդային Հայաստանի աչքը...: Անգամ մը որ աչքը մտնենք ա՛լ հանքի մէջ մտնելէ կ'աղատինք: Հակառակ պարագային՝ սքեմի մէջ կը մտնենք:

* * *

Օր. Ագապի Մնացակամէ ստացած եմֆ հետեւեալ յուզիչ ու շահագրգռող քզբակցութիւնը.

«Իմ գիւղս նկարչագեղ է ու կը գտնուի ճիշտ իր տեղը: Գտնուելու դիւրութեան համար կրնաք հարցնել միջնորդի մը: Եւ իմ գիւղս ալ հողիս մէջ կը գտնուի: Իմ հողիս գիւղը ամէնէն հանդարտը, ամէնէն գեղեցիկն է գիւղերուն: Այստեղ ոչ յուսախարութիւն կը կրէք եւ ոչ ալ որ եւ է բեռ: Սիրոյ եւ ցնծութեան ծանրութիւններ միայն կան գիւղիս մէջ: Որուն որ սրտին բաժակը մեծ է թող դայ ու լեցնէ: Երանի անոր որ պիտի գայ այստեղ բնակիլ... Աստուծոյ հրամանով: Ներկայիս գիւղս ամայի է: Ունի լճակներ, պուրակներ, գետակներ, ձորակներ որոնք կրնան լիովին յափշտակութեան մղել ու երջանկացնել: Կոյս ու աճիտի, անկոխ ու անտիպ գիւղ մըն է իմ գիւղս: Դեռ հովուերգութիւն մը իր թրթռումը չէ պարզած իր ծառերուն սօսափիւնին ներքեւ: Տակաւին համբոյրի մը մեղմ մեղեդին գիւղիս միտնակութիւնը

չէ դումարած, լուսնի լոյսին ներքեւ: Մաքուր ալ է գիւղս իր դազաթ-
 ներէն մինչեւ սալալատակները: Իմ անկոխ գիւղիս մօտեցաւ անցեալ
 օր հայ մը: Իրաւ է որ առողջ, գեղեցիկ ու երիտասարդ էր, այլ աղ-
 քատ: Քանի մը օր վերջ առեւտրական մը երեւցաւ: Չայն ալ մերժեցի:
 Իրաւ է որ հարուստ էր ու առատաձեռն, այլ տարիքոտ: Ես լուրէն
 ուրիշներ հրաւիրեցի, սակայն անոնք ալ չկրցան ըմբռնել գիւղիս ա-
 ռաւելութիւնները: Ա՛խ, եթէ գիւղս Ամերիկայի մէջ ըլլար, ոսկի պի-
 տի արժէր: Ամերիկացի սիքիզըն մը կրնայ դնահատել գիւղս: Գիւղս
 ծաղիկ մըն է, պտուղ մըն է: Գիւղիս մէջի ըոյսերը սակայն հունտի
 երթալ սկսած են: Բանջարեղէններուն մեծ մասը քաղած ու քացախի
 մէջ դրած եմ:

Անցեալ իրիկուն, ուշ առեւն հայկական երգի մը հետեւեալ տունը
 հասաւ ահանջիս.

«Աղջիկը գնաց բժշկին՝
 Ըսաւ թէ — սրտի ցաւ ունիմ...
 Բժիշկը պատասխանեց.
 — Սիրահուրքեան ցաւ է»:

Ա՛հ, գիւղս, գիւղս... մէկ հատիկ այլ անբախտ:
 Ե՞րբ պիտի բացուին դուռները... բախտիս»:

* * *

Պ. Արտաշ Տէմիրպաշէ ստացած եմք հետեւեալ քղթակցութիւն
 նամակը, հրատարակութեան խնդրանքով: Ահաւասիկ նոյնութեամբ.

ՅՕԼ — Վիլ — «Մեր գիւղը կը գտնուի Պորտոյէն ինը քիլոմետր
 դէպի արեւմտեան արեւելք, ջրվէժի տակ ու հրաբխային լեռան մը
 վրայ: Մեր քովէն կ'անցնի Մարօն գետակը որ երբեմն Կասքոնեան ծո-
 վածոց, երբեմն ալ մեր տուներուն առաջին յարկերուն մէջ կը թափի:

Տեղույս հայ գաղութը հիմնուած է ութը ամիս առաջ, էրզրին-
 կեանցի խեւ Թոհոյի կողմէ:

Ընդամէնը հինգ հոգի ենք, բայց ունինք վեց միութիւն: Կայ հըն-
 չակեան մը, ռամկավար մը, պոլլեւիկ մը: Թէեւ իրարու հետ երբեմն
 կը կռուին. բայց դեռ իրար չեն սպաննած, բարեբախտաբար: Մտա-
 դրութիւն կայ մօտերս հիմնելու կոփամարտութեան ահումբ մը:

Մեր գիւղին մէջ կայ գինիի գործարան մը: Ամէնքս ալ հոն կ'աչ-
 խատինք, հոն կ'ուտենք, կը խմենք: Գինին պատուական է: Կը ստա-
 նանք օրական մէկ շիշ գինի եւ տասնըութը Փրանք: Աշխատանքի ժա-
 մանակ կը թմրինք ու բան չենք իմանար:

Մեր գիւղին մէջ մենէ դատ օտարական չկայ, բացի անգլիացի
 բանուոր Մսոր ձօն Քուքսէ: Մեր այս բանուոր ընկերը գործադուլ յայ-
 տարարած է, հինգ ամիսէ ի վեր: Մօրը կաթին նման ուխտի կը ծծէ
 առտուրնէ մինչեւ կէս գիշեր: Չանազան տեղերէ դրամ կը ստանայ
 բայց կուտ չի բռնիր: Անցեալ իրիկուն ձօն Քուքս եկաւ ինձ մօտ ու
 հինգ Փրանք ուղեց: Չունէի ու չկրցի տալ: Մեծ ամօթ եղաւ:

Ե՞րբ պիտի բացուին Հայաստանի դուռերը որպէսզի մենք ալ, Փը-
 րանսայի հայ բանուորներս, Հայաստանի պրոլետարներուն պէս կարե-
 նանք օգնել մեր անգլիացի գործադուրկ ընկերներու»:

Մ — ՄԵՆՔ

Անցեալները՝ վարդապետ բարեկամիս հետ ներկայացանք կառա-
 վարական բարձր պաշտօնատարի մը գրասենեակը, հայ գաղթական-
 ներու համար խնդրանք մը ընելու:

Խնդրին շուրջ կարճ տեսակցութիւն մը ունենալէ վերջ՝ Յրանսա-
 ցին ըսաւ.

— Գիտէ՞ք, շատ լաւ կը ճանչնամ ձեզ Հայերդ: Դուք ազնիւ,
 աշխատասէր ու նահատակ ազգ մըն էք: Ձեր պատմութիւնն ալ կար-
 դացած եմ: Մէկ թերութիւն մը ունիք սակայն. — ստախօս էք: Պաշ-
 տօնիս բերումով մինչեւ հիմակ հազարաւոր Հայեր ներկայացած են
 ինձի: Ամէնուն ալ սուտը բռնած եմ առանց բացառութեան: Գիտեմ
 նաեւ թէ ձեր տառապանքը մեծ դեր կատարած է ձեր այս թերութեան
 մէջ եւ սակայն պէտք է չափազանցել: Ձեզի պզտիկ դէպք մը միայն
 պատմեմ, մտիկ ըրէք: Գիտէք թէ հայ գաղթականներու պատսպարան
 մը կայ Ստամբուլի մէջ: Իւրաքանչիւր սենեակի մէջ քանի մը հոգի կը գի-
 մը հաստատած ենք: Իւրաքանչիւր քանի մը Փրանք: Անցեալները յայտարա-
 շերեն ընդամէնը վճարելով քանի մը Փրանք: Անցեալները յայտարա-
 րեր են թէ ի վիճակի չեն այդ քանի մը Փրանքը վճարելու...: Այս բա-
 նը պաշտօնեաներս եկան ու ինձի տեղեկացուցին: Ազդարարեցի որ
 հանգիստ ձգեն գիրենք ու այդպէս ալ եղաւ անշուշտ: Օրեր վերջը
 պաշտօնեաներս կրկին ներկայացան ու յայտնեցին թէ զօրաւոր կաս-
 կածներ ունին գաղթականներու չքաւորութեան չհաւատալու, թէ ա-
 նոնք... կը ստեն:

«Շիտակը շատ բարկացայ: Հագուեցայ, վար իջայ, ինքնաշարժը
 ցատկեցի ու շունչս առի սպաստանարան: Հրամայեցի պաշարել սեն-
 եակները ու վրայ գլուխ, սնտուկ, սենեակ լաւ մը խուզարկել: Ի՞նչ

կը յուսաք որ գտնենք... Ոսկի՛...: Հնչո՛ւն ոսկի...: Մէջքերնին շարուած դրահի նման: Օ՛, ո՛չ, ասիկա չափազանց էր...

Վարդապետը իր բերանը բացաւ ու երգեց.

— Պարո՛ն, թուրքերը մեզ շարդեցին, Գերմանները մեզ անապատ թափեցին, Ռուսերը մեզ լափեցին, իսկ Եւրոպացիներն ալ խաբեցին ու խաբեցին, մեր դատը ոչ ոք յարգեց ու Աստուած իսկ մեզ լքեց... Հայ ազգը մնաց առանց բարեկամի ու առանց Աստուծոյ ու փարեցաւ մամոնային... Հիմա Հայուն Աստուածը դրամն է... Հայը չուզեր բաժնուիլ իր նոր Աստուծոմէն... Կ'ըսէք թէ այդ գաղթականները ոսկի ունէին ու քանի մը Փրանք չէին ուզեր տալ: Շատ բնական է աս: Ո՞ր յիմարը կ'ուզէ իր Աստուծոյն մէկ մասը կտրել եւ ուրիշին տալ... Եթէ անոնք քանի մը Փրանքը վճարէին, իրենց Աստուծոմէն բան մը պակասած պիտի ըլլար, եւ յետոյ Հայր աստուածասպան չէ որ կտոր մը կտրէ ու ձեզի տալով ձեզ ալ մեղքի մէջ խոթէ...

— Ա՛, այո՛... դուք նման էք թափառական հրեաներուն՝ օտար հողերու վրայ ու անապատներու մէջ... դուք անոնց նման կը պաշտէք Ոսկի Հորթը: Կը մաղթեմ որ Մովսէս մը ունենաք: Կը մաղթեմ որ Աւետեաց Երկիրը հասնիք ու ա՛լ... չստէք:

Դուրս ելանք: Վարդապետը ըսաւ ինծի.

— Ա՛ր, այո՛, Մովսէսի մը պէտք ունինք: Ո՞վ պիտի ըլլայ մեր Մովսէսը:

— Դաւիթ Տ. Մովսէսեանը թերեւս, ըսի:

— Ի սէր Ոսկի Հորթին թո՛ղ կատակներդ, ըսաւ վարդապետը:

Ու բաժնուեցանք իրարմէ՛ իրիկուան համար ժամադրուելով:

Իրիկունը գացի գտայ բարեկամ վարդապետս: Սկսանք խորհիլ Հայոց ազգին ազատարար Մովսէս մը գտնելու մասին:

Ըսի.

— Վարդապետ, մեր ներկայ կամ ապագայ առաջնորդը, ազատարարը, փրկիչը՝ անպայման Մովսէսի նման Մ գիրը պիտի ունենայ իր մեծ անունին իբրեւ սկզբնատառ: Ուշադրութիւն չէ՞ք ըրած երբեք թէ բոլոր ազգերուն կրօնական ու կառավարական մեծ պետերը Մ գիրը ունեցած են իրենց անունին սկիզբը:

— Ապացուցուր գոչեց, սրտնեղած վարդապետս:

— Զախչախիչ փաստեր ունիմ, վարդապետ: Սկսիմ հին ազգաց պատմութենէն: Եգիպտացւոց հիմնադիրը եղաւ Մենէս, իսկ անոնց ամէնէն նշանաւոր փարաւոնները եղան Միկերին ու Մերիս: Յոյներուն ազատարարը եղաւ Միլքիատէս: Մեծն Աղէքսանդրէ՛ կայսրութեան հիմնաքարը ղետեղեց Մակեդոնացին Փիլիպպոս: Հռոմայեցւոց մէջ նշանաւոր հանդիսացան Մուկիոս ու Մարիոս: Պոնտական թագաւորութեան ամէնէն նշանաւոր ղէմքը եղաւ Միհրդատ:

— Բայց կրօնական մարդոց անուններ տուր ինծի, ըսաւ վարդապետս:

— Ահաւասիկ: Հրեաներուն մարդարէն եղաւ Մովսէս: Իսլամներունը Մուհամմէտ:

— Հապա՞ Յիսուս Քրիստոսը Մով չէ, ըսաւ վարդապետս:

— Մի՛ աճապարէք: Յիսուս Մեսիան էր, իր բուն անունն էր՝ Մանուէլ:

— Աստուած իմ, Աստուած իմ, այս ինչ ապշեցուցիչ գիտութիւն է, գոչեց վարդապետս դառնալով Մ-ի հաւատացեալ... Շարունակէ՛...

— Հին Հայոց մէջ ամենամեծ դերերը կատարեցին Ս. Մեսրոպ ու Մամիկոնեան Վարդան: Թուրքերուն ամէնէն մեծ թագաւորը եղաւ՝ Սուլթան Մէհմէտ: Վարդապետ, պէտք չէ մոռնալ նաեւ Միխիթար Աբրահայրը...

— Հիմակ պիտի խենթենամ, աղաղակեց վարդապետս:

— Համբերութիւն: Գանք մեր ժամադրականներուն:

Անգլիան ունեցաւ՝ Մաքսոնալարը, համաշխարհը՝ Մարքսը, Իտալիան՝ Մուսոլինին ու Թուրքիան... Մուսթաֆա Բէճմալը:

— Հապա մե՞նք հապա հայե՞րս...

— Համբերութի՛ւն: Հայերս ալ ունեցանք մի Միասնիկեան:

— Հապա հիմա՞, հապա ներկայիս ո՞վ ունինք կառավարական ու կրօնական գործի վրայ Մ գիրով փրկիչներ...

— Համբերութի՛ւն եւ ուշադրութիւն: Աւետիս քեզ: Ունինք Միկոյեանը եւ Մուսեանը, Մալէգեանն ու... Մաղլըմեան սրբազանը:

— Իբրաւ է թէ ատոնք Փրկիչ են, բայց պոլսական իմաստով:

« ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ »

Հայաստանի խորհրդային կառավարութիւնը դալ տարուայ համար մէկ միլիոն ռուբլի վարկ մը քուէարկած է, յանուն բացառիկ եւ վերջնական շինարարութեանց :

Տարիէ մը Հայաստանը պիտի լինի կարմիր վարդաստան : Հայաստանը պիտի լինի կատարեալ դրախտ, ուր Ադամներն ու Եւանները շատ բաներ պիտի ընեն : Աստուած անոնց գործին պիտի չկարենայ խառնուիլ եւ դանոնք դուրս հանել դրախտէն, քանի որ Աստուած վաղուց վտարուած է Հայաստանի սահմաններէն :

Վիթխարի եւ տարերային շինարարութիւններ տեղի պիտի ունենան :

Երկիրը պիտի յեղափոխուի եւ հողը պիտի քալէ՝ մտնելով սահմաններուն մէջ... Թուրքիոյ :

Քարերն անգամ պիտի աղաղակեն եւ ոստումներ պիտի ընեն : Մըտադրութիւն կայ քարերն անգամ խթանել եւ թոյլ չտալ որ անոնք իրարու վրայ մնան անչարժ ու ծոյլ :

Որոշուած է բոլշեւիկեան հսկայական մանգաղով հնձել Մասիս լեռը եւ դայն Սեւանայ լճին ջուրերուն մէջ նետել : Այսպէսով պիտի շահուի ահագին հող : Լիճը ցամաք պիտի ըլլայ եւ Մասիսավայրը արտ : Երկիրը պիտի չորցնեն ու ցամքեցնեն յանուն հողի շինարարութեան :

Որոշուած է Երեւանի Աստաֆեան փողոցում կառուցանել մի բարբարոս Փապրիկ, կարմիր ներկի : Նկատելով որ լաւագոյն կարմիրը մարդկային արիւնն է, ներկը պիտի հանեն մարդկային մարմինէն : Եւ նկատելով որ հայ արիւնը ընդունակ է հոսելու, ներկը պիտի հանեն հայ մարմինէ : Մաս մը հայեր նկատուած են անարիւն : Օրինակ Թամկավարները՝ պաղարիւն : Արտադրուելիք կարմիրով պիտի ներկեն Հայաստանի փողոցներն ու տարածութիւնները :

Հայաստանի բնակչութիւնը հակառակ ցարդ թափուած ջանքերու, դեռ բնաւ կարմրած չըլլալուն, բժիշկներուն պիտի արգիլեն կարմրախտը դարմանել, որպէսզի ժողովուրդը գոնէ հիւանդութեամբ կարմրի :

Պիտի տպագրուին 500,000 Լենինի պատկերներ եւ դանոնք պիտի դնեն յղի կանանց առջեւ, որպէսզի ծնելիք դաւակը նման ըլլայ անոր :

Գաղտնի մտադրութիւն կայ Վահան Մալէգեանը Երեւան փախցնելու : Երեւան, Ֆինանսական խախարարութեան շէնքին մէջ կ'ուզեն

գլխիվայր կախել Մալէգեանը, որպէսզի ամէն ամիս 10,000 Քրանք փսխէ : Աս ալ փողի շինարարութիւն : Վահան Մալէգեան այս լուրը առած ըլլալով կը պատրաստուի Ամերիկա չուել :

Վճռապէս որոշուած է Հայաստանի բնակիչներուն մէջէն հայկական ոգին հանել եւ անոնց մէջ շինել համայնական ոգի մը :

Այս բոլոր շինարարութիւնները ի գլուխ հանելու համար՝ որոշուած է կաղմակերպել ահագին թիւով երիտասարդներ ու աղջիկներ :

Պիտի շինեն նաեւ նոր, կարճ, լակոնական լեզու մը, յանուն լեզուական շինարարութեան : Այդ նոր լեզուին շնորհիւ տասը տողնոց լուր մը կարելի պիտի ըլլայ երկու երեք տողի մէջ ամփոփել :

Օրինակի համար, փոխանակ գրելու թէ .

— «Հայաստանի կոմկուսները յիշատակարան են ամբացնում : Երեւանի վերածնունդն են յիշակերտում» :

Պիտի գրուի այսպէս, միայն առաջին վանկերը .

— «Հայկոյիենամ : Երվենյի» :

Դժբախտութիւնը այնտեղ է, որ այդ առաջին վանկերով կարելի է նաեւ ուրիշ բան կարդալ, օրինակ՝

— Հայաստանի կոմկուսները յիմարացել են ամբողջովին : Երկիրը վերածել են յիմարանոցի» :

Ուրիշ օրինակ մը . աղբ մը թերթի մը չորրորդ էջին մէջ .

— «Կուզուին կուլակներ, լի կուտով» :

Ասիկա պիտի գրուի պարզապէս .

— «Կուլուլիկուլ» :

ՄԵՐ ԳՐԱԿԱՆԱԳԵՏՆԵՐԸ

Մեր օրերու գրականագէտներէն շատեր պատճառ կ'ըլլան որ յիշեմ հին դէպք մը :

Երբ դպրոցական էի, ճանչցայ ուսուցիչ մը, որ միշտ կը խօսէր Ալիշանի, Հիւրմիւզի, Բագրատունիի, Նար Պէյի ու Մկրտիչ Պէշիկ-թաշեանի մասին : Կ'ըսէր թէ անոնց բոլոր գործերը կարդացած է եւ թաշեան լաւ կը ճանչնայ մեր հեղինակները, որ եթէ մէկը էջ մը ներկայացնէ անոնց գործերէն, ինք առանց ստորագրութեան նայելու՝ կրնայ ըսել թէ այդ էջը որո՞ւ կը պատկանի :

Օր մը փորձել ուզեցինք զինքը :

Գրատախտակին վրայ գրեցինք հետեւեալ նշանաւոր քերթուածը .

Եւ ալիքք փրփրադէզ գային փշրուիլ ի վերայ եզերաց Լուսիսիոյ :
 Եւ Սարփսն անդ շրջէր դառնացաւ, աւաղէր դառնալիշտ :
 Եւ յորժամ բազմագոռ փոքորիկն էր անեղ,
 Եւ յորժամ շառաչուն հեծէին բիւր տարերք .
 Մեծ Սարփսն անդ կանգնէր մերկացեալ ու անմահ
 Եւ զերդ նոր փոքորիկ բարբառէր որտի —
 « Ի՛ր անէծք քո Ալեաց, ո՛վ Պոնտոս, բի՛ւր անէծք,
 Ո՛վ ալիքք Սեւացեալ լերուք յար անարեւ,
 Յամափեալ, սատակեալ լերուք յար,
 Զի դժխեմ ձեր ձեռոք խլեցիք իմ Զապէլ,
 Իմ Զապէլ գեղանի :

Գացինք կանչեցինք մեր գրականագէտ ուսուցիչը եւ ըսինք .

— Միւսիւ, ո՛վ միւսիւ, այս հոյակապ զերթուածը մեզի կրնա՞ք ըսել թէ որո՞ւնն է : Մեր մէջ վէճ ծագած է : Ոմանք կ'ըսեն թէ Բագրատունիին է, ոմանք կ'ըսեն թէ Ալիշանինն է, ոմանք ալ կը սնդեն թէ Հիւրմիւլիինն է :

Ուսուցիչը ակնոցը դրաւ ու վերէն վար կարգաց բարձրաձայն, հանդիսաւոր առողանութեամբ : Յետոյ ժպտեցաւ ու ըսաւ .

— Ոճէն ու գործածուած բառերէն որոշապէս յայտնի է որ այս իսկապէս հոյակապ զերթուածը Հայր Արսէն Բագրատունիինն է :

Աշակերտները սկսան խնդուք մը : Խնդուքը վարակիչ եղաւ ու չափազանցուեցաւ : Մէկը հաղիւ կրցաւ ըսել .

— Ո՛չ միւսիւ, Բագրատունիինը չէ : Այս ապուշ զերթուածը Մինասը գրեց :




50544

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

ԸՆԿԵՐ ՇԱՀԱԶԱՐ	5 ֆրանք
ՍԻԳՆՆԱ	12 »
ՌԱՊՊԻ	15 »
ԵՐԳԻԾԱԿԱՆ	15 »

Գիմել հետեւեալ հասցէին. —

17, Rue Damesme :-: PARIS (13°)



Imprimerie A-DER 17, Rue Damesme - PARIS

Տպագրութիւն ՏԵՐ-ՅԱԿՈՐԵԱՆ, Փարիզ

Printed in France